ՀԱՄԻՍԻՆ

Գ-Ե
1997

ԳՄ-196

ԾԴ ՏԱՐԻ

Է.ՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄԱԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. Է.ՋՄԻԱԾՆԻ

Էջմիածին
1997

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ·

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տուր զօրութիւն ծառայի քո 3

Խորհրդակցական ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 7

Երկամեայ տեղեկագիր Գարեգին Ա Կաթողիկոսի և Գերագոյն Հոգևոր Խորհուրդի գործունէութեան 9

Ապրիլի 3-5-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայացած թեմական առաջնորդների և թեմերի աշխարհական պատգամավորների խորհրդակցական ժողովի մասնակիցների ցուցակ 34

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԵԱՆ - Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հիմնօրհնեքը 38

Հիշատակի և ոգեկոչման արարողություններ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 42

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ - Նահատակների արիւնը գծում է մեր պարտականութեան ճանապարհը 43

ՊԱՏՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Արամայիս ավագ քահանա Միրզայանին 46

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը պարոն Լևոն Կալուստյանին 47

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տիար Գարրիել Պասմաճյանին 48

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տիար Վահե Քեթլիին 49

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տիար Հրաչ Հյուսյանին 50

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տիար Մկրտիչ Մկրտչյանին 51

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տիար Հայկ Միսաքյանին 52

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տիար Զարիզ Տաքեսյանին 53

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տիար Ճան Պարոնյանին 54

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԵԱՆ - Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Իլիա Բ-ի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 55

ԿՐՈՆԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. Հ. ՄՈՒՇԵՂՅԱՆ - «Տեսչայ Սաթենիկ...»-ի առեղծվածը 92
ՎԱՉԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ - Հովհաննես Իմաստասեր Օձնեցի.....96
Ա. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ - Ո՞վ է «Զորս ըստ պատկերի քում» շարականի հեղինակը.....106
ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ - Աբովյան և Ներսես Աշտարակեցի.....116
ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ - Սևանի Ս. Առաքելոց վանքի Ս. Աստվածածին եկեղեցին.....123
ՀԱՅՐԱՊԵՏ ՇԱՏՎՈՐՅԱՆ - Թիֆլիսի Վանքի Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի պատմությունը.....131
ՍՈՒՐԵՆ Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ - Հոգեվից խոսքի ոյժն ու հմայքը.....140
ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ - Կեսդարյա ճանապարհին.....148
Շահե արք. Աճեմյանի քարոզը խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Հոգեգալստյան տոնին, իր քահանայական ձեռնադրության 50-ամյակի առթիվ 150

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Լուրեր եգիպտահայ թեմից.....154
ԱՐՏԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԼՈՌԵՅՅԱՆ - Հանդիսություն Մեմարանում.....156
ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ - Կրոնակրթական համագումար-հավաք Արարատյան հայրապետական թեմում 157

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Էրվե դը Շարեթն այցելեց Գարեգին Ա Վեհափառին.....159
Մեծ Բրիտանիայի դեսպանն այցելեց Գարեգին Ա Կաթողիկոսին
Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի երիտասարդության հարցերի պետդեպարտամենտի նախագահին.....159
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ - Եկեղեցական թեմ. լուրեր 160
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата.....166
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin.....168
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzin 170

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՔՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՔՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏՈՒՐ ՁՕՐՈՒԹԻՆ ԾԱՌԱՅԻ ՔՈ...

Լրացավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի ընտրության և գահակալության երկրորդ տարեդարձը: Կարծում եմ, ժամանակակիցներիս անդրադարձը Վեհափառ Հայրապետի գահակալության այս երկու տարիների նկատմամբ շատ վաղ կլինի և ոչ իրական, որովհետև ուղղակի ականատեսներն ու մասնակիցները լինելով Նորին Սրբության գործունեության, չենք կարող ճշմարիտ և ամբողջական գնահատականը տալ: Հետևաբար, ինչպես ընդունված է ասել, խոսքը թողնենք պատմությանն ու գալիք սերունդներին: Սակայն ներկան դեմհանդիման դնելով անցյալի հետ, պիտի փորձենք արձանագրել այն ամենը, ինչը դրանցվեց այս անցնող երկու տարիների ընթացքում՝ Գարեգին Վեհափառի ընտրությունից ի վեր:

Վեհափառ Հայրապետը ապրիլի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված թեմական առաջնորդների և թեմերի աշխարհիկ պատգամավորների ներկայացուցչական ժողովին ներկայացրած գործունեության երկամյա տեղեկագիրը բնորոշել է «ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐ - ԲԱԶՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ»: Իսկապես որ անցնող երկու տարիները բազում ճանապարհների՝ նախ հնի, անցյալի սրբագրման և վերարժևորման, ապա նոր ուղիների որոնման, փնտրտուքի տարիներ եղան: Անշուշտ չի կարելի միանշանակ ասել, որ վերջին 70 և, ինչու չէ՝ նաև 1700 տարիների վայրիվերումների ընթացքում ծագած և այսօր մեր պատասխանատվության առջև դրված բոլոր հարցերն ու մարտահրավերները իրենց վերջնական լուծումը գտան, որը բնականաբար անհնար է, սակայն մեծ ճիգ ու ջանքերի և զոհողությունների գնով, Ազատ ու անկախ Հայաստանի պայմաններում կամաց-կամաց սկսեց աշխուժանալ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Ոչ միայն անցած, այլև, կարծում ենք, առաջիկա տարիները ևս՝ ավելի սրբագրման ժամանակներ են, որով վերստին հիմքն է դրվելու Հայ Եկեղեցու նոր կյանքի: Թեև Վեհափառ Հայրապետը Գահ բարձրացավ աղատադրված Հայրենիքում, սակայն՝ հոգևոր և բարոյական առումով ամենադժվարին ժամանակներում: Եվ մեր օրերի «Անապատն» ու «Կարմիր ծուն» անցնող ժողովրդի առաջնորդության ցուպն ստանձնելով, Նորին Սրբությունը իր գործունեությունը խարսխեց հետևյալ կետերի վրա.

Ա. Հայց. Եկեղեցու և հատկապես Մայր Աթոռի գործունեության վերաշխուժացում, ներքին կյանքի բարեփոխում.

Գահակալության առաջին իսկ օրվանից Վեհափառ Հայրապետը չեշտեց, որ «Ես կաթողիկոս չեմ դարձել գրասենյակում նստելու, այլ ժողովրդի համար: Ես ցանկանում եմ իմ երակների ու արյան մեջ զգալ իմ ժողովրդի տրոփող զարկերակը, ապրումներն ու զգացումները»: Եվ այս անխառն ապրումներով ու սկզբունքով Հայոց Հայրապետը գնաց դեպի իր ժողովուրդը: Բայց դա ոչ թե ավետարանական առակի իննսունինն դառներին թողած և մեկին գտնելու ընթացք էր, այլ մեկին թողած իննսունինների ետևից գնալու առաքելություն:

Նորին Սրբությունն իր հովվապետական այցելություններն սկսեց Շիրակի աղետահար ժողովրդից, ապա այցելեց հերոսական Արցախ և

Հայաստանի բոլոր թեմերը անխտիր և Վրաստան ու Մոսկվա, այնուհետև անցնելով Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ, Կենտրոնական Եվրոպա, հատկապես Ֆրանսիա և մինչև Ծայրագույն Արևելքի երկրներ՝ Թայլանդ, Սինգապուր, Ավստրալիա: Ամենուր ճշմարիտ Հովվի և Հոր նախանձախնդրությամբ Վեհափառ Հայրապետը գյուղեգյուղ և տնետուն, այցելելով մեծահարուստին և աղքատին, առողջին ու հիվանդին, մեծին ու փոքրին, մանավանդ երիտասարդությանը ցանկացավ լսելի դարձնել մեր եկեղեցու 1700-ամյա վկայության ձայնը. «Բավական է հպարտանք մեր հայրերի արածով: Այլևս հարց տանք, թե մե՞նք ինչ ենք անում այսօր»: Եվ Հայոց Հայրապետով անձնավորված Ս. Էջմիածինն էր շրջում աշխարհն աշխարհ՝ ի լուր ամենքի ազդարարելով, որ «Էջմիածինը Խորհուրդ է, Էջմիածինը հուշարարն է պատմության, Էջմիածինը առաքելություն է» և, վերջապես, այս ամենը իր մեջ ներառնող որպես ճշմարիտ կյանքի աղբյուր «Էջմիածինը Հայկյան Բեթղեհեմն է»: Սակայն իրական և տեղին էր Վեհափառ Հայրապետի մտահոգությունը, որ «Ես միայնակ ոչինչ չեմ կարող անել: Նույնիսկ մեր Տերը Հիսուս Քրիստոս գործակիցներ ընտրեց Իր երկնային առաքելությունը իրականացնելու համար»: Նորին Սրբության ուղղակի հոգածությամբ և խնամքով ճեմարանավարտ 15 սարկավագներ, ձեռնադրվելով կուսակրոն քահանաներ, եկան համալրելու միաբանության շարքերը: Ավելի քան 30 ուսանողներ տարբեր ժամանակներում ստացան սարկավագության աստիճան: Հոգևոր Ճեմարանի ուսանողության թիվը կտրուկ վերաճեց՝ հասնելով 100-ի: Մեծ ծավալի աշխատանքներ են տարվում՝ վերաբացելու Գևորգյան Ճեմարանի շենքը, որը պիտի դառնա նոր տեսիլքների ու իրագործումների կենդանի երակ: Վերաբացվեց դեռևս 1991 թվականին հաստատված Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության կենտրոնը, որը Վեհափառ Հայրապետի անմիջական և անմվագ աջակցությամբ ու երիտասարդ հոգևորականների եռանդուն գործունեությամբ նոր ուժականությամբ լծվել է Հայաստանի զանազան շրջաններում քարոզչության և դաստիարակության նվիրական աշխատանքին: Նոր ուժով սկսեց գործել Մայր Աթոռիս տպարանը, որը Վեհափառ Հայրապետի գահակալությունից ի վեր հրատարակել է ավելի քան հարյուր անուն զանազան գրականություն:

Հայաստանի և արտասահմանի ողջ տարածքի վրա հոգևոր նոր լիցքավորմամբ հիմնվեցին, բացվեցին ու վերաբացվեցին նոր եկեղեցիներ, դպրոցներ ու մշակույթի օջախներ, որոնց մեծ մասին հովանավորեց և օրհնությունը անձնապես կատարեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Զուտ այսպիսի պարզ թվարկումն իսկ, առանց որևէ մեկնաբանության, խոսուն վկայությունն է Գարեգին Վեհափառի երկամյա գործունեության, որը ուղղված է մեկ նպատակի՝ «Ս. Էջմիածինը դարձնել Աստուծո և Հայության ժամադրավայրը, այն ներկայություն դարձնել յուրաքանչյուր հայ ընտանիքում որպես կյանք և ոչ թե սոսկ հուշարձան»:

Բ. Ազատագրված Մայր Հայրենիքի պահպանում և զորացում.

Հայաստանի Հանրապետության անկախությունից ի վեր Վեհափառ Հայրապետը, այն ժամանակ դեռևս Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի գահակալ, մեծապես աջակցել և զորակցել է ազատագրված Մայր Հայրենիքին և աննկուն Արցախին, զանազան մակարդակներով ու ձևերով: Բայց այսօր, արդեն իսկ անկախ Հայաստանի հողի վրա ընտրված առաջին Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Սրբությունը, անկախ ամեն ինչից, որպես

հոգածու Հայր իր ողջ կարելին է ներդնում Հայաստանի անկախ պետության և Արցախի քաջարի ժողովրդի զորացման և բարգավաճմանն ի նպաստ. «Ես չեմ հավատում հայրենասիրության, ես հավատում եմ հայրենաշինությանը, որովհետև սիրո ամենամեծ արտահայտությունը գործն է: Գործով է սերը իմաստ գտնում»: Նորին Սրբությունը գործնապես քաջալերեց «ՀԱՅԱՍՏԱՆ» համահայկական հիմնադրամի գործունեությունը, ամենուր կոչ անելով լայն մասնակցություն բերել այս ազգօգուտ գործին:

Սփյուռքի զանազան գաղթօջախներ այցելելիս Վեհափառ Հայրապետի հրավերն էր մեր ողջ ժողովրդին՝ տեր կանգնել սեփական Հայրենիքին, որն այսօր կարիքն ունի բոլորի համատեղ գործակցության՝ անկախ իմբակային պատկանելիություններից, գաղափարական տարակարծություններից և ժամանակավոր հաշիվներից, որովհետև «Հայաստանն այսօր Հայության պատասխանատվությունն է, ուրեմն տերը և ծառան լինենք նրա»:

Բազմաթիվ պետությունների ղեկավարների և պետական–պաշտոնական անձանց հետ հանդիպումների ժամանակ, իր անձնական հեղինակությամբ և հմայքով, Վեհափառ Հայրապետը լավագույնս ներկայացրեց Մայր Հայաստանի և ողջ Հայության շահերը՝ երբեմն նույնիսկ դուրս գալով «քաղաքակիրթ աշխարհի» որդեգրած դիվանագիտական ընդունված կանոնների սկզբունքներից:

Բ. Միջեկեղեցական հարաբերությունների առավել սերտացում.

Երկար տարիներ լինելով միջեկեղեցական շարժումների գործուն մասնակից, Գարեգին Վեհափառը՝ ստանձնելով Հայ Եկեղեցու բարձրագույն իշխանության պատասխանատվությունը, այսօր առավել ևս լծվել է Հայց. Եկեղեցու՝ քույր եկեղեցիների հետ հարաբերությունների սերտացման և մերձեցման Աստվածահաճո առաքելությանը: Այս ընդհանուր եկեղեցական շարժումին գործուն մասնակցություն ունենալու Հայոց Հայրապետի դիրքորոշումը հետևյալն է. «Մեր եկեղեցու հիմնադիր Հիսուս Քրիստոսի տված շնորհը մեր կողմից ընդառաջումի կարոտը ունի, այսինքն Աստուծո տված միությանը մենք ընդառաջելու պարտավոր և պատրաստ ենք: Այլապես չենք կարող ասել, որ ճշմարիտ քրիստոնյա ենք»: Առաջնորդված այս ելակետով՝ Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ Ռուս, Ռումին, Վրաց, Կաթոլիկ, Հույն քույր եկեղեցիների պետերի, եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, Եվրոպական եկեղեցիների Խորհրդի ղեկավարների, բազմաթիվ բարձրաստիճան եկեղեցականների հետ՝ ներկայացնելով Հայ Եկեղեցու սկզբունքը եկեղեցիների միության, փոխադարձ հասկացողության և համատեղ գործունեության ոգուց ներս. «Մեր գիտակցությանը մեջ երբեք չպետք է կորսվի եկեղեցու միության ապրումը, առանց որի քրիստոնեական Եկեղեցին կկորցնի իր հավատալիությունը հավատացյալների մոտ, մասնավորաբար ներկա դարում: Հետևաբար մենք առաջնորդվում ենք եկեղեցական մեծ Հայրապետ՝ Օգոստինոսի սկզբունքով՝ «Միութիւն ի կարևորս, Ազատութիւն յերկբայականս և Սէր յամենայնի»: Սա է ամենահիմնականը, որ այսօր աշխարհը իմանա, մարդկությունը իմանա, որ քրիստոնեական Եկեղեցիները այլևս իրար հետ կռվելու փոխարեն իրար հետ գործակցելու, իրար հասկանալու ճանապարհի մեջ են մտել»: Այս հարաբերությունների մեջ Նորին Սրբությունը բազմիցս շեշտել է, որ եկեղեցական միությունը երբեք արդեք չպետք է լինի եկեղեցիների՝ մեր պարագայում Հայց. Առաքելական Եկեղեցու յուրահատուկ ինքնության պահպանմանը:

Գ. Հայաստանում քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյակի տոնակատարության պատրաստություն.

Վեհափառ Հայրապետի բազմուղի գործունեության մեջ առանցքային և նշանակալից տեղ է գրավում, սակայն, Հայաստանում քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյա հոբելյանի պատշաճ մակարդակով նշումը՝ 2001 թվականին: Այս աշխատանքները առավել կենտրոնացված ու արդյունավետ իրականացնելու նպատակով, Նորին Սրբությունը Մայր Աթոռում իր անմիջական հսկողության ներքո հիմնեց «1700-ամյակի կենտրոնական գրասենյակը», որը փուլ առ փուլ բազմազան ծրագրերով պիտի կարողանա ըստ արժանվույն աշխարհին ներկայացնել Հայ Եկեղեցու 1700-ամյա քրիստոնեական վկայության ծանրածանր ուղին՝ այն դարձնելով նոր խթան ապագայի անցնելիք ճանապարհի համար: Եվ բոլոր տոնակատարություններին, զանազան միջոցառումներին, հրատարակություններին, ուխտագնացություններին պիտի փայլ ու շքեղություն հաղորդի քաղաքամայր Երևանում մեծ սլացքով վեր խոյացող Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, որպես խորհրդանիշն ու ճշմարիտ պատկերը նոր Հայության: Սակայն այս ամենով հանդերձ, խորապես մտահոգիչ է Վեհափառ Հայրապետի համար այն, որ «1700-ամյակը չմնա սոսկ առնակատարություններին նշում, այլ դառնա այլակերպությունը մեր ժողովրդի»: Եվ իրապես, ի՞նչ արժեք պիտի ունենան 1700-ամյակի տոնակատարությունները, եթե լինեն միայն արտաքին հարդարանք, խրախճանք և ուրախություն՝ առանց հոգեկան ապրումի և առանց հարազատ եկեղեցու ճանապարհով Աստծուն հավատարիմ մնալու գիտակցության, առանց վերանորոգման և վերազարթոնքի: Եվ, Վեհափառ Հայրապետի իսկ արտահայտությամբ, «1700-ամյակը դարձնելով Նոր Հոգեգալուստ Հայության», պարզապես պարտավոր ենք մեր եկեղեցին, մարդկությանը ներկայանալուց առաջ, դարձնել իրական երկնքի արքայություն երկրի վրա, «Դուռն երկնից, Արդարոց հանգիստ, Մեղաւորաց քաւարան, Քրիստոսի արքայարան, Հրեշտակաց բնակարան, Սրբոց ժողովարան, Տեղի ապաւինի և Տուն Աստուծոյ»: Հետևաբար, լինե՞նք վկայողները, որ «անցյալից եկող, բայց անցյալով չսահմանափակված հավատքը մեր հայրերի , այսօր էլ կենդանի է»:

Այս շատ սեղմ և հակիրճ ուրվագծումով փորձեցինք ներկայացնել Վեհափառ Հայրապետի գահակալության երկամյա գործունեությունն ու այդ գործունեության հիմնական սկզբունքները, որոնք, կարծում ենք, գալիքում պիտի առավել կենսավորվեն և արդյունավորվեն:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր ազգընտիր Գահակալով ապրում է գերագույն իդեալով՝ Հայ եկեղեցու նավը կյանքի փոթորկոտ ալեբախումների միջից հասցնել խաղաղ նավահանգիստ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրակազմը, շնորհավորելով Վեհափառ Հայրապետի ընտրության և գահակալության երկրորդ տարեդարձը, մաղթում է Նորին Սրբությանը երկար ու արդյունավոր օրեր: Եվ մեր սրտագին աղոթքն ենք վերառաքում առ Աստված սաղմոսանվագի խոսքերով. «Տուր զօրութիւն ծառայի քո... և արա առ մեզ նշան բարութեան»:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 3-ին, առավոտյան ժամը 10.30-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացվեց թեմական առաջնորդների և թեմերի աշխարհական պատգամավորների խորհրդակցական ժողովի անդրանիկ նիստը՝ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Գարեգին արք. Գազանճյանի ատենապետությամբ:

Նիստը բացեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը՝ աղոթքով և Ս. Գրքի ընթերցումով:

Ապա ժողովականները լսեցին Նորին Սրբության ընդարձակ հաշվետու զեկույցը՝ Մայր Աթոռում իր գահակալության երկու տարիների ընթացքում կատարված կարևոր իրադարձությունների և ձեռնարկների մասին: Վեհափառ Հայրապետը հերթականությամբ և հանգամանորեն ներկայացրեց նախ Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ծեմարանի, Տպարանի, Վարչական-կազմակերպչական ոլորտի գործունեությունը, ապա տեղեկություններ տվեց հովվապետական այցելությունների, Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի ծավալած աշխատանքների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարված այցերի և միջեկեղեցական հարաբերությունների շուրջ: Զեկույցում խոսվեց նաև կատարված և կատարվելիք շինարարական աշխատանքների, Հայ Եկեղեցու պաշտոնական հիմնադրության 1700-ամյակի նախապատրաստական աշխատանքների, Նվիրապետական Աթոռների հետ հարաբերությունների, Կանոնագրության պատրաստման և Մայր Աթոռի տնտեսական կացության մասին: Ամփոփելով իր խոսքը, Նորին Սրբությունը նշեց. «Նոր ոգևորությամբ նոր շարժում մը պետք է աղբերանա և ծավալվի Մայր Աթոռեն, որուն իբրև բնորոշիչ բացատրություն կրնանք շեշտյալ ձևով ըսել **ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱՋԱՐԹՈՆՔ»** և ապա ավելացրեց, որ այդ շարժման ծիրի մեջ առաջնահերթ գործունեության դաշտերից մեկը պետք է լինի Հայաստանի և նախկին Խորհրդային Միության տարածքում ապրող հայության մեր հայրերի ավանդությունները քրիստոնեական կյանքի նորոգումը, Հայ Եկեղեցու միության ամրացումը և գործնական արտահայտության զարգացումը, մեր հայրենի պետության զորացումը և Արցախի ժողովրդին՝ իր արդար իրավունքների ամբողջական ճանաչման և խաղաղության վերջնական հաստատման ճանապարհին՝ զորակցությունը:

Վեհափառ Հայրապետի զեկույցի ընթերցումից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն:

Նիստի երկրորդ բաժնում քննարկվեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստական աշխատանքներին վերաբերող հարցը:

Հաջորդ օրվա՝ ապրիլի 4-ի նիստի ընթացքում քննարկվեցին Երևանում Մայր եկեղեցու շինարարության, Հայ Եկեղեցու Կանոնագրության և Նվիրապետական Աթոռների հետ փոխհարաբերությունների հարցերը:

Մայր եկեղեցու շինարարական աշխատանքների ընթացքի և ֆինանսական ծախսերի մասին զեկույց տվեց Գարեգին արք. Ներսիսյանը: Սրբազան Հայրը նշելով, որ թեև եկեղեցին կառուցվելու է հիմնականում Մանուկյան ընտանիքի նվիրատության և պետական միջոցներով, բայց ժողովուրդն էլ պետք է ունենա իր

մասնակցությունը, քանի որ եկեղեցին վեր է խոյանալու որպես ողջ հայ ժողովրդի հավատքի կոթող, և ամեն մի հայ մի մասնիկ պետք է ունենա կառուցման ակտիվ գործում:

Եկեղեցու Կանոնագրության պատրաստության հարցի շուրջ զեկուցեց Հանձնախմբի նախագահ Վաչե արք. Հովսեփյանը: Գերաշնորհ Հայրը կարևորեց այն հանգամանքը, որ այսօր Հայաստանյայց Եկեղեցին ունի բոլոր իրավասություններն ու պարտավորությունները իր կյանքը կանոնակարգելու և կարգավորելու առումով: Ուստի Կանոնագրություն մշակելու ներկա փորձը պետք է բխի այս իրողությունից:

Ապրիլի 5-ի նիստի օրակարգում էին՝ հարաբերություններ հայրենի պետության հետ, միջեկեղեցական հարաբերություններ և հաշվետվություն Մայր Աթոռի տնտեսական կացության մասին:

Եկեղեցի-պետություն հարաբերությունների շուրջ խոսեց Կրոնի գործոց խորհրդի նախագահ Լազար Սուջյանը: Պրն. Սուջյանը տեղեկություններ հաղորդեց նաև Հայաստանում գործող աղանդավորական խմբերի մասին:

Միջեկեղեցական հարաբերությունների մասին զեկուցեց Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը: Կարևորելով հարաբերությունների կենսական անհրաժեշտությունը, Նորին Սրբությունն ընդգծեց, որ քրիստոնեական ավանդության որևէ Եկեղեցի չի կարող դուրս մնալ միջեկեղեցական հարաբերություններից: Վեհափառ Հայրապետը նշեց գործակցության չորս բաժիններ՝

ա. Հարաբերություններ դավանակից Եկեղեցիների հետ,

բ. Հարաբերություններ ուղղափառ Եկեղեցիների հետ,

գ. Հարաբերություններ կաթողիկե Եկեղեցու հետ,

դ. Հարաբերություններ բողոքական Եկեղեցիների միության հետ:

Մայր Աթոռի տնտեսական կացության մասին հաշվետու զեկույց տվեց վարչա-տնտեսական բաժնի վարիչ Ներսես Կարամանուկյանը:

Ժողովի ավարտին ամփոփիչ խոսք ասաց Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը:

Նորին Սրբության խոսքից հետո ժողովի բոլոր մասնակիցներն իրենց սրտագին երախտագիտությունը հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ երկու տարվա կարճ ժամանակամիջոցում իր կատարած բազմաթիվ իրագործումների համար՝ ի նպաստ Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի, Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի, Տպարանի, Ծիննարարական և վերանորոգչական աշխատանքների, Ս. Աթոռի տնտեսության, Կանոնագրության Հանձնախմբի կազմության, միջեկեղեցական հարաբերությունների զարգացման և Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստական աշխատանքների:

Հատուկ շնորհակալություն հայտնեցին հատկապես Նորին Սրբության հովվապետական այցելությունների համար, որոնք մեծ խանդավառություն ստեղծեցին հայ ժողովրդի հոգում, կարևոր նպաստ բերեցին ազգապահպանման գործին և զորացրեցին դիրքն ու հմայքը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Վեհափառ Հայրապետին մաղթեցին քաջառողջություն, բազում տարիների հայրապետական արդյունավոր գործունեություն՝ ի փառս Հայ Եկեղեցու:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԷՈՒ ՎՈ ՑՎԻՍՆՍՔ ՂՈՒՈՑԻՈՆՆԷՅՍՊ

ԴԿԹՏԿՍՈ ԿՂՈՄՄԷԳԻ ՅԱԳՂԵԿԿՈՂՈՄ ՎԻՍՆԱՔ



ԵՐԿԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

(Ս. Էջմիածին 1995-1997)

ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐ – ԲԱԶՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Փառք և գոհութիւն Քեզ, Հայր Երկնաւոր, որ շնորհ ըրիր տկար անձիս պաշտել զՔեզ ("ծառայել" Քեզ) Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան այս բարձրագոյն և ծանրագոյն պարտաւորութեան մէջ, անցնող երկու տարիներու ընթացքին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, և՝ Ս. Էջմիածնէն:

Ընդունէ այս երկամեայ համարատուութիւնն, -«զհաշիւ տնտեսութեան իմոյ» - որպէս խունկ անուշաբոյր ծխուած Քու սուրբ եկեղեցւոյ բուրվառին վրայ ի Հայաստան աշխարհի և առ ժողովուրդն հայոց որ ի սփիւռս աշխարհի:

Ներէ ինծի բոլոր այն թերացումներուն համար, որոնք մարդկային մեր բնութեանն են յատուկ:

Սիրեցեալ եղբայրներ ի Քրիստոս և յարգարժան ժողովականք,

Միա երկու տարիները սահեցան այն օրէն ասդին, երբ այս սրբաճաճանչ Մայրավանքին մէջ "կամօքն Աստուծոյ և ընտրութեամբ ապգիս Հայոց" կոչուեցանք Ամենայն Հայոց Կաթողիկոսի պարտականութեան, 1995 թուի Ապրիլ 4-ին և արժանացանք Գահակալութեան հանդիսաւոր պահին՝ Ապրիլի 9-ին:

Մեր առաջին գործը եղաւ ծանօթանալ այն մթնոլորտին և միջավայրին, որոնց մէջէն պիտի գործնապէս արտայայտէի կոչմանս այս ծայրագոյն աստիճանն ու հանգրուանը ի սպասաւորութիւն մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ, Հայաստան աշխարհի այժմու կեանքի պայմաններուն մէջ և Ս. Էջմիածնի Միաբանութեան գործակցութեամբ և Մայր Աթոռի վարչական կառոյցներուն մէջէն:

Ըրինք այն «կոր պարտ էաքն առնել» (ՂՈՒԿ. ԺԷ. 10):

Այստեղ պիտի ջանամ ուրուագծային պատկերով և որոշ պարագաներու շատ հակիրճ վերլուծական խորհրդածութիւններով ձեզի ներկայացնել Մայր Աթոռի անցնող երկու տարիներու գործունէութեան գլխաւոր երեսները, այժմու կացութիւնը և յառաջիկայի հեռանկարները:

Ա

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մեր Ս. Աթոռի Միաբանութեան անդամներու թիւը ընդհանուր գնահատմամբ, օրացոյցի տուեալներուն համաձայն՝ նկատառելի թիւ մըն է, իր մէջ ընդգրկելով եպիսկոպոսներու, վարդապետներու, աբեղաներու և սարկաւագներու դասերը (113 անձ) :

Այս ընդհանուր Միաբանութեանը մէջ ունինք այսպէս կոչուած ներքին, վանական Միաբանութեան կորիզ մը: Երբ ընտրուեցանք և սկսանք Մեր հայրապետական գործունէութեան՝ ութ միաբան հայրեր ունէինք մեր շուրջը՝ երեք եպիսկոպոսներ և հինգ վարդապետներ ու աբեղաներ:

Փառք կուտանք Աստուծոյ որ կոչման գիտակցութեամբ ներշնչեց մեր երիտասարդ սարկաւագներէն շատերը, որոնք կուսակրօն ձեռնադրուեցան անցեալ երկու տարիներու ընթացքին, որով մեր Միաբանական կազմը օժտուեցաւ 15 նոր ձեռնադրեալ աբեղաներով: Վանական մեր կեանքին մէջ անոնք ստանձնեցին այլապան պաշտօններ Մայր Տաճարի, Վեհարանի, Հոգևոր Ճեմարանի, Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնին, և այլ վարչական բնագաւառներու մէջ: Իսկ ոմանք առաքուեցան որոշ թեմեր վարչական-հովուական ծառայութեան և ոմանք ալ՝ բարձրագոյն ուսման համար:

Ներկայիս ունինք 16 սարկաւագներու դաս մը: Ոմանք Հոգևոր Ճեմարանի Զ. լսարանի աւարտական սաներն են, ներառեալ Սևանի դպրանոցէն եկած 9-ը սարկաւագները և ուրիշներ, աւարտած ըլլալով աստուածաբանական ուսման ճեմարանական ընթացքը, լծուած են իրենց աւարտաճառերու պատրաստութեան գործին: Մեր յոյսն է, որ անոնցմէ շատերը ընդառաջեն Աստուծոյ կոչին և մեր ժողովուրդի ստիպողական և անմիջական հոգևոր կարիքներուն, մօտիկ ապագային արժանանան ձեռնադրութեան շնորհին և դառնան ուխտեալ անդամներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և նուիրեալ սպասաւորներ մեր Ս. Եկեղեցւոյ:

Միաբանական մեր կազմին համար կան դրուած երեք անհրաժեշտութիւններ.

ա) Ոմանց առաքումը օտար աստուածաբանական կեդրոններ, արտասահմանեան երկիրներ, առաւել ևս խորացնելու և ընդարձակելու համար իրենց աստուածաբանական պատրաստութեան ծիրը ներկայ դարու յատուկ պահանջքներու լոյսին տակ:

բ) Ոմանց ինքնրնծայումը հովուական-վարչական գործի այլապան թեմերու մէջ, ներկայ օրերուն և հասկանալի պատճառներով նախընտրաբար Հայաստանի և Արցախի Թեմերուն մէջ:

գ) Ոմանց ծառայութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայրավանքին գործունէութեան այլապան բնագաւառներուն մէջ:

Այս բոլորին մէջ կարևորագոյնը այն է, որ հետզհետէ առաւել ևս կօրացնենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբանութեան պատկանելու և անոր ծառայութիւնը, վարկն ու հեղինակութիւնը

բարձր և գործօն պահելու գիտակցութիւնն ու նախանձախնդրութիւնը: Միաբանները ըլլալէ աւելի՝ մենք Միաբանութիւն ենք: Ընդհանրական շահը Մայր Աթոռին՝ գերիվեր նշանակութիւն պէտք է ունենայ մեր ինքնըմբռնումին և ծառայութեան մէջ:

Միաբանական հասարակաց հոգևոր, ծիսական, արարողական, աղօթական կեանքն է օճախը այս գիտակցութեան մշակումին: Այս տեսակէտէն՝ բարձրօրէն կը գնահատեմ հասարակաց ծիսական-հոգևոր կեանքին մեր Միաբաններէն շատերուն բերած մասնակցութիւնը օրական ժամերգութեանց, սուրբ պատարագի մատուցումներուն և տօնական օրերու յատուկ արարողութեանց, ընդհանուր հսկողութեամբ Լուսարարապետ Յուսիկ Արք. Սանթուրեանին և իր օգնականներուն: Միածնաէջ տաճարը մեր Միաբանական կեանքի սի՛րտն է: Եւ այդ սիրտը պէտք է մնայ առողջ և տրոփուն, որովհետև հասարակաց աղօթքն է որ կուտայ կենդանութիւն և կշռոյթ այդ սրտին մէջէն ամբողջ մարմնին:

Չորեքշաբթի երեկոներու Միաբանութեան անդամներու համախմբումը Վեհարանի Մեր գրասենեակին մէջ ընթացաւ որոշ աստիճանի, ոչ ամբողջականօրէն, գոհացուցիչ եղանակով: Գործունէութեան, հովուական այցելութիւններու և այլ կբաղումներու պատճառով հերթական կանոնաւորութեամբ չընթացան այդ հանդիպումները, բայց ունեցան իրենց որոշակի դերը Միաբանական կեանքի ինքնարտայայտութեան և հարստացման տեսակէտէ:

Արտասահմանեան երկիրներէն այցելող միաբաններու, օտար և հայ եկեղեցականներու այցելութիւնները և անոնց մասնակցութիւնը այդ հանդիպումներուն՝ հարստացուցիչ տարր մը եղան անոնց բովանդակութեան ճոխացման համար:

***

Մայրավանքի հոգևոր-եկեղեցական կեանքի և միանգամայն ազգային ոգևորութեան և վերանորոգութեան գագաթնակէտը եղաւ Ս. Էջմիածնի Մայրավանքի շրջափակին մէջ և Մայր Տաճարի մուտքին Մեր կատարած առաջին Միւռոնօրհնէքը (8 Սեպտեմբեր 1996) մեր Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներու, եպիսկոպոսական դասի, հոգևորականներու մասնակցութեամբ և ի ներկայութեան Ռուս Օրթոտոքս, Վրացական և Անգլիքան Եկեղեցիներու ներկայացուցիչներու և մեր Հանրապետութեան Վսեմաշուք Նախագահին, պետական աւագանիին, օտար պետութիւններու դեսպաններու և Հայաստանի ու աշխարհի չորս կողմերէն համահաւաքուած բազմահազար հաւատացեալներու ներկայութեան:

***

Բոլորդ ալ կը յիշէք թէ որքան խոր, համազգային, միահամուռ գոհունակութեամբ Միւռոնօրհնէքի նախօրէին, Շաբաթ օր, 7 Սեպտեմբերին, հանդիսաւոր և մեծավայելուչ արարողութեամբ և թափօրով Մեր երջանկայիշատակ նախորդներէն նահատակ

Խորէն Ա. Մուրադբէկեան Կաթողիկոսի աճիւնները Գայիանէ վանքի շրջափակէն փոխադրեցինք Ս. Էջմիածնի Մայրավանքը և այլ կաթողիկոսներու շարքին, ամփոփեցինք Մայր Տաճարի մուտքին, արժանի յարգանք և երախտիք ընծայելով անոր անթառամելի և յաւերժապատգամ յիշատակին: Այդ յարգանքին ամենէն պերճախօս արտայայտութիւնը եղաւ Մեր առաջին Միւռոնօրհնէքին ձօնումը իր պայծառ յիշատակին:

Բ

ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Վերջին երկու տարեշրջաններուն, 1995-ի Յուլիս ամիսէն ասդին, Հոգևոր Ճեմարանի տեսչութիւնը Մեր տնօրինութեամբ կը վարէ Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեանը, որ այդ պաշտօնի ստացման համար Ս. Էջմիածին վերադարձաւ Միացեալ Նահանգներէն:

Վերաշխուժացման շրջան մը եղաւ, և կը շարունակէ ըլլալ, իր տեսչութեան շրջանը: 1995-96 տարեշրջանին ուսանողութեան թիւը եղաւ 90: Իսկ ներկայ տարեշրջանին (1996-97) թիւը հասաւ 102-ի: Այս տարի կարելի չէր աւելի և մանաւանդ դուրսէն նոր սաներ ընդունիլ, որովհետև Սնանի Դպրանոցի աւարտական սաները և Գիւմրիի Դպրանոցի սաներ ընդունուեցան ուսանողական կազմին մէջ:

Ուսուցչական կազմին մէջ բնականօրէն ունեցանք նոր դէմքեր, բայց ընդհանուր կազմը մնաց մեծաւ մասամբ անփոփոխ: Մեր միաբաններէն Տ. Յակոբ Եպս. Գըլընճեան Մոնթէվիտէոյէն հրաւիրուեցաւ մէկամսեայ դասաւանդութիւններ կատարելու, իսկ Կիլիկեան Սրոռէն Տ. Գրիգոր Վրդ. Չիֆթճեան մէկ տարիով (1995-96) կատարեց դասաւանդութիւն: Եւ այժմ նոյն Միաբանութենէն Տաթև Սրբ. Սարգիսեան հրաւիրուած է աստուածաբանական նիւթերու դասաւանդութեան, զոր կը կատարէ անցնող Յունուարէն ասդին: Տանիմարքայի Եկեղեցիէն Վեր. Մայքըլ Վեստ կը դասաւանդէ Նոր Կտակարանի ներածութեան որոշ դասեր հայերէն լեզուով: Յառաջիկայ տարեշրջանին համար պիտի ունենանք Անկլիքան Եկեղեցիէն, Անգլիայէն, հոգևորական մը որ Ս. Գրոց ներածութեան և եկեղեցական պատմութեան դասեր պիտի աւանդէ:

Այս բոլորը յիշեցինք անոր համար որ Տեսչութիւնը զգալով կրօնական, սուրբ գրական, աստուածաբանական, բարոյագիտական նիւթերու զօրացման կարիքը, վանաբնակ մեր միաբաններու շարքին հարկ տեսաւ հրաւիրել դասախօսներ առաւել ոյժ տալու համար շատ կենսական այդ առարկաներու դասաւանդմանը Ճեմարանէն ներս:

Բնականօրէն, Հոգևոր Ճեմարանի տարեկան տեսչական տեղեկագիրներէն տեղեակ մնացիք, և կը շարունակէք մնալ, Հոգևոր Ճեմարանի գործունէութեան, որտեղ որպէս կարևոր նպաստ մը նշուած է այցելու միաբաններու և օտար բարձրաս-

տիճան հոգևորական այցելուներու դասախօսութիւնները, որոնք խթանիչ դեր ունեցան ուսանողութեան հետաքրքրութեան ծիրի ընդլայնմանը մէջ:

Ճեմարանի համար ամենէն մեծ իրագործումները շինարարական մարզէն ներս եղան հետևեալ երկու ձեռնարկները.

ա) Գէորգեան ճեմարանի շէնքին հիմնական վերանորոգումը, որուն բարերարը եղաւ Միացեալ Նահանգներէն Ազգային Բարերար Պրն. Գէորգ Յովնանեանը և շինարարական աշխատանքներու ծրագրման և հսկողութեան գործնական աշխատանքները տարուեցան, և կը տարուին Միացեալ Նահանգներու Հայոց Արևելեան Թեմի Օգնութեան Ֆոնտի կողմէ: Վստահաբար լառաջիկայ տարի դասաւանդութիւնները, սերտողական և ուսումնասիրական աշխատանքները և հանդիսութիւնները կը կատարուին վերանորոգեալ Գէորգեան պատմական ճեմարանի կամարներուն ներքև:

բ) Նոր հանրակացարանի շինութիւնը, Գէորգեան ճեմարանի կողքին, եռայարկ նոր շէնքի մը կառուցումը, որուն բարերարութիւնը ստանձնեցին, դարձեալ Միացեալ Նահանգներէն, Ֆրեկնոյէն, Ազգային Բարերար՝ Տէր և Տիկին Վահան Շամլեանները: Սա ամենէն կարևոր իրագործումներէն մէկը պիտի ըլլայ, որովհետև Հոգևոր ճեմարանի այժմու կացութիւնը, ուսանողութեան առտնին բնակութեան և կեցութեան պարագաներու տեսակէտէն, անտանելիօրէն դժուար պայմաններ կը ներկայացնէ: Յոյս ունինք որ մէկ տարիէն կ'աւարտի այդ շէնքը, որ կարելիութիւն պիտի ընծայէ 120 ուսանողներու և տասնեակ մը այցելու ուսուցիչներու և Տեսչութեան կազմի անդամներու կեցութեան բնականոն պայմաններ ընձեռելու:

Հոգևոր ճեմարանի մէջ ամենէն էական հարցերէն մէկը դասաւանդութեան ծրագրի և մեթոտական սիստէմի վերանայման կարիքն է: Այս տեսակետէն՝ թէն ուսումնասիրական, նախապատրաստական աշխատանքներ տարուեցան, բայց եզրափակիչ որոշումներու կարելի չեղաւ հասնիլ:

Այս բոլորին մէջ Մեկ համար կարևորագոյնը մթնոլորտի ստեղծումն է: Այնպիսի մթնոլորտի, հոգևոր, իմացական, գիտական, ծառայողական, որ ներշնչման աղբիւրի վերածէ Հոգևոր ճեմարանը մեր Եկեղեցւոյ նոր սպասաւորներ պատրաստելու կենսական և փրկաւէտ առաքելութեան մէջ:

Գ

ՏՊԱՐԱՆ

Տպագրական-հրատարակչական գործունէութիւնը անբաժան և կարևոր մէկ բաժինն է եղած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Տպարանի հիմնադրութեան օրէն (1772 թ.) ասդին, անցնող 225 տարիներու ընթացքին: Մշակութային ծառայութեան միջոցներէն մէկն է հանդիսացած ան և կը մնայ մինչև այսօր:

Տպարանի արդիական գործիքներով կարգացմանը մեծ ոյժ տուաւ մեր երջանկայիշատակ նախորդը՝ Վազգէն Ա. Կաթողիկոսը՝ արդիական նոր սարքաւորումներ ձեռք բերած ըլլալով: Այդ տպագրական մեքենաներու սահուն և արդիւնաբեր օգտագործման համար երեք անգամներ Զուիցերիայէն մասնագէտներ եկան, նորոգութիւններ կատարեցին և կատմարարական նոր մեքենայով մրն ալ օժտեցին մեր տպարանը: Լիբանանէն ալ ուրիշ մասնագէտներ եկան երկիցս այդ մեքենաներու վերատեսութեան, վերահսկողութեան և վերանորոգութեան համար: Այս բոլորը եղան Զուիցերական եկեղեցիներու Միջ-Օգնութեան Մարմնին (HEKS) և Ս. Գրոց Ընկերութեան միասնական օժանդակութեամբ:

Տպարանը անցնող երկու տարիներու ընթացքին նոր աշխուժութեամբ ի լոյս ընծայեց աւելի քան 100 հատորներ, մեծ ու փոքր չափերով: Հրատարակչական մեր գործի գլխաւոր ուղղութիւնները երեք էին.

ա) Պաշտօնական հրատարակութիւններ, Օրացոյց, "Էջմիածին" ամսագիր, հայրապետական պատգամներ և այլ կրօնական բովանդակութեամբ թերթիկներ, աղօթքներ:

բ) Կրօնական-դաստիարակչական գործեր ժողովուրդի պարզ խաւերու կրօնական-հոգևոր շինութեան ի խնդիր:

գ) Հայագիտական-բանասիրական, եկեղեցա-պատմական, գրական-գեղարուեստական արտադրութիւններ մեր մշակոյթի տարածման համար:

Հրատարակութեանց ամենէն թերի կողմը անոնց տարածումն է: Այդ մարդին մէջ նոր կարգադրութիւն ենք բրած որ նորաբաց յուշանուէրներու և գիրքերու տարածման կեդրոնը լրիւ ստանձնէ այդ աշխատանքը: Բնականօրէն մեր երկրի թղթատարական (փոստ) սպասարկութեան միջոցները չունին այն արագութիւնը և գործնական առաւելութիւնները, որոնք կան արևմտեան աշխարհի երկրներուն մէջ: Յուսանք յառաջիկային կը բարելաւուի նաև տարածման գործը:

***

Բացի մեր տպարանի արտադրութիւններէն, Մայր Աթոռի հրատարակչական-մշակութային գործունէութեան ծիրին մէջ կ'իյնան աւելի քան 20 կարևոր հրատարակութիւններու մեկենասութիւնը կամ հովանաւորութիւնը, զոր ընձեռած ենք մեր հայրենի գրողներուն, գիտական հաստատութիւններու, Մաշտոցեան Մատենադարանին և անհատ հայագէտներուն և որոնց ցուցակը այստեղ ներառնել անհրաժեշտ չենք գտներ:

Դ

ՎԱՐՉԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մեր ընտրութենէն ետք Գերագոյն Հոգևոր Խորհուրդը վերակազմեցինք հետևեալ ձևով.

ա) Պահեցինք նախկին կապմը իր հոգևորական և աշխարհական անդամներով և իր երկու ատենապետներով յանձինս Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի և Տ. Գարեգին Պատրիարք Գալանճեանի:

բ) Նոր անդամներ նշանակեցինք յանձինս Տ. Սողոմոն եպս. Արիստակէսեանի, Տ. Աբրահամ վրդ. Մկրտչեանի և Սկաղ. Վլադիմիր Բարխուդարեանի:

գ) Լիակոր չորս անդամներ նշանակեցինք արտասահմանի չորս գլխաւոր աշխարհամասերէ յանձինս Տ. Զաւէն Արքեպ. Չինչինեանի (Միջին Արևելք), Տ. Գիւտ Արքեպ. Նագգաշեանի (Եւրոպա), Տ. Գիսակ Արքեպ. Մուրատեանի (Հարաւային Ամերիկա) և Տ. Աղան Արքեպ. Պալիոկեանի (Ծայրագոյն Արևելք):

Տարին երկու անգամ լիագումար նիստեր գումարեցինք ինչպէս նաև այլ նիստեր տեղաբնակ անդամներու մասնակցութեամբ (ԳՀԽ-ի 8 նիստ):

Ունեցանք նաև Եպիսկոպոսաց Խորհրդակցական միօրեայ ժողով 1996 թուի Սեպտեմբերի 5-ին, որուն ընթացքին յատկապէս անդրադարձանք մեր Եկեղեցւոյ 1700-ամեակի տօնակատարութեան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յարաբերութեանց, տալով հարկ եղած լուսաբանութիւնները:

***

Վերատեսութեան ենթարկելով Հայաստանի տարածքին թեմերու կառուցուածքային դրոյթը, որով չորս գլխաւոր թեմեր ունէինք մեր Հանրապետութեան սահմաններէն ներս, ժողուած ըլլալով այն նախանձախնդրութենէն, որով կը ցանկանայինք որ մեր Եկեղեցին աւելի գործնական աշխատանքով ներկայ դառնայ մեր ժողովուրդի կեանքին մէջ քրիստոնէական մեր դարաւոր աւանդոյթը վերակենդանացնելու և ուժեղացնելու համար, և նկատի ունենալ նաև մեր պետութեան ներքին վարչական կառուցուածքի փոփոխութիւնը, ըստ որուն 11 մարզեր ճշտուած էին Հանրապետութեան տարածքին, յետ խորհրդակցութեան Գերագոյն Հոգևոր Խորհուրդին հետ, Հայրապետական տնօրինութեամբ և յատուկ պաշտօնագրով թեմերու թիւը 8-ի բարձրացուցինք իւրաքանչիւր նոր թեմին համար նշանակելով թեմական Առաջնորդ, յանգելով հետևեալ դրութեանը.

1. Այրարատեան Հայրապետական Թեմ՝ ներառնելով Երևան մայրաքաղաքը և Արարատի մարզը

– Առաջնորդական փոխանորդ՝ Գերշ. Տ. Գարեգին Արքեպ. Ներսէսեան

2. Շիրակի Թեմ՝ ներառնելով Շիրակի մարզը

– Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գրիգորիս Արքեպ. Բուենիաթեան

3. Գուգարաց Թեմ՝ ներառնելով Լոռիի և Տաւուշի մարզերը

– Առաջնորդ՝ Հոգեշ. Տ. Սեպուհ վրդ. Զուլքեան

4. Սիւնեաց Թեմ՝ ներառնելով Սիւնիքի և Վայոց Ձորի մարզերը

– Առաջնորդ՝ Հոգեշ. Տ. Աբրահամ վրդ. Մկրտչեան

5. Արմաւիրի Թեմ՝ ներառնելով Արմաւիրի մարզը
– Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աստղիկ Եպս. Արիստակէսեան
6. Արագածոտնի Թեմ՝ ներառնելով Արագածոտնի մարզը
– Առաջնորդ՝ Հոգեշ. Տ. Նաւասարդ վրդ. Կճոյեան
7. Գեղարքունեաց Թեմ՝ ներառնելով Գեղարքունիքի մարզը
– Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անանիա Եպս. Արապաճեան
8. Կոտայքի Թեմ՝ ներառնելով Կոտայքի մարզը
– Առաջնորդ՝ Հոգեշ. Տ. Առաքել վրդ. Քարամեան

Նոյեմբեր 16-ին Մեր Գրասենեակին մէջ ունեցանք բոլոր ներքին թեմերու Առաջնորդներու խորհրդակցական ժողով, քննարկելու համար նորակազմ թեմերու և այլ թեմերու կազմակերպչական, հովուական գործունէութիւնները: Առաջին ամիսներու փորձառութեան լոյսին տակ ի յայտ եկաւ որ առաջնահերթ կարիքը նոր հոգևոր հովիներու կարիքն է, Առաջնորդարաններու կեդրոնատեղիներու և գրասենեակներու հաստատման պէտքը և քրիստոնէական դաստիարակութեան անհրաժեշտութիւնը:

***

Նման կարգադրութիւն ըրինք նաև Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի տարածքին գործող եկեղեցիներու պարագային: Ինչպէս սկիզբէն նախատեսուած էր, երբ թեմը հիմնադրուած էր Երջանկայիշատակ Վազգէն Ա Կաթողիկոսի կողմէ, Ուկրաինայի և Հարաւային Ռուսաստանի և կամ Հիւսիսային Կովկասի շրջանները, որոնք Առաջնորդական փոխանորդութիւններ էին, թեմական առանձին կեանքի պայմաններ ստեղծուելու ապագային պիտի դառնային առանձին թեմեր, այդ երկու շրջանները Յունուարի 10-12 (1997) թուի Գերագոյն Հոգևոր Խորհուրդի նիստին ուրոյն թեմեր հռչակեցինք, որովհետև կը յրացնէին բոլոր պայմանները և յատուկ դիմումներ կատարած էին այդ ուղղութեամբ: Առաջնորդ նշանակեցինք Առաջնորդական փոխանորդութիւնը վարող Տ. Նաթան Ծ. վրդ. Յովհաննէսեանը (Ուկրաինայի Թեմի) և Տ. Եղնիկ Ծ. վրդ. Պետրոսեանը (Հարաւային Ռուսաստանի Թեմի) :

***

Երկու շաբաթներ առաջ՝ 20 Մարտին, Վեհարանի սրահին մէջ ունեցանք առաջին միօրեայ հաւաքը Հայաստանի մէջ գործող բոլոր թեմերու հոգևոր հովիներուն և Մայր Աթոռոյ Միաբանութեանս անդամներուն:

Աղօթքի և խոկումի պահերէ, Ա. գրական և հայրաբանական ընթերցուածներէ ետք տուինք հարկ եղած ցուցմունքները հովուական գործի ատոր արդիւնաւորման համար: Թեմական Առաջնորդներ, քահանայ հայրեր, Միաբաններ ելոյթներ ունեցան և մատնանշեցին թերացումներ և կատարեցին թելադրութիւններ յառաջիկայի գործունէութեան բարելաւման հեռանկարով:

Ե

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ՁՕՐԱՑՈՒՄ

Մեր ժողովուրդի, մանաւանդ Հայաստանի և նախկին Խորհրդային Վարչակարգի իշխանութեան տակ գտնուող երկիրներու մէջ ապրած ժողովուրդի քրիստոնէական դաստիարակութեան գործը ամենէն հրատապ և անյետաձգելիօրէն հրամայական և տենդագին ջանքերով հետապնդելի գործն է: Անցնող երկու տարիներու ընթացքին Մենք ականատես եղանք այն իրողութեան, որ եօթանասուն տարիներու ապակրօնական և հակակրօնական գաղափարաբանութեան և անոր գործադրութիւնը պարտադրական ձևով հետապնդող իշխանութեան քաղաքականութեան հետևանքով քրիստոնէական հաւատքի սկզբունքներուն, Աւետարանի ուսուցումներուն և մանաւանդ մեր Հայոց Առաքելական Եկեղեցւոյ ծիսական-հոգևոր աւանդոյթներուն անգիտակ և անհաղորդ մնացած է մեր ժողովուրդի մեծ մասը, մանաւանդ միջին և նոր սերունդը:

Մեր երջանկայիշատակ նախորդին օրով Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզութեան կազմակերպեալ ծառայութիւններ մատուցուեցան, բայց շարունակական և հետևողական ընթացքը տկարացաւ: Ժամանակ մը, այդ գործը Թեմերու Առաջնորդներուն թողնուեցաւ:

Անցնող երկամեայ Մեր գործունէութեան ընթացքին մէջ շեշտեալ կարևորութիւն ընծայեցինք Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզութեան Կեդրոնի կազմակերպման և անոր գործունէութեան անմիջական հսկողութեան և հետապնդման: Ուրախ ենք այսօր կենկուցելու որ Մեր գահակալութենէն քանի մը ամիսներ ետք 1995-ի Սեպտեմբերին, Ս. Գայիանէ վանքին մէջ յատկացուած Կեդրոնը գործնապէս կազմակերպուեցաւ, որուն համար Կեդրոնի վարիչ-տնօրէն նշանակեցինք Տ. Վազգէն Վրդ. Միրզախանեանը: Կեդրոնը ունեցաւ իւր անձնակազմը 16 անձերէ բաղկացած: Ունեցաւ իր պիւտճէն և լծուեցաւ լուրջ, ծրագրեալ առաքելութեան:

Գործի ընդարձակման և զօրացման տուեալները և առաւել ևս կայն աշխուժացնելու հեռանկարը Մեզ մղեցին յատուկ շէնք յատկացնել այդ կենսական գործին առաւել արդիւնալից պտղաբերման համար: Ս. Գայիանէ վանքի դիմաց առանձին շէնք մը կար կիսաւերակ և լքեալ վիճակի մէջ որ սեփականութիւնն էր գիւղատնտեսութեան նախարարութեան: Յաջողեցանք ձեռք բերել այդ սեփականութիւնը Մայր Աթոռին անունով և հիմնական վերակառուցման ու վերանորոգումի ենթարկել կայն աւելի քան 50.000 տոլարի գումարով մը և մասնակի օգնութեամբ Հայ Օգնութեան Ֆոնտին: Կեդրոնին պաշտօնական բացումը կատարուեցաւ 1996-ի Նոյեմբերին: Կեդրոնը օժտուեցաւ համակարգիչներով և գրասենեակային աշխատանքի համար անհրաժեշտ եղող այլ գործնական միջոցներով:

Անցնող մէկ ու կէս տարիներու ընթացքին Կեդրոնը իրականացուց հետևեալ աշխատանքները.

ա) Հինգ ֆաղաքներու մէջ՝ Երևան, Արմաւիր, Արտաշատ, Մասիս, Ապարան, կազմակերպուեցան կրօնի ուսուցիչներու պատրաստութեան դասընթացները, շաբաթական երեք պահերով, ուսուցիչներու և ուսուցչուհիներու ու ուսուցչական ասպարէզի թեկնածու երիտասարդներուն և երիտասարդուհիներուն աւանդելով Ս. Գրքի, Քրիստոնէական հաւատքի և Հայց. Եկեղեցւոյ դաւանանքին, ծէսին, պատմութեան յատուկ նիւթեր: Դասընթացքներուն հետևող ուսանողներու ընդհանուր թիւը 500-ի կը հասնի: Վերջերս այդ հինգ քաղաքներուն վրայ աւելցաւ Վանաձորը, Գուգարաց Թեմին մէջ, ուր աւելի քան 110 ուսանողներ կը հետևին դասընթացքներուն: Նախապատրաստական աշխատանքներ կը տարուին Արցախի թեմի մէջ ուսուցչաց յարաններ և դասընթացքներ կազմակերպելու համար 1997-ի ամրան շրջանին:

բ) Քաջալերելու համար ուսուցիչներու պատրաստութեան այս խիստ կարևոր գործը, կազմակերպուեցան միօրեայ երեք համագումարներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ Մեր նախագահութեամբ և գործօն մասնակցութեամբ (1995 Օգոստոս 24-ին, և ապա՝ Ս. Թադէոս և Ս. Բարթողիմէոս Առաքեալներու տօնին՝ 1995 Դեկտեմբեր 2-ին և 1996 Նոյեմբեր 30-ին) :

գ) Ուսուցիչներու պատրաստութեան առընթեր, յատուկ աշխատանք տարուեցաւ դասագիրքերու պատրաստութեան գործը յառաջ տանելու համար: Այրարատեան Հայրապետական թեմի նախապէս պատրաստած չորս դասագրքերու վրայ անցնող տարուայ ընթացքին աւելցան երեք դասագրքեր Զ. Է. Ը. դասարաններու համար: Գործը կը շարունակուի այժմ մասնաւոր անձերու կողմէ, որոնք կը զբաղուին միայն այդ գործով: Պատրաստութեան ընթացքի մէջ է նաև կրօնի ուսուցման նոր տասնամեայ ուսումնական ուղեցոյց-ծրագիրը:

դ) Զանգուածային, ժողովրդական խաւերու քրիստոնէական դաստիարակութեան մարզին մէջ յառաջ տարուեցան եկեղեցիներու մէջ հաւատացեալ ժողովուրդին համար քարոզութիւններ, շաբաթական հերթականութեամբ, սկզբնապէս Երևանի Ս. Սարգիս Մայր Եկեղեցւոյ մէջ (մինչև Յունիս 1996) և ապա Էջմիածին քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Միաբան Հայրերու կողմէ, ծրագրեալ յաջորդականութեամբ:

ե) Այս մարզէն ներս օգտաշատ ծառայութիւններ մատուցուեցան պետական հեռուստատեսիլի միջոցաւ.

— Եօթը անգամ ուղիղ եթեր հեռարձակուեցաւ "Կանթեղ" հաղորդաշարը.

— Ամէն շաբաթ իրագործուեցաւ "Տորան Լուսոյ" շարքը, որուն մէջ Մենք ևս անմնապէս ունեցանք Մեր բաժինը: Այժմ գործին պատասխանատուութիւնը ամբողջութեամբ յանձնուած է Կեդրոնին:

— Հեռուստատեսիլի մանկական հաղորդումներու խմբագրութեան հետ համատեղ Քրիստոնէական Կեդրոնի պատրաս-

տութեամբ ամէն Շաբաթ օր առաւօտեան տրուեցան հաղորդաշարեր մանկապատանեկան ուսուցողական բնոյթով և բովանդակութեամբ:

"Նորք" հեռուստատեսիլի վրայ ամէն երեկոյ, ծրագրի աւարտին, տրուեցաւ և ցարդ կը շարունակուի տրուիլ "Միրեցէք զմիմեանս" խորագրին տակ աստուածաշնչական ընթերցումներ և շատ հակիրճ մեկնաբանական վերլուծումներ, յորդորական ոճով:

ա) Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնը ծաւալեց նաև հրատարակչական ծառայութիւն ժողովրդական ուսուցման առաջադրանքով: Առանձնապէս կը տրուի ցանկը այդ հրատարակութեանց, որոնց մէջ Մեր անձնական նախաձեռնութեամբ և հովանաւորութեամբ կարևորագոյն աշխատանքը կը նկատենք Օրմանեան Պատրիարքի "Համապատում" ստուար հատորին արևելահայերէն թարգմանութիւնը, որ մօտ օրէն լոյս կը տեսնէ աւետարաններու բնագիրին հետ միասին տպագրութեամբ, Մայր Աթոռոյս տպարանէն:

Քրիստոնէական Դաստիարակութեան այս բնագաւառին մէջ, անկախաբար Կեդրոնի տարած աշխատանքներէն, Մենք անձամբ հովանաւորեցինք անցնող Սեպտեմբերէն ասդին խմբավար երաժիշտ Լորիս Ճգնաւորեանի կողմէ ղեկավարուած հոգևոր համերգներու այն շարքը, որ ամէն Շաբաթ օր կը տրուի Ֆիլհարմոնիայի Արամ Խաչատուրեան շքեղ սրահին մէջ, աստուածաշնչական և հայրաբանական գրականութենէն վերցուած ընթերցումներով միասին: Հպարտաւոր հաւատացեալներ ամէն Շաբաթ օր հոգեկան սնուցում և վայելք կը ստանան այս համերգներու միջոցաւ:

⁂

Գալով թեմերու մէջ տարուած աշխատանքին՝ Մենք անձամբ քաջալեր հանդիսացանք Հայաստանի բոլոր թեմերուն գումարներ յատկացնելով Թեմական-ծխական մակարդակի վրայ քրիստոնէական դաստիարակութեան գործը տարածելու և արդիւնաւորելու նպատակով: Մեր փափաքն է որ ամէն մէկ թեմ ունենայ իր քարոզչական և դաստիարակչական գործունէութիւնը և լայնօրէն օգուտ քաղէ Կեդրոնի տարած աշխատանքներէն: Այդ ուղղութեամբ ամենէն գործօն Թեմը Այրարատեան Հայրապետական Թեմն է: Աշխատանքները սկսած են կազմակերպուիլ նաև այլ թեմերու մէջ:

Զ

ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկամեայ Մեր գահակալութեան այս սկզբնական շրջանին բնականօրէն մեր առաջին պարտաւորութիւններէն մէկը համարեցինք մօտէն ճանչնալ մեր հաւատացեալ ժողովուրդը Հայաստանի, Արցախի և արտասահմանի մէջ: Հովուապետական այցելութիւնները կարևոր մէկ մասը հանդիսացան Մեր Կաթողիկոսական գործունէութեան:

Առաջին հերթին պարտք համարեցինք հաղորդուիլ մեր Մայր Հայրենիքի՝ Հայաստանի, Արցախի և Ռուսաստանի, Ուկրաինայի և Վրաստանի ժողովուրդին հետ: Միաւասիկ շարքը այդ առաջին տեսակի այցելութեանց.

ա) Այրարատեան Հայրապետական Թեմի կեդրոնը՝ Երևան (Ս. Սարգիս Մայր Եկեղեցի)

բ) Շիրակի Թեմ, Լենինականի երկրաշարժէն ամենէն շատ տուժած շրջանի ժողովուրդին (1995 Մայիս 5-8)

գ) Արցախի Թեմ, պատերազմէն ցնցուած, բայց արի կեցուածք ցուցաբերող մեր ժողովուրդին (1995 Մայիս 19 -22)

դ) Այրարատեան Թեմի Սևանի աւազանի շրջանը (1995 Օգոստոս 22-24)

ե) Այրարատեան Թեմի Խոր Վիրապի և Արարատի շրջանը (1995 Յուլիս 25)

զ) Գուգարաց Թեմ (1995, Յուլիս 28-31)

է) Նորակազմ թեմերէն Արմաւիրի Թեմ (1996 Յուլիս 14):

Այս տարի, 1997-ին, Մեծ պահքի շրջանին, միօրեայ այցելութիւններ տուինք Այրարատեան, Արագածոտնի, Շիրակի և Կոտայքի թեմերուն հոգևոր քարոզութեան համար՝ ի խնդիր հոգևոր վերազարթնութեան: Երկու կարճ այցելութիւններ տուինք Սիւնեաց Թեմի Ռինտի (1 Նոյեմբեր 1996) շրջանին, մեր թեմի կառուցած ջրմուղի բացման առիթով, ինչպէս նաև Գորիս և Կապան՝ նոր եկեղեցիներու կառուցման և հիմնարկէքի առիթով:

***

Հայաստանէն և Արցախէն դուրս մերձակայ երկիրներու մեր ժողովուրդին այցելութիւններ տուինք հետևեալ կարգով.

ա) Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմին կեդրոնը ի Մոսկուա, ուր միանգամայն հիւրը եղանք Ռուս Օրթոտոքս Եկեղեցւոյ պետին՝ Ալեքսի Բ Պատրիարքին (1995 Յունիս 12-16): Այստեղ յատուկ հանդիպում ունեցանք նաև հրաւէրովը Ալեքսի Բ Պատրիարքի, Կովկասի շրջանի Իսլամ Կրօնապետին Շեյխ-ուլ-Իսլամ Փաշա Զադէի հետ, որ եկաւ Բաքուէն: Մեր տեսակցութենէն ետք երեք հոգևոր պետերով միասնական հաղորդագրութիւն մը հրապարակեցինք Ղարաբաղի հարցի լուծման առնչութեամբ:

բ) Վրաստանի մեր Թեմին և Վրաց Օրթոտոքս Եկեղեցւոյ պետին՝ Իլիա Բ Պատրիարքին (1995 Սեպտեմբեր 8-11):

գ) Ռումինիայի մեր Թեմին և Ռումինիայի Օրթոտոքս Եկեղեցւոյ պետին՝ Թէոքթիստ Պատրիարքին, Ռումէն Օրթոտոքս Եկեղեցւոյ ինքնագլխութեան 110-րդ տարեդարձին տօնակատարութեան առիթով (1995 Հոկտեմբեր 26 - Նոյեմբեր 2) :

դ) Ուկրաինայի Օդեսա քաղաքի մեր ժողովուրդին, նորակառոյց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ օծման համար (1995 Նոյեմբեր 24-26):

***

Գալով արտասահմանի մեր թեմերուն, հովուապետական այցելութիւն տուինք հետեւեալներուն.

ա) Միացեալ Նահանգներու Հայոց Արեւելեան և Արեւմտեան Թեմերուն և Գանատայի Թեմին (1996 Յունուար 10–Փետրուար 20):

բ) Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան և Սիւանգամայն Յոյն Օրթոտոքս Եկեղեցւոյ Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարք Բարթողոմէոս Ա Պատրիարքին (1996 Մայիս 8–15), որուն հետ յատուկ նիստ ունեցանք մեր երկու Եկեղեցիներու միջև աստուածաբանական խօսակցութիւններու ներկայ վիճակի և յառաջիկայի հետապնդումի մասին:

գ) Զուիցերիոյ Թեմին, ի Ժընև, Զուիցերիոյ Բողոքական Եկեղեցւոյ Միջ.–Օգնութեան կազմակերպութեան (EPER կամ HEKS) Մեր տուած այցելութեան առիթով (1996 Յունիս 6–12):

դ) Հարաւային Ամերիկայի մեր երեք թեմերուն ի Պրազիլ, ի Մոնթեվիդէօ (Ուրուկուայ) և յԱրժանթին (ի Պուէնոս Այրէս և Գորտոպա) (1996 Օգոստոս 1–18):

ե) Ֆրանսայի Հայոց Թեմին ի Փարիզ, ի Նիս, ի Մարսէյլ և ի Լիոն իրենց շրջաններով (1997 Յունուար 23–7 Փետրուար):

զ) Աւստրալիոյ և Նոր Զելանտայի Հայոց Թեմին (1997 Փետրուար 14 – 24), ճանապարհի վրայ երկուական օրով այցելելով նաև Սինկափուրի Հայոց եկեղեցին և Պանքոքի (Թայլանտ) փոքրաթիւ հայոց համայնքին:

Այդ բոլորի մասին դուք տեղեակ մնացիք մամուլի միջոցաւ: Անոնց մանրամասն նկարագրութիւնները կը գտնէք "Էջմիածին" ամսագրին մէջ:

Առաջին հովուապետական այս այցելութիւնները աքանչելի առիթներ եղան մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կենդանի և հաղորդական ներկայութեան վերածելու մեր աշխարհացրիւ հայ ժողովուրդի կաւակներու կեանքին մէջ: Անոնք առիթ հանդիսացան հոգևոր և ազգային վերաբերութեան, որոնց բարիքներուն մասին խօսիլ անհրաժեշտ չենք գտներ: Այդ այցելութեանց մէջ միայն կ'ուզենք շեշտել այն իրապատուկ կարևորութիւնը զոր ընծայեցինք մեր երիտասարդ սերունդին, անոնց հետ ուղղակի կապ ստեղծելով և անոնց մէջ ջանալով քաջալերել պատասխանատուութեան և մասնակցութեան անհրաժեշտութիւնը մեր համայնքային կեանքին:

Երկրորդ, այս այցելութիւնները առիթ հանդիսացան ամենուրեք օտար Եկեղեցիներու պետերուն և ներկայացուցիչներուն հետ սերտ յարաբերութիւններ մշակելու տեսակէտէն, միջ–եկեղեցական յարաբերութեան տարածքը առաւել ևս շեշտելով մեր Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ:

Երրորդ, անոնք առիթներ ընծայեցին Մեզի մեր հաւատացեալ ժողովուրդի ապրած երկիրներու պետութեանց ղեկավարներուն և միջազգային կազմակերպութիւններուն հետ տեսակցութիւններ և հանդիպումներ ունենալու և անոնց պարզելու մեր Եկեղեցւոյ,

հայրենիքի, ժողովուրդի և մեր հայրենի Հանրապետության ներկայ կացության պայմանները, շեշտելով անոնց աջակցության անհրաժեշտությունը մեր նորակազմ ապատ ու անկախ պետության ամրացման և զարգացման գործին և միանգամայն Արցախի հայ ժողովուրդի արդար իրաւունքներու ճանաչման:

Արտասահմանեան հովուապետական այցելությանց աւարտին, Հայրապետական յատուկ Գիրերով Մեր շնորհակալության և գնահատանքի խօսքերը ուղղեցինք Մեր այցելած թեմերու Առաջնորդներուն, ազգային-եկեղեցական իշխանությանց և հաւատացեալ ժողովրդին, երբեմն գրքոյկներու ձևին տակ հրատարակելով կանոնք:

Մէկ բառով՝ վերածնդեան շունչը զգացինք մեր ողջ հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Է

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ Ի ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մեկի համար ուրախության առիթ եղաւ միշտ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին ընդունիլ բազմաթիւ այցելություններ հայ և օտար կարևոր պատասխանատուություններ ունեցող անձանց, որոնց շնորհիւ լայն առիթներ ունեցանք բոլոր ականաւոր անձնաւորություններուն և յարգարժան ազգայիններուն առարկայական տուեալներով և վերլուծական բացատրություններով ներկայացնելու մեր Ս. Եկեղեցւոյ և մեր ժողովուրդի կացությունը, իրագործումները և կարիքները:

Բացի եկեղեցական հոգևորական պետերէն, միջեկեղեցական դէմքերէն, պետական, դիւանագիտական, քաղաքական, մշակութային, գիտական բարձրաստիճան անձնաւորություններ ի Հայաստան իրենց այցելության ընթացքին եկան նաև մեր հոգևոր կեդրոնը, Ս. Էջմիածին և առիթ ունեցան ճանչնալու մեր Եկեղեցւոյ պատմական հոգևոր և ազգային ու մշակութային ժառանգությունը և միանգամայն իրազեկ դառնալու անոր ներկայի գործունէության: Աւելի քան երկու հարիւր նման այցելություններ ենք ընդունած, որոնց մասին դուք կը տեղեկանաք "ԷՋՄԻԱԾԻՆ" պաշտօնական ամսագրէն և մամուլի էջերէն ու հաղորդակցության այլ միջոցներէ: Այստեղ միայն քանի մը անուններ կը յիշատակենք.

Նախագահը Ռումինիոյ՝ Իոն Իլիեսկու
Նախագահը Ուկրաինայի՝ Լեոնիտ Կուչմա
Ռուսական Դաշնության Պետ. Դումայի՝ Կենատի Սելեզնիով
Գերմանիոյ Արտաքին Գործոց նախարար՝ Կ. Քինկել
Անգլիայի Արտաքին Գործոց նախարար՝ Մալքոլմ Ռիֆքինտ
Ֆրանսիայի Սենատի նախագահ՝ Ռընէ Մոնորի
IMF–ի նախագահ՝ Միշել Քանտեսիու
Ռուսիոյ պաշտպանության նախարար՝ Պաւել Կրաչով
Ռումինիոյ Արտաքին Գործոց նախարար՝ Թեոտոր Մելեշքանու
Իրանի Արտաքին Գործոց նախարար՝ Տքթ. Աբբաս Վելայեաթի

Իրանի Մշակոյթի նախարար՝ Սեյետ Մուսթաֆա Միր-Սալիմ
Ղըրղըզստանի Խորհրդարանի նախագահ՝ Ալմամբետ Մատուպրահիմով
Դաշնային Ռուսաստանի Մշակոյթի նախարար՝ Եւկենի Սիտորով
Ֆինլանդիայի Արտաքին Գործոց նախարար՝ Թարիա Հալոնեն
Վրաստանի Խորհրդարանի նախագահ՝ Զուրաբ Ժվանիա
Հարաւսլաւիայի Արտաքին Գործոց նախարար՝ Վլատիսլաւ Յանովիչ
Մեծն Բրիտանիայի տրանսպորտի, աւիացիայի և նաւատորմի նախարար՝ Վիքտոր Կոշեն:

Բացի նախագահական և նախարարական աստիճանի այս անձնաւորութիւններէն, ունեցանք բազում այլ անձնաւորութիւններ պետական, միջազգային կազմակերպութիւններէ, ինչպէս Միացեալ Ազգերու, Միջազգային Կարմիր Խաչի, դիւանագիտական ներկայացուցիչներու (դեսպաններ և դեսպանորդներ), գիտական, ակադեմական, մշակութային և մարդասիրական ծառայութիւններէ և ասպարէզներէ բազում դէմքերու:

Ը

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայ ժամանակներու քրիստոնէական աշխարհի մէջ ամենէն յատկանշական երևոյթներէն և հիմնական տարածքներէն մէկը Եկեղեցիներու միջև փոխադարձ մերձեցման շարժումն է քրիստոնէական ընդհանուր Եկեղեցւոյ միութիւնը վերագտնելու հեռանկարով, ըստ Քրիստոսի կամքին և պատուիրանին: Բնականաբար մեր Եկեղեցին իր բաժինը ունի այս շարժումին մէջ, որ միջազգայնօրէն ճանչցուած է էկիւմենական շարժում անունով:

Անցնող երկու տարիներու ընթացքին Մենք ջանացինք առաւել ևս աշխուժացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մասնակցութիւնը էկիւմենական այս շարժումին: Մեր այցելութիւնները Ռուսաց Օրթոտոքս Եկեղեցւոյ պետ՝ Ալեքսիյ Բ Պատրիարքին ի Մոսկուա, (Յունիս 1995), Վրաց Օրթոտոքս Եկեղեցւոյ պետ՝ Իլիա Բ Պատրիարքին (Սեպտեմբեր 1995), Ռումանիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ պետ՝ Թէոկթիստ Պատրիարքին (Հոկտեմբեր 1995), Կ. Պոլսոյ Յոյն Օրթոտոքս Տիեզերական Պատրիարք՝ Բարթողիմէոս Ա-ին (Մայիս 1996), Ժընևի մէջ Զուիցերական Բողոքական Եկեղեցիներու Միջ.-Օգնութեան կազմակերպութեան (EPER = HEKS), այդ առթիւ միօրեայ այցելութիւնը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (W.C.C.) կեդրոնը, Խորհուրդի Ընդհանուր Քարտուղար՝ Տքթ. Քոնրատ Ռայսերի և Եւրոպայի Եկեղեցիներու Խորհուրդի Ընդհանուր Քարտուղար՝ Տքթ. Ժան Ֆիշերի (Յունիս 1996), Նորվեկիոյ Լութերական Եկեղեցւոյ պետ՝ Արֆլոտ Եպիսկոպոսին (Հոկտ. 1996) և անցնող Դեկտեմբերին Հռոմի Կաթոլիկ Եկեղեցւոյ պետ՝ Յովհաննէս-Պօղոս Բ Սրբազան

Պապին բնականօրէն եղան կարևոր թուականներ և դէպքեր մեր Եկեղեցւոյ յարաբերական կեանքին արդի պատմութեան մէջ:

Իսկ Ռուսաց Օրթոտոքս Եկեղեցւոյ պետ՝ Ալեքսիյ Բ Պատրիարքին (Մայիս 1996), Ռումանիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ պետ՝ Թէոկթիստ Պատրիարքի (Նոյեմբեր 1996), Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ընդհ. Քարտուղար Տքթ. Քոնրատ Ռայսերի (Ապրիլ 19-23, 1996) այցելութիւնները ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին առաւել ևս սերտացուցին մեր Եկեղեցւոյ միջեկեղեցական յարաբերութիւնները:

Այս տարի 1997-ին կը սպասենք այցելութիւնները Վրաց Պատրիարքին (Մայիս 1997) և Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարքին, որոնք վստահաբար առաւել ևս պիտի կօրացնեն մեր կապերը քոյր Եկեղեցիներուն հետ:

Իսկ այստեղ, Ս. Էջմիածնի մէջ 1996 թուի Մարտ ամսուն տեղի ունեցած ժողովը Ե.Հ.Խ.-ի Եւրոպայի Եկեղեցիներուն օժանդակութեան Յանձնախումբին Հայաստանէն բազմաթիւ ներկայացուցիչներու մասնակցութեամբ և գլխաւորութեամբ ու հովանաւորութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի "Կլոր Սեղան Հայաստանի համար" խորագրին տակ, մի աքանչելի առիթ ընծայեց մեր Ս. Եկեղեցւոյ համար, Հայաստանի ժողովուրդին կարիքները առարկայական ճշգրտութեամբ ներկայացնելու Ե.Հ.Խ.-ի անդամ Եկեղեցիներուն:

1995 թ. Յունիս 28-Յուլիսի 2 Շուէյցարիայի Բոլդերն քաղաքի մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական ժողովը ԵՀԽ-ի Կրթութեան բաժնի, Եւրոպայի Եկեղեցիներու Համաժողովի և Բոլդերնի Բողոքական Ակադեմիայի միասնական նախաձեռնութեամբ, որուն Մայր Աթոռի մասնակցութիւնը բերաւ մեր Միաբաններէն Միքայէլ ծ. Վրդ. Աջապահեանը:

Երկիցս Մայր Աթոռոյ երկու ներկայացուցիչները՝ Ներսէս Արք. Պոկապալեանը և Օր. Սիլվա Ղապէլեանը մասնակցեցան ԵՀԽ-ի Կեդրոնական Յանձնախումբի ժողովներուն ժընևի մէջ: Մեր երեք ներկայացուցիչները՝ Պրազիլիոյ Հայոց Առաջնորդ Տ. Տաթև Արք. Ղարիպեանը, Զուիցերիայէն՝ Տ. Վիգէն Եպս. Այքազեանը և Էջմիածնէն Տ. Միքայէլ Ծ. Վրդ. Աջապահեանը գործօն մասնակցութիւն բերին Պրազիլիոյ մէջ, Սալվատոր քաղաքի մէջ տեղի ունեցած ժողովին (24 Նոյեմբեր – 3 Դեկտեմբեր 1996): Նաև Նաթան Ծ. Վրդ. Յովհաննէսեանն ու Պրն. Լազար Սուքեանը ու Սերգեյ Սմբատեանը մասնակցեցան (16-19 Ապրիլ, 1996) Վարշաւայի մէջ տեղի ունեցած OSCE երկրների կրօնական ազատութեան վերաբերուող ժողովին: Վիեննայի Pro-Oriente կազմակերպութեան ժողովներուն կանոնաւոր կերպով մասնակցեցաւ Տ. Մեսրոպ Արք. Գրիգորեանը: Եւրոպայի Եկեղեցիներու Խորհուրդի այլազան ժողովներուն մասնակցեցաւ Տ. Ոսկան Արք. Գալփաքեանը: Պոլսոյ մէջ "Հապիթա" անունով գումարուած միաջազգային ժողովներուն Մեր անունով մասնակցեցաւ Մեսրոպ Արք. Մութաֆեանը: 1996 թ. Սեպտեմբեր 19-21 Կիևի մէջ տեղի ունեցաւ «Կրօնը և Եկեղեցին յետսոցիալիստական երկրներում» թեմայով գիտական

Կոնֆերանս, որը կազմակերպուել էր Կրօնի ազատութեան միջազգային ընկերակցութեան, Կրօնի և դաւանութեան ազատութեան միջազգային ակադեմիայի, Ուկրաինայի կրօնական գործերու պետական կոմիտէի կողմէ: Սոյն ժողովին Հայաստանի Հանրապետութիւնը կը ներկայացնէր Հայաստանի Կրօնից Գործոց նախագահ Լապար Սուքեանը: Ժողովին իր մասնակցութիւնը բերաւ նաև Ուկրաինայի Հայոց Առաջնորդ Տ. Նաթան Ծ. Վրդ. Յովհաննէսեանը: Նոյն թուականի Հոկտեմբեր 1-3 Մինսկի մէջ տեղի ունեցաւ Միջեկեղեցական Համաժողով «Կանչուած ենք միակ յոյսին խաղաղութեան կապով» (Եփես. Դ 3-4) խորագիրով: Հայ Եկեղեցւոյ անունով համաժողովի աշխատանքներուն մասնակցեցան Տ. Պարգև Եպիս. Մարտիրոսեանը, Տ. Նաթան Ծ. Վրդ. Յովհաննէսեանը և Տ. Վազգէն Վրդ. Միրզախանեանը: Սսիկիի և Միլանոյի մէջ Քրիստոնէական Եկեղեցիներու և այլ կրօններու միջազգային խաղաղութեան համար գումարուած ժողովներուն մասնակցեցան Տ. Գիւտ Սրբ. Նազգաշեանը, Տ. Պարգև Եպս. Մարտիրոսեանը և Տ. Միքայէլ Ծ. Վրդ. Սջապահեանը: Ս. Գրոց ընկերութեան և ԵՀԽ միջօգնութեան համախումբի ժողովներուն գործոն մասնակցութիւն բերած են Տ. Ներսէս Սրբազանը և Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեանը, ինչպէս նաև վարչա-տնտեսական գործերի կառավարիչ՝ Պրն. Ներսէս Գարամանուկեանը:

Թ

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐՈՒ ՀԵՏ

Անցնող երկու տարիներու ընթացքին բնականոն յարաբերութիւններ մշակեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան և Հայց. Եկեղեցւոյ միւս Նուիրապետական Աթոռներու միջեւ:

Երկու պատրիարքական Աթոռներու գահակալները՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ և Տ. Գարեգին Պատրիարքները քանիցս այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին թէ՛ Գերագոյն Հոգեւոր Խորհրդին և թէ 1700-ամեակի Կեդրոնական յանձնաժողովին որպէս Ատենապետներ:

Երուսաղէմի պատրիարքարանի հետ կապուած բոլոր հարցերու շուրջ Պատրիարք Հայրը Մեզ անձամբ տեղեակ պահեց, յատկապէս, վերջին շրջանի յարուցուած կալուածական հարցերու մասին, որոնց անդրադարձած էր հայ մամուլը: Մենք միշտ յայտնեցինք Մեր ամբողջական պատրաստակամութիւնը Մեր օգտակար դերը կատարելու հարցի բարւոք լուծման մէջ:

1996 թ. Մայիսին Մեր այցելութեամբ առաւել ևս ամրացուցինք կենդանի կապը Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան հետ, Մեր հովուապետական անդրանիկ այցելութեամբը և մասնակցութեամբը Պատրիարքութեան հիմնադրութեան 535-ամեակի տօնակատարութեանը: Խորապէս տպաւորուեցանք հոգևորականութեան և ժողովուրդին ցոյց տուած սքանչելի հաւատար-

մութեամբը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ: Մեծ թիւով անոնց մասնակցութիւնը Միւռոնօրհնէքի հանդիսութեանը ուրիշ ապացոյցներէն մէկն էր այդ հաւատարմութեան և նուիրումին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ այս երկամեայ շրջանին յարաբերութիւնները յառաջ գացին հետևեալ ձևով.

ա) 1995 թ. Յունիսին անձամբ ընդառաջելով Կիլիկեան Աթոռի հրաւէրին երկու պատգամաւորներով յանձինս Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներէն Տ. Պարգեւ Եպս. Մարտիրոսեանի և Դրն. Պիոն Յակոբեանի այցելեցինք Անթիլիաս, որտեղ Մայր Աթոռի մեր երկու պատգամաւորները մասնակցեցան կաթողիկոսական ընտրութեան: Մենք անձամբ նախագահեցինք ընտրական ժողովի բացման նիստին և Մեր խօսքն ուղղեցինք ժողովականներուն:

Սպա Յուլիսի 2 -ին նախագահեցինք Կաթողիկոսի օծման հանդիսութեան:

բ) Նորընտիր Կաթողիկոս Արամ Ա. 1995-ի Սեպտեմբերի 26–Հոկտեմբեր 3-ը Մեր հրաւէրով այցելեց Ս. Էջմիածին թէ մասնակցելու համար Հայց. Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի Կեդրոնական Յանձնախումբի ժողովին և թէ «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամի ժողովին:

գ) Անթիլիասի մէջ կատարուած Միւռոնօրհնութեան հանդիսութեանը երկու անձերէ բաղկացած պատուիրակութիւն ուղարկեցինք՝ յանձինս Տ. Գիւտ Արք. Նագգաշեանի և Տ. Գարեգին Արք. Ներսէսեանի:

Նոյնպիսի պատուիրակութիւն մը ընդունեցանք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն յանձինս Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի, Տ. Տաթև Արք. Սարգիսեանի և Տ. Օշական Եպս. Զոլոյեանի Մայր Աթոռիս մէջ, երբ կատարեցինք Մեր անդրանիկ Միւռոնօրհնէքը 1996 թ. Սեպտեմբերի 8-ին:

դ) 1996 թ. Հոկտեմբերի 22-29-ը Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա Կաթողիկոսն երկրորդ անգամ այցելեց Ս. Էջմիածին «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամի ժողովին մասնակցելու: Այդ առիթով առանձին խօսակցութեամբ հարմար դատեցինք, որ երկու Աթոռներու միջև գոյութիւն ունեցող և վարչական բնոյթ կրող հարցերու քննարկումը երկխօսութեամբ շարունակուի, Հայ ժողովուրդի կեանքի նոր պայմաններու լոյսին տակ կանոնք լուծելու բարեացակամ և նախանձախնդիր մօտեցումով և մղուած Հայ Եկեղեցւոյ և հայ ազգի գերագոյն շահերուն:

Առ այդ արդէն իսկ նամակ գրեցինք իրեն և հրաւիրեցինք որ պատուիրակութիւն մը չորս հոգիներէ բաղկացած Կիլիկեան Աթոռէն այցելէ Ս. Էջմիածին և Մեր կողմէ նշանակուած չորս հոգիանոց պատուիրակութեան հետ քննարկեն երկար տարիներէ ի վեր առկախ մնացած հարցերը և առաջարկեն եպրակացուցիչ լուծումներ: Պատասխան ստացանք, որ սիրով պիտի ընդառաջեն սոյն հրաւէրին և յառաջիկայ Օգոստոսին պատրաստ են ուղարկելու պատուիրակութիւնը:

Խոհեմ քայլերով յառաջ տարուելու են խօսակցութիւնները և

ամէն ջանք թափուելու են, որ նոր տարակարծութիւններ, վէճեր չծագին այս կապակցութեամբ և հարցերը լուծուին սիրոյ և փոխադարձ հասկացողութեան ոգիով և մէկ Եկեղեցիի գաղափարով, վճռական համոզումով ու կեցուածքով:

Ժ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մեր երկամեայ գործունէութեան մէջ լայն տեղ գտաւ շինարարական, նորոգչական աշխատանքը, որ այնքան անմիջական կարևորութիւն ունի մանաւանդ վերարթնութեան և վերապարթօնքի այս օրերուն:

Նախ ուրախութեամբ կ'ուզէի յայտնել որ մեր հայրենի պետութեան պատկան իշխանութեան բարեացակամութեամբ Մայր Աթոռը վերստացաւ որպէս այլևս իր սեփականութիւն՝ Ս. Էջմիածնի Մայրավանքի շուրջ գտնուող հողերու մէկ կարևոր տարածքը, ներառեալ Գևորգեան Ճեմարանը և կբօսայգին (7,0 հա), ինչպէս նաև Ս. Գայիանէ (0,2 հա) և Ս. Հռիփսիմէ (3,0 հա) վանքերուն շուրջը եղող որոշ հողային տարածքներ:

Նոյնպիսի հողային օրինական սեփականացումներ եղան որոշ թեմերու մէջ պետական մարկային իշխանութեանց բարեհաճութեամբ, յատկապէս Սիւնեաց և Շիրակի թեմերուն մէջ: Իսկ նոր թեմերու կազմութեան պարագային, պետական իշխանութիւնները այլապան մարկերու մէջ որոշ շէնքեր և հողեր տրամադրեցին Առաջնորդարանի և եկեղեցւոյ շինութեան համար:

Ստորև կներկայացնենք ամփոփ պատկերը երկամեայ շինարարական և վերանորոգչական աշխատանքներուն:

ա) Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ Հոգևոր Ճեմարանի սաներուն հանրակացարանի վերանորոգութիւն:

բ) Կառուցում Յուշանուէրներու և Գիրքի տարածման կեդրոնին, Մայրավանքի մայր մուտքին:

գ) Ս. Հռիփսիմէ վանքին մէջ Հռիփսիմեանց կոյսերու նշխարներու պատշաճ ամփոփման համար յատուկ քարաշէն խորանի կառուցում, տաճարի տանիքի նորոգութիւն և ամբողջ շրջափակի սալայատակում և նորոգութիւն, չորս նոր սենեակներու կառուցման ծրագրով: Բարերարութիւնը ստանձնեց Տիկին Լուիզ Սիմոն-Մանուկեան՝ ի յիշատակ իր մօր՝ Մարի Մանուկեանի: Այնտեղ ծրագրուած է սկսիլ մայրապետական միաբանութեան մը կազմութիւնը:

դ) Ամենէն կարևոր շինարարութիւններէն մէկը եղաւ Օշական գիւղի մէջ Ս. Մեսրոպ Մաշտոցի նուիրուած շէնքի արմատական նորոգութիւնը և վերածումը Ս. Մեսրոպ Մաշտոց Դպրատան, որպէս կեդրոն գիտական-գեղարուեստական հանդիպումներու և որպէս թանգարան նուիրուած Ս. Մեսրոպ Մաշտոցին: Այս մեծ գործին, ներառեալ ցանկապատման և բակի բարեկարգման աշխատանքներու բարերարութիւնը ստանձնեց Շիքակոյի ազնիւ հայերէն պրն. Ճիւան Կոբոյեանը:

Նոյն վայրին մէջ այժմ աւարտման հանգրուանին հասած է

Արագածոտնի Առաջնորդարանի շէնքի կառուցումը, որուն բարերարութիւնը ստանձնած են Տէր և Տիկին Ժիրայր և Յասմիկ Գաբրիէլեանները, Լիբանանէն:

Ե) Մեծամօրի ատոմակայանի համալիրին մէջ կառուցուեցաւ մատուռ-խորանը Մեր նախաձեռնութեամբ, որպէս աղօթքի և խորհրդածական պահերու վայր, հպարտաւոր պաշտօնեաներուն և գործաւորներուն համար: Անոր սպասաւորութիւնը յանձնուած է Արմաւիրի Թեմին:

Կ) Գէորգեան ճեմարանի վերանորոգում, և Հոգևոր ճեմարանի համար նոր հանրակացարանի կառուցում, որոնց արդէն ակնարկուեցաւ վերև:

Է) Վեհարանի հիմնական նորոգութիւն, որուն կարիքը կը զգացուէր տարիներէ ի վեր:

Ը) Վերսկսում և շարունակում վերանորոգչական աշխատանքներուն Տաթևի վանքին, Նորավանքին, Գառնահովիտի և Արէնի եկեղեցիներուն:

Թ) Թեմերու մէջ օժանդակութիւն կառուցող նոր եկեղեցիներուն և վերանորոգուող հին եկեղեցիներուն (Սիւնեաց թեմին մէջ՝ Գորիսի և Ղափանի եկեղեցիներուն, Արցախի մէջ՝ Մարտակերտի շրջանի եկեղեցին, Գուգարաց թեմի մէջ՝ Իջևանի եկեղեցին, Գեղարքունիքի Թեմի եկեղեցիներու նորոգութեան, Կոտայքի Թեմի նորոգութեանց, Այրարատեան Թեմի Ս. Յովհաննէս Կարապետի և Ս. Զօրաւոր եկեղեցիներու բակերու շէնքերու գնման, Շիրակի Թեմի Առաջնորդարանի կահաւորում և այլն) :

Այստեղ, յիշատակութեան արժանի են Սամարղանդի մէջ հայկական եկեղեցւոյ մի շինութիւնը, որուն բարերարը եղաւ Պրն. Արթուր Մարտիրոսեան: Իսկ Ուկրաինայի Օդեսա քաղաքին մէջ ժողովուրդի ջանքերով կառուցուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին Մենք անձամբ օծելու ուրախութիւնը ունեցանք:

Ժ) Արցախի մէջ տարափոխիկ հիւանդութեանց համար յատուկ հիւանդանոցի վերակառուցում, նուիրուած ծագումով ղարաբաղցի և մեծանուն Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանի, "ՀԱՅԱՍՏԱՆ" Համահայկական Հիմնադրամի միջոցով, և բարերարութեամբ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին (W.C.C.):

Ժա) Գիւմրիի մէջ 36 բնակարաններու վերակառուցում երկրաշարժէն տուժած ընտանիքներու համար, դարձեալ "ՀԱՅԱՍՏԱՆ" Հիմնադրամի միջոցաւ և Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի բարերարութեամբ:

Ժբ) Սպիտակի եկեղեցւոյ շինութեան յառաջացում մինչև գետնայարկ:

Ժգ) Մայր Աթոռի նոր վերստացած շրջակայ հողերու ցանկապատում:

Ժդ) Շինարարական բոլոր այս աշխատանքներուն գլխաւոր նպակէտը պիտի հանդիսանայ անշուշտ Երևանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ անունով օծուելիք Մայր եկեղեցւոյ կառուցումը, որուն հիմնադրման աշխատանքները արդէն սկսած են և որուն կ'անդրադառնանք առանձնապէս:

ԺԱ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 1700-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

1995 թուի 27-29 Սեպտեմբերին, Մեր հրաւէրով տեղի ունեցաւ Հայց. Եկեղեցւոյ Կեդրոնական Յանձնախումբի ժողովը Ս. Էջմիածնի մէջ, որուն մասնակցեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսը՝ Արամ Ա, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Պատրիարք Հայրերը՝ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան և Տ. Գարեգին Արք. Գալանճեան և 23 հոգևորականներ և աշխարհականներ նուիրապետական մեր բոլոր Աթոռներէն:

Այդ ընդհանուր ժողովէն կազմուեցաւ Գործադիր Մարմին մը 11 անդամներէ բաղկացած՝ 6 Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, 3 Կիլիկեան Աթոռէն և մէկական երկու Պատրիարքութիւններէն, որպէս Ատենապետ ունենալով Տ. Մեսրոպ Արք. Գրիգորեանը և Տ. Մեսրոպ Արք. Աշճեանը: Երբ այս վերջինը նշանակուեցաւ Գործադիր Մարմնի վարիչ-տնօրէն, այն ատեն երկրորդ Ատենապետ եղաւ Տ. Օշական Եպս. Չոլոյեանը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ հիմնուեցաւ յատուկ Գրասենեակ որուն ծառայութեան կոչուեցան Մայր Աթոռի Միաբաններէն Հ. Աշոտ աբեղայ Մնացականեան և Արտակ սրկ. Տիտանեան: Վերջերս անգլերէն լեզուի թղթակցութեանց և այլ գործնական աշխատանքներու համար պրն. Խաչիկ Չէյթլեան (Միացեալ Նահանգներէն) միացաւ սոյն անձնակազմին:

Սոյն Մարմինը երկու ժողովներ գումարեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, նշանակեց Յանձնախումբեր ուխտագնացութեանց, ցուցահանդէսներու, գիտաժողովներու, հրատարակութիւններու, Յուշանուէրներու ծրագրման և կազմակերպման, հին եկեղեցիներու վերանորոգութեան համար: Բոլոր աշխատանքներու մասին ձեզի աւելի մանրամասն կեկոյց կը տրուի Գործադիր Մարմնի անդամներէն Մեսրոպ Արք. Գրիգորեանի և Յովնան Արք. Տէրտէրեանի կողմէ:

Մեր անձնական տեսակէտները յաճախակիօրէն արտայայտած ենք այս մասին: Մեր ջերմ փափաքն և ջանքը պիտի ըլլայ, ինչպէս կը հաւատանք, ձեր բոլորինն է, որ 1700-ամեակը դառնայ մեր Եկեղեցւոյ համար իսկական վերանորոգման շարժումի մը, որուն գագաթնակէտը պիտի ըլլայ Երևան մայրաքաղաքի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ կառուցումը:

Մեր տպաւորութիւնն այն է Գործադիր Մարմնի ցարդ ծաւալած աշխոյժ և ժրաջան գործունէութենէն, որ ծրագիրները շատ տարածուն կերպով են յղացուած, շատ են թիւով և դժուար պիտի ըլլայ անոնց ամբողջական իրագործումը 1700-ամեակի տօնակատարութեան առիթով: Հարկ է յառաջիկային ընտրութիւն կատարել, կարևորներու վրայ սևեռել ջանքն ու աշխատանքը, որպէսզի կարենանք գործնապէս արդիւնալից ընծայել 1700-ամեակի նշումը մեր ժողովուրդի և այլ ժողովուրդներու և Եկեղեցիներու և մշակութային և միջազգային կրօնական

կազմակերպութիւններու համար: Կոչ կ'ուղղենք մեր բոլոր թեմերուն որ լայնօրէն բերեն իրենց մասնակցութիւնն ու գործակցութիւնը Գործադիր Մարմնի աշխատանքներուն:

ԺԲ
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՐՑ

Մեր Կաթողիկոսական ընտրութենէն ասդին, այս հարցով երկու անգամներ հանգամանօրէն կբաղուեցանք Գերագոյն Հոգևոր Խորհուրդի հետ միասնաբար:

Նախ պաշտօն յանձնեցինք Գերաշնորհ Տ. Վաչէ Արք. Յովսէփեանին, որ ուսումնասիրական մանրակնին աշխատանք մը պատրաստէր դիւրացնելու համար կանոնագրութեան պատրաստութեան ընթացքը: Սրբազանը ընդարձակ թղթածրարով մը և յատուկ ներածականով մը ներկայացուց ցարդ մեր Եկեղեցւոյ մէջ գոյութիւն ունեցող և ժամանակին պատրաստուած ու երբեմն գործածութեան դրուած և երբեմն ալ միայն մշակուած, բայց գործածութեան չդրուած կանոնադրութիւնները, կատարելով նաև համադրական աշխատանք մը:

Գերագոյն Հոգևոր Խորհուրդի մէջ քննելէ ետք անոր աշխատանքը կազմեցինք յատուկ յանձնախումբ մը գլխաւորութեամբ Երուսաղէմի Ամենապատիւ Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի՝ բաղկացած հետևեալ անձերէ.

Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Տ. Գարեգին Արք. Ներսէսեան, Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան, Տ. Գրիգորիս Արք. Բունիաթեան, Տ. Մեսրոպ Արք. Գրիգորեան, Տ. Սողոմոն Եպս. Արիստակէսեան, Տ. Խաժակ Արք. Պարսամեան:

Յանձնախումբի աշխատանքներուն ընդգրկեցինք նաև հայրենի իրաւաբան մասնագէտներէն Հայկ Խաչատուրեանը, Գառնիկ Սաֆարեանը, Հենրիկ Խաչատուրեանը, Տարիէլ Բարսեղեանը և Ռաֆայէլ Պապայեանը:

Անցնող Յունուարին սոյն ժողովը գումարեց իր անդրանիկ նիստը և մասնագէտները սկսան գործնական աշխատանքին: Այս մասին յատուկ կեկուցագիր կը տրուի Յանձնախումբի Ատենապետ Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի կողմէ՝ սոյն խորհրդակցական ժողովին:

Մենք ալ ունինք պատրաստած «Խոհեր և ցուցմունքներ» ներածական գիր մը և կը ներկայացնենք սոյն ժողովին, երբ օրակարգին վրայ գայ սոյն հարցին քննարկումը:

ԺԳ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սոյն հարցին առանձնապէս կ'անդրադարձուի այս ժողովին մէջ, երբ այն ներկայացուի և քննարկուի: Մենք, իբրև բիւճէի հայթայթման գլխաւոր պատասխանատու՝ այստեղ պարտք կը զգանք սիրելի ժողովականներուդ յայտնելու հետևեալ կարևոր քանի մը կէտերը.

ա) Նախ փառք կուտանք Աստուծոյ, որ անցնող երկու տարիներու ընթացքին կարելի եղաւ հաւասարակշռել բիւձէն գլխաւորաբար բարեսիրական, ապգասիրական կապմակերպութիւններու և կոհաբերութեան ոգիի տէր անհատ ապգայիններու օժանդակութեամբ: Ընդհանուր գնահատումով՝ մեր տարեկան բիւձէին հապիւ մէկ երրորդը կարելի կրլլայ տեղական միջոցներով ձեռք բերել: Բացատրութեան կարիք չկայ, որովհետև բոլորիդ ծանօթ են Հայաստանի մեր ժողովուրդի տնտեսական ծանր պայմանները:

Ներքին թեմերէն և Էջմիածնապատկան վանքերէն եկամուտները մասնաւորաբար մոմավառութեան միջոցներով ձեռք կը բերուին, որոնք նկատելիօրէն նուապած են բաղդատած նախորդ տարիներու եկամուտներուն:

բ) Վանական ծախսերը ներառեալ Հոգևոր Ճեմարանն ու Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչական կեդրոնը և այլ շինարարական աշխատանքներ, արձանագրած են նոր ու շատ լայն զարգացումներ և յաւելումներ սպառողական բաժնի մէջ: Միայն պաշտօնէութեան համար երկու անգամներ կրկնապատկած ենք ամսական վճարումները անցնող երկու տարիներու ընթացքին:

գ) «Լուսաւորչի Լումայ» անունին տակ տրուող և տրուելիք թեմական օժանդակութիւնները պէտք է վերածուին Աթոռատուրքի հասկացողութեամբ մասնակցութեան Մայր Աթոռի տարեկան բիւձէի հաւասարակշռման մէջ:

դ) Այն, ինչ որ արտայայտեցինք մեր ընտրական ժողովին օրը անհրաժեշտ է, որ ստեղծուին մնայուն և շահութաբեր Հիմնադրամներ (Funds), անոնց տարեկան եկամուտները շարունակական կերպով ներառելու համար Մայր Աթոռի բիւձէի հայթայթման համար:

ե) Առաւել ևս ուժ պէտք է տալ յուշանուէրներու և հրատարակութեանց տարածման թէ՛ որպէս մշակութային ու հոգևոր ծառայութեան միջոց և թէ՛ որպէս նիւթական եկամուտի աղբիւր Մայր Աթոռիս համար:

***

Միաւասիկ ամփոփ ուրուագծային պատկերը երկու տարիներու այն գործունէութեան, զոր յառաջ տարինք գործակցութեամբը և աջակցութեամբը Մայր Աթոռիս Միաբանութեան, Գերագոյն Հոգևոր Խորհուրդի և պաշտօնէութեան:

Փակելէ առաջ այս ամփոփ զեկոյցը արտի պարտք կը զգանք մեր ջերմ շնորհակալութիւնները յայտնելու մեր Միաբանութեան անդամներուն, Թեմական Առաջնորդներուն, Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներուն, մեր Հանրապետութեան նախագահ պրն. Լևոն Տէր-Պետրոսեանին, Ազգային Ժողովին, կառավարութեանը, նախարարութիւններուն, Երևանի և Էջմիածնի քաղաքային իշխանութեանց, բոլոր այն կապմակերպութիւններուն և անձնաւորութիւններուն, որոնք իրենց բարոյական աջակցութիւնը լայն ձևով ընծայեցին մեր աշխատանքներուն: Մեր

արտագին գնահատանքը այն կազմակերպութիւններուն, հաստատութիւններուն և անձնաւորութիւններուն, որոնք յատուկ նիւթական բարերարութիւններով ու նուիրատուութիւններով սատար հանդիսացան Մայր Աթոռիս գործունէութեան կարգացմանը և տարածմանը:

Կ'աղօթենք, որ Աստուած բազմապատիկ վարձահատոյց ըլլայ իրենց եկեղեցասէր և Աթոռանուէր զգացումներուն և գործերուն համար:

ԺԴ
ԴԷՊԻ ԱՌԱՋ

Անցեալ երկու տարիներու վրայ ձգուած այս ակնարկը Մեկ կը տանի որոշ հայեացքներու՝ ուղղուած դէպի գալիքը:

Աստուծոյ ամենախնամ դատաստանին կը թողունք անցեալը, կոր ընծայեցինք իբրև ծառայութիւն Իր հայ ժողովուրդին: Իր նախախնամութեան կը վստահինք գալիքը, մանաւանդ, այն տարիները, որոնք մեզ պիտի առաջնորդեն մինչև 2001 թուականը, երբ ողջ աշխարհը պիտի նշէ քրիստոնէական պատմութեան 2000-ամեակը, իսկ մենք՝ հայ ժողովուրդի զաւակներս, պիտի նշենք մեր որպէս ազգ և պետութիւն քրիստոնէացման 1700-ամեակը:

Երբ այսպէս ձեզ հետ միասին կը նայիմ դէպի բացուող նոր տարիները, առաջին իսկ հերթին, երկամեայ գործունէութեան այս փորձառութեանը լոյսին տակ, կը զգամ հսկայականութիւնը այն պարտաւորութեանց, որոնք մեր առաջ դրուած են իբրև Քրիստոսատուր առաքելութիւն և հայանուէր ծառայութիւն:

Կեանքը իր բնութեամբն իսկ յառաջդիմութիւն է: Մեր Եկեղեցւոյ հոգևոր սիրտը և կեդրոնը հանդիսացող Մայր Աթոռը պէտք ունի իր բոլոր զաւակներու հոգևորական սպասաւորներու և աշխարհական անդամներու անվերապահ և անսակարկ աջակցութեան, դէպի առաջ, դէպի նոր հորիզոններ բացուելու և նոր ծառայութիւններ մատուցելու: Նոր ոգևորութեամբ նոր շարժում մը պէտք է աղբերանալ և ծաւալուի Մայր Աթոռէն, որուն իբրև բնորոշիչ բացատրութիւն կրնանք շեշտեալ ձևով ըսել ՀՈԳԵՒՈՐ ՎԵՐԱԶԱՐԹՕՆՔ:

ա) Առաջնահերթ գործունէութեան դաշտերէն մէկը պէտք է ըլլայ մեր Հայաստանի և նախկին Խորհրդային Միութեան սահմաններուն մէջ ապրած հայութեան քրիստոնէական կեանքի վերամշակումը մեր հայրերու սեփական հարազատ աւանդութեամբ և կենսատու անուցումով: Այսպէս կոչուած «ներքին թեմերու» ներքին կազմակերպումը որպէս համայնքային կեանք, ծխական դրութեան վերաստեղծմամբ, քրիստոնէական դաստիարակութեան դպրոցական և ժողովրդային ճիւղաւորումներով յագեցած: Սիաւասիկ հրամայական, անյետաձգելի գործադաշտը:

բ) Մեր Եկեղեցւոյ միութեան ամրացումը և գործնական արտայայտութեան զարգացումը: Նախանձախնդիր ոգիով պէտք է պաշտպանել ընդհանրականութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, որպէս շաղախը

այդ միութեան և ներդաշնակել նուիրապետական միւս Աթոռներու գործունէութիւնը, պահելով անոնց պատմական և իրաւական գոյավիճակը, որպէսզի առաւել արդիւնաւորուի և առատօրէն պտղաւորուի Հայց. Եկեղեցւոյ առաքելութիւնը 20-րդ դարու վերջին և տարածուի 21-րդի մէջ:

գ) Զօրացումը մեր հայրենի պետութեան, որ հիմնական կառոյցն է մեր Հայրենիքի ժողովուրդի ամբողջականութեան ապատ ու անկախ արտայայտութեան: Հարկ է, որ Ազգային Եկեղեցին լայնօրէն բերէ իր բարոյական հոգևոր ներդրումը նորանկախացեալ մեր Հայրենիքի հաստատունութեան և հզօրացման մարզին մէջ:

դ) Զօրավիգ կանգնիլ Արցախի մեր սիրեցեալ և հերոսական ժողովուրդի արդար իրաւունքներու ամբողջական ճանաչման և խաղաղութեան վերջնական հաստատման, բանակցային խօսակցութիւններով և խաղաղասիրական միջոցներով:

Մենք կրնայինք շատ աւելի լայնցնել ծիրը այն հիմնական նշանակութիւն ունեցող բնագաւառներուն, որոնք մեր առջև են բացուած որպէս գործունէութեան դաշտեր: Բայց չենք ուզեր այստեղ երկարել այս շարքը, քանի անոնցմէ ոմանց արդեն անդրադարձանք Մեր վեկոյցի ընթացքին: Մեր առաջ դրուած բոլոր այս գործերը այն ատեն կրնան արդիւնալից պսակումով պտղաւորուիլ, երբ մենք կարենանք անոնց կարևորութիւնը ճիշտ տարողութեամբ և լայնածիր պարագրումով ըմբռնել: Պէտք է մշակել այնպիսի մօտեցում մը որով Մայր Աթոռի գերագոյն շահերը վեր դասուին տեղական, նեղ, ժամանակաւոր շահերէ և նկատումներէ:

Եթէ կ'ուզենք մեր հայ կեանքի մէջ նոր շունչ մտցնել, մանաւանդ մեր անկախութեան տիրացումէն ետքը, ընդհանուր աշխարհի մէջ մեր ազգին և Եկեղեցիին տեղն ու դերը արժեցնել, չենք կրնար այլևս հայութեանը նայիլ որպէս պատառ-պատառ հայութիւն մասնակի չափանիշներով և արժևորումներով: Ընդհանուրին մէջ է, որ մասնաւորը կ'ունենայ իր արժէքը: Այս է մեծ ազգերուն և Եկեղեցիներուն յաջողութեան ճանապարհը, ըստ պատմութեան տուեալներուն:

Մենք ալ այսօր կոչուած ենք պատմութիւն կերտելու: *Եկէ՛ք ուրեմն միասնաբար, լայնախոհ մօտեցումով և նուիրումի ճանապարհով, մեր առաջ դրուած հրամայական գործերը տանինք պատուով, միասնական ու ամբողջատեսական գործելակերպով և միշտ առաջնորդուած մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի խօսքով. «Նախանձ տան քո կերիցէ զիս» (ՅՈՎՀ. Բ. 17):*

Թող Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը իր Մայր Աթոռով և բոլոր միւս նուիրապետական Աթոռներով ու Թեմական Առաջնորդներով, Միաբանութիւններով և հաւատացեալ ժողովուրդով ծաղկի ու բարգաւաճի: Թող մեր իւրաքանչիւրի կեանքը ըլլայ կաթիլ մը քրտինք հայոց «փոքր ածու»-ին մէջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

3 Ապրիլ 1997
Ս. Էջմիածին

ԱՊՐԻԼԻ 3-5-Ը ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԹԵՄԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա	
Ամենայն Հայոց Կաթողիկոս՝	նախագահ
Գարեգին արք. Գազանճյան՝	ատենապետ
	Կ. Պոլսո Հայոց պատրիարք
Ներսես արք. Պոզապալյան	Մայր Աթոռի դիվանապետ
	Գեր. Հոգ. խորհրդի անդամ

Կ. Պոլսո Պատրիարքություն

Մեսրոպ արք. Մութաֆյան	Կրոնական ժողովի ատենապետ

Արարատյան հայրապետական թեմ

1. Գարեգին արք. Ներսիսյան	առաջնորդական փոխանորդ
2. Տաճատ սրկ. Վարդանյան	թեմական խորհրդի ատենապետ

Շիրակի թեմ

3. Գրիգորիս արք. Բունիաթյան	առաջնորդ
4. Մարտին Թադևոսյան	թեմական խորհրդի ատենապետ

Գեղարքունիքի թեմ

5. Անանիա եպս. Արաբաջյան	առաջնորդ
6. Արմեն Սարգսյան	թեմական խորհրդի ատենապետ

Արմավիրի թեմ

7. Ասողիկ եպս. Արիստակեսյան	առաջնորդ
8. Ներսես Միսակյան	թեմական խորհրդի ատենապետ

Գուգարաց թեմ

9. Սեպուհ վրդ. Զուլչյան	առաջնորդ
10. Լևոն Հովիվյան	թեմական խորհրդի ատենապետ

Արագածոտնի թեմ

11. Նավասարդ վրդ. Կճոյան	առաջնորդ
12. Ալֆրեդ Շահնազարյան	թեմական խորհրդի անդամ

Սյունյաց թեմ

13. Աբրահամ վրդ. Մկրտչյան	առաջնորդ
14. Կարո Կարապետյան	թեմական խորհրդի անդամ

Կոտայքի թեմ

15. Առաքել վրդ. Քարամյան	առաջնորդ
16. Վազգեն Պետրոսյան	թեմական խորհրդի ատենապետ

Արցախի թեմ

17.Պարգև եպս. Մարտիրոսյան	առաջնորդ
18. Գուրգեն Մելիքյան	թեմական խորհրդի ատենապետ

Ռուսաստանի թեմ

19. Տիրան արք. Կյուրեղյան	առաջնորդ
20. Կամո Ուդումյան	թեմական խորհրդի փոխատենապետ

Վիրահայոց թեմ

21. Գևորգ արք. Սերայդարյան	առաջնորդ
22. Ռուզան Մելքումյան	թեմական խորհրդի ատենապետուհի

Ուկրաինայի թեմ

23. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյան	առաջնորդ
24. Անուշավան Դանիելյան	թեմական խորհրդի անդամ

Հարավային Ռուսաստանի թեմ

25. Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյան	առաջնորդ
26. Սուրեն Մանուկով	թեմական խորհրդի անդամ

Արևմտյան Եվրոպա

27. Գյուտ արք. Նագգաջյան	հայրապետական պատվիրակ Փարիզի առաջնորդ

28.Գեղամ Թորոսյան	թեմական խորհրդի ատենապետ
29. Նորվան եպս. Ջաքարյան	Լիոնի առաջնորդ
30. Տարոն եպս. Մերեճյան	Մարսելի առաջնորդ

Կենտրոնական Եվրոպա

31. Մեսրոպ արք. Գրիգորյան	հայրապետական պատվիրակ Ավստրիայի առաջնորդ

Գերմանիայի թեմ

32. Գարեգին արք. Բեկչյան	առաջնորդ
33. Սարգիս Քեհյայան	թեմական խորհրդի ատենապետ

Ռումինիայի և Բուլղարիայի թեմ

34. Տիրայր արք. Մարտիկյան	առաջնորդ

Հունաստանի թեմ

35. Ոսկան արք. Գալփաքյան	առաջնորդ

ԱՄՆ-ի Արևմտյան թեմ

36. Վաչե արք. Հովսեփյան	առաջնորդ
37. Վարուժան Այթըրարմաքյան	թեմական խորհրդի ատենապետ

ԱՄՆ-ի Արևելյան թեմ

38. Խաժակ արք. Պարսամյան	առաջնորդ
39. Թադավոր Վինսրն Գուրահյան	թեմական խորհրդի ատենապետ

Կանադայի թեմ

40. Հովնան արք. Ցերտերյան	առաջնորդ
41. Թագվոր Հոբյան	թեմական խորհրդի ատենապետ

Ծայրագույն Արևելք

42. Աղան արք. Պալիոզյան	հայրապետական պատվիրակ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի առաջնորդ

Բրազիլիայի թեմ

43. Տաթև արք. Ղարիբյան	առաջնորդ
44. Մուրադ Գեոնջյան	թեմական խորհրդի փոխատեղապետ

Արգենտինայի թեմ

45. Գիսակ արք. Մուրադյան	առաջնորդ

Ուրուգվայի թեմ

46. Հակոբ եպս. Գըլընճյան	առաջնորդ
47. Արտաշես Գարսակյան	թեմական խորհրդի փոխատեղապետ

ԳՀԽ

48. Գրիգոր Խանջյան	Գերագույն Հոգ. Խորհրդի անդամ
49. Հակոբ Փափազյան	Գեր. Հոգ. Խոր. անդամ
50. Պիոն Հակոբյան	Գեր. Հոգ. Խոր. անդամ
51. Ռաֆայել Պապայան	Գեր. Հոգ. Խոր. անդամ
52. Տարիել Բարսեղյան	Հայց. Առաքելական Եկեղեցու կանոնակարգի հանձնախմբի անդամ

ԳՈՐԾԸ՝ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՅԵԼԻ...

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԸ

«Ով դիտէ, թէ ինչ է բարին եւ չի անում,
նրա համար այդ մեղք է»:

ՅԱԿՈԲՈՍ 4:17

Ասես բոլոր ժամանակներում էլ Հայոց հինավուրց աշխարհում Սուրբ առաքյալի այս խոսքերը, որպես դավանանք, ուղեկցել են հավատավոր հայորդուն՝ կերպավորելով մտքի ու ձեռքի վեհ թռիչքը, որ դարերով ավանդվել է մեզ քիվ ու գմբեթի, հպարտորեն երկինք սլացող տաճարների ու անկրկնելի խոյակների տեսքով:

Նույնն է հայորդու դավանանքը նաև այսօր, զի հավատի անմեկնելի ուղին նրան հարատև առաջնորդում է նախնյաց մշտանորոգ շավղով, զի չկա հավատ առանց գործի կամ ցանկալի արդյունքն է հավատի լավագույն հայելին...

Վկան ապրիլի 7-ի տոնախմբությունն էր քաղաքամայր Երևանում, ուր կատարվեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հիմնօրհնեքը:

Ապրիլի 7-ին, Ս. Աստվածածնի Ավետման տոնակատարության օրը, հավարտ Ս. Պատարագի, ժամը 13.00-ին, սկսվեց հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Երևանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը, կառավարության անդամներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Տ. Գարեգին Արք. Գազանճյանը, ներքին և արտաքին թեմերի թեմական առաջնորդներն ու թեմական խորհուրդների ներկայացուցիչները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանները, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծաթիվ հավատացյալ հայորդիներ:

Տերունական աղոթքով սկսվեց հիմնօրհնեքի արարողությունը: Ապա ընթերցվեցին Սուրբգրային հատվածներ, որից հետո Ամենայն Հայոց Հայրապետը, սաղմոսների ընթերցման ու շարականների երգեցողության ուղեկցությամբ, նախ գինով լվաց այն քարերը, որոնք պետք է լինեին Մայր եկեղեցու վեմերը և Սրբալույս Մյուռոնով օծեց դրանք չորս Ավետարանիչների՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի անուններով: Այնուհետև Նորին Սրբությունն օրհնեց նաև հիմքերի այն չորս անկյունները, ուր պետք է տեղադրվեին վեմերը:

Զանգերի զողանջների ներքո հոգևոր դասը խնկարկեց հիմնանկյունները, ապա հերթով տեղադրվեցին լվացված և օծված քարերը:

Մանրամասնման կարգով ասենք, որ, համաձայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնակարգի, հիմնօրհնեքին լվացվում և օծվում են 16 վեմեր, որոնցից 12-ը խորհրդանշում են մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի 12 Առաքյալ-

ներին: Այսօր տեղադրվեցին Ավետարանիչների անուններով օծված քարերը, իսկ հերթական 12-ը կօծվեն և կտեղադրվեն հետագային՝ Մայր եկեղեցու հիմքերը լցնելիս:

Քարերի օծման և տեղադրման հանդիսավոր արարողակարգից հետո, ներկաներին իր սրտի խոսքն ասաց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը՝ ի մասնավորի նշելով, որ այս տաճարը՝ հայոց հոգիների ու մտքերի լուսավորչի անունը կրող եկեղեցին, վեր կհառնի որպես մեր նորօրյա հավատքի, ազգային վերազարթոնքի և միակամության խորհրդանիշ ու վկայություն:

Այնուհետև, շնորհավորելով ներկաներին այս իրավամբ հիշարժան ու պատմական իրադարձության առիթով, Նորին Սուրբ Օծությունն ավելացրեց.

«Վսեմաշուք նախագահ Հայաստանի Հանրապետության, մեծարգոյ նախագահ Ազգային Ժողովի, յարգարժան անդամներ Պետական Աւագանիին, սիրելի Պատրիարք Սրբազան, թանկագին հոգեւոր եղբայրներ, եպիսկոպոսական, վարդապետական եւ քահանայական աստիճանների եւ թանկագին հաւատացեալ եւ հաւատարիմ ժողովուրդ Աստուծոյ, հայ ազգի զաւակներ, մասնաւորաբար երեւանաբնակ հարազատներ,

Զգիտեմ ինչպէ՞ս էք զգում դուք այս պահին: Բայց ես զգում եմ, որ իմ ոտքի ներքոյ մեր հայրենի հողը կենսաւորւում է այսօր. մի նոր արմատ է ստանում Աստծոյ օրհնութեամբ եւ մեր ձեռքերի աշխատանքով: Այսօր ես զգում եմ, որ հայոց պատմութիւնը յիշատակ չի. շարժո՛ւմ է, յառաջագնացութի՛ւն է, վերե՛լք է: Այս օրը դուք բոլորդ էլ չէք կարող չյիշել իբրեւ ձեր կեանքի գերերջանիկ, բացառիկօրէն երջանիկ պահերից մէկը: Ձեր զաւակները մի օր պատմութեան գրքերի մէջ պիտի կարդան այս օրուայ մասին եւ պիտի ասեն՝ երանի՛ մեր հայրերին եւ մայրերին, որ այսպիսի շքեղ մի Մայր Եկեղեցի, հայարժան մի տաճար, մեր ազգի, մեր հայրենիքի քաղաքամայր Երեւանի սրտում բարձացրեցին:

2001 թուական...

Ես մտքով այժմ սաւառնում եմ դէպի մօտիկ այս ապագան եւ երեւակայում եմ, որ այս երկինքն ու այս շրջապատը չպիտի լինեն այնպէս, ինչպէս են այսօր: Մեր աչքերը պիտի յեցուն մի Հայոց Կաթողիկէով, շքեղակերտ մի Մայր Եկեղեցու կառոյցով, որ ինձ համար երկնքից պոկուած Աստուծոյ ներկայութեան մի շունչ է մեր երկրի վրայ, մեր երկրից դէպի Աստուած բարձրացող խունկ է՝ Նարեկացու բառերով՝ մեր սրտերի կրակի վրայ ճենճերող եւ դէպի Աստուած անուշաբոյր բարձրացող:

Մենք այսօր երկնքի ու երկրի սուրբ համբոյրն ենք տեսնում այս շքեղակերտ Մայր Եկեղեցու կառուցման առաջին այս վայրկեանին, երբ դրեցինք չորս հիմնաքարերը տասնվեց հիմնաքարերից: Մնացեալները պէտք է զետեղուեն աստիճանաբար: Այնտեղ, որտեղ պիտի զետեղուի հիմնաքարը, նուիրուած մեր Հաւատոյ Հօրը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչին, այնտեղ պիտի դրուի ձեռագրեալ Յիշատակարանը, որպէս վկայութիւն մեր վերընձիւղեալ հաւատքի: Ինչպէս մեր եկեղեցու շարականն ասում է. «Այսօր երկիրս երկինք եղեւ»: Այսօր երկիրը այցելուեց Աստծոյ կողմից, ինչպէս այցելուել էր Միածին Որդու՝ Քրիստոսի կողմից դարեր-դարեր առաջ, 301 թուին եւ այլ թուականների, որոնք եղել են ոսկեղէն պահեր մեր ազգի պատմութեան մէջ: Այս եկեղեցին, սրբազան բանաստեղծի կողմից նկարագրւում է հետեւյալ թեւաղրական խորախորհուրդ բառերով.

«Սա է դուռն երկնից,
դարոց հանգիստ,
Մեղաւորաց քաւարան,
Քրիստոսի արքայարան,
Հրեշտակաց բնակարան,
Սրբոց ժողովարան,
Տեղի ապաւինի եւ Տուն Աստուծոյ»:

Սահմանումներ, որոնց իրաքանչիւրի մէջ ամբողջ մի աստուածաբանական ըմբռնողութիւն, Աստծու եւ մարդու կեանքի մասին մի խորիմաստ հասկացողութիւն է դրուած:

Այսօր մենք այս գիրերը վերարձանագրելով մեր հոգիների մէջ՝ ապրում ենք նրանց միջից, որպէս պերճախօս խորհրդանիշ, մեր քրիստոնէական հաւատքի վերակենսաւորումը: *Զենք ապրում միայն* յիշատակը *հաւատքի վկայութիւնների, որոնք այնքան ճոխ են մեր պատմութեանը մէջ: Այս եկեղեցու կառուցմամբ մենք վկայում ենք առաջի Աստուծոյ եւ ողջ աշխարհին, որ հաւատքը, անցեալից եկող, անցեալով միայն չի սահմանափակուած, այսօ՛ր էլ կենդանի է:*

Ես այսօր այս Մայր Եկեղեցու կառուցումը ընձայում եմ մեր նոր Հանրապետութեան ծաղկման ու բարգաւաճման տեսիլքին: Թող այս եկեղեցին լինի մեր նոր Հանրապետութեան, ազատ ու անկախ պետականութեան հոգեւոր իրագործումներից ամենաշքեղը: Ես չեմ կարող անդրադառնալ, թէ ե՞րբ է շինուել Երեւանում վերջին հայոց եկեղեցին: Պատմաբանները թող պրպտեն եւ իմանան եւ պատմեն: Երկար ժամանակներից ի վեր մեր հին եկեղեցիների յիշատակով, փառքով էին լցուած մեր գրական էջերը, մեր հրապարակային խօսքերը: Դրանք գոհարներ են, պէտք է պահպանուեն, բայց չպէտք է մնան որպէս յուշարձան: Այս եկեղեցին պիտի գայ ուրիշ եկեղեցիների հետ մեր հայրենի հողի վրայ ասելու աշխարհին՝ քրիստոնեայ Հայաստանը, առաջին ազգը պետականօրէն քրիստոնէութիւնը ընդունողը, պատմութեան մէջ չէ միայն առաջին, այսօր էլ պիտի ջանայ լինել առաջին՝ իր պատմական կեանքի նշանաբանին ուղիով:

Այսօր ես հարկ եմ համարում իմ այս խօսքերից յետոյ դէպի երկինք նայել մի անգամ ես: Այնտեղ իմ աչքերս հանդիպում են իմ երջանկայիշատակ նախորդի՝ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկնայնացեալ *աչքերին: Նա երկնքից նայում է այս պահին: Ով հաւատքի աչքով կը դիտի երկինքը, չի կարող չտեսնել նրա հոգին այնտեղ: Նրանն էր գաղափարը, նրանն էր նախաձեռնութիւնը այս եկեղեցու կառուցման, նա միտքը յղացաւ, առաջին ջանքը ի գործ դրեց: Այսօր մենք շարունակողներն ենք եւ մարմին տուողները նրա երազին եւ նրա գաղափարին:*

Ես օրհնում եմ նաեւ յիշատակը մեր ազգային բարերար եւ մեր պետութեանը կողմից Ազգային Հերոս հռչակուած մեծ հային՝ Այէք Մանուկեանին, *որի առատաձեռնութիւնը մեծ քաջալերանք եղաւ ե՛ւ երջանկայիշատակ Վազգէն Ա Կաթողիկոսին ե՛ւ Մեզ՝ այս Մայր Եկեղեցին կառուցելու: Ուրախութեամբ եւ շնորհակալութեամբ եմ յայտնում, որ նրա զաւակները՝ Լուիզ Սիմոն-Մանուկեան եւ Ռիչարդ Մանուկեան, նրա մահից յետոյ, իրենց հօր յիշատակը պայծառ պիտի պահեն՝ նրա անունը շաղախելով մեր այսօր կառուցուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հետ:*

Ես ցանկանում եմ նաեւ իմ խորը գնահատանքը յայտնել մեր վսեմաշուք

ՄԻ ՊԱՀ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԻ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

նախագահին, մեր պետությանը, կառավարությանը, Ճինարարության նախարարությանը եւ Երեւանի քաղաքապետարանին եւ բոլոր քաղաքային այն իշխանություններին, որոնք սատար պիտի հանդիսանան եւ մասնակից պիտի դառնան՝ պետության ներկայությունը մեր եկեղեցու կեանքին մէջ արտայայտելով գործնական մասնակցությամբ:

Ես գնահատում եմ ճարտարապետին, գնահատում եմ մեր բոլոր գիտական ճարտարապետական եւ ճարտարագիտական ինստիտուտներին, որ իրենց բաժինն են բերում այս հայրենաշէն եւ աստուածահաճոյ մեծ գործին:

Թող այս եկեղեցին լինի մեր հոգու քարեղէն պատկերը, ամբողջ հայ ժողովրդի՝ ե՛ւ իբրեւ պետություն, ե՛ւ իբրեւ ժողովուրդ, հայրենաբնակ կամ արտասահմանաբնակ: Եկեղեցու համար ո՛չ ներքին սփիւռք կայ, ո՛չ արտաքին սփիւռք կայ: Մեր Եկեղեցին ամբողջ հայ ժողովուրդն իր մէջ կամարակապող, գմբէթաւորող այն երկնա-երկրային հաստատությունն է, Քրիստոսով հիմնուած, Տրդատ թագաւորի ուսով Մասիս սարից բերուած քարերով, Գրիգոր Լուսաւորչի չուանովը երկրի վրայ գծագրուած, Աշխէն թագուհու, Խոսրովիդուխտ արքայաքրոջ զոգոնոցներից թափուող հոգով ամրացուած սրբազոյն կառոյցը: Բացէ՛ք, կարդացէ՛ք Ագաթանգեղոսը. կը տեսնէք այս ամբողջ պատկերը: Կը տեսնէք ինչպէ՞ս Ս. Էջմիածինը, ամբողջ հայ եկեղեցու Մայր Տաճարը, պատկերն է այդ օրուան հայությանն: Այնպէս ալ այս Մայր Եկեղեցին Երեւանում պիտի դառնայ մե՛ր պատկերը: Ամէն մի հայ, որտեղ էլ որ գտնուի, սուրբ պարտականություն պիտի զգայ իր քրտինքից մի կաթիլ խառնելու, իր աղօթքից մի աստուածահաճոյ մաղթանք բերելու եւ իր ձեռքի ու իր հոգու կարողություններից մի բաժին ընծայելու այս եկեղեցու կառուցմանը համար, որպէսզի մենք չլինենք կառուցողը եկեղեցուն, այլ լինենք եկեղեցով կառուցուող ազգ: Երբ եկեղեցի կը շինես քարով, եկեղեցի կը դառնաս հոգով: Այս է իմաստը եկեղեցու շինության: Կերպարանափոխուէք եւ հաւատքի ուժը արտայայտէք քարով, արուէստով, սիրով կամ զոհողության եռանկներով:

Եկէ՛ք ուրեմն ձեռք-ձեռքի տանք, բոլորս միասին, թող այս եկեղեցին լինի համահայկական, համաազգային մեր հաւատքի նոր, անլռելի զանգակատունը:

Ղօղանջը այս եկեղեցու թող հասնի ամէն մի հայի սրտին, Հայաստանում եւ արտասահմանում, որպէս Աստուծոյ ձայնը հայ ժողովրդի հոգուց բարձրացող դէպի, չորս ծագերը այս աշխարհի, յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցու հիմնօրհնէքն ավարտվեց Վեհափառ Հոր «Պահպանիչ»-ով:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԻՇԱՏԱԿԻ ԵՎ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլ 24-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարձրաստիճան հոգևոր հայրերի, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության և Սփյուռքից ժամանած հյուրերի ուղեկցությամբ, Մայր Աթոռից ուղևորվեց դեպի Միծեռնակաբերդի բարձունք՝ հարգանքի տուրք մատուցելու Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին: Մաղկեպսակ զետեղելուց հետո Նորին Սրբությունը, շրջապատված հոգևոր Հայրերով, կատարեց հոգեհանգստյան պաշտոն և հիշատակի խոսք ասաց:

Միծեռնակաբերդից Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը վերադարձավ Ս. Էջմիածին և ներկա եղավ Մայր Տաճարում Եղեռնի նահատակների 82-րդ տարելիցի առիթով մատուցվող Ս. Պատարագին: Օրվա պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Ներսես արք. Պոզապալյանը:

Սրբազան արարողությունից հետո Գարեգին Ա Կաթողիկոսը, հանդիսավոր թափորով, առաջնորդվեց դեպի Մայր Տաճարի հարևանությամբ գտնվող Եղեռնի անմեղ նահատակների հիշատակը հավերժացնող կոթող, ուր կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Ապա իր հայրապետական պատգամը տվեց Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը՝ ողջ խոսքը խտացնելով մեկ հիմնական գաղափարի մեջ. *«Եղեռնի առավել քան մեկ ու կես միլիոն զոհերի արյունը գծո՛ւմ է և գծելո՛ւ է մեր յուրաքանչյուրի և ամբողջ ազգի կյանքի և պարտականության ճանապարհը: Նրանք իրենց արյունով կատարեցին ուխտը Աստուծո, մենք՝ կյանքով: Նրանք իրենց արյունը խառնեցին հողին, մենք՝ մեր քրտինքը խառնենք: Կյանքով հարգենք այն, ինչ նրանք արյունով և մահով հարգեցին:*

Սա պետք է լինի մի նոր մղում ամեն մեկ հայի համար: Պետք է գիտենանք՝ մեզնից վե՛ր է մեր Հողը, մեզնից վե՛ր է մեր Հայրենիքը, մեզնից վե՛ր է մեր Եկեղեցին»:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԱՐԻՒՆԸ ԳԾՈՒՄ Է ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ...

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայրավանքում, Ապրիլեան Եղեռնի նահատակներին ձօնուած յուշարձանի առաջ, յետ Մայր Տաճարում մատուցուած Ս. Պատարագին, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը տուեց իր պատգամը, որը ներկայացնում ենք ստորև:

Սիրելի հոգեւոր եղբայրներ, հոգեւոր մեծարանի սաներ, սիրեցեալ հայ ժողովրդի զաւակներ՝ Հայաստանից եւ արտասահմանից,

Սրտի պարտք եմ զգում այս օրուան սիրտը հանդիսացող այս հոգեհանգստեան պահին իմ հայրական խօսքն ուղղելու մեր ժողովրդին՝ այդ ժողովրդի սրբութիւն սրբոցը եղող, նուիրականագոյն ուխտավայրը եղող Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Առաւօտեան մեր Միաբանութեան անդամների հետ միասին Մենք գնացինք Միծեռնակաբերդ եւ այնտեղ ծաղկեպսակ զետեղեցինք Եղեռնի զոհերի յիշատակին՝ մեր Հանրապետութեան Վսեմաշուք նախագահին, Պետական Իշխանութեանց Աւագանիին հետ միասին:

Օրուան այս երկրորդ պահը Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի այս սրբազնասուրբ վայրին մէջ յարգանքի տուրքն է, որ մատուցում ենք նահատակներին: Ես ցանկանում եմ, որ մեր ազգի բոլոր զաւակները վերստին իմանան, թէ Մայր Աթոռը 1915 թուին, երբ ջարդերը տեղի ունեցան, Եղեռնը կատարուեց Արեւմտեան Հայաստանի մէջ, Մայր Աթոռը անմասն չմնաց վերապրողների հոգատարութեան եւ վերստին նրանց կեանքին վերադառնալու նուիրական առաքելութեանը մէջ: Ովքեր ծանօթ են պատմութեան, գիտեն եւ նրանք, ովքեր ծանօթ չեն պատմութեան, պէտք է կարդան եւ իմանան, որ այս Մայրավանքը 1915 թուից յետոյ գաղթականաց էր եղել: Այստեղ վերապրող գաղթական հայ ժողովուրդը՝ Արեւմտեան Հայաստանից Էջմիածնի Մայրավանքում եւ շրջակայքում ապաստան գտած, Կաթողիկոսը նրանց հոգսն էր տանում, Միաբանական Ցանցնախումբ էր կազմել: Այդ խնամատարութեան գործը ոսկեգոյն էջերից մէկն է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արդի պատմութեան:

Երկրորդ, ես այսօրուան իմ խօսքը շատ հակիրճ կերպով եմ ասելու եւ մէկ նախադասութեան մէջ եմ խտացնելու ամբողջ օրուան պատգամը՝ ինձ համար եւ իմ ժողովրդի համար:

Ֆրանսական դասական գրականութեան մէջ մի սքանչելի տող կայ: Այդ տողերը պէտք է գրուեն հայ մարդի սրտի, հայի հոգու եւ հայի կեանքի ճանապարհի վրայ: Մի դուստր իր նահատակ հօրը յիշատակին դառնալով ասում է. «Հայր, քո արիւնը աւազի վրայ թափուած՝ գծում է իմ ճանապարհը պարտականութեան»:

Եղեռնի, առաւել քան մէկ ու կէս միլիոն զոհերի արիւնը, յորդահոս, գետանման արիւնը, գծում է եւ գծելու է մեր իւրաքանչիւրի, ողջ ազգի պարտականութեան ճանապարհը: Նրանք արիւնով կատարեցին իրենց ուխտը Աստուծոյ, մենք՝ կեանքով կատարենք: Եթէ նրանք հիմայ վերադառնային, մի պահ երեւակայէք, ի՞նչ պիտի ասէին:

«Մեզ պէս մի՛ ապրէք, գաղթականութեան եւ աքսորի, չարչարանքի եւ մահուան օր չտեսնէք: Ապրեցէ՛ք եւ շէնացրէ՛ք հայ հողը, որի համար մենք մեռանք: Մենք մեր արիւնը խառնեցինք օտար եւ հայկական հողին, դուք ձեր քրտինքը խառնեցէք հայրենի հողին: Ինչ որ մեզ համար այնքան գերագոյն

արժէք էր՝ հաւատքը քրիստոնէական, հայրենիքը մեր պապենական, մենք չթողեցինք, մենք մեզ մատաղ արինք այս երկու սրբութիւններին համար»:

Եւ հիմա այդ երկու սրբութիւնները՝ ազատ, անկախ Հայաստանն է՝ իր Հանրապետութեամբ եւ նաեւ մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հաւատքի այս սանդատու մայրը, որին պէտք է կառչեն մեր զաւակները: Եւ այստեղ ուսանող բոլոր հայ երիտասարդները իրենց պարտականութեան ճամբան պիտի գծեն իրենց նահատակ հայրերի արեամբը:

Հետեւաբար, եղբայրներ եւ քոյրեր, այսօր մեր նահատակների կոչը այն է, որ մենք գիտնանք՝ կեանքով յարգենք այն, ինչ որ նրանք արիւնով եւ մահով յարգեցին: Եւ դա պէտք է լինի ամէն մէկ հայի համար մի նոր մղում, պէտք է փոխուենք, առողջ գիտակցութեամբ եւ հայրենաշինութեան կամքով եւ գաղափարականով ու գործնականորով զինուենք: Պէտք է գիտենանք, թէ մեզնից վեր է մեր հողը, մեզնից վեր է մեր հայրենիքը, մեզնից վեր է մեր եկեղեցին: Եւ այդ գիտակցութիւնն է, որ պէտք է փրկի Հայաստանը: Ո՛չ դրամը եւ ո՛չ զէնքը առանձինն կը փրկեն, եթէ երբէք այս կապուածութիւնը հողին, այս կապուածութիւնը հաւատքին չլինին մղիչ ոյժը:

Մարդն է, հայը ինքը, հոգիով բիւրեղացած, հաւատքով սրբացած, հայրենիքով ներշնչուած, այդ հայն է, որ կը սպասեմ, որ լինենք բոլորս՝ հոգեւորականից մինչեւ աշխարհականը, հարուստից մինչեւ աղքատը, պետական անձից մինչեւ ամենէն պարզ քաղաքացին, զինուորականից սկսեալ մինչեւ ամէն մի հայ, որ ինքը իրեն հայրենիքի զինուոր եւ հայրենիքի բանուոր պէտք է նկատի, հայրենիքի մշակ պէտք է նկատի: Այս է մեր ունեցածը, մեր կեանքով արժեցնենք եւ դրանով արտայայտենք մեր հաւատարմութիւնը հանդէպ մեր նահատակների:

«Նահատակների արիւնը գծում է մեր կեանքի եւ մեր պարտականութեան ճանապարհը»:

Գալէ՛ք այդ ճանապարհով եւ կը հասնէք յաղթանակի, յաւերժութեան, յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԷՏՏՈՆԼԷԿԷՆԹ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ Տ. ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶԱՅԱՆԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ, ՍՊԱՍԱՒՈՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԷՐ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԻՐԶԱՅԵԱՆԻ* ՈՐ Ի ՍԻՏՆԻ, ՅԱՒՍՏՐԱԼԻԱ

Մեզի համար հոգեկան ուրախութիւն եղաւ Ձեզ տեսնել մի անգամ ևս ի Սիտնի, յԱւստրալիա, Մեր հովուապետական անդրանիկ այցելութեան առիթով (14–24 Փետրուար 1997):

Մենք տարիներ առաջ Ձեզ ճանչցած ենք և անձամբ վկայ եղած Ձեր տարած քահանայագործական աշխատանքներուն ի հոգևոր վայելումն Աւստրալիոյ մեր սիրեցեալ և հաւատացեալ ժողովրդեան: Ծուրջ քառասուն տարիներ Դուք անխոնջ ջանքերով և հետևողական շարունակականութեամբ Ձեր սպասը ընծայեցիք մանաւանդ նոր կազմատրոտող Աւստրալահայ գաղութին անոնց տեղատրման և կեանքի վերականգնման այնքան կարևոր շրջանին:

Այժմ երբ յառաջացեալ տարիքի բերումով հանգստեան էք կոչուած, Ձեր քահանայական ձեռնադրութեան 50-ամեակին առիթով, Մենք որպէս գնահատութիւն Ձեր բազում տարիներու յոգնաջան վաստակին, և ընդառաջելով Աւստրալիոյ և Նոր Զեղանտայի Հայոց Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Աղան Արքեպ. Պալիոզեանի և Թեմական Խորհուրդին խնդրանքին, Ձեզի կը շնորհենք սոյն Հայրապետական ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿԸ որպէս բարոյական վարձատրութիւն Ձեր երկարամեայ և օգտաշատ քահանայական գործունէութեան:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի, Ձեր երեցկնոջ և զաւակներուն շնորհէ երջանկալից երկար կեանք ի խնամս մարդասիրութեան իւրոյ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 8 Ապրիլի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՋ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 83 :

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ ԼԵՎՈՆ ԿԱԼՈՒՍՏՅԱՆԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՁԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՊԱՐՈՆ ԼԵՒՈՆ ԿԱԼՈՒՍՏԵԱՆԻ* ՈՐ Ի ՕՏԵՍԱ, ՈՒԿՐԱԻՆԱ

Մեզի համար հոգեկան խոր գոհունակութիւն և ուրախութիւն պատճառեց իմանալ Ուկրաինայի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերապատիւ Տ. Նաթան Ծ. Վարդապետ Ցովհաննէսեանից Ձեր բազում և օգտաշատ ծառայութիւնների մասին Օտեսայի մեր հայ համայնքին: Բարձրօրէն գնահատում ենք Առաջնորդին և մեր համայնքին, որոնք արժանավայել կերպով նշել են Ձեր ծննդեան 75-ամեակը:

«Արժան և իրաւ».

Մեր Հայ Առաքելական Եկեղեցու պատարագամատոյցից քաղուած այս սրբաշունչ բառերով ողջունում ենք Ձեզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ձեր 75-ամեակի առիթով: ՀԱՑՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ այս ԿՈՆԴԱԿԸ շնորհում ենք Ձեզի որպէս հայրական սիրոյ և գնահատանքի արտայայտութիւն Մեր կողմից, որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ձեր բազում տարիների ազգային-եկեղեցական ծառայութեանց համար: Գուք գիտցաք Հայց. Եկեղեցին նկատել Ձեր հոգևոր հայրենիքը և հպարտանալ հողից դուրս, նրա միջոցով Ձեր սպասը ընծայեցիք մեր պատուական հայ ազգին:

Աղօթում ենք որ Բարձրեալն Աստուած բազմապատիկ վարձահատոյց լինի Ձեր նուիրաբերումին և զոհողութեանց համար և երջանկութիւն ցանի Ձեր և Ձեր ընտանիքի կեանքում:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17 Ապրիլի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 85 :

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԱԲՐԻԵԼ ՊԱՍՄԱՃՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՁԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻՍՐ ԳԱԲՐԻԷԼ ՊԱՍՄԱՃԵԱՆ* ՈՐ Ի ՄՈՆԹՐԷԱԼ, ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Գանատահայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Ցովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն, Ձեր բազմամեայ և բազմաճիւղ գործունէութեանց մասին Գանատահայ մեր ժողովուրդի կեանքին մէջ, յատկապէս կրթական, մշակութային, ուսուցչական և հասարակական բնագաւառներուն մէջ:

Կ. Պոլիսէն ժառանգած Ձեր եկեղեցասէր ոգին և հայկական հարազատ շունչը Դուք գիտցաք գործնական եռանդուն աշխատանքով ծաղկեցնել և արժեւորել Գանատայի, մասնաւորապէս Մոնթրէալի հայահոծ ժողովուրդի կեանքին մէջ: Ձեր ուսուցչական, գրական, համալսարանական, հայագիտական և կազմակերպչական աշխոյժ գործունէութեամբ Դուք Ձեր նպաստը բերիք Մեսրոպեան մեր դպրութեան կենդանի պահպանման նուիրական գործին:

Ի գնահատութիւն Ձեր բազում տարիներու յոգնաջան աշխատանքներուն՝ այսու Հայրապետական Կոնդակս Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս·ՍԱՀԱԿ-Ս·ՄԵՍՐՈՊ շքանշանը:

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի շնորհէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասը ընծայել մեր սիրեցեալ ժողովուրդին միշտ յարաճուն արդիւնաւորմամբ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21 Ապրիլի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՁ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 91

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԱՀԵ ՔԵԹԼԻԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՎԱՀԷ ՔԷԹԼԻԻ* ՈՐ Ի ՄՈՆԹՐԷԱԼ, ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Գանատահայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Ցովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն, Ձեր բազում տարիներու բազմաբեղուն և յարատեւողական աշխատանքներուն մասին զորս այնքան նուիրումով յառաջ տարած էք թէ՛ Կ. Պոլսոյ, թէ՛ Միացեալ Նահանգներու և թէ՛ վերջին երեք տասնամեակներուն Մոնթրէալի մէջ:

Այն ինչ որ ձեռք բերիք որպէս ոգի, ուսում է ծառայութեան կամք Կ. Պոլսոյ հայութեան դարաւոր աւանդութենէն՝ Դուք գիտցաք առատաբար ի սպաս դնել գործնական եղանակներով, կեանքով և գործով, ի սպաս մեր սիրեցեալ և հաւատացեալ ժողովուրդին:

Մեծ դեր խաղացիք մասնաւորապէս Գանատայի Հայոց Ազգային Առաջնորդարանի կազմութեան և զարգացման այնքան նուրբ և կարևոր գործին մէջ: Բացի եկեղեցիէն, Դուք ծառայութեան լայն բաժին բերիք Հ.Բ.Ը.Մ.-ի և Պոլսահայ Միութեանց մէջէն:

Ի գնահատութիւն բազմամեայ և բազմարդիւն Ձեր սպասաւորութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակս Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր արժէքաւոր ծառայութիւնը մեր եկեղեցիին միշտ նորանոր նուաճումներով և օգտաշատ բարիքներով ի վայելումն մեր սիրեցեալ հայ ժողովուրդին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնք. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21 Ապրիլի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՁ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 90

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՐԱՋ ՀՅՈՒՍՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՀՐԱՋ ՀԻՍԵԱՆԻ* ՈՐ Ի ՄՈՆԹՐԷԱԼ, ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Գանատահայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն, Ձեր երկար տարիներու օգտաբեր ծառայութեանց մասին յատկապէս Գանատահայոց Թեմի և ի մասնաւորի Մոնթրէալի մեր ժողովուրդին ընկերային ու բարեսիրական ծառայութեանց բնագաւառներուն մէջ:

Կոստանդնուպոլսոյ հայութեան ծոցին մէջ սնած Ձեր եկեղեցասիրութիւնը Դուք գիտցաք գործնական եղանակով արտայայտել միշտ համեստութեան առաքինութեամբը առաջնորդուած:

Ի գնահատութիւն Ձեր երկար տարիներու յարատև սպասաւորութեանց յօգուտ մեր Ազգային Առաջնորդարանին և ի վայելումն մեր Գանատահայ ժողովուրդին, այսու Հայրապետական Կոնդակս Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի շնորհէ երկար կեանք, քաջառողջութիւն, որպէսզի շարունակէք Ձեր սպասը ընծայել մեր Եկեղեցիին և ազգին յարաճուն պտղաբերութեամբ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21 Ապրիլի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 89

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ* ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ, ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Գանատահայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն, Ձեր նուիրեալ աշխատանքներու մասին ի ծառայութիւն Գանատայի Հայոց Թեմի մեր եկեղեցական, կրթական, մշակութային և հայրենանուէր ազնիւ նպատակներուն:

Կոստանդնուպոլիսէն ժառանգած Ձեր եկեղեցասէր և հայաշունչ ոգին Դուք գիտցաք արտայայտել Ձեր կեանքով և գործով Գանատահայութեան կազմակերպական կեանքին մէջ, ուր Դուք բերիք Ձեր կարևոր ներդրումը յատկապէս ծխական-եկեղեցական և դպրոցական կրթական բնագաւառներուն մէջ:

Դուք վերջին տարիներուն բեղուն աշխատանք ցուցաբերեցիք նաև Մայր Հայրենիքի վերաշինութեան գործին, օրինակելի գործ կատարելով "ՀԱՅԱՍՏԱՆ" Համահայկական Հիմնադրամի տեղական մարմնի կազմակերպման և աշխոյժ գործունէութեան մարզին մէջ:

Ի գնահատութիւն Ձեր բազմաճիւղ և օգտաշատ ծառայութիւններուն՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի շնորհէ երկար տարիներ, յարաճուն արդիւնաւորութեամբ և երջանկութեան բարիքներով առլցուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21 Ապրիլի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 88

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԿ ՄԻՍԱՔՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻՍՐ ՀԱՅԿ ՄԻՍԱՔԵԱՆԻ* ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ, ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Գանատահայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Ցովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն, որ Ձեր անհատական կեանքը իմաստութեամբ և գնահատելի նախաձեռնողութեամբ գիտցած էք միախառնել մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ, մեր ազգի, հայրենիքի, Հ.Բ.Ը.Մ.-ի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հաւաքական կեանքին:

Կ. Պոլսէն մինչև Թորոնթօ-Գանատա, անցնող տասնամեակներու ընթացքին Դուք կենսունակ և պերճախօս կերպով արտայայտեցիք Ձեր անհուն սէրն ու նուիրումն ոգին հանդէպ մեր Ս. Եկեղեցիին, Գանատայի Հայոց Թեմական իշխանութեան ներքև, անշահախնդիր կերպով ծառայելով ծխական մակարդակէն մինչև եկեղեցաշինական և դաստիարակչական մարզերը, յատկապէս երիտասարդ հայ սերունդին:

Հայաստանի անկախութեան հոչակումէն ասդին մանաւանդ Դուք գիտցաք Հայրենիքի ծառայութիւնները ներդաշնակօրէն միացնել եկեղեցական և բարեսիրական ու դաստիարակչական Ձեր գործին: Հայրենիքը իր դեսպանատուներով և "ՀԱՅԱՍՏԱՆ" Համահայկական Հիմնադրամով և այլ կառոյցներով պէտք ունի ամէն մէկ հայու քրտինքին անկախաբար անոր գաղափարական կամ այլ կարգի պատկանելիութիւններէն:

Ի գնահատութիւն ձեր բազմամեայ և բազմաբեղուն կամաւոր ծառայութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակս Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր ընտանիքին շնորհէ բազում տարիներ քաջառողջութեան, յաջողութեան և երջանկութեան բարիքներով առլցուն:

Որոշ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21 Ապրիլի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՁ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 87

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՇԱՐԼԶ ՏԱՔԷՍՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻՍՐ ՇԱՐԼԶ ՏԱՔԷՍԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՖԼՈՐԻՏԱ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Ամերիկահայոց Արևելեան Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանէն Ձեր բազում տարիներու օգտաշատ ծառայութեանց մասին, զորս այնքան նուիրումով և հետևողական շանքերով մատուցած էք մեր Ս. Եկեղեցիին՝ յատկապէս Օգալայի մէջ ի Ֆլորիտա:

Նորակառոյց Ս. ՍԱՐԳԻՍ եկեղեցւոյ օծման հանդիսաւոր առիթով ի գնահատութիւն Ձեր բազմավաստակ ազգային-եկեղեցական սպասաւորութեանց, այսու Հայրապետական Կոնդակս Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Տաքէսեան ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ կատարեալ և շարունակական առողջութիւն և երկար կեանք, որպէսզի նորանոր ծառայութիւններով աւելի ևս զօրացնէք և ճոխացնէք Ձեր մասնակցութիւնը և բարիքը մեր Ս. Եկեղեցիին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 27 Մայիսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ Համարաւ Է/ 93

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՃԱՆ ՊԱՐՈՆՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵԻ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՃԱՆ ՊԱՐՈՆԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՊՈՍՏՈՆ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Ամերիկահայոց Արևելեան Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպ. Պարսամեանէն, որ ի գնահատութիւն Ձեր երկար տարիներու բազմօգուտ ծառայութիւններուն՝ Թաֆթս (*Tufts*) հոչակաւոր Համալսարանի Տնօրէնութիւնը Ձեզ մեծարած է *Պատուոյ Տոքթորայի* տիտղոսով:

Երկար տարիներէ ի վեր Ձեզ անձամբ ճանչցած ըլլալով և բառերը մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատարագամատոյցէն քաղելով կ՝ ըսենք.

«ԱՐԺԱՆ ԵՒ ԻՐԱՒ» :

Որպէս նախկին ուսանող Թաֆթս Համալսարանի, Դուք համալսարանական դասընթացքը աւարտելէ յետոյ, չկտրուեցաք Համալսարանէն և բազմաթիւ ցանցնախումբերու մէջ յաճախ ղեկավարի դեր կատարեցիք անգնահատելի ծառայութիւններ մատուցանելով Ձեր Համալսարանին:

Ձեզ ճանչցած ենք նաև որպէս հայ ժողովուրդի հարազատ զաւակ, կապուած մեր հայրերու սուրբ աւանդութեանց և նուիրուած հայութիւնը Ամերիկայի մէջ բարձրացնելու գեղեցիկ և ազնիւ ու արդար նպատակին: Քանիո՜ քանի՜ հայ երիտասարդներու և երիտասարդուհիներու համալսարանական կրթութեան միջոցներ ստեղծեցիք:

Ի գնահատութիւն Հայց. Եկեղեցւոյ և հայ մշակոյթին Ձեր մատուցած բազմօգուտ ծառայութիւններուն, այսու Հայրապետական Կոնդակս Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ շքանշանը:

Կ՝աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ երկար տարիներ շնորհէ Ձեզի որպէսզի առաւել ևս բեղուն բարիքներ ընծայէք Թաֆթս Համալսարանին և Ամերիկահայ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 27 Մայիսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՁ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 92

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ-Ի ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ.

ԺԱՄԱՆՈՒՄ

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական հրավերով, սույն թվականի մայիսի 27-ին, Երևանի ժամանակով ժամը 12.20-ին, Հայաստանի Հանրապետություն ժամանեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Իլիա Բ-ն:

Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիրաքին ուղեկցող պաշտոնական պատվիրակության կազմում էին Սագարեջոյի և Գուրջանի թեմի առաջնորդ, Վրաց Պատրիարքարանի արտաքին գործերի նախագահ, Թբիլիսիի Հոգևոր Ակադեմիայի տեսուչ Սվրաամ Արքեպիսկոպոսը, Վրաց Պատրիարքարանի կինված ուժերի և իրավապահպան մարմինների հետ համագործակցության բաժնի ղեկավար, Փոթիի եպիսկոպոս Գրիգորին, Թբիլիսիի Մայր Տաճարի հոգևոր հովիվ Դավիթը, Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպանի հայրը՝ պրոֆեսոր Ռևազ Բարամիձեն, բանաստեղծ Շոթա Նիշնիանիձեն, Վրաց Պատրիարքարանի դիվանապետ Թամազ Լոմիձեն:

Համայն Վրաստանի հոգևոր առաջնորդի գլխավորած պատվիրակությանը «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորեցին Ամենայն Հայոց Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբաններով և թեմական առաջնորդներով, շքախմբով, Հայաստանում Վրաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գիգլա Բարամիձեն, Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդական Վահագն Խաչատրյանը, Ազգային ժողովի նախագահի աշխատակազմի ղեկավար Աշոտ Անտինյանը, վարչապետի խորհրդական Ներսես Կարամանուկյանը, Կրոնից գործոց կոմիտեի նախագահ Լազար Սուջյանը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ և պաշտոնատար այլ անձինք:

ՁԵՊԱԶՐՈՒՅՑ «ԶՎԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՍՊԱՍԱՍՐԱՀՈՒՄ

Ժամանումից քիչ անց օդանավակայանի բարձրաստիճան հյուրերի համար նախատեսված սպասասրահում տեղի ունեցավ ճեպազրույց, հընթացս որի, մանրամասնելով Նորին Սրբություն Իլիա Բ-ի պաշտոնական այցի նպատակը, Հայոց Հայրապետն ասաց.

«Սիրով և ուրախությամբ այս առավոտ ես ողջունում եմ մեր հայրենի

հոդի վրա մեր սիրեցյալ եղբորը՝ Իլիա Բ. Կաթողիկոս-Պատրիարքին Վրաց Ուղղափառ Եկեղեցու, որպես մեր թանկագին հյուրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Բնականորեն Նորին Սրբությունը հաճախ եղել է մեր հայրենիքում և Սուրբ Էջմիածնում, բայց իմ գահակալության շրջանին առաջին անգամն է գալիս: Ես մեծապես երջանիկ եմ, որ նրան ողջունում եմ մեր ազատ և անկախ Հանրապետության շրջանին մեր հայրենիքի մեջ: Ինքը իր տան մեջ է գալու այնքան ատեն, որ ինք Հայաստան է: Հազար բարի եկաք»:

Պատասխանելով ներկա լրագրողների հարցերին, Համայն Վրաստանի հոգևոր պետն ի մասնավորի շեշտեց.

«Առաջին հերթին ուզում եմ շնորհակալություն հայտնել Նորին Սրբությանը՝ հրավերքի և ջերմ ընդունելության համար:

Մենք եկել ենք շարունակելու այն ավանդույթները, որ գոյություն ունեն դարեր շարունակ: Մենք ծանոթ ենք Նորին Սրբության հետ դեռևս երիտասարդ տարիներից և ուզում եմ շնորհավորել հայ ժողովրդին, որ համաշխարհային ճանաչում ունեցող կաթողիկոս ունի:

Աստծո և իմ ժողովրդի առջև մեծ պատասխանատվություն եմ զգում՝ կապված այս այցի հետ, որովհետև այն նպաստում է մեր երկու Եկեղեցիների և ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը»:

Լրագրողների այն հարցին, թե կարո՞ղ եք արդյոք գնահատել այն իրավիճակը, որն առկա է Վրաց Եկեղեցու կյանքում: Ինչ-որ տրոհումներ եղե՞լ են, Իլիա Բ համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը պատասխանեց.

«Նախ և առաջ կցանկանայի ասել, որ ոչ մի պառակտում չկա Վրաց Եկեղեցու մեջ, պարզապես Վրաց Եկեղեցին հրաժարվել է էկումենիկ շարժումից, որովհետև այնտեղ շատ մեծ տոկոս է կազմում բողոքականությունը, որին մեր Եկեղեցին դեմ է: Կարծում եմ, նաև դեմ են մյուս Ուղղափառ Եկեղեցիները»:

Առաջադրված հաջորդ հարցը հետևյալն էր. Ձեր. կարծիքով ի՞նչ դեր կարող են խաղալ հոգևոր առաջնորդները Անդրկովկասում ռազմական հակամարտությունների շուտափույթ լուծման գործում, ի պատասխան որի Վրաց Եկեղեցու պետն ասաց.

«Ես կարծում եմ, որ մեծ պատասխանատվություն է ընկած Անդրկովկասի հոգևոր առաջնորդների վրա: Մենք պետք է անենք առավելագույնը, որպեսզի Անդրկովկասը դառնա կայուն և խաղաղ գոտի»:

Վերջին հարցն այսպիսի ձևակերպում ուներ. Ինչպիսի՞ վիճակում են գտնվում Վրաստանի տարածքում եղած հայկական եկեղեցիները: Ճի՞շտ է, որ դրանք քանդվում են և նույն տեղում կառուցվում են վրացական եկեղեցիներ: Ի՞նչ կասեք Խոջիվանքի մասին:

Բարձրակարգ ընտանիքներից

Պատասխան.

«Պետք է ասեմ, որ նախկինում Վրաստանում եղել են շուրջ 25.000 հայկական եկեղեցիներ և մատուռներ: Ժամանակի ընթացքում դրանք նվազել են: Ներկայումս դրանց թիվը շատ քիչ է: Այդ նույնը կարելի է ասել նաև Վրացական եկեղեցիների մասին: Շատերը քանդված են, բայց մոտ ապագայում կամաց-կամաց կվերականգնվեն: Իսկ այն հարցը, որը վերաբերում է Խոջիվանքին, ասեմ, որ, ճիշտ է, այնտեղ կար նաև հայկական գերեզմանատուն, որ մինչև այսօր էլ կա, իսկ այն նոր վրացական եկեղեցին, որ կառուցվում է, շատ մոտ է գտնվում գերեզմանատանը:»

ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ

Ճեպակրույցից հետո շքախումբը, կույգ հոգևոր պետերի գլխավորությամբ, ուղղվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Հանդիսավոր թափորի ուղեկցությամբ, կանգերի դողանջների ներքո, «Հրաշափառ»-ով մուտք գործելով Մայր Տաճար, Հայ և Վրաց Եկեղեցիների առաջնորդները, Իջման Սուրբ Սեղանի առջև իրենց գոհաբանական աղոթքն առաքեցին առ Աստված, ապա «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ առաջնորդվեցին դեպի Ավագ Խորան, ուր նախ իր բարիգալստյան խոսքը բարձրաստիճան հյուրերին ուղղեց Գարեգին Ա Կաթողիկոսը՝ առանձնակի նշելով.

«Փառք և գոհություն ենք ընծայում Բարձրյալն Աստծուն, որ Մեզի շնորհեց այս երկրորդ երջանիկ պատեհությունը որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեր ընտրությունից և գահակալությունից այս կողմ, լինելու Ձեզ հետ աղոթակից այս անգամ մեր մայրենի հայկական հողի վրա ի Հայաստան և մեր Հայաստանյայց Ս. Եկեղեցու սրբազնասուրբ կենտրոնում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Մենք երբեք չենք մոռանա այն օրերը, որ անցկացրինք Վրաստանում, հատկապես Թբիլիսիում, որպես Ձեր եղբայրական հյուրը 1995-ի սեպտեմբերին: Մեզ համար հոգեկան զորության աղբյուր եղավ Մեր առաջին այդ հանդիպումը Մեր ընտրությունից հինգ ամիսներ ետք:

Դուք բազում անգամներ եղել եք Ս. Էջմիածնում և Հայաստանում: Բայց առաջին անգամ եք գալիս Մեր գահակալության շրջանում: Մեր առաջին աղոթքն է, որ Աստված Ձեզի և Մեզի երկար կյանք տա, որպեսզի ոսկի շղթայի վերածվեն Մեր եղբայրական սրտակցական կապերը և ընդհանրապես Վրաց Օրթոդոքս և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիների փոխհարաբերությունները:

Ողջունում ենք Ձեզ ընկերացող պատվիրակության հարգարժան անդամներին, որոնք Ձերդ Սրբության նվիրյալ գործակիցներն են: Վստահ ենք, որ իրենց ներկայությունը առավել պիտի նպաստի մեր երկրների և Եկեղեցիների հոգևորականների և ժողովուրդների եղբայրական ամրացմանը և զարգացմանը:

Մենք երեկվա պես հիշում ենք Թբիլիսիում Մեր արտասանած ճառում Մեր սրտից բխած զգացումները և հատկապես այն համոզումը, որ հետևյալ բառերով արտահայտեցինք. «Մեր խորին համոզումն է, որ չի կարող լինել հզոր Հայաստան՝ առանց հզոր Վրաստանի, և չի կարող լինել զորավոր Վրաց Եկեղեցի՝ առանց զորավոր Հայց. Եկեղեցու» :

Անցյալ երկու տարիների ընթացքին, երբ առավել ևս իրազեկ դարձանք այս տարածաշրջանի պայմաններին, Մեր համոզումը առավել ևս խորացավ Մեր մեջ: Մեր երկու երկրներն ու Եկեղեցիները մի նոր դարաշրջանի մեջ են մտել ազատության և անկախության աստվածատուր բարիքները վերստին վայելելով՝ Աստծու նախախնամական հոգածության ներքո: Այլևս մեզանից՝ մեր երկրների պետություններից, Եկեղեցիներից և ժողովրդի ընտրած ներկայացուցիչներից և ժողովրդի գիտակից և լուսամիտ մասնակցությունից կախում ունեն մեր երկրների բարօրությունը, խաղաղությունը և ապահովությունը:

Մենք մեր պատմության դասերից քաղված իմաստությունից առաջնորդված՝ մի անգամ ևս հավաստիացնում ենք Ձեր Սիրելյալ Եղբայրությանը, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր Միաբանությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդով և բոլոր թեմերով ույժ պիտի տա այդ սերտ գործակցությանը, որ ամենօրյա հացի պես կենսական է մեր երկու Եկեղեցիների, ժողովուրդների և պետությունների անվտանգության և հառաջդիմության համար:

Վստահ ենք, որ Ձեր այս այցելությունը մի նոր հառաջաքայլ կլինի դեպի այդ ներդաշնակ և անհրաժեշտ ու բարերար գործակցության զարգացումը:

Այս առիթով ուզում ենք հայտնել Ձերդ Սիրելիությանը, որ Ձեր անձի մեջ Մենք տեսնում ենք նաև հովանավոր և հոգածու մի Հայր Վրաստանի ողջ տարածքում ապրող մեր Հայ Եկեղեցու զավակների համար, որոնց Հոգևոր Առաջնորդը՝ Գերաշնորհ Տ. Գևորգ Արքեպ. Սերայդարյանը, մեր մյուս Սրբազան Հայրերի, Առաջնորդների և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների հետ միասին, Մեզ է միացել՝ Ձեզ ողջունելու համար մեր Եկեղեցու այս սուրբ օջախում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Մեր Եկեղեցիները այս ժամանակներին անցնում են հոգևոր վերարթնության մի նոր շրջանից: Մենք այնպես պետք է գործակցենք, որ մեր Սուրբ Հայրերի ավանդությունները առողջ և կենդանի մնան մեր ժողովուրդների կյանքում և մանավանդ սիրտ-սրտի, ձեռք-ձեռքի աշխատելով, թույլ չտանք, որ օտար քարոզիչները մեր ժողովրդի մեջ թափանցեն և աղանդավորական և հերետիկոսական նոր գաղափարներ տարածեն՝ խաթարելով մեր Հայրերի հարազատ ավանդությունները:

Ահա այս սերտ գործակցության զգացումներով ողջունում ենք Ձեր շնորհաբեր ժամանումը ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Հառաջիկա օրերին Մենք կունենանք երկար խոսակցություններ՝ ի սեր՝ մեր երկու Եկեղեցիների զորացման, Աստծու փառքին և Քրիստոսի Եկեղեցու պայծառության»:

Այնուհետև իր շնորհակալության ու երախտիքի պատասխան խոսքն ասաց Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը.

**«ՋԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ, ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա,
ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՐ, ՏԻԿՆԱՑՔ ՈՒ ՊԱՐՈՆԱՑՔ.**

Կատարվել է մեր մեծ ցանկությունը: Մենք այցելել ենք Ձեր երկիրը, որպեսզի կրկին շնորհավորենք Ձեր ընտրությունը Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսական Աթոռում և արտահայտենք մեր բարյացակամ վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:

Մենք լավ ենք հասկանում, թե ինչպիսի մեծ ու կարևոր դեր է կատարում Սուրբ Էջմիածինը և Հայ Առաքելական Եկեղեցին Ձեր ազգի կյանքում:

Հենց Սուրբ Էջմիածնում պայծառապես ներկայացված է Ձեր ընդունակ և ազատասեր ժողովրդի հոգևոր ուժը և մշակույթը: Հենց այն ժամանակ, երբ երկիրը կորցրել էր իր պետականությունը, և երբ թշնամին ցանկանում էր Ձեր ազգը կործանել, այսպիսի ծանր ժամանակահատվածում Եկեղեցին աշխատում էր ժողովրդին միավորել և հպմախմբել:

Ինչպես Վրաց Եկեղեցին, այնպես էլ Հայ Առաքելական Եկեղեցին եղել և մնում է որպես ազգային Եկեղեցի և ժողովրդին միավորող գլխավոր ուժ:

Այսօր, երբ Վրաստանը և Հայաստանն արդեն անկախ պետություններ են, երբ գտնվում ենք հետխորհրդային անցումային շրջանում, երբ մեր ժողովուրդների ու Եկեղեցիների առջև ծառացած են բազմաթիվ ծանրագույն խնդիրներ, պատասխանատվությունն է՛լ ավելի է առանձնահատուկ դառնում:

Կան արտաքին և ներքին ուժեր, որոնք փորձում են ետ բերել պատմությունը, սակայն մենք հավատում ենք, որ Աստծո ողորմությամբ, ինչպես նաև մեր ժողովուրդների իմաստուն որոշումներով անհնար կդառնա անցյալի վերականգնումը: Անցյալը մեծ դրոշմ է թողել մեր ժողովուրդների վրա: Ուստի գտնում եմ, որ մեր ամենագլխավոր նպատակը հավատի վերադարձն է, նոր ճանապարհների որոնումը, որը մեզ կտանի դեպի տնտեսական և հոգևոր ճգնաժամի ելքը:

Արտաքին ու ներքին թշնամին փորձում է պառակտմամբ միմյանցից անջատել կառավարությանն ու ժողովրդին, փորձում է անվստահություն սերմանել ժողովրդի մեջ Եկեղեցու նկատմամբ, բայց մենք համոզված ենք, որ այս փորձերն իզուր են: Մեր ժողովուրդներն իրենց բազմադարյան հմտությամբ և իմաստությամբ կհաղթահարեն այս ծանր փորձությունները:

Վեհափառ Տեր, կրկին ողջունում ենք Ձեզ հանուն Վրաց Ուղղափառ Եկեղեցու և մաղթում հաջողություններ Ձեր այնքան պատասխանատու գործունեության մեջ»:

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

«Էջ Միածին ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո, հավարտ երկուստեք փոխանակված ողջույնի խոսքերի, շքախումբը թափորով առաջնորդվեց դեպի Վեհարան:

«Այսօր Քահանայապետ» շարականի երգեցողությամբ մտնելով Վեհարան՝ բարձրաստիճան հյուրերն ուղղվեցին դեպի Գահասրահ, որտեղ և ներկայացվեցին պատվիրակության անդամները: Նախ իրեն ուղեկցողներին ներկայացրեց համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը, ապա Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը մեկ առ մեկ ներկայացրեց թեմական առաջնորդներին, Մայր Աթոռի միաբաններին:

Վերջում, շնորհակալություն հայտնելով այսքան ջերմ ու սիրալիր ընդունելության համար, Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքն առանձնակի ավելացրեց.

«Անչափ շնորհակալ եմ այս շատ մտերմիկ ու եղբայրական ընդունելության համար: Այստեղ ամեն ինչ սրտամոտ է ինձ ու հարազատ: Շատ անգամներ եմ ես եղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս գահասրահում: Սակայն մեկ անգամ ևս հույս եմ հայտնում, որ մեր երկու եղբայրական ժողովուրդների փոխհարաբերությունները ապագայում էլ ավելի կամրապնդվեն: Մեր երկրները ղեկավարում են այնպիսի իմաստուն նախագահներ, ինչպիսիք են Լևոն Տեր-Պետրոսյանը և Էդուարդ Շևարդնաձեն: Հետևաբար՝ նրանք ևս ամեն ինչ կանեն, զույգ Եկեղեցիների և զույգ ժողովուրդների բարեկամության ու եղբայրության սերտացման ու հարատևման համար»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Օրվա երկրորդ կեսին, ի պատիվ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի և նրա գլխավորած պատվիրակության, Ամենայն Հայոց Հայրապետի կողմից Վեհարանի հյուրասրահում տրվեց պաշտոնական ճաշ, որի ընթացքում երկուստեք փոխանակվեցին բարեկամական ջերմ խոսքեր:

Ապա, կարճատև հանգստի համար, բարձրաստիճան հյուրերը մեկնեցին Երևան՝ հյուրերի ընդունելությունների կառավարական տուն:

ՀԱՄԵՐԳԻ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ «ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀՈՒՄ

Երեկոյան ժամը 18.00-ին Հայ և Վրաց Եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունները, Իլիա Բ և Գարեգին Ա Հայրապետների նախագահությամբ, «Արամ Խաչատրյան» համերգասրահում ունկնդրեցին Երևանի քաղաքապետարանի սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի համերգը՝ Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ:

ՊԱՐԱԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



ՕԻՕԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Վրաց Եկեղեցու պատվիրակության պատվին տրված համերգին ներկա էին Սկզային Ժողովի նախագահ Բաբկեն Սրարքցյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Արմեն Սմբատյանը, Սոցիալական ապահովության նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական այցելությամբ գտնվող Ուկրաինայի Գերագույն Ռադայի նախագահ Ալեքսանդր Մորոզը, Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիապոր դեսպան Գիգոլ Բարամիձեն, ՀՀ նախարարներ և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

Համերգը բացվեց «Տերունական աղոթք»-ի երգեցողությամբ: Ապա հնչեցին Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների հիմները: Հնչեցին նաև հոգևոր երգեր, Մոցարտի, Հենդելի ստեղծագործություններից և Լորիս Ճգնավորյանի մշակումներից:

Հավարտ համերգի, ներկա ժողովրդին իրենց հայրական պատգամը հղեցին երկու Եկեղեցիների հոգևոր պետերը: Նախ խոսեց Հայոց Հայրապետը.

«Սիրելի եղբայր ի Քրիստոս, հոգևոր եղբայրներ, մեծարգո փոխնախագահ և հավատացյալ հավատարիմ հայորդիք,

Այսօր ինձ համար բացառիկ հոգևոր ցնծության մի օր է, որովհետև Մեր կաթողիկոսական ընտրությունից այս կողմ, առաջին անգամը լինելով, Մենք ողջունում ենք Մեր հայրենի հողի վրա, ի Հայաստան աշխարհ, ի Սուրբ Էջմիածին, ի քաղաքամայր Երևան Մեր սիրեցյալ եղբորը ի Քրիստոս, Վրաց Օրթոդոքս Եկեղեցու հոգևոր պետին, Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին:

Առաջին օրն է այսօրը: Կեսօրին ժամանեց և մեր օրը բացվեց Էջմիածնի Մայր Տաճարում ընդ Աստուծո աղոթասացության միջից: Միածնաէջ Խորանի առաջ աղոթք արեցինք միասին վասն անսասանության, ապահովության և զարգացմանը մեր երկու ճակատագրակից, բախտակից երկրների՝ Վրաստանի և Հայաստանի և երկու քույր Եկեղեցիների համար: Ես ցանկանում եմ, որ այսօր, այս պահը լինի հաղորդության պահ մեր ժողովուրդների համար: Այս պատճառով էլ ահա ես իմ գնահատանքն եմ հայտնում մեր սիրելի նվագախմբին, երգչախմբի անդամներին և նրանց ղեկավար պարոն Լորիս Ճգնավորյանին, որ իրենց աշխատաժամանակից դուրս, այսօրը մեծ սիրով և հարգանքով ընծայեցին՝ որպես իրենց նվերը Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին, որովհետև մեր հայ ժողովուրդը ուրիշ ավելի մեծ ընծա չունի, քան իր արվեստը:

Երբ ես ունկնդիր էի լինում ձեր ձայներին՝ մարդկային և գործիքային, այն ներդաշնակյալ ձայներին, որոնք այս բեմից, ջուրի հոսանքի պես հառաջանում էին մեր հոգիներում, ես հարցնում էի ինքս ինձ. տասը տարիներ առաջ այս սրահում ո՞չ Քրիստոս անունը կարող էինք արտասանել, ո՞չ «Հայր մեր»-ը կարդալ, ո՞չ էլ շարականներ երգել:

Փոխվեց և փոխվում է այս դարը: Հարուցյալ Հիսուսն է ահա ոգեկոչում մեր ժողովուրդը, հորիզոնից Փրկչի շունչն է տարածվում մեր վրա: Այս հոգևոր շունչը ահավասիկ, մենք կիսում ենք մեր վրաց բարեկամ երկրի, ժողովրդի և Վրացական Օրթոդոքս Եկեղեցու հետ: Այսօր, մեր շունչերը միացնելով, մեր ձեռքերը իրար կապելով, մեր սրտերը իրար ամրացնելով, միացնում ենք նաև երկու եղբայր երկրները՝ Հայաստանն ու Վրաստանը: Մենք բախտակից երկրներ ենք եղել: Մենք պատմությունից դաս ենք սովորել: Ո՛չ մի երկիր նման ճակատագիր չի ունեցել: Պատմությունն է, որ ասում է այս: Պատմությունը հիշենք, բայց ապրենք նորացման տեսիլքով:

Ամենայն սիրով և բարեմաղթանքներով ողջունում եմ Ձեզ, սիրեցյալ եղբայր, և խնդրում եմ, որ Դուք Ձեր սրտի խոսքն ասեք մեր սիրեցյալ ժողովրդին»:

Գոհունակություն հայտնելով համատեղ անցկացրած այդքան գեղեցիկ ու հոգեպարար պահերի համար, Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքն ավելացրեց.

«Այսօր սկսվեց մեր պաշտոնական այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Գտնվելով այստեղ, մեզ պատեհ առիթ ընձեռնվեց ունկնդրել այս համերգը, հաղորդակից լինել այն գեղեցիկ արվեստին, որը շաղկապում և ոգեկոչում է մեզ: Երբ մենք հետադարձ հայացք ենք գցում մեր խորը անցյալին, զարմանում ենք, թե ինչպես այս երկու փոքրիկ ժողովուրդները, դարեր ի վեր հալածվելով, պարտավորված լինելով պաշտպանել իրենց գոյատևումը, իրենց հողը, մշակույթը, հավատը, լեզուն, կարողացել են արարել արվեստի նման գոհարներ, որոնք ըստ արժանվույն տեղ կգրավեին Համաշխարհային մշակույթի անդաստանում: Պատասխանը մեկն է. Աստծո կամքն է այս:

Այսօր, երբ գտնվում եմ հայոց հինավուրց հողի վրա, որ ողողված է իր նահատակների արյամբ, խոնարհվում եմ Ձեր մշակույթի, արվեստի և պատմության առջև, այն ամենի առջև, որ արել եք դուք ողջ աշխարհի համար:

Ես պարտավոր եմ ասել, որ Վրաստանը ցանկանում է տեսնել ծաղկող և բարգավաճող հզոր Հայաստան: Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի զորանա այն հավատքը, որ փրկել է մեր զույգ ժողովուրդներին: Այստեղ չեմ կարող չանդրադառնալ, որ ես վաղուց եմ ճանաչում Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետին: Նրա մասին խոսելն ու վկայելը ավելորդ եմ համարում, որովհետև մեծ մարդը ճանաչվում է հեռվից: Նրան ճանաչում է ողջ քրիստոնյա աշխարհը: Դուք երջանիկ եք, որ նա ձեր հոգևոր հովվապետն է: Ձերդ Սրբություն, ես Ձեզ ցանկանում եմ երկար տարիների կյանք և արեշատություն»:

Օրվա վերջում հյուրերի ընդունելությունների կառավարական տանը, ի պատիվ Վրաց Ուղղափառ Եկեղեցու պատվիրակության, տրվեց պաշտոնական ընթրիք:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ.
ՍՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Այցելության երկրորդ օրն իր այգաբացով մեծ խորհուրդ ուներ, որին գումարվեց և Մայիս 28-ի խորհուրդը: Ահա թե ինչու, համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Իլիա Բ-ի գլխավորած պատվիրակությունը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, ինչպես նաև թեմական առաջնորդների, Մայր Աթոռի միաբանների և քույր Եկեղեցիների ներկայացուցիչների ուղեկցությամբ, ժամը 10.30-ին այցելեց Ծիծեռնակաբերդի բարձունք՝ խոնարհության ու հարգանքի տուրք մատուցելու հայոց մեկ ու կես միլիոն նահատակների անմահ հիշատակին:

Ծաղկեպսակի վետեղումից հետո կատարվեց հոգեհանգստյան կարգ, որին ներկա էին նաև Սկզբային ժողովի պատգամավորներ, Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպանը, բարձրաստիճան այլ անձինք:

Հավարտ հոգեհանգստյան արարողության, ներկաների հետ օրվա խորհուրդը, ինչպես նաև սրտի ապրումները բաժանեցին Գարեգին Ա Կաթողիկոսը և Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը:

Մեկնելով օրվա խորհուրդը և այն հանգամանքը, որի համար այդ պահին Ծիծեռնակաբերդի բարձունքում են գտնվում բարձրաստիճան հյուրերը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը շեշտեց.

«Մենք հոգեպես մխիթարված և զորացած կզգանք, որ Ձեր այցելության ընթացքին սիրով ընդառաջեցիք մեր փափագին և եկաք, միացաք մեզի՝ հարգանք ընծայելու համար առավել, քան մեկ ու կես միլիոն մեր նահատակներուն, որոնք 1914-15 թվականներուն զոհ գացին ցեղասպանության:

Մենք այսօր գեղեցկագույն օրերից մեկի մեջն ենք գտնվում և այս հարգանքը ընծայում ենք ցեղասպանության մեր զոհերին մի այնպիսի օր՝ 28 Մայիս, երբ մենք տոնում ենք նաև նրանց արյան գինը եղող անկախության տոնը: Անոնք իրենց կյանքը հումպետս չվատնեցին, իզուր չանցավ անոնց արյունը, անոնց զոհողությունը Աստված պսակեց 1918 թվին՝ մեզի ընծայելով մեր զավակներու այրան գնով մեր հայրենիքի ազատությունը և անկախությունը, ինչ որ պատահեց Ձեր հայրենիքում, և Դուք Թիֆլիս քաղաքում և ամբողջ Վրաստանում երկու օր առաջ տոնեցիք 26 մայիսին Ձեր անկախության տոնը: Այս տոները մեզ համար այսօր իմաստ կառնեն նաև Արցախի մեր ժողովրդի արդար իրավունքների պաշտպանության պայքարով, որոնց քաջամարտիկներու, զոհերու հիշատակն ալ ոգեկոչեցինք քիչ առաջ:

Սիրեցյալ եղբայր, մեր երկու ժողովուրդները հերոսական այս օրերը տեսակ մը ներշնչման աղբյուր կընդունեն իրենց նոր կյանքի համար: Նման գաղափարները պետք է թափանցեն մեր ժողովրդի ամենօրյա կյանքում, որպեսզի այս նոր անկախությունը, որին հասան ձեր և մեր

երկրները, տնեն, ամրանան, զարգանան առաջիկային Աստուծո փառքին և մեր ժողովուրդների բարիքին համար»:

Նշելով, որ ինքը յուրօրինակ մի խորհուրդ է տեսնում երկու եղբայրական ժողովուրդների Անկախության օրերի այդքան մերձավորությունում և որոնց ինքը առիթ է ունենում ներկա գտնվել, Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքն ավելացրեց.

«Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, մենք այսօր գտնվում ենք այն սուրբ վայրում, որը կառուցվել է այն մեկ ու կես միլիոն նահատակների հիշատակի հավերժության համար: Այս սուրբ վայրում Մենք ուզում ենք շնորհավորել Ձերդ Սրբությանը և ողջ հայ ազգին՝ Հայաստանի առաջին Հանրապետության անկախության օրվա առիթով: Ազգի և երկրի անկախությունը բնորոշում է նաև Ձեր ժողովրդի ազատ ոգին: Հենց այն մեկ ու կես միլիոն նահատակները զոհվեցին, տվեցին իրենց կյանքը հանուն Հայաստանի ազատության: Նրանք չզոհվեցին, նրանք միացան երկնքին, ինչ Հայաստան աշխարհն ու հայ ժողովուրդն այսպիսի շատ նահատակներ ունի:

Վրաց ժողովուրդը ևս ունի շատ հերոս նահատակներ, քաջ հերոսներ: Վրաստանի և Հայաստանի հողերը ներծծված են մեր նահատակների արյամբ: Եթե քամելու լինենք Հայաստանի և Վրաստանի հողերը, ապա մենք կտեսնենք, որ այնտեղից արյուն է թափվում:

Աստված թող հիշի և օրհնի մեր նահատակներին, բոլոր զոհվածներին: Ուր էլ որ լինենք, միշտ վառ պահենք նրանց հիշատակը»:

***

Հյուրերն այցելեցին նաև Ցեղասպանության թանգարան, փաստավավերագրական տեղեկությունների և լուսանկարների շնորհիվ ծանոթացան եղերական այդ օրերի առավել հակիրճ պատմությանը:

Վերջում Նորին Սրբություն Իլիա Բ-ն իր տպավորությունների գրառումը թողեց թանգարանի հուշերի և տպավորությունների հուշամատյանում՝ նշելով, որ թեև հայոց տառապյալ ժողովուրդը բազում անգամներ է ենթարկվել ճակատագրի դաժան խաղին, անցել վրկանքների ու տառապանքների բովով, այնուամենայնիվ, երբեք չի կորցրել հոգու կորովը, վեհությունը, մտքի թռիչքը և հարատևելու անսկզբուն կամքը, ապա շարունակեց. «Ողջ Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը խոսում է այն մեծ կամքի, խիզախության մասին, որ ունի հայ ժողովուրդը և որն օգնում է նրան հաղթահարելու իր անմոռանալի վիշտը: Իրավամբ, այն սարսափելի իրադարձությունները, որոնք տեղի ունեցան 1915 թվականին, մեկ անգամ ևս խոսում են այն մասին, որ մեծ է հայ ժողովրդի ոգին և անկոտրում: Այդ ոգուն չի կարող հաղթել ոչ մի հակառակորդ ուժ: Ես հայ ժողովրդին ցանկանում եմ խաղաղություն և բարգավաճում»:

ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ

Այնուհետև ավտոմեքենաների շարասյունն ուղղվեց դեպի Խոր Վիրապ՝ ի մոտո տեսնելու և զգալու այն մեծ տառապանքների փոքրիկ մի շյուղը, որ դարեր առաջ այդ վիրապում ապրեց մեր հավատո հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը:

Այստեղ բարձրաստիճան հյուրերին դիմավորեց հավատացյալների հոծ բազմությունը: «Հրաշափառ»-ով մուտք գործելով Մեծ Սրբի անունը կրող եկեղեցի, Հայ և Վրաց Եկեղեցիների հոգևոր առաջնորդները կանոնական աղոթք առաքեցին առ Բարձրյալը՝ տվյալ շնորհաբեր պահի համար, ապա իրենց հայրապետական պատգամը հղեցին ներկա հավատացյալ-ժողովրդին:

Նախ խոսեց Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

«Այս պահը շատ կարևոր մի պահ է: Խոր Վիրապի պատմության մեջ պատմական մի էջ պիտի արձանագրվի, որովհետև այսօր Դուք որպես Վրաց քույր Եկեղեցու պետը, գալիս եք մեր հայ ժողովրդի կրոնական պատմության ամենեն նվիրական այն կենտրոնը, ուր տասներեք տարիներ տառապեց մեր հավատքի հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, և այն ճգնության ու տառապանքի միջից Աստված նրան պարգևատրեց՝ լույսը տարածելով մեր Հայաստան աշխարհի մեջ, որպես քրիստոնեական հավատք:

Այստեղից է սկսում հայոց ժողովրդի դարձը դեպի քրիստոնեություն: Հետևաբար ողջունում ենք Ձեզ և Ձեր ներկայության մեջ տեսնում ենք առավել ևս ճոխացում մեր քրիստոնեական հավատքին վրաց ժողովրդի քրիստոնական հավատքի միջից, որ եղել է մեր երկու ժողովուրդների հաղթանակի, տառապանքի դեմ տարած հաղթանակի գաղտնի ուժը:

Ուզում եմ նաև այստեղ ողջունել մեր սիրելի զինվոր եղբայրներին՝ ռուս և հայ, որոնք այստեղ են՝ միասնաբար պաշտպանելու համար այս տարածաշրջանը, և նրանց կապվածությունը մեր հայրենիքին Մենք մեծապես գնահատում ենք»:

Ապա ներկաներին դիմեց Իլիա Բ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը.

«Ձերդ Սրբություն, մենք ուրախ ենք, որ գտնվում ենք այս Սուրբ վայրում, այս վանքում, ուր տասներեք տարի անցկացրեց Գրիգոր Լուսավորիչը:

Մենք քաջ գիտենք, որ այս վանքը պատմական մեծ նշանակություն ունի: Այժմ, երբ մենք գտնվում ենք բիբլիական Արարատին դեմ-հանդիման, խնդրում ենք Աստծուն, որ իր օրհնությունը բաշխի և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի հանրապետություններին: Եվ որպես մեր հարգանքի դրսևորում, Մենք ցանկանում ենք, ի հիշատակ մեր այցելության, վանքին նվիրել Սուրբ Գևորգի սրբապատկերը:

Աստված օրհնի Հայաստանը և Վրաստանը: Մենք ուրախ ենք, որ այստեղ ներկա են Ռուսաստանի Դաշնության բանակի զինվորները: Մենք աղոթում ենք նաև, որ խաղաղություն լինի Ռուսաստանում»:

Իր շնորհակալությունը հայտնելով այդքան ջերմ ու բարեկամական ընդունելության համար, Նորին Սրբություն Իլիա Բ-ն եկեղեցուն նվիրեց Սուրբ Գևորգի սրբապատկերը:

Սպա Վանքի վանահայր Մխիթար քհն. Սարիբեկյանը պատվարժան հյուրերին ծանոթացրեց եկեղեցահամալիրին, մեր հավատո հոր տաճարեբաժնյա չարչարանաց և տանջանքների խորախորհուրդ և իմաստալից պատմությանը:

Տաճարի գավթից դիտելով բիբլիական Արարատը, իրենց ապրումները կիսեցին հոգևոր առաջնորդները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, կուգահեռներ անցկացնելով ամեն անգամ իր այցելությունից ստացած տպավորությունների միջև, առանձնակի շեշտեց.

«Խորապես գոհ եմ, որ Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի այցելության առիթով հնարավոր եղավ գալ այստեղ՝ Խոր Վիրապ, որտեղից սկսվում է մեր հայ ժողովրդի քրիստոնեության դարձը:

Այսօր մանավանդ, Մայիս 28-ն է, ազգային տոն է մեր ողջ Հանրապետության և ամբողջ հայ ժողովրդի համար և ես հրճվում եմ, որ մեր հոգեկան ազատությունը, հոգեկան դարձը մեր ազգային վերականգնումի գաղափարի հետ է շաղախված: Այսօր Արարատի դիմաց կանգնած, նայում ենք մենք այն մյուս Արարատին, հոգևոր Արարատին, գագաթնակետին մեր հայության հավատքի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Ողջունում եմ ձեզ բոլորիդ Արարատի փեշերից և նաև մեր հոգևոր դարձի առաջին այս վայրից՝ Խոր Վիրապի նվիրական վանքից»:

Դեմ-հանդիման տեսնելով Աստվածաշնչյան լեռը, մտովի վերապրելով Սուրբ Գրքի ավանդները, շրհեղեղյան պատկերները, Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքն ի մասնավորի ավելացրեց.

«Գտնվելով այս սրբավայրում, այս Սուրբ վանքում, ամենից առաջ ես կամենում եմ շնորհավորել ողջ հայ ժողովրդին՝ անկախության օրվա ուրախ առիթով, եղբայրական հայ ժողովրդին ցանկանալ խաղաղություն, բարգավաճում:

Ես, վրաց Եկեղեցու պատվիրակության հետ, գտնվում եմ այստեղ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով և կարծում եմ, որ մենք շարունակում ենք այն ավանդները, որոնք մեզ են ավանդել մեր նախնիները: Մեր այս այցելությունը դուրս է համաեկեղեցական սովորական, ընթացիկ շրջանակներից: Հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը մեզ է փոխանցվել դարերի խորքից:

Ուստի թող Աստված օրհնի մեր երկու ժողովուրդներին և մեր Առաքելական Եկեղեցիները»:

***

Փոքրիկ հյուրասիրությունից հետո, հյուրերը վերադարձան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, շրջեցին Մայրավանքի թանգարաններում, ծանոթացան «Ալեք Մանուկյան» Գանձատան ցուցադրանքին:

ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ

ՎԵՀԱՊՈՒԵ ՎԱՀԱՊՈՒՈ

ՎՂՈՒՄՈՒՈՑ ՍՍԻՊԵՏԵ ՈՒՍՑՎՂԵՈՒՆ ՎՂՈՒՄՈՒԵՑԻ ՂԱՍԵՔԱՍԱՆՂԻՂԱՍ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 18.00-ին, Վեհարանի մեծ դահլիճում Վրաց Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը, Սմենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, ներկա գտնվեց Մայր Տաճարի երգչախմբի և Հոգևոր Ճեմարանի սաների կողմից տրված հոգևոր համերգին, որին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Մայր Աթոռի միաբաններ, տեղական իշխանությունների ղեկավարներ, պաշտոնատար այլ անձինք, ինչպես նաև հյուրեր արտերկրից և Էջմիածնից:

«Հայր մեր»-ի և Հոգևոր Ճեմարանի հիմներգի երգեցողությունից հետո, ողջույնի խոսք ասաց Հոգևոր Ճեմարանի տեսուչ Հայկակուն-ծ. վրդ. Նաջարյանը՝ ասելով.

«Ն. Ս. Օ. Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց.

Ն. Ս. Օ. Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարք Համայն Վրաստանի.

Բարձրաստիճան Եկեղեցականներ և հարգելի ներկաներ.

Հանուն Հոգևոր Ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության՝ մեծ հաճույք է ողջունել Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին համայն Վրաստանի և Իրեն ընկերացող շքախմբի՝ եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչներին Վեհարանի հանդիսության դահլիճում:

Որքան մեզ հայտնի է, երկու Եկեղեցիների հոգևոր պետերի հանդիպման առաջին գրավոր հիշատակարանը գալիս է Ե-րդ դարից (թեև բնականորեն նման հանդիպումներ պետք է որ եղած լինեին 4-5-րդ դարերում ևս): Դրանից հետո եղած բազում հանդիպումները, մինչև այս մեկը, վկայում են այն սերտ սիրո, հարգանքի և գործակցության մասին, որ գոյություն ունի երկու քույր Եկեղեցիների միջև:

Մեր զույգ Եկեղեցիներն էլ ազգային Եկեղեցիներ են. մի գիծ, որ արտացոլվել է ոչ միայն մեր երկրներում գտնվող հոգևոր մշակութային արժեքներով, այլև վաղ դարերից սկսած, Երուսաղեմից մինչ Սինայի Ս. Կատարինե վանքը, Կոստանդնուպոլսից մինչ Աթոս լեռ և Բուլղարիա, որտեղ հաճախ տեսնում ենք հայերեն և վրացերեն գրություններ կողք-կողքի իրար լրացնող, իրար հզորացնող այնպես, ինչպես Հայկն ու Քարթլոսը լինեին կողք-կողքի ստեղծագործելիս՝ որպես երկու եղբայրներ:

Մեր երկու Եկեղեցիների ճանապարհը եղել է երկար, մարտիրոսական և հերոսապատում: Այսօրվա պայմաններում մեր անցյալը մեզ պարտավորեցնում է, երբ գտնվում ենք ոչ քրիստոնյա ազգերի շրջապատման մեջ՝ Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում: Այստեղ վառ պահելով քրիստոնյա հավատքը, մենք պահպանում ենք ո՛չ միայն մեր սահմանները, այլև այսպես կոչված քրիստոնյա Եվրոպայի սահմանները:

Մեր զույգ Եկեղեցիների պատմության մեջ խաղաղության շրջանները կարճ են եղել. Դուք՝ Իլիա Բ և Գարեգին Ա Կաթողիկոսներ, բախտավոր եք: Ձեզ շնորհված է ի վերուստ խաղաղության և ազատության մի

շրջան: Վստահ ենք, որ և՛ Վրաստանում, և՛ Հայաստանում հոգևոր կյանքը այնքան կծաղկի, որ ամեն մի գյուղ և շրջան կունենա իր հոգևորականը և առաջնորդը:

Եվ մենք ոչ միայն հետ կնայենք դեպի մեր երկհազարամյա քրիստոնեական անցյալին, այլև հպարտորեն և հաղթականորեն կմտնենք երրորդ հազարամյակ՝ որպես արժանի հաջորդները մեր սուրբ նախնիների:

Իհարկե, այս վերազարթոնքի շրջանում մեր հոգևոր կրթական հաստատությունների դերը մեծ է: Որպես այդ օջախներից մեկի տեսուչ՝ թույլ տվեք խոնարհաբար ստանալ Ձեր սուրբ օրհնությունը և բացված համարել այս հանդիսությունը, որի առաջին մասը ներկայացնում են մեր Հոգևոր Մեմարանի ուսանողները՝ որպես մի վկայություն մեր սաների տածած հարգանքին և սիրույն դեպի Ձերդ Սրբությունը և Վրաց քույր Եկեղեցին»:

Հանդես-գալով Հոգևոր Մեմարանի ուսանողության անունից, Դ. լսարանի սան Սամվել Թորոսյանը նշեց.

«Ձերդ Սրբություն, գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ հայրեր, հարգելի հյուրեր ու ներկաներ:

Այս օրը մեզ համար ուրախալից է, որովհետև կրկին մեզ հետ է Վրաց Ուղղափառ Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ն:

Եվ ինձ համար, Ձերդ Սրբություն, մեծ պատիվ է, որ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Մեմարանի ուսանողների անունից ողջունում եմ Ձեզ և Ձեր ուղեկցորդ արքեպիսկոպոսներին, հոգևոր հովիվներին և Վրաց Ուղղափառ Եկեղեցու սպասավորներին, ինչպես նաև աշխարհական պաշտոնյաներին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս Ինքն Իրեն հովիվ կոչեց, իսկ Իր Եկեղեցուն՝ հոտ: Եվ ասաց, որ կլինեն մեկ հոտ և մեկ հովիվ: Եվ այսօր Ձեր ներկայությունն այստեղ մի իրադարձություն է, որ նպաստում է Տերունական այս խոսքերի իրականացմանը, որպեսզի մեկ լինի ո՛չ միայն հովիվը՝ Քրիստոս, այլև Նրա հոտը՝ Եկեղեցին: Այսինքն՝ նպաստում է մեր Եկեղեցիների ու ժողովուրդների միջև բարեկամությանը: Եվ մենք՝ ուսանողներս, դրա կողմնակիցներն ենք, այսինքն քրիստոնեական սիրո, գործնական բարեկամության, որ հնարավոր է սերտ շփման միջոցով, միմյանց ճանաչելով:

Մեր հայրերը այսպիսի սկզբունքով էին առաջնորդվում, որը ճշմարիտ է նաև մեզ համար.

Միութիւն՝ ի կարեւորս
Ազատութիւն՝ յերկրայականս, և
Սէր՝ յամենայնի:

Իսկ ի՞նչն է ավելի կարևոր, որում պետք է միություն լինի, եթե ոչ մեր Քրիստոս Աստուծո հանդեպ սուրբ հավատքը, որով և մենք եղբայրներ ենք Տիրոջով և երկնավոր Հոր որդիներ: Իսկ եղբայրների՝ մեկ Հոր որդիների միջև չի կարող այլ հարաբերություն լինել, քան ամուր

բարեկամությունը, որ հիմնված է Քրիստոսի սիրո վրա: Մեր հայրերը բարեկամ էին, և մեր սրտերին հարազատ են այնպիսի սուրբեր, ինչպիսիք են՝ Ս. Նինոն, Դավիթ Շինարարը, Աբո Թբիլեցին, Դավիթ Գարեջին, Գրիգոլ Խանձթեցին և այլոք:

Եվ մեր սրտերը ջերմությամբ են լցվում՝ նրանց անունները և կրած ճգնությունները հիշելիս, որոնք կատարվել են Աստծո Փառքի համար:

Ձերդ Սրբություն, թույլ տվեք ուղերձս ամբողջացնել վրացերեն լեզվով.

ՎՐԱՑԵՐԵՆ ԽՈՍՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դարերի խորքից եկող երկու ժողովուրդների՝ հայերի ու վրացիների բարեկամությունը պայմանավորված չէ սոսկ սահմանակցությամբ: Այն սկիզբ է առել դեռևս վաղնջական ժամանակներից: Ինչպես պատմությունն է վկայում, մեր՝ երկու ժողովուրդների նախահայրեր Հայոսն ու Քարթլոսը եղել են արյունակից եղբայրներ: Ահա, թե ինչու են մեր նախահայրերը ուս-ուսի տված դիմակայել իրենց վիճակված բազում դժվարություններին, սրտերում միշտ վառ պահելով պայծառ ապագայի հույսն ու երազը:

Հայ ու վրաց ժողովուրդների հոգևոր-մշակութային միասնության մասին են վկայում բազմաթիվ փաստեր, դրանց թվում նաև VII դարի Սուրբ Խաչ մենաստանի պեղումների ժամանակ հայտնաբերված քարը՝ հին վրացերեն և հայերեն արձանագրություններով:

Ձերդ Սրբություն, Փառք Աստծո, որ մեր երկու ժողովուրդների դարավոր երազն ի վերջո՝ XX դարի մայրամուտին իրականացավ: Այսօր թե՛ Վրաստանը, թե՛ Հայաստանը ազատ է ու անկախ, վերագտնվեց յոթ տասնամյակ կորցված ազատությունը, սակայն հայի սրտում դեռ չի սպիացել այն վերքը, որ բույն դրեց դեռևս 1989 թվականի ապրիլի 9-ին, երբ Ռուսթավելու պողոտայում, ազատության բռունցքներ պարզած նահատակվեցին մոտ երեք տասնյակ անմեղ քաղաքացիներ: Թող հավերժ լինի նրանց խնկաբույր հիշատակը:

Ձերդ Սրբություն.

Ահավասիկ, մոտ տասը տարի է անցել դեկտեմբերյան աղետալի երկրաշարժից, բայց յուրաքանչյուր հայի սրտում մեծ է երախտիքը Ձեր և Ձեր ժողովրդի նկատմամբ: Վրաց ժողովուրդը, առաջինը օգնության ձեռք մեկնելով տուժածներին, մեկ անգամ ևս հաստատեց իր տաղանդավոր բանաստեղծ Ակակի Մերեթելու հետևյալ խոսքերը.

Դու հայ ես, իսկ ես վրացի,
Բայց եղբայրներ ենք մենք...

Ձերդ Սրբություն.

Հայ ժողովուրդը Ձեզ ճանաչում է իբրև մեծ եկեղեցական գործչի, խաղաղության ջատագովի, ոչ միայն Վրաստանում, այլև՝ աշխարհի բոլոր կողմերում: Մենք անկեղծորեն հավատում ենք, որ Ձեր անդրանիկ այցը Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ին, կծառայի հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն ավելի ամրապնդելու և շատ ու շատ բարի նպատակների իրականացման համար:

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Մեմարանի ուսանողներս ցանկանում ենք Ձեզ առողջություն, որպեսզի Սուրբ Հոգու զորավոր ներգործությամբ երկար տարիներ ղեկավարեք Աստվածային Նախախնամությամբ Ձեզ վստահված նավը, հանուն Տիրոջ Փառքի ու Ձեր բազմաչարչար հայրենիքի բարգավաճման»:

Երկու երգչախմբերի կատարմամբ հնչեցին Մ. Եկմալյանի, Ս. Հարությունյանի, Ռ. Լագիձեի, Օհան Դուրյանի, Կոմիտասի, Մոցարտի, Խ. Մելիքանեջյանի, Զ. Պալիաշվիլու ստեղծագործությունները:

Հոգևոր երգերի կատարմամբ հանդես եկան նաև Մայր Տաճարի երգչախմբի մենակատարներ Անահիտ Մխիթարյանը և Կարինե Ավետիսյանը:

Հանդիսության վերջում իրենց գնահատանքի և օրհնության խոսքն ասացին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը:

Դիմելով ներկաներին, Հայոց Հայրապետն ասաց.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարք Վրաց քույր Եկեղեցվո, սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան պարոն քաղաքապետ, Հոգևոր Գերագույն Խորհրդի անդամներ և արվեստասեր, եկեղեցասեր ժողովուրդ և ուսանողներ Հոգևոր Մեմարանի,

Այսքան գեղեցիկ, հոգեկանորեն վեհացուցիչ երաժշտական ունկնդրությունից հետը դժվար է բառերով խոսել և այդ գեղեցկությանց վեհությունից բան մը չպակսեցնել: Այսօր հոգեպես կհրճվինք, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս Վեհարանի սրահը կդառնա այնպիսի մի օջախ հոգեկան ապրումների, որոնք մեր կյանքը կհարստացնեն, կգորացնեն և կհարազատացնեն հայկական բարձրագույն արժեքների ներթափանցությամբը մեր հոգիների, մտքերի, ըմբռնումների, մեր կյանքի բոլոր տարածքների վրա: Ես արվեստը այսպես եմ ընդունում: Այն փոխակերպում է մարդուն սիրտը, վերածում հոգու:

Քարը, մարմարը քար է լեռան վրա, նույն քարն է, բայց արվեստագետի ձեռքից որ անցնի, արվեստագետի ձեռքի տաղանդից, գաղափարից, ապրումներից եկող շարժումներից երբ նա կերպ ստանա, կդարձի քար լինելուց: Այսպես էլ այսօր մենք սրահից ավելի գեղեցիկ նվեր չէինք կարող ընծայել մեր սիրեցյալ եղբորը և իրեն ուղեկցող պատվիրակության անդամներին, բայց միայն հայ ժողովրդի կրոնական և ազգային հոգու ամենաբարձր արտահայտություններից եղող այս երգերի ծաղկեփունջը:

Այսօր ես չպիտի ուզեի երկարորեն խոսել, որովհետև այսօր մեր եղբոր օրն է, Վրաց Եկեղեցու օրն է: Ես պիտի ցանկանայի, որ մեր սիրեցյալ եղբայրը ինքը խոսեր ձեզի, բայց իրեն հրավիրելուց առաջ, ես սրտի պարտք եմ զգում, չեմ կարողանա այստեղից դուրս գալ առանց ասելու այս գնահատական խոսքը մեր Հոգևոր Մեմարանի սաներին: Ապրե՛ք երեխեք: Այսօր շատ լավ ներկայացրիք այն, ինչ որ

ներկայացրիք: Ձեր այդ հոգեկան բարձրացման ճիգն է, որ ինձ ուրախացնում է: Այսօրվան ձեր կատարումը ավելի բարձր գտա որակով, քան սրանից ամիսներ առաջ: Եվ դա հաճախդիմության գեղեցկագույն փաստերից մեկն է: Ապրե՛ք և հազար կապրեք, եթե այսպես ապրեք: Միշտ բարձր արժեքների ձգտեք, որին որ ձգտեք, նրա պես կլինեք, նրանով կներթափանցվեք: Եթե հասարակ բաների մեջ անցկացնեք ձեր կյանքը, կհասարականանաք: Ձգտեք դեպի բարձունքը, հոգեկան վայելքը, մի խոսքով՝ աղոթքի, մտավորական կյանքի, գեղարվեստական ոլորտներում միջոցով հաղորդվեցեք Աստուծո հետ, անավասիկ ձեր կոչումին հարազատ ճանապարհը:

Իմ գնահատական խոսքը նաև մեր Մայր Տաճարի դպրաց խմբին՝ երգչախմբին, մենակատարներին, որովհետև դուք արժեցրիք այս օրը Նորին Սրբության այցելության այս չորս օրերի ընթացքում: Այս պահը մեր սրտերի միացումի պահն է: Դուք այս պահը ազնիվ ընծայեցիք, ընտիր ընծայեցիք մեր շարականների, հոգևոր երգերի այդքան բարձր որակով մատուցմամբ: Հալա՞լ լինի ձեզ, հազար ապրեք, և ես միշտ գնահատող պիտի լինեմ ձեր այս ճիգին: Իմ հատուկ գնահատանքի խոսքը կուղղեմ մեր սիրելի խմբավար պարոն Ռուբեն Շարբաթյանին»:

Զուգահեռներ անցկացնելով երկու Եկեղեցիների Հոգևոր դպրանոցների միջև, նշելով ընդհանրությունները և նպատակները, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքն ասաց.

«Սիրեցյալ հոգևոր եղբայր Գարեգին Ա, սիրելի հոգևոր եղբայրներ, հանդիսատեսներ,

Մենք զգացինք հոգևոր այն անկրկնելի պահերը, որ պարգևեցիք մեզ: Մենք այսօր ձեր ուսանողների երգերում տեսանք Հայաստանյայց Եկեղեցու նկատմամբ ունեցած հավատքը: Մենք տեսանք հավատն ու երգը միասին շաղկապված: Մենք մեր խորին շնորհակալությունն ու գոհունակությունն ենք հայտնում այն պահերի համար, որ այսօր ապրեցինք այստեղ: Ես խորին շնորհակալություն եմ հայտնում Հոգևոր Մեմարանի տեսուչին այն խոսքերի համար, որոնցով նա դիմեց մեզ այսօր, համերգի ընթացքում: Հոգևոր Մեմարանը մեր Եկեղեցիների ապագան է:

Ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել երկու երգչախմբերին, մենակատարներին, ղեկավար Ռուբեն Շարբաթյանին: Ես ուզում եմ ասել, որ մեր բախտը ճակատագիրը, պատմությունը լավ է արտահայտված երգերում. վրացիների բախտը՝ վրաց երգում, և հայերի բախտը՝ հայոց երգում: Մենք դա այսօր մեր աչքերով տեսանք այս համերգի ժամանակ: Սա մեր պատմությունն է, սա մեր ցավն է, սա մեր անցյալն է:

Այսօր մի հանդիպման ժամանակ ես ասացի որ եթե մենք վերցնենք Հայաստանի և Վրաստանի հողերը, քամենք, կտեսնենք, որ դրանք լի են արյամբ, արյամբ մեր նահատակների, զոհվածների: Եվ այս զգացվում է մեր երաժշտության մեջ: Ես հուսով եմ, որ Վրաստանի և Հայաստանի բախտը ապագայում պարզ է: Ես համոզված եմ, որ հետզհետե առավել

պայծառ է դառնալու այն: Մենք դեռ հաղթության տոներ ենք նշելու, երբ Հայաստանը և Վրաստանը կհաղթահարեն դժվարությունները և հանդիսավորապես կնշեն իրենց հաղթանակը, որովհետև մեր ժողովուրդները ունեն ազատ ոգի:

Ես ցանկանում եմ կրկին անգամ շնորհակալություն հայտնել և Հոգևոր Մեծարանին նվիրել Տիրամոր պատկերը: Աստվածամայրը թող օրհնի Հոգևոր դպրանոցը և լինի հովանավորը Վրաստանի ու Հայաստանի»:

Ապա Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը Հոգևոր Ճեմարանին նվիրեց «Տիրամայրը մանկան հետ» սրբապատկերը, իսկ խմբավար Ռուբեն Շարբաթյանին՝ մի հուշամեդալ:

Հանդիսությունը Հոգևոր Ճեմարանի սաների և Մայր Տաճարի երգչախմբի մասնակցությամբ, ավարտվեց «Պահպանիչ»-ով և «Տերունական աղոթք»-ով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Իր պաշտոնական այցելության երրորդ օրը, մայիսի 29-ին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի գլխավորած պատվիրակությունը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Սմենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, ինչպես նաև թեմական առաջնորդների և քույր Եկեղեցիների ներկայացուցիչների ուղեկցությամբ, այցելեց Մատենադարան՝ հայոց գրչագիր վկայությունների շնորհիվ մեկ անգամ ևս ծանոթանալու ապգիս անցած փառահեղ պատմությանը, որ նաև գալիքի հավերժության խորհրդանիշն է:

Ներկաների թվում էին նաև Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիակոր դեսպան Գիգոլ Բարամիձեն, ՀՀ Կրոնից գործոց կոմիտեի նախագահ Լապար Սուքյանը:

Հյուրերին մանրամասն ծանոթացնելով ցուցադրանքին, վերջում Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը Նորին Սրբություն Իլիա Բ-ին հիշեցրեց, որ այդտեղ պահվում են ոչ միայն 13.000 ձեռագիր հուշարձաններ, այլև մեծ թիվ են կազմում (3.000) այլալեզու ձեռագրերը, այդ թվում նաև վրացերեն մատյանները:

Վերջում, որպես գեղեցիկ հուշ, Սեն Արևշատյանը Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին հանձնեց իրենց հրատարակած վերջին գիրքը: Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքն իր հերթին, ի հիշատակ իրենց այցելության, Մատենադարանին հանձնեց Վրաստանում հրատարակված Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը:

ԿԵՂՐԻՄՇՈՒՇԸ՝ «ԺԱՄԱՆԱԿՈՒՄ» ՀՈԴԵՎ

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՄԱՐԱՅԻՆ ՍԱՌԻՑՈՒՄ Ի. ՍՈՒՐԵՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԻՆՈՖԻԼՄԻ ԱՐՏԱԴՐՄԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ ՀԱՅԱԹԱՏՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՏՅԵՂԻՇՈՒՄՈՎ ԿՈՒՑՈՒՑ ՅԵՄՈ

ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐԻՊԵՏՆԵՐԸ Ա. ԳՈՒԳՈՒՆ ԵՎ Ա. ԳԱՌԱՆԻ ԵՐԵՏՑԵԼՈՎՅԵՆ ԱՌԿԱ

ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Մատենադարանից հյուրերն առաջնորդվեցին դեպի նոր կառուցվող Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի:

«Հրաշափառ»-ի երգեցողությամբ առաջանալով շինհրապարակ, այստեղ ներկաները, գլխավոր ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի օգնությամբ, մուտիկից ծանոթացան եկեղեցու նախագծին, մանրակերտին, ընթացող շինարարական աշխատանքներին:

Ամենայն Հայոց Հայրապետը եղբայրական սիրով հրավիրեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքին՝ ապագայում մասնակցելու կառուցվելիք եկեղեցու օծման և բացման հանդիսավոր արարողությանը:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այստեղից հյուրերը մեկնեցին Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի: «Հրաշափառ»-ով մուտք գործելով տաճար, Սուրբ Խորանի առջև կույգ Եկեղեցիների Հայրապետները երկու լեզուներով՝ հայերեն և վրացերեն, իրենց կանոնական աղոթքը հղեցին դեպի Բարձրյալը:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը բարեողջույնի խոսքով դիմելով բարձրաստիճան հյուրերին, իր խորին երախտագիտությունը հայտնեց այցելության համար, ապա ավելացրեց.

«Վեհափառ Հայրապետ Հայոց, Ձերդ Սրբություն Կաթողիկոս Վրաց Օրթոդոքս Եկեղեցու,

Հանուն Արարատյան թեմի հավատացյալների, մենք երախտագիտական մեր գոհությունն ենք բարձրացնում առ Աստված և միաժամանակ շնորհակալություն հայտնում Ձեզ՝ Ձեր շնորհաբեր այցի համար քաղաքամայր Երևանի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի: Այս պահին մեր հավատացյալ ժողովուրդը, աղոթահայաց աչքերը դեպի երկինք հառած, աղոթում է, որպեսզի մեր երկու ժողովուրդներն ապրեն խաղաղ, նվիրված ստեղծագործական աշխատանքին, աղոթում է նաև մեր ժողովուրդների հոգևոր և աշխարհիկ իշխանավորների կենաց արևշատության համար:

Ես այսօր երկար չպիտի ողջույնի խոսք ասեմ: Ողջույնի խոսքի համար պիտի հրավիրեմ Արարատյան թեմի մանկական արական երգչախմբին՝ իմ փոխարեն իրենց սրտի խոսքը անմեղ շուրթերով և հոգով հայտնելու Ձեզ»:

Գարեգին Սրբազանի խոսքից հետո թե՛ հյուրերը և թե՛ ներկա հավատացյալ ժողովուրդը ունկնդրեցին արական մանկական երգչախմբի փոքրիկ հայտագիրը: Ապա քույր Եկեղեցիների պատվիրակությունները հանդիպում ունեցան ներկա հավա-

տավոր ժողովրդի հետ, իսկ Հայրապետները բաշխեցին իրենց հայրական օրհնությունը:

Գարեգին Ա Հայոց Հայրապետը, խոսելով Վրաց Եկեղեցու պետի Հայաստան աշխարհ փոխադարձ այցելության մասին, ասելիքը եզրափակեց այսպես.

«Ձերդ Սրբություն, Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան պարոն դեսպան և անդամներ Նորին Սրբության պատգամավորության Վրաստանի Օրթոդոքս Եկեղեցու,

Այսօր իմ խոսքի ժամը չէ, այսօր խոսքի ժամն է մեր սիրեցյալ եղբորը՝ Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի, որ եկել է մեր հարևան երկրից, մեր արտամոտ երկրից՝ Վրաստանից, և Մեր գահակալությունից այս կողմ անցնող երկու տարվա ընթացքում Մենք երջանկություն ենք ապրում երկու անգամ իրար հետ հաղորդվելու. առաջին հերթին՝ Վրաստանի հողի վրա, սեպտեմբեր 1995-ին և այժմ մեր մայրենի հողի վրա՝ Հայաստան աշխարհում, Սուրբ Էջմիածնում և քաղաքամայր Երևանում, Երևանի հոգևոր սիրտը եղող Սուրբ Սարգիս եկեղեցում և մեր Հայրապետական թեմի առաջնորդարանում:

Քիչ առաջ մենք գնացինք և տեսանք քար, փոշի և աղմուկ գործիքների: Փորվում են հիմերը, լցվում են հիմքերը Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու: Բայց մինչև նրա կառուցումը, ավարտումը և օծումը, Սուրբ Սարգիսը սիրտն է հոգևոր մեր այս թեմի և անավասիկ եկել է Նորին Սրբությունը՝ ողջունելու այս ժողովրդին իր հոգևոր այս տնից՝ Սուրբ Սարգիս եկեղեցուց: Ես ողջունում եմ նրան և իմ խոսքը կարճ եմ ասում, որպեսզի մեր ականջները լսեն իր խոսքը որքան կարելի է երկար, իր պատգամը, իր հայրական սերը և եղբայրական հոգածությունը մեր ազգի, մեր Եկեղեցու, մեր հայրենիքի և մեր պետության հանդեպ»:

Դիմելով եկեղեցում ներկաներին, այսպես շարադրեց իր խոսքը Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը.

«Ձերդ Սրբություն, եղբայր ի Քրիստոս, Գարեգին Սրբազան, սիրելի եղբայրներ և քույրեր,

Իսկապես պատմական իրադարձություն եղավ Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի այցը Վրաստան: Սա եղավ Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառի առաջին այցը Վրաստան: Վրաց ժողովուրդը մեծ ջերմությամբ և շատ լավ ընդունելությամբ դիմավորեց Նորին Սրբությանը՝ այս բարձր անձնավորությանը Վրաստանի հողում:

Շատ նշանավոր է մեր փոխադարձ այցը Հայաստան: Մեր երկու այցելությունները՝ նախկինը Վրաստանում և հիմա՝ Հայաստանում, դուրս են գալիս մեր զույգ Եկեղեցիների ավանդական ձևերից: Երկու Կաթողիկոսների եղբայրական հարաբերությունները օրինակ են տալիս մեր պետությունների նախագահներին եղբայրական հարաբերություններ, մշակութային գործիչներին, գիտնականներին, թե ինչպիսին պետք է լինեն հարաբերությունները Վրաստանի և Հայաստանի միջև: Մենք հարազատ եղբայրներ և բարեկամներ ենք: Մենք թե՛ անցյալում և թե՛ ներկայում միևնույն ճակատագիրն ունենք: Այս տարածաշրջանում, որ

Անդրկովկաս է անվանվում, Վրաստանի և Հայաստանի Եկեղեցիները մի-մի քրիստոնեական օազիսներ են հանդիսանում: Այս է ճանապարհը Արևելքի և Արևմուտքի միջև: Մեր երկրները հետզհետե վերադարձնում են այս ճանապարհների նշանակությունը: Հենց այս պատճառով շատ մեծ նշանակություն ունի, թե ապագայում ինչպես կզարգանան մեր հարաբերությունները: Մենք ամեն ինչ պիտի անենք, որ մեր այս եղբայրական հարաբերությունները ոչ մի ուժ չխաթարի: Երբ Հայաստանը նեղություն է կրում, Վրաստանը միշտ էլ շտապում է օգնության, և, ընդհակառակը, երբ Վրաստանն է նեղության մեջ, Հայաստանն է շտապում օգնության ձեռք մեկնել: Մենք ապրում ենք մեծ երկրների հարևանությամբ: Դժվար է ապրել մեծ երկրների կողքին: Մենք պետք է դիմագրավենք այն գայթակղություններին, որոնք կարող են առաջանալ այլ պետությունների կողմից: Ամենից լավ մենք կարող ենք հասկանալ իրար, մենք կարող ենք իրար օգնել, որով և կզարգանանք: Ես կրկին ողջունում եմ մեր Հայաստանի Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներին վրաց ժողովրդի կողմից, ինչպես նաև ողջունում եմ եղբայրակից հայ ժողովրդի մեծ հաջողությունները: Ես խնդրում եմ Աստծուն, որ օրհնի Վրաստանի և Հայաստանի Եկեղեցիների ու պետությունների խաղաղ զարգացումը:

Մենք շնորհակալություն ենք հայտնում Գարեգին Սրբազանին այս ջերմ ընդունելության համար: Ես ցանկանում եմ որպես ի հիշատակ այս պանակեն նվիրել Սրբազան Հորը:

Օրհնյալ եղիցին մեր երկու ժողովուրդները և երկու Եկեղեցիները»:

Վերջում Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը, որպես բարեկամության և եղբայրության գեղեցիկ դրսևորում, Գարեգին Սրբազանին նվիրեց արծաթյա մի պանակ:

ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆԻ ՎԱՉԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑ

Այնուհետև Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցուց ավտոմեքենաների շարասյունն ուղղվեց դեպի Սևան՝ Հայոց Աշխարհի կապույտ մարգարիտը, հյուրերին ցույց տալու Գեղարքունյաց ծովակի մաքրամաքուր գեղեցկությունը, հաղորդակից դարձնելու Գեղամա լեռներից փոխանցվող վեհությանը:

Այստեղ բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին Վազգենյան Դպրեվանքի ուսուցչական կազմը, մարզային և տեղական իշխանությունների ներկայացուցիչները, դպրեվանքի սաները:

«Հրաշափառ»-ով մուտք գործելով դպրեվանք, հյուրերին խոսք ասաց տեսուչ Մինաս քհն. Մարտիրոսյանը.

«Վեհափառ Տեր, Ձերդ Սրբություն Պատրիարք և Կաթողիկոս Վրաց Օրթոդոքս Եկեղեցու, գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ հայր սուրբեր, արժանապատիվ տեր հայրեր, թանկագին հյուրեր և ներկաներ.

Ձերդ Սրբություն, ես ողջունում եմ Ձեզ Սևանի Վազգենյան հոգևոր

դպրանոցի հարկի տակ, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանի, թեմի առաջնորդական փոխանորդ և դպրանոցի վերատեսուչ Գարեգին արքեպս. Ներսիսյանի և դպրանոցի տեսչության անունից Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կատարած Ձեր այցի կապակցությամբ և հայտնում մեր խորին համոզմունքը, որ Ձեր այցով հիմք կդրվի Հայ Առաքելական և Վրաց Օրթոդոքս Եկեղեցիների միջև ջերմ, բարեկամական և օրինաբեր հարաբերությունների մի նոր փուլի, որը՝ պիտի իր բարերար ազդեցությունն ունենա նաև հայ-վրացական միջպետական հարաբերությունների բնականոն զարգացման և, ընդհանուր առմամբ, հայ և վրաց ժողովուրդների տնտեսական, քաղաքական, գիտական, մշակութային և հոգևոր կապերի ընդլայնման և բարգավաճման գործընթացում:

Թշնամու կարգախոսն է. «Բաժանիր, որ տիրես»: Եվ անգամ սատանան իր թագավորության ամրության համար չի բաժանվում ինքն իր մեջ, այլ գործում է միաբան իր բոլոր դևերով, գործում է մարդու դեմ, գործում է Եկեղեցու դեմ:

Քրիստոսի Եկեղեցին գիտի իր թշնամուն, գիտի և նրա գործելակերպը: Մեր և փոխըմբռնում, ահա թշնամու հարձակումները ետ մղելու զորավոր միջոցներից երկուսը:

Հայ Առաքելական Եկեղեցին առաջնորդվում է Ս. Օգոստինոսի կողմից ձևակերպված սկզբունքով.

Միություն՝ կարևոր բաներում,

Մեր՝ ամեն ինչում:

Այսօր հասունացել է պահը՝ իրագործելու քրիստոնեական սիրո այս չքնաղ սկզբունքը, ստեղծելու համար Եկեղեցիների մի հզոր միություն և պաշտպանելու համար Քրիստոսի Եկեղեցին Ավետարանի թշնամիներից, որոնք ներսից ու դրսից, բանակներ կազմած, ջանում են խախտել և ապականել բարի ժողովրդի հավատքը և կոտրել Եկեղեցու հեղինակությունը:

Այսօր անառարկելի անհրաժեշտություն է համագործակցությունը Եկեղեցիների միջև և քրիստոնեական կրոնի ամենաանվիճելի և ամենակարևոր պատգամի՝ «սիրեցեք միմյանց», կիրառումը:

Ձերդ Սրբություն, Ձեր այցը Հայաստան մենք գնահատում ենք որպես մի կարևոր քայլ Հայ և Վրաց Եկեղեցիների և ժողովուրդների միջև սիրո և համագործակցության վերականգնման գործընթացում: Մեծ ուրախություն է մեզ համար, որ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հետ Դուք Ձեր այցելության հագեցած ծրագրի մեջ տեղ եք հատկացրել նաև Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցին:

Արդեն յոթ տարի է, ինչ գործում է դպրանոցը, և մենք է նրա կոչումը. պատրաստել բազմակողմանի զարգացած արժանավոր սպասավորներ Հայ Եկեղեցու համար, որոնք պիտի դաստիարակեն ու՝ կրթեն մեր ժողովրդի զավակներին Աստծու թագավորության անսահման մեծավայելչության մեջ, կրոնի մաքուր ու կենսատու տեսիլքներով, որպեսզի Հիսուս Քրիստոս, Ավետարանը, կրոնը սին խոսքեր չլինեն, այլ, ընդհակառակը, վերածվեն կյանքի, գործնականացվեն՝ ապահովելով մարդկային երջանկությունը:

Եվ մենք հավատում ենք, որ ձեր այցելությունը Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցը մեծ ներշնչման աղբյուր կհանդիսանա դպրանոցի

ՂԿԺՏԿՍՈ ՎԻՍՆՍՔ ՂԿԵՈԵՑՈ



ՈՒՍՑՍՂՈՅԼԵՆ ԿՂՈՒԳՈ



սաների համար և նրանցից յուրաքանչյուրի սրտում կրկին անգամ կամրագրվի փափագը տեսնելու ոգեշնչող այն իրողությունը, թե ինչպես է Քրիստոսի Եկեղեցին բոլոր ազգերի լեզուներով և ազգային նկարագրերով իրագործում քրիստոնեական սուրբ կրոնի գաղափարները այս աշխարհում, Ավետարանի լույսն ու սերը տարածում ամեն կողմ և աշխարհը ողողում աստվածային օրհնությունների անսպառ ծավալումով:

Վեհափառ Տեր և Ձերդ Սրբություն, թույլ տվեք հայցել Ձերդ Սրբությունների օրհնությունը՝ համբուրելով Ձեր օծյալ Սուրբ աջերը և հավաստիացնել Ձեզ, որ թե՛ Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդարանը, թե՛ թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը և թե՛ դպրանոցի տեսչությունն ու ուսանողությունը սրտի մեծ ցնծությամբ են սպասում Քրիստոսի Եկեղեցում «Մեկ հովիվ, մեկ հոտ» տեսիլքի իրականացմանը և հանապազ աղոթում են, որ Երկնային Բարի Հովիվը այցելի իր բանավոր հոտին և Իր մեծ ողորմությամբ ու գթությամբ բոլորին օրհնի, բոլորին իմաստություն շնորհի, բոլորին լուսավորի և բոլորին պարգևի Երկնքի Թագավորությունը»:

Դպրանոցի սաների անունից բարիգալստյան ու երախտիքի խոսք ասաց նախ Արթուր սրկ. Հայրապետյանը, ապա ռուսերեն լեզվով՝ Բաբկեն դպիր Նանյանը:

Իր խոսքում Արթուր սարկավագն առանձնակի նշեց.

«Թույլ տվեք Արարատյան Հայրապետական թեմի Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի ուսանողության շնորհակալությունն ու երախտագիտությունը Ձեզ փոխանցել՝ Ձեր օրհնաբեր և շնորհաբեր այցի համար: Ձեր ներկայությունը դպրանոցում մեզ հոգու անսահման ցնծություն ու բերկրանք է պարգևում: Այս պատմական օրը մեր հուշերում հարատև անջինջ կմնա: Ձերդ Սրբություններ, այս այցը մեզ համար ամենից առաջ դարձավ ի Քրիստոս Հիսուս եղբայրության և բարեկամության կենդանի օրինակ:

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը գալիս է դարերի խորքից: Ավելի քան երկու հազար տարիների խաղաղ դրացիության, միատեղ հոգևոր ու մշակութային զարգացման, միատեղ ինքնապաշտպանության և հերոսացման պատմություն ունենք մեր ետևում: Պատմություն, որը ժայռակուռ պատվանդան է մեր Եկեղեցիների ու ժողովուրդների ներկա և ապագա կյանքի: Այս պատվանդանի վրա խարսխված մեր սիրո և բարեկամության դաշինքը, որն անքակտելի է երկու ժողովուրդների քրիստոնեական հավատքով և մշակութային հազարամյա արժեքներով: Այսօր, Վեհափառ Հայրապետներ, երբ անկախացած եղբայր ժողովուրդները հայտնվել են տնտեսական, քաղաքական և հոգևոր բարդ պայմաններում, Դո՛ւք, որպես հավատքի անխոնջ ամոլներ, անհուն նվիրումով և անսասան հավատքով ծառայում եք հանուն մեր ժողովուրդների հոգևոր վերազարթոնքի և հանուն մեր Եկեղեցիների շենացման ու պայծառության: Ձերդ Վեհափառություններ, Ձեր այսպիսի միահամուռ գործելակերպը մեզ՝ ապագա հոգևորականներիս համար լավագույն օրինակ կծառայի՝ Լուսավորչի կանթեղի պես անմար և վառ պահելու դարավոր այն ուխտը, որը երկու Եկեղեցիների միջև հաստատել են մեր սուրբ հայրերը, որովհետև,

ինչպես նշել է երջանկահիշատակ Եփրեմ Բ Վրաց Կաթողիկոսը, «Սուրբ Էջմիածինը, որով հպարտանում է ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդը, մենք ևս ունենք մեր Սուրբ Մցխեթան, որը մեզ համար Սուրբ Էջմիածինն է Վրաստանի հողի վրա, որովհետև Սուրբ Մցխեթան էլ ապրել է այն նույն իդեալներով, ինչ իդեալներ ունեցել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ձերդ Սրբություններ, գիտենք, որ եղբայրաշունչ այս խոսքերն են Ձեզ՝ երկու Վեհափառներիդ առաջնորդել Սևանա վանք, ուր Տիրոջ Սուրբ Խաչի զորությամբ Էլ ավելի է ամրապնդվելու Հայ և Վրաց Եկեղեցիների համագործակցությունը:

Սրբազնագույն Հայրապետներ, Ձեր գալուստը Սևանա վանք մեզ համար պարզ իրողություն չէ, այլ այն ուխտ է դեպի դարերի խորքը: Եվ քանի որ մենք ևս այստեղ, ուսանող լինելով հանդերձ, ուխտավորներ ենք՝ կապված այս կղզուն և հինավուրց վանքին, շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, որ այսօր միացաք մեր ուխտին, Վեհափառ Տեր՝ Դուք, որպես հոգևոր առաջնորդ և հոգածու ծնող, իսկ Վրաց Կաթողիկոսը՝ ի դեմս Վրաց Եկեղեցու և ժողովրդի՝ որպես բարեկամ»:

Գեղարվեստական փոքրիկ հայտագրից հետո Գարեգին արքեպս. Ներսիսյանը ևս իր որդիական երախտագիտությունը հայտնեց երկու հոգևոր առաջնորդներին այդ շնորհաբեր այցի համար.

«Վեհափառ Տեր, Նորին Սրբություն Իլիա Բ, Հոգևոր եղբայրներ և սիրելի ներկաներ,

Վազգենյան դպրանոցի ուսանողները փորձեցին իրենց սերը և երախտագիտությունը հանդես բերել և հանդեպ զույգ Կաթողիկոսներն արտահայտել իրենց երջեցողությամբ:

Ձերդ Սրբության համատեղ այցը Վրաց Կաթողիկոսի հետ ոչ միայն ուրախացնում է մեր ուսանողությանը, ցնծությամբ պարուրում նրանց հոգին, այլ նաև նրանց գիտակցության մտապատկերում կերտում է հայ հոգևորականի և ընդհանրապես հոգևորականի, Քրիստոսի սպասավորի օրինակելի կերպարը, այն ոգին, որին իրենք կոչված են լինելու, ծառայելու ինչպես մեր ազգին, այնպես էլ համայն մարդկությանը, որպեսզի քրիստոնեական սերը միշտ շաղախը լինի բոլոր ազգերի միջև միմյանց կապող:

Հանուն Սևանա դպրանոցի սանուց, դասախոսական կազմի և տեսչության ես ուզում եմ կրկին անգամ իմ խորին, խորին որդիական երախտագիտությունը հայտնել Ձերդ Վեհափառությանը, ինչպես նաև Վրաց Իլիա Կաթողիկոսին Ձեր շնորհաբեր այցի համար: Ես վստահեցնում եմ Ձեզ, Վեհափառ Տեր, որ այս ուսանողները, Ձեր զավակները, Ձեր մանկտիպ, ամբողջական, անմնացորդ ուժերով ու նվիրումով պիտի լծվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորության նվիրական ու սուրբ գործին:

Օրհնեցեք մեզ և Ձեր սանուց, Վեհափառ Տեր»:

Այնուհետև իրենց հայրական օրհնանքը ուսանողությանը բաշխեցին Հայոց և Վրաց Եկեղեցիների հոգևոր պետերը:

Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը, շնոր-

հավորելով դպրանոցի սպաներին՝ ճշմարտության և աստվածային սիրո դժվարին ճանապարհի ընտրության առիթով, ուսանողությանը մաղթեց.

«Ձերդ Սրբություն, եղբայր ի Քրիստոս, մեր թանկագին երիտասարդներ,

Ամենից առաջ ես ուզում եմ շնորհավորել այս Հոգևոր Սեմինարիայի հիմնադրության առիթով: Աստված ասում է. «Ես եմ ճանապարհը ճշմարտության և սիրո»: Այս երիտասարդներն ընտրեցին այս ճանապարհը՝ ճշմարտության և սիրո, ծառայությունը Աստծուն և ազգին: Այս ծառայությունը բարդ է: Աստծուն և ազգին ծառայելը շատ դժվար է: Մարդը, որ ընտրում է այս ճանապարհը, ետ չպիտի նայի: Ես մաղթում եմ այս երիտասարդներին հաստատուն և կայուն մնալ այս ճանապարհի վրա: Մեր այս հանդիպումը Հոգևոր Սեմինարիայում ինձ հիշեցնում է իմ ուսանողության տարիները: Երբ մենք ձեր հասակին էինք, մենք ևս մտածում էինք մեր ապագայի մասին: Ես ցանկանում եմ, որ Աստված միշտ ձեզ հետ լինի: Աստված օրհնի ձեզ և զորացնի»:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, մաղթելով սաներին ամենանվիրականն ու վսեմը՝ հավատարմությունը Տիրոջ ճանապարհին, ասաց.

«Սիրելի սաներ Վազգենյան Դպրանոցի, ես այսօր կողջունեմ մանավանդ մեր սիրեցյալ եղբոր այն գեղեցիկ մտածումը, որ փոխանցեց ձեզ: Այդ խոսքերը եթե ընդունեք, միախառնեք ձեր գիտակցության, համոզման, ձեր կյանքի մեջ դրանից ավելի մեծ հարստություն չեք կարող ունենալ:

«Ես եմ ճշմարտություն, ճանապարհ և կյանք»: Հիսուս չասաց, այնտեղ *է ճշմարտությունը: Ընդհակառակը, ասաց* ես եմ, կյանքս *է* ճշմարտությունը*: Դուք որոշել եք ձեր կյանքովը զԱստված թարգմանել մեր ժողովրդին: Աստծու ճշմարիտ խոսքը արմատացել է ձեր կյանքում: Հետևաբար, ես ցանկանում եմ, որ մեր սիրեցյալ եղբոր պատգամը ներթափանցի ձեր ուղեղի ծալքերը: Մենք ենք լինելու նոր վկաները մեր չհնացող հավատքին: Ամեն անգամ, երբ մարդիկ «Սևան» են ասում, մինչև հիմա, երբ «Սևան» բառը լսում են, իշխանաձուկ են մտածում կամ կողակը կամ գրագետների հանգստավայր են երևակայում: Դուք այնպես պետք է ապրեք ձեր Հոգևոր Դպրանոցում, որ «Սևան» երբ ասեն, ձուկը մի քիչ մոռանան, կամ լողալը մոռանան և ասեն Սևանը Դպրանոցով է Սևան: Նորին հասնելու համար աշխատեք դուք, որպեսզի կարենաք վկաները դառնալ մեր նոր հավատքին, մեր Հոգևոր Մեմարանի, Էջմիածնի միջոցավ դուք ընծայվեք իբրև նոր ընծաներ մեր ժողովրդի ծառայությանը Աստծու փառքի և մեր Եկեղեցու վերակենդանության համար:*

Աստված օրհնի ձեր բոլորին»:

Հանդիպման վերջում բարձրաստիճան հյուրերը մոտիկից ծանոթացան Դպրեվանքի նոր կառուցվող հանրակացարանի շինարարական աշխատանքներին: Ապա տեղական իշխանությունների կողմից, ի պատիվ Նորին Սրբությունների, տրվեց պաշտոնական ճաշ:

ՆՈՐՔԻ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆԸ

Նույն օրը, երեկոյան ժամը 17.00-ին, պաշտոնական պատվիրակությունը, Հայոց Հայրապետի գլխավորությամբ և նրա շքախմբի ուղեկցությամբ, հյուրընկալվեց Արարատյան Հայրապետական թեմի Նորքի Հայորդյաց Տանը:

Մեծ ոգևորությամբ դիմավորվելով աշխատակազմի և աշակերտության կողմից, հյուրերն առաջնորդվեցին դեպի դասասենյակներ, մոտիկից և առավել հանգամանորեն ծանոթացան գործող խմբակներին, դիտեցին երեխաների ձեռքի աշխատանքների ցուցադրանքը, ապա հանդիսությունների դահլիճում ներկա գտնվեցին ի պատիվ իրենց կազմակերպված գեղեցիկ հայտագրին, հավարտ որի բարեողջույնի խոսք ասաց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը.

«Մենք սրտի անկեղծ ջերմությամբ մեր շնորհակալությունը, երախտագիտությունն ու որդիական սերն ենք հայտնում մեր Վեհափառ Հայրապետներին:

Ես, սիրելի հավատացյալ զավակներ, փառք եմ տալիս Աստծուն, որ բազում առիթներով հնարավորություն ենք ունեցել հանդիպելու Հայոց Հայրապետին այստեղ, այս հաստատության մեջ, և յուրաքանչյուր անգամ այցելությունը Վեհափառ Հայրապետի գրավականն է այն նախանձախնդրության, որ Վեհափառ Հայրապետը տածում է դեպի ձեզ և հետևողական է, որպեսզի դուք այս Հայորդյաց տան հարկի ներքո ո՛չ միայն մշակութային, ո՛չ միայն ստեղծագործական, կերպարվեստի կամ պարարվեստի բնագավառում ձեր կարողությունները զորացնեք, այլ որ դուք այստեղ, այս հարկի տակ կրթվեք, դաստիարակվեք ու մեծանաք որպես Հայ Եկեղեցու բարեպաշտ զավակներ, հարազատ քրիստոնյաներ, հարազատ ժառանգորդներ մեր հայրենի մեծ Եկեղեցու արժեքներով սնված ու զորացած: Ես ուզում եմ այս առիթով նաև Վեհափառ Հայրապետին հայտնել ձեր արածի, Արարատյան թեմի Հայորդյաց տան մեր սանուց և ծնողաց անունից խորին շնորհակալություն իր հայրական հոգածության համար, իր ուշադրության համար, որ ամեն առիթով մենք տեսնում ենք:

Մաղթում եմ մեր երկու Հայրապետներին կենաց երկար, արևշող տարիներ, մաղթելով նրանց քաջառողջություն, որպեսզի մենք մշտապես առիթն ունենանք վայելելու մեր Հայրապետների ներկայությունն այստեղ»:

Ապա բոլոր ներկաներին իրենց հայրական օրհնանքը տվեցին երկու Հայրապետները:

Իր խոսքում Իլիա Բ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքն ասաց.

«Ձերդ Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա և սիրելի Գարեգին սրբազան և հոգևոր զավակներ,

Մենք իսկապես երջանիկ ենք, որ գտնվում ենք այսօր ձեզ հետ: Դուք գտնվում եք այն հիմնարկության մեջ, ուր տիրապետելու եք արվեստի նորություններին, բայց արվեստը սովորելուց առաջ, դուք սովորում եք Աստուծո հավատքը: Ես տեսա այն գործերը, որ դուք կատարում եք այս

հաստատության մեջ: Նման գործերին մենք պետք է մեծ տեղ տանք: Դուք Հայաստանի ապագան եք: Հայաստանի ապագա ճակատագիրը ձեր ձեռքերի մեջ է: Դուք պիտի կառուցեք, ապրեք և կարողանաք գտնել, թե ինչպես պետք է մեր երկու ժողովուրդներին փրկել բազում փորձություններից: Դուք գիտեք, թե ինչպես են փրկվել մեր ժողովուրդները: Նրանք փրկվեցին այն պատճառով, որ մենք քրիստոնյաներ ենք: Ես ուզում եմ մեր և ձեր ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ երբ Հայաստանը և Վրաստանը դարձան անկախ պետություններ, մեր առջև ծառացան զանազան դժվարություններ: Հաճախ այդ դժվարությունները միավորում են մեր ժողովուրդներին տնտեսական և սոցիալական տեսանկյունից: Երբեմն կրոնական տարբեր՝ խմբակցությունների մարդիկ փորձում են այդ հողի վրա հաջողություններ ձեռք բերել: Այդ պատճառով մենք պետք է հաստատուն մնանք ճշմարտության ճանապարհի վրա, այդ դժվարությունների ճանապարհի վրա, որ փրկեց մեր ժողովուրդներին:

Եթե դուք նայեք պատմությանը, կտեսնեք, որ շատ ժողովուրդներ եղան, որ մեզանից մեծ էին և ուժեղ, բայց հիմա չկան, նրանց մասին հիշատակության խոսք անգամ չի լսվում: Երրորդ օրն է, որ ես գտնվում եմ Հայաստանում, և ես զգում եմ այն սերը, այն հարգանքը, որ գոյություն ունի մեր երկու երկրների՝ Հայաստանի և Վրաստանի միջև:

Աստված օգնի մեր ժողովուրդներին, մեր եկեղեցիներին և մեր ապագա սերնդին: Աստված օրհնի ձեզ՝ բոլորիդ»:

***

Այստեղից Վրաց Եկեղեցու պատվիրակությունը, Գարեգին Ա Վեհափառի գլխավորությամբ, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ, մեկնեց հյուրերի ընդունելությունների կառավարական տուն, ուր, ի պատիվ իրենց, Վրաց Դեսպանատան կողմից տրվեց պաշտոնական ընթրիք:

ՕՐ ՎԵՐՋԻՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ << ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ

Մայիսի 30-ին, առավոտյան ժամը 10.30-ին, << նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընկերակցությամբ:

Մուտքի մոտ դիմավորելով բաձրաստիճան հյուրերին, տիար Լևոն Տեր-Պետրոսյանը նրանց առաջնորդեց հյուրերի ընդունելության պաշտոնական սրահ:

Ողջագուրանքից հետո Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը, Հայաստանի Հանրապետության նախագահին հաղորդելով Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեվարդնաձեի արտաքուստ և եղբայրական ողջույնը, շեշտեց երկու երկրների ժողովուրդների ավանդական բարեկամությունը, որի ակունքներում կանգնած են Հայ և Վրաց Եկեղեցիները:

Իր ելույթում Իլիա Բ-ն, ընդգծելով հայ և վրաց ժողովուրդների պատմական ճակատագրական ընդհանրությունը, շեշտեց, որ

պետականությունը կորցնելուց հետո երկու Եկեղեցիներն էլ դարձել են ժողովրդի համախմբման խորհրդանիշ, ժողովրդի իղձերի արտահայտման միջոց: Անգամ խորհրդային շրջանում Հայաստանյայաց Առաքելական Եկեղեցին և Վրաստանի Ուղղափառ Եկեղեցին կարողացել են ժողովրդի համար դառնալ հոգևոր ուժի աղբյուր:

Այնուհետև Իլիա Բ-ն իր անհանգստությունը հայտնեց երկու Եկեղեցիների ընդհանուր խնդիրների, մասնավորապես աղանդավորության հանդեպ՝ կարևորելով պետության օժանդակությունը:

Պատասխան խոսքում Լևոն Տեր-Պետրոսյանը գոհունակություն հայտնեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին՝ Հայաստան կատարած այցի առիթով, որը հայ և վրաց ժողովուրդների, Եկեղեցիների բարեկամության ևս մի ապացույց է: Հայաստանի նախագահը նշեց, որ Հայաստանի և Վրաստանի առջև ծառացած ընդհանուր քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրների լուծումը էապես կարագանա համատեղ ջանքերով ու համագործակցությամբ, որին ինքը մեծ նշանակություն է տալիս: Հայաստանի ղեկավարը խաղաղություն և բարգավաճում մաղթեց վրաց եղբայրական ժողովրդին:

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի այցելության առիթով իր գոհունակությունը հայտնեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը՝ ընդգծելով երկու Եկեղեցիների և ժողովուրդների ավանդական բարեկամությունը:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիակոր դեսպան Գիգոլ Բարամիձեն, Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիակոր դեսպան Լևոն Խաչատրյանը, հոգևոր և պաշտոնատար անձինք:

Հավարտ հանդիպման, որպես երկու ժողովուրդների բարեկամության դրսևորում, Նորին Սրբություն Իլիա Բ-ն ՀՀ նախագահին նվիրեց Երուսաղեմից բերված արծաթյա երկու մոմակալներ՝ մոմերով:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՈՏ

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին և Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա-ին նույն օրը, ժամը 11.00-ին, ընդունեց Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը:

Ողջունելով Վրաստանի հոգևոր առաջնորդին Հայաստանի Խորհրդարանում, Բաբկեն Արարքցյանը բարձր գնահատեց երկու ժողովուրդների դարերի խորքից սկզբնավորված բարեկամությունը և դրանում Հայ Առաքելական ու Վրաց Ուղղափառ եղբայրական Եկեղեցիների ներդրումը:

Իր ելույթում Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ն, Վրաստանը և Հայաստանը բնութագրելով որպես տարածաշրջանի քրիստոնեական օազիս, գոհունակություն հայտնեց հայ-վրացական թե՛ քաղաքական և թե՛ հոգևոր համագործակցությանը ներկայիս մակարդակով՝ այդ առնչությամբ բարձր գնահատելով երկու երկրների խորհրդարանների գործունեությունը.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԵՎԱՆԱՅԻՆ ԿՈՄԵՏԱՏԻՊԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՈՍ ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՐԵՃԱՌ ՍՈՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

«Իրավամբ, մեր ժողովուրդների և պետությունների փոխհարաբերությունները յուրահատուկ են: Ամենից առաջ հարկ է նշել, որ, ես դա միշտ կրկնում եմ, երբ ինձ մոտ են լինում պետական ներկայացուցիչներ Եվրոպայից կամ Ամերիկայից, Հայաստանը և Վրաստանը քրիստոնեական մի օազիս է: Թե՛ Եվրոպայի, թե՛ Ամերիկայի համար Կովկասյան տարածաշրջանը և հատկապես Հայաստանը և Վրաստանն ունեն նույնքան մեծ նշանակություն, որքան Մերձավոր Արևելքը: Ես ցանկանում եմ փոխանցել Ձեզ սրտագին ողջույններ Ձեր գործընկերոջից՝ պարոն Ջուրաբ Ժվանիայից:

Մենք բարձր ենք գնահատում այն փոխադարձ համագործակցությունը, այն աշխատանքը, որ Դուք կատարում եք: Դուք պետք է անեք այն բոլոր հնարավորը, որպեսզի հարաբերությունները լինեն բազմակողմանի՝ ընդգրկելով կրթության և մշակույթի ոլորտները: Մեծ ցանկություն կա՝ բարեկամական հարաբերությունների առումով, փառք Աստուծո, անհրաժեշտ է դրանք զորացնել և պահպանել:

Ես մեկ անգամ ևս շնորհակալություն եմ հայտնում Ձեր ջերմ խոսքերի համար, որոնք ասացիք Դուք, ցանկանում եմ Ձեզ մեծամեծ հաջողություններ: Ես այստեղ եմ եղել երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի օրոք: Ես տեսա, թե ինչպիսի մեծ փոփոխություններ են կատարվել այս կարճ ժամանակահատվածում: Դա նկատելի է ամենուրեք: Ես շնորհավորում եմ Ձեզ այս լավ փոփոխությունների առիթով: Փառք Աստուծո, նմանատիպ փոփոխություններ կան նաև մեզ մոտ՝ Վրաստանում: Աստիճանաբար մենք դուրս ենք գալիս այս, կարելի է նույնիսկ ասել՝ հոգևոր, տնտեսական և քաղաքական ճգնաժամից: Մաղթում եմ Ձեզ և Ձեր Ազգային Ժողովին նորանոր հաջողություններ:

Ես Ձեզ՝ և խորհրդարանի անդամներին ցանկանում եմ հաջողություններ: Ես հիշում եմ Ձեր այցը Վրաստան: Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի այդ եղբայրական հարաբերություններն իրավամբ ամրանան: Մենք կանգնած ենք միևնույն հիմնահարցերի՝ առջև: Կան ուժեր, որոնք, այսպես ասած, ցանկանում են բաժանել մեր ժողովուրդներին, հնարավորին չափ արգելքներ են ստեղծում մեր միջև: Բայց մեր ժողովուրդներն անցել են այնպիսի ծանր պատմության միջով, որ քաջ կգիտակցեն, թե որտեղ է իրականությունը և ինչպիսին է այն ճանապարհը, որ մեզանից յուրաքանչյուրը կանցնի առանձին: Մենք պետք է նույն ճանապարհը համատեղ անցնենք»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն իր հերթին շնորհակալություն հայտնեց Հայաստանի Խորհրդարանի ղեկավարությանը՝ ջերմ ընդունելության համար: Իր գոհունակությունը հայտնեց Ազգային Ժողովին՝ խղճի ազատության մասին օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագծի քննարկման կապակցությամբ: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ ժամանակն է օրենսդրորեն կարգավորել խղճի ազատությանն առնչվող խնդիրները, ըստ արժանվույն գնահատել Հայ Առաքելական Եկեղեցու դերը հասարակության կյանքում.

«Ես միակ անձն եմ, որ չեմ կարող անցյալի և ներկայի միջև այդ բաղդատակաը անել, որովհետև չեմ ապրել ձեր անցյալը այս երկրում՝ սովետական իշխանության օրերը: Բայց ես այսօր ուզում եմ մեր սիրելի Խորհրդարանի նախագահին, փոխնախագահին, օգնականներին

հայտնել, որ իմ պարտքը համարեցի, որ ինձ համար, մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար հյուր եկող բարձրաստիճան հոգևորականը, Համայն Վրաց Եկեղեցու հոգևոր պետը, երբ գա մեր Ս. Աթոռ Էջմիածին, ես իրեն ներկայացնեմ մեր Հանրապետության օրենսդրական իշխանության այս վերին մարմնին: Սա ինձ տալիս է այն առիթը, որ ձեզի փոխանցեմ նաև, թե մենք ունեցանք խոսակցություններ մեր երկու Եկեղեցիների գործակցությանը համար, մեր երկու Եկեղեցիների պատմականորեն ժառանգված սիրո և անքակտելի կապերի համար, որոնք գոյություն ունեն պետության և Եկեղեցիին միջև: Մեր երկիրը ո՛չ Ամերիկային կնմանվի, ո՛չ Ֆրանսիային, ո՛չ Անգլիային և ո՛չ էլ մի այլ պետության: Մեր երկիրը իր զարգացման ընթացքն է ունեցել և այդ զարգացման մեջ քրիստոնեությունը ունեցել է իր մեծ դերը 1700 տարի և այն իրողությունը, որ մեր պետությունը հատուկ նախաձեռնություն է ստանձնել նշելու 1700-ամյակը, սա կնշանակի, որ մեր երկու Եկեղեցիները ազգային են այն իմաստով, որ նրանք շաղախվել են և շաղախել են մեր ազգային կյանքը:

Քրիստոս քարոզել է բոլոր մարդկանց: Մենք դա ստացել ենք մեր հայկական կյանքի շրջագծում և նրա թարգմանությունը մեր երկրում եղել է Հայոց Եկեղեցին: Եվ հետևաբար այս հանգամանքը մենք պետք է որ ճիշտ կերպով բացատրենք օտարներին, որոնք այս օրերին կրոնական ազատություն կոչված սկզբունքի շուրջը այնքան շահագործումներ են կատարում:

Մենք չենք կարող թողնել մեր երկիրը, մեր պատմությունը այդ տեսակ ազատության անվան տակ գործող կամ խոսող անձերին, որոնք իրենք ազատությունը չեն հարգում: Եվ դա իրենց ամենից մեծ հանցանքն է, և ես չեմ ուզում հիմա այս մասին երկար խոսել, բայց ուզեցի մեր սիրելի եղբոր ներկայության գնահատել մեր խորհրդարանի առողջ կեցվածքը այս հարցում:

Եզրափակելով իմ խոսքը, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ՝ այս ջերմ ընդունելության համար»:

Հանդիպման վերջում Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը գրառում կատարեց Սկզբային Ժողովի պատվավոր հյուրերի գրքում, ինչպես նաև Սժ նախագահին, ի հիշատակ իրենց այցելության, նվիրեց արծաթյա հուշանվեր՝ Թամարա թագուհու պատկերով:

Սժ նախագահ պարոն Արարքցյանն իր հերթին Վրաց Կաթողիկոս-Պատրիարքին նվիրեց արծաթյա հուշադրամ-մեդալ:

Ընդունելությանը ներկա էին Սժ փոխնախագահ Արա Սահակյանը, խորհրդարանի հանձնաժողովների նախագահներ, Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիակատար դեսպան Գիգոլ Բարամիձեն, Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիակատար դեսպան Լևոն Խաչատրյանը, երկու Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՈՏ

Կեսօրին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի գլխավորած պատվիրակությանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա

Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, ընդունեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Ռոբերտ Քոչարյանը:

Ընդունելությանը ներկա էին նաև թեմական առաջնորդները, Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիապոր դեսպան Գ. Բարամիձեն, ՀՀ Կրոնից Գործոց Կոմիտեի նախագահ Լապար Սուջյանը և պաշտոնատար այլ անձինք:

Ողջունելով բարձրաստիճան հյուրերին, պարոն վարչապետը կարևորեց երկու հոգևոր պետերի այցելությունը, շեշտելով, որ բախտակից ժողովուրդների եղբայրական սիրո ու հավատարմության առավել վառ դրսևորում դժվար է երևակայել, հույս հայտնեց, որ այս այցը է՛լ ավելի կամրապնդի Հայ և Վրաց Եկեղեցիների, ինչպես նաև պետությունների փոխհարաբերությունները:

Նա շեշտեց, որ մեր երկրներում Եկեղեցիները միշտ էլ բացառիկ դեր են խաղացել՝ լինելով ազգային այն կառույցը, որը համախմբել է ժողովրդին:

Զրույցի ընթացքում վարչապետը, կարևորելով Հայ Առաքելական Եկեղեցու դերը հայ ժողովրդի պատմության և մշակույթի բնագավառում, նշեց, որ Հայաստանի կառավարությունը միշտ սատար կկանգնի Եկեղեցուն, կհովանավորի և կաջակցի նրան:

«Միանման պատմություն ու անցած ուղի ունեցող հայ և վրաց ժողովուրդները դարեր շարունակ մաքառել են կողք-կողքի և այսօր ևս շարունակում են ավագների ավանդը»,- պատասխան խոսքում նշեց Իլիա Բ-ն՝ մանրամասնելով իր այցելության նպատակը.

«Ես հուսով եմ, որ երկու Եկեղեցիների համատեղ շանքերով կարող են հաղթահարվել դժվարությունները: Ես կասեի, որ մեր ժողովուրդների, մեր պետությունների համար ամենագլխավորը ձեռք բերած անկախությունն է: Մենք հաճախ չենք գիտակցում, չենք հասկանում այն մեծ պատասխանատվությունը, որ ընկած է մեր նորանկախ պետությունների ուսերին, լինեն դրանք տնտեսական, թե քաղաքական: Ես անչափ ուրախ եմ այն մտերմիկ բարեկամական հարաբերությունների համար, որ առկա են պետության և Եկեղեցու, հանձինս Գարեգին Ա-ի, միջև, որովհետև Գարեգին Ա Վեհափառը համաշխարհային ճանաչում ունեցող անձ է: Ես մեկ անգամ ևս ցանկանում եմ շնորհավորել հայ ժողովրդին՝ նման կաթողիկոս ունենալու համար: Դուք երջանիկ ժողովուրդ եք այդ առումով: Մենք վաղուց ենք ծանոթ միմյանց հետ: Կրկին ողջունում եմ Ձեզ Մեր, Մեր գլխավորած պատվիրակության անդամների և մեր Վրաց Ուղղափառ Եկեղեցու անունից, մաղթում մեծամեծ նվաճումներ»:

Ջերմ ու սիրալիր ընդունելության համար իր շնորհակալանքի խոսքը ՀՀ վարչապետին ասաց նաև Ամենայն Հայոց Հայրապետը.

«Ձերդ Վսեմություն, սիրելի պարոն Քոչարյան, իսկապես գոհ ու շնորհակալ եմ ես հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, որ Դուք շատ բազմազբաղ այս օրը, երբ ժողով ունեք, գիտեմ, Դուք այս ժամը տրամադրեցիք մեր թանկագին հյուրին համար: Դա Ձեր սիրո արտահայտությունն է հանդեպ մեր Եկեղեցիին և Եկեղեցու դերին մեր ժողովրդի, մեր Հայրենիքի և մեր պետության կառավարությանը համար:

Ես այդպես եմ ըմբռնում և իմ շնորհակալությունները ու գնահատանքս հայտնում այս ուղղությամբ: Երկրորդ՝ այս առիթով նաև իմ գնահատանքն եմ հայտնում և շնորհակալությունը միանգամայն այն բոլոր կարգադրություններին համար, որ Ձեր գրասենյակից Ձեր ղեկավարությամբը տեղի ունեցան, որպեսզի շատ կանոնավոր, պատվավոր անցներ Նորին Սրբության այցելությունը:

Օդակայանից մինչև այս վայրկյանը, ամեն տեղ զգացի պետության հոգածությունը, բարյացակամ ներկայությունը մեր կառավարությանը: Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ձեզի այս ուղղությամբ»:

Հանդիպման ընթացքում ծավալված մտերմիկ կրոյցի ժամանակ մտքեր փոխանակվեցին այսօրվա պայմաններում Եկեղեցու դերի, Եկեղեցի-Պետություն փոխհամագործակցության վերաբերյալ: Երկու ժողովուրդների հոգևոր պետերը նշեցին, որ Հայ և Վրաց Եկեղեցիները պատրաստ են՝ ըստ ամենայնի նպաստելու հարապատ երկրների կորացմանը, բարեկամության ամրապնդմանը:

Հանդիպման վերջում երկուստեք տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում:

ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒԹ «ԱՐՄԵՆԻԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Օրվա երկրորդ կեսին, ի պատիվ Նորին Սրբություն Իլիա Բ-ի գլխավորած պատվիրակության, «Արմենիա» հյուրանոցի սրահում տրվեց հրաժեշտի պաշտոնական ճաշկերույթ՝ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ:

Հրաժեշտի ճաշին ներկա էին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, Կրոնից Գործոց Կոմիտեի նախագահ Լապար Սուջյանը, ԱԺ պատգամավորներ, նախարարներ, Հայաստանի Հանրապետությունում հավատարամագրված դեսպաններ, դիվանագետներ, Մայր Աթոռի Միաբանության անդամներ, պաշտոնատար այլ անձինք, հյուրեր:

Հայ և Վրաց Եկեղեցիների հոգևոր առաջնորդները, հանրագումարի բերելով համատեղ անցկացրած օրերը Հայաստանում, նաև վերհիշելով Հայոց Հայրապետի այցը Վրաստան, առանձնակի կարևորեցին բարեկամության ու եղբայրության հարատևությունը:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասաց.

«Առաջին հերթին ես ցանկանում եմ իմ խոր շնորհակալությունը և գնահատանքը հայտնել ձեզ բոլորիդ, որ սիրով ընդառաջեցիք Մայր Աթոռիս հրավերին և այսօր ձեր ներկայությամբը, ձեր սեղանակցությամբը պատվեցիք մեր թանկագին հյուրը և մեր հոգևոր եղբայրը՝ Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը Վրաստանի:

Մեր հրավերին տրված այս Ձեր ընդառաջումին մեջ ես կտեսնեմ Ձեր սերը և գնահատանքը այն եղբայրական հարաբերության, որ գոյություն ունի երկու Եկեղեցիների, երկու ժողովուրդների և երկու պետությունների միջև: Անավասիկ իր ավարտին է հասնում չորեքօրյա այն այցելությունը, որ, առաջին անգամը լինելով Մեր գահակալության

շրջանում, Նորին Սրբությունը ընծայում է մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և մեր մայրենի հողին՝ Հայաստանին ու նրա Հանրապետությանը:

Այդ այցելությունը ունեցավ երեք գլխավոր բաժիններ, երեք բարիքներ, պիտի ըսեմ: Առաջինը՝ եկեղեցականների միջև աղոթքի միասնական արտահայտությամբ առավել ևս զորացավ մեր քրիստոնեական եղբայրությունը: Երկրորդ՝ մեր Հոգևոր Ծեմարանների աշակերտության, ուսանողության, երիտասարդ եկեղեցականության հետ հաղորդության պահ եղավ այս այցելությունը և նոր սերունդին գեղեցկագույն օրինակներից մեկը, թե ինչպես եղբայրները կարող են միասնաբար սիրտ-սրտի և ձեռք-ձեռքի գործել: Դա մեծագույն աստվածաբանության դասն է: Երրորդ՝ ժողովրդի հետ հաղորդության առիթ ստեղծեց այս այցելությունը: Չեղավ միայն վերնախավի, վերի աստիճանի պատասխանատուների միջև հանդիպում, այլ եղավ ժողովրդի հետ նաև հանդիպում, որովհետև բազմաթիվ առիթներով Սուրբ Էջմիածնում, նաև Սուրբ Սարգիս եկեղեցում, Նորքի շրջանում Նորին Սրբությունը և իրեն ընկերակցող պատվիրակները, հոգևորական և աշխարհական անդամները զգացին ժողովրդի կապվածությունը իր հարազատ, մայրենի Եկեղեցուն և նաև այն հարգանքը, որ ժողովուրդը ունի հանդեպ Վրաց Օրթոդոքս Եկեղեցուն և Վրաստանի ժողովրդին:

Այս բոլորը, սիրելի եղբայրներ, կուգան մեզի ցույց տալու, որ ընդհանուր աշխարհի մեջ այսօր փոխադարձ հարաբերությունը միակ ճանապարհն է փոխադարձ հասկացողության, տարիների, դարերի ընթացքին հավաքված թյուրիմացությունների փարատման և գործակցության ոգով հանուն մարդկության և հանուն Աստծու ծառայելու մեր ընդհանրական առաքելությանը:

Մենք երեկվա պես հիշում ենք այն այցելությունը, որ տվեցինք Վրաստան, Թբիլիսի, որպես հյուրը Նորին Սրբություն Իլիա Բ Պատրիարքին 1995 թվի սեպտեմբերին և տեսանք, թե ինչպես նաև Վրաց անկախ Հանրապետության նախագահը և Վրացական պետությունը որքան ջերմ կապվածությամբ գնահատանք են արտահայտում Վրաց Եկեղեցուն, և Մենք ունեցանք Մեր կողքին այն ատեն նաև Վրաց Հանրապետության վսեմաշուք նախագահի՝ Էդուարդ Շևարդնաձեի ներկայությունը:

Եվ այսօր Մենք խորապես շնորհակալ ենք, որ մեր Հայաստանի Հանրապետության նախագահը, բազմազբաղ իր վիճակին մեջ այս օրերուն մանավանդ, եկավ և իր սերը և գնահատանքը հայտնեց Հայաստանյայց Եկեղեցու միջոցով Վրաց քույր Եկեղեցուն: Ես իմ գնահատանքն եմ հայտնում նաև բոլոր մեր հոգևորական և աշխարհական գործակիցներին և նաև այս երկրում՝ մեր Հայաստան աշխարհում օտար պետությունների դեսպաններին, որոնք եկան և արտահայտեցին իրենց հարգանքը մեր սիրելյալ հյուրին՝ Իլիա Բ Պատրիարքին:

Պետությունների այս դրական վերաբերմունքը մեր Եկեղեցիների նկատմամբ մեր պատմության անցած ճանապարհի հավատարիմ հետևությունն է, որովհետև մեր Եկեղեցիները՝ Վրաց և Հայկական Եկեղեցիները միաշաղախվել են մեր ազգի գոյավորման և այդ գոյությունը արտահայտելու մշակութային և այլ մարզերի մեջ բարձրագույն արտահայտությունների հետ:

Իմ խոսքն ավարտում եմ՝ ողջունելով այն վերարթնության, վերազարթոնքի երևույթը, որ պարզվում է թե՛ Վրաց Եկեղեցու և թե՛ Հայաստանյայց Եկեղեցու մեջ: Ահա նոր շունչ է առնում մեր դարավոր հավատքը և դրա մեջ ես ողջունում եմ այս եղբայրական սերտակցության մեծ բարիքը: Եվ հետևաբար մաղթում եմ ի խորոց սրտի, որ այդ հառաջդիմությունը հավատքի մեջ դառնա նաև մեր ազգերի ամրացման բարոյական առողջության վերագտնումի և ապագայի նվաճումների, մարդկության ծառայության և Աստծու ծառայության համար:

Ահա թե ինչու հովվապետական այս ցուպը, այս ասասան, որ պատրաստել եմ տվել հատուկ կերպով իմ սիրեցյալ եղբոր համար, այս գավազանը ծաղկյալ մնա, որպեսզի Վրաց Եկեղեցում երբ ինքը քարոզի, զգա, թե մենք իրեն հետ ենք ամենուրեք»:

Իր հերթին Իլիա Բ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքն ասաց.

«Նորին Վսեմություն տիար Լևոն Տեր-Պետրոսյան՝ նախագահ Հայաստանի Հանրապետության, Ձերդ Սրբություն, եղբայր ի Քրիստոս Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, սիրելի քույրեր և եղբայրներ.

Մեր պաշտոնական այցը Հայաստան, հրավերով Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մոտենում է ավարտին:

Խորին շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի պետությանը և Ամենայն Հայոց Հայրապետին, ջերմ ընդունելության և այն սիրո խոսքերի համար, որ հնչեցին այսօր այստեղ: Մեր փոխադարձ այցելությունները, 1995 թվականին Գարեգին Ա Կաթողիկոսի այցը Վրաստան և մեր այցելությունը Հայաստան, վառ ապացույցն է երկու ժողովուրդների դարավոր բարեկամության:

Բոլոր հանդիպումները՝ լինեն դրանք պաշտոնական, ուսանողության, թե ժողովրդի հետ, ապացույցն են մեր երկու Եկեղեցիների եղբայրական սիրո: Մեր Եկեղեցիները վառ պատմական անցյալ ունեն և դարերի ընթացքում նրանց ճակատագրերը հաճախ են միանման եղել: Շատ պետություններ գիտենք, որ դարեր առաջ եղել են հզոր ու անպարտելի պետություններ, իսկ այսօր նրանց մասին կարդում ենք միայն գրքերում: Մեր երկու ազգերը գոյատևեցին՝ չնայած մշտապես հալածվում էին շրջապատող պետություններից: Դրանով մենք պարտական ենք մեր հավատքին և Եկեղեցուն:

Այո՛, դա ճիշտ է, բայց մենք չենք կարող ապրել միայն անցյալով: Չենք կարող մեկուսանալ մեր ներքին խնդիրներով և միշտ փոխադարձ համագործակցությամբ օգտակար պետք է լինենք միմյանց այս դժվարին օրերին, երբ մեր երկու պետությունները հռչակվել են անկախ:

Մեծ դեր է վերապահված մեր երկու Եկեղեցիներին, իսկ հոգևոր առաջնորդների հանդիպումները նպաստում են երկու ժողովուրդների եղբայրական հարաբերությունների էլ ավելի զարգացմանը:

Ձերդ Սրբություն, կրկին անգամ շնորհակալություն եմ հայտնում ջերմ ընդունելության համար և շատ տեղեր ու շատ անգամներ ասել եմ, թե երջանիկ է հայ ազգը, որ ունի Գարեգին Ա-ի նման Կաթողիկոս: Մեկ անգամ ևս կրկնում եմ նույնը:

Որպես եղբայրական սիրո լավագույն դրսևորում, ես ցանկանում եմ հանձնել այս հուշանվերը, որը Ձեզ միշտ կհիշեցնի մեր հանդիպումների մասին»:

Երկուստեք արտասանած ողջագուրանքի և եղբայրական սիրո խոսքերից հետո, Նորին Սրբություն Իլիա Բ–ն Ամենայն Հայոց Հայրապետին հանձնեց հուշանվերներ: Իր հերթին հուշանվերներ հանձնեց նաև Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Կաթողիկոսը: Հուշանվերներ ստացան պատվիրակության մյուս անդամները նս:

ՀՐԱԺԵՇՏԻ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Այնուհետև, օրվա երկրորդ կեսին, պատվիրակությունն առաջնորդվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Զանգերի դողանջներով և թափորի ուղեկցությամբ մուտք գործելով Մայր Տաճար, երկու հոգևոր պետերն իրենց հրաժեշտի գոհաբանական աղոթքն առաջնորդեցին առ Աստված: Որից հետո Վրաց Եկեղեցու պատվիրակությունը, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականների և պաշտոնատար անձանց ուղեկցությամբ, ուղղվեց դեպի «Զվարթնոց» օդանավակայան:

Այստեղ բարձրաստիճան հյուրերի սպասասրահում տեղի ունեցավ հակիրճ ճեպակրույց, հընթացս որի Վրաց Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին՝ իր նկատմամբ ցուցաբերած ջերմ ու այնքան սիրալիր վերաբերմունքի համար:

Մեկնումից առաջ խնդրեցինք Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին մեզ հետ կիսել իր տպավորությունները, ինչպես նաև հրաժեշտի մտորումները: Ահա թե ինչ ասաց նա.

«Նախ և առաջ ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին այն եղբայրական սիրո համար, որով նա պարուրեց մեզ և մեր պատվիրակությանը, այն մեծ հարգանքի համար, որ նա դրսևորեց հանդեպ մեր ժողովուրդը և մեր Եկեղեցին:

Ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության վսեմաշուք նախագահին՝ Լևոն Տեր-Պետրոսյանին, այս մեծ ուշադրության և ջերմ ընդունելության համար: Շնորհակալ ենք նաև Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանին, վարչապետ Ռոբերտ Քոչարյանին: Առանձնակի շնորհակալություն նաև հոգևոր դասին և հայ ժողովրդին:

Իրավամբ Նորին Սրբության այցը Վրաստան և մեր փոխադարձ այցն այստեղ՝ Հայաստան, վառ արտահայտությունն էր եղբայրական այն հարաբերությունների, որոնք առկա են մեր ժողովուրդների, պետությունների, ինչպես նաև մեր պատմական, Առաքելական Եկեղեցիների միջև: Ես գտնում եմ, որ մեր այցը դուրս է եկել միջեկեղեցական հարաբերությունների շրջանակներից և, ինչպես Նորին Սրբության այցը Վրաստան, այնպես էլ մերն այստեղ, կհանդիսանան մեր փոխադարձ հարաբերությունները դեպի առավել մտերիմ, բազմաբնույթ դարձնելու հիմնական գործոնները՝ հանուն մեր ժողովուրդների և Եկեղեցիների»:

Այն հարցին, թե ի՞նչ է տանում ինքը Հայոց հինավուրց աշխարհից, Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը պատասխանեց.

«Մենք տանում ենք մեզ հետ հայոց քաջակորով ու անպարտ ժողովրդի սերը և ձեզ ենք թողնում մեր սերը»:

Սպա հրաժեշտի իր խոսքն ասաց Վրաց Եկեղեցու պաշտոնական պատվիրակությանը՝ հանձին Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի. Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը:

Պատասխանելով մեր հարցին, Վեհափառ Տերը հանգամանալից մանրամասնեց արդեն ավարտված պաշտոնական այցը կամ ավելի ճիշտ Վրաց Եկեղեցու պատվիրակության հյուրընկալությունը Հայոց հինավուրց երկրում, ինչպես նաև մեկ հետ կիսեց իր տպավորություններն ու գնահատանքը այս առիթով.

«Որպես առաջին զգացում հագեցված լինելու զգացումն է, այսինքն՝ բոլորս, ես անձնապես, մեր հոգևորականները, Մայր Աթոռի միաբանները, մեր ժողովուրդը, մեր ուսանողությունը Հոգևոր Ծեմարանի, մի խոսքով, մեր ամբողջ Հայաստանի հայ բնակչությունը զգաց Վրաց Եկեղեցու պետի՝ Նորին Սրբություն Իլիա Բ Պատրիարքի հոգածությունը, սերը, բարեկամությունը, եղբայրությունը, օրհնությունը հանդեպ մեր Հայրենիքին:

Կարևորն այն է, որ ժողովուրդն ինքը զգա, թե իր հոգևոր առաջնորդները միասին են գործում: Դա ամենից մեծ օրինակն է կյանքի, ինչոր մենք քաղում ենք Ավետարանից, մեր Տիրոջից՝ Հիսուս Քրիստոսից: Ես պիտի ասեմ, որ մեր գահակալության շրջանին այս առաջին այցն էր, և դա եղավ մի պատմական դեպք: Այդ պատմական դեպքը պիտի արժևորվի ապագայում նաև գործնական արտահայտություններով, գործակցության ամենեն ընտիր և ամենեն վավերական եղանակներով երկու Եկեղեցիների և երկու ժողովուրդների և երկու պետությունների միջև:

Մենք իսկապես ճակատագրակից, բախտակից ժողովուրդներ ենք եղել: Մեր երկու ժողովուրդների պատմության մեջ պետություն և Եկեղեցի միշտ իրար հետ են շաղախվել հենց սկզբից: Մեր ազգի ու պետության կազմավորման մեջ մեր Եկեղեցին ունեցել է իր վճռական դերը, նույնն է եղել նաև պարագան Վրաց Օրթոդոքս Եկեղեցու համար:

Անհավասիկ, թե ինչու մեր զույգ Եկեղեցիների՝ Վրաց Օրթոդոքս Եկեղեցու և մեր Առաքելական Եկեղեցու հավատարմությունը հանդեպ Քրիստոսին և մանավանդ մեր հավատքի վերակենդանության, ինչպես Իլիա Պատրիարքն ինքն էլ ասաց, պատմության հետ կապված հարց չէ միայն: Պատմություն ունի հավատքը, բայց հավատքը ինքը պատմություն չէ, կենդանի ուժ է, և այսօր մենք կոչվել ենք միասնաբար այդ կենդանությունը մեր հավատքին տարածել մեր ժողովրդի մեջ: Անհավասիկ առաքելության իմաստը ինձ համար»:

Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին «Զվարթնոց» օդանավակայանից դեպի հայրենիք ճանապարհողների թվում էին նաև << Կրոնից Գործոց Կոմիտեի նախագահ Լապար Սուրյանը, Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիապոր դեսպան Գիգոլ Բարամիձեն, Հայոց Եկեղեցու թեմական առաջնորդները, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանները:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿՐՈՆԱԲԵՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. Հ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

«ՏԵՆՉԱՅ ՍԱԹԵՆԻԿ...»-Ի ԱՌԵՂԾՎԱԾԸ

Պատմահոր մատյանի առեղծվածային հատվածներից մեկը՝ «տենչայ Սաթենիկ»-ը, բանասիրական և լեզվաբանական բազում պրպտումների տեղիք է տվել վերջին երկու հարյուրամյակներում: Ավելորդ ենք համարում անդրադառնալ դրանց առանձին-առանձին, քանի որ հետևակների մեկնաբանությունները վերջի-վերջո կապվում են ինչ-որ մոգական ճաշատեսակների և դրանց հետ առնչվող հմայական արարողությունների հետ[1]: Մեկնաբանություններին մի նոր շունչ է հաղորդում Վ. Համբարձումյանի տեսակետը, ըստ որի այն հատուկ ծածկագրված այլաբանություն է[2]: Սակայն չենք կարծում, թե «Էրոտիկ» այլաբանությունը վայել է Խորենացու փառահեղ իմաստասիրական ոճին կամ թեկուզ մեջբերված ժողովրդական վիպասանությանը:

Անկասկած է, որ «տենչայ ...»-ն ենթադրում է ծիսական բովանդակություն, բայց ո՞ր մակարդակի վրա. «կենցաղային» հմայությա՞ն, թե՞ մի ուրիշ[3]: Ահա այս հարցերին կփորձենք պատասխանել ներկա հոդվածի մեջ.

Տենչայ Սաթենիկ տիկին տենչանս՝
Զարտախոյր խաւարտ և զտից խաւարծի,
Ի բարձից Արգաւանայ:

Արտախոյր.- Նախ և առաջ փորձենք տալ վերջինիս կրոնա-ծիսական բնութագիրը. միջնադարյան աղբյուրներում հաճախական գործածություն ունեցող անուններից է, ընդ որում երկակի իմաստավորումով. առաջինը՝ «արքայական թագ» քաջ հայտնի է[4], երկրորդը՝ տոմարական դիցապաշտական տերմին է՝

---

[1] Ուսումնասիրությունների մանրամասն ցանկը տե՛ս ՀԱԲ 2, I, 340-42: Նախորդների ամփոփ վերլուծությանն է նվիրված Ch. Dowsett, Little Satanas Wedding Breakfast. Etudes arméniennes in memoriam H. Berberian, Coimbra, 1986, pp. 243-63:

[2] Մ. Խորենացու պատմության «տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը, ՊԲՀ, 1995, հմր. 2, էջ 228-235:

[3] Վ. Համբարձումյանի բացած բանավեճին միացավ նաև Հ. Մարտիրոսյանը նույն Պատմա-բանասիրական հանդեսի էջերում (ՊԲՀ, 1996, հմր. 2, էջ 311-16): Վերջինիս մեկնակերպը տարբեր է, կարելի է ասել բոլոր նախորդներից այն իմաստով, որ փորձ է անում Օսական հնագույն հավատալիքների, մասնավորապես Ærtxuron «արբազան հուր»-ի հիմքի վրա բացատրել պատմահոր վկայաբերած արտախոյր բառը և գրեթե մոտենում է առեղծվածի ընդհանրական լուծմանը, թեև պիտի նշել, որ նրա վարկածային թարգմանությունը ընդունելի չէ, թերևս հեղինակի համար կողմնորոշիչ է եղել Աբաևի այն պնդումը, թե Օսերին խորթ էր զրադաշտական վարդապետությունը (տե՛ս Абаев В. И., Дохристианская религия Алан, М. 1960, с. 17, ИЭС, 1 , 84, 93, 442):

[4] Թվում է, կասկածի տեղիք չպիտի տար Բենվենիստի համեմատությունը իրան. *r₀ta-xauda և հուն. ὀρθο - τιαρα-ի հետ (Etudes iraniennes, TPS, 1945, 69),

(ծագումնային առումով առաջինից անբաժան, ինչպես կտեսնենք ստորև) Աւելեաց Օրերից, նույնն է թե արարչության Օրերից վերջինի անվանումը[5]*: Ակնհայտ է, որ զրադաշտական վարդապետության մեջ կյոր տարին ինքնին հավերժության «կարգավորված մանրակաղապարն» է, իսկ ամանորյա տոները (վարդավառյան տոներ) ոգեկոչում են արարչությունը, աշխարհի արարումը: Նախնիների առասպելա-ծիսական հավատալիքների համաձայն այս օրերին է, որ երիտասարդ սերնդի գլխավոր աստվածությունը վիշապի հետ մենամարտում հաղթում է նրան և վիշապի մարմնից «կերտում» տիեզերքը, իրեն էլ զուգում արքայական ատրիբուտներով, այդ թվում և «արքայական թագ»-ով*[6]*: Միջնադարի տոմարական գրականության մեջ Արտախոյր-ը ունեցել է իր նշանագրերը՝ * կամ 8: Ի դեպ, սրանցից առաջինը՝ ութանկի աստղը, գտնում ենք Արտաշիսյանների թագերի, մասնավորապես Տիգրան Մեծի թագի վրա, Կենաց ծառի պատկերների վերին մասում, որպես եզրափակող խորհրդանիշ (հմմտ. նաև Կենաց ծառի տեսքով խեթական արքայական թագերը):*

Նշենք, որ արքայական թագադրումը հնագույն ծիսակարգերից մեկն է, որի «Օրինական» հիմնավորումը գտնում ենք հենց երկնային մենամարտի, աշխարհի արարչության և նրա վրա իշխելու մեջ: Իզուր չէ, որ Ֆիջի կղզիների բնիկները առաջնորդի գահ բարձրանալը անվանում են «աշխարհի արարչություն»[7]*. սա նշանակում է, որ յուրաքանչյուր նոր տարի սկսվում է գլխավոր աստծո «ես»-ի նորոգման, նրա ներքին ուժերի և արտաքինի՝ զգեստավորման, վերարտադրման խորհրդով:*

Բնականաբար ճիշտ է կոահել Բենվենիստը՝ փոխառության աղբյուր դիտելով իրան. *r₀ta-xauda/=Գաթաների *arəta-xaoδa -Ա. Մ./-ն: *Այլ հարց է, թե* *r₀ta-ն *իսկապե՞ս, ինչպես Բենվենիստն է նշում «սրածայր» նշանակումն է ունեցել, թե՞ «ուղիղ» և սրանից ածանցված՝ «արքազան»: Հաշվի առնելով լեզուների ընձեռած տվյալները, հավանաբար ճիշտ կլինի արձանագրել*

բայց բոլորովին վերջերս Ա. Փերիխանյանի կողմից կանխադրվեց միջ. մեդ. .*arĭtaxδδ «դեմքի քող» տարբերակը (МЭСДЯ, Е. 1993, I, с. 10): Կարծում ենք, սա ոչ հավաստի վերականգնում է, քանզի շատ է հեռանում իր ծիսական բովանդակությունից, չնայած ինքը դրա մեջ մեղադրում է հենց Բենվենիստին (նշ. տ., էջ 10), անտեղի համարելով $r_0$ta-ն որևէ կերպ «վրան»-ի կամ «գլխարկի»-ի հետ առնչելը: Բայց դա այդպես չէ. բանն այն է, որ տիեզերաստեղծ առանցքը, այան և նրա շուրջը բոլորող վրանի (հմմտ. և գլխարկ), որպես տիեզերքի նմուշի, պատկերացումը շատ հին է և ավանդական (տե՛ս М. Элиаде, Космос и История, М. 1987, с. 150. Э. Петросян, Ритурально-мифологическая и Театрально-зрелищная Система Армян /автореферат докт. диссертации, М. 1989, с. 10):

[5] Այս մասին տե՛ս մեր «Հայոց բուն տոմարի ջուրջ» հոդվածը /ՀԱ, 1996/, որի մեջ Արտախոյր-ը դիտարկել ենք որպես գլխավոր աստծո մականուններից մեկը, իսկ Աւելեաց ամսվա օրերի հետ կապված համեմատել ենք իրան. Fravardin ամսանունը, Prawartis՝ մեդական արքայանունը, ինչպես նաև հուն. փոխադրությամբ .'Αρτουρένες, արամ. 'rtprn, ակկադ. Artapirna· (M. Mayrhofer, Onomastica Persepolitana, Wien, 1973, pp. 164-65) անձնանունները հայոց Վարդաւառ/ն/ ծիսական անվան հետ և կանխադրել իրան. *arda-farnah<*R_0ta-x^varənah ձևը:

[6] Pritchard J., Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament, L. 1956, pp. 38-39:

[7] Hocart A. M., Kingship, L. 1927, pp. 189-190:

«ուղիղ»→ «շիտակ, արդար»→ «սրբազան» իմաստային անցում (հմմտ. հուն. ὀρθός «ուղիղ, ճշմարիտ», պհլ. arta «արդար, սրբազան»):

Արտախոյր-ը որպես մակդիր ունի խավարտ[8] ածականը: Իսկ սա անշուշտ առնչվում է Ավեստայում հանդիպող axᵛarəta-ի հետ, որ դրվում է սովորաբար xᵛarənah-ի վրա: Եվ եթե ճիշտ է Լոմմելը, որ axᵛarəta-ն համանիշ է վեդայական asürta-ին՝ «խավար, մթին» նշանակությամբ[9], ապա ինքնըստինքյան ենթադրվում է, որ սրան հականիշ *xᵛarəta-ն (R₀V surta-), xᵛarənah-ի բաղադրությամբ հիմք է ծառայել հայ. Վարդաւառ/ն/ ծիսական անվան համար[10] (<միջ. իրան. *varda-farr) և կարող է բացատրվել որպես «լուսաշող փառք»: Այլապես, պետք է ավելի հավանական համարել ավ. varəta - «բռնված, գերված, կալանված», հին իրան. *hᵛr₀t-ով կապակցություն, որի բուն իմաստն անհայտ է, թերևս «գերված փառք» (հմմտ. Bailey, Zoroastrian problems, p. 73), որ քրիստոնեության մեջ համադրելի է Սուրբ Հոգու և սրա հետ կապված քրիստոնեական «Հոգեգալուստ»-ի տոնի հետ:

Այնուամենայնիվ, սա բաց է մնում քննարկման համար և այստեղ մեր նպատակից դուրս է, այս առումով պետք է մանրամասն քննվեն զրադաշտական վարդապետության մեջ xᵛarənah-ի հետ կապված շատ մանրամասներ, դիցաբանական այն նախադրյալները, որոնք նախանշել են վարդավառյան տոնների հաստատումը: Արդ, պարզելով հայ. Վարդաւառ-ի աղբյուրը, իրանական անվան ստուգաբանության վերջնական ընտրությունը թողնում ենք ապագային:

Վերը բերված փաստերը թույլ են տալիս ծավալվել մի այլ ուղղությամբ: Վաղուց էինք նկատել, որ հնդիրանական Mitra-Varuna զույգ աստվածության անունը կատարելապես է արտացոլված հունական Μιθρα-fernes անձնանվան մեջ, բայց հարկ էինք համարում նոր փաստարկներ գտնել այն հաստատելու համար: Եվ այստեղ սխալված չենք լինի, եթե նշենք, որ հակված ենք հավասարության նշան դնել ավ. *xᵛarəta-xᵛarənah, վեդ. *sürta-Varuna և օս. ᵈXüræt /d-xüron-ի միջև: Եվ սա խոսում է թերևս վեդ. Varunā-ի[11] *sûar-[12] հիմք ունենալու օգտին:

Հաջորդ՝ զտից խաւարծի բառակապակցությունը սեռական-տրականով հոլովված հատկացյալ-հատկացուցչի ազատ կապակցություն է՝ ուղիղ խնդրի շարահյուսական կիրառմամբ. անդամներից առաջինը՝ * տի(ւ)ք/ց գրբ. դի(ւ)ք

---

8 Գոյություն ունի երկու համանուն, որոնցից մեկն էլ շփոթմունքի պատճառ է դարձել՝ ավ. xᵛarδtay, հ. պրսկ. xᵛarətay, պհլ. xᵛārt-ik~ հայ. խաւարտ, խորտիկ:

9 Lommel H., Awestische Einzelstudien. ZII, 2, 1923, S. 225:

10 Ընդհանրապես մեր նախորդ վերականգնումը /տե՛ս ծնթ. 5/ այստեղ ճշգրտման ենք ենթարկում և հայերենի հողի վրա բացատրված վ-ով ձևը փոխարինում զուտ իրանական բարդությամբ: Հարկ է նշել, որ Վարդաւառ-ի ավանդական ստուգաբանության փորձերը շարունակվում են՝ այն աղերսելով վարդատոնի հետ (մասնավորապես՝ J. Russell, The Etymology of Armenian Vardavar, AAL, N 13, 1992, p. 67):

11 Այլ տեսակետ ունի Պուհվելը (J. Puhvel, Comparative Mythology, Baltimore-London, 1989, p. 49), ըստ որի այս դիցանունը հանգում է հ. հնդկ. vr̥, հնդիրանական *var- հիմքին (հ.-ե. *uer, Pokorny, I, 1160) «պարտակել, շրջապատել, սահման գծել» նշանակությամբ:

12 Նույն արմատին է հանգում տակավին չստուգաբանված հայ. շող բառը /*suol/:

*բառի զուգաձևն է, հ. -ե. *dei- «շողալ» արմատից, որ շատ եվրոպական լեզուներում տվել է «օր» կամ «աստված» իմաստային զարգացումը: Նույն հիմքից են կազմված նաև տուչութիւն «բախտ, ճակատագիր» և վաղնջեան-ի հետ համաբանական զույգ ստեղծող տուրնջեան-ը:*

Փոքր-ինչ բարդ է խաւարծի-ի մեկնության հարցը, եթե իհարկե փորձում ենք կապ տեսնել սրա և խաւարծիլ//խործիլ բուսանվան միջև[13]*. իսկ եթե փորձենք այլ կերպ մոտենալ հարցին, բացառելով այն: Մեզ թվում է, և դա հաստատում է գործածված բառերի տրամաբանությունը, որ այստեղ պետք է ունենանք խաւարծիր բառը՝ հոլովական մի ձևավորմամբ, որի մեջ երկրորդ ր-ն ընկել է:*

*Ի բարձիցն Արգաւանայ կապակցության մեջ պետք է վերականգնել բարձք անեզակին՝ «բարձունք, լեռ» նշանակությամբ, ինչպես որ իմաստային կողմի համար ժամանակին կոահել էր Մալխասյանցը, իսկ մյուսը՝ հատուկ անուն է և ըստ երևույթին հարում է իրան. -vand ածանցով կազմություններին (միջ. իրան. *argavand. հմմտ. սոդդ. arγ «արժեք, գին», պրթև. argav «արժանավոր»):*

Այսքանից հետո մեզ մնում է ներկայացնել սրա թարգմանությունը.

Սաթենիկ տիկինը աղոթքներ է հղում շողացող /գերվա՞ծ/ Արտախույրին /=Iuppiter/ և խավարածրի աստվածություններին /=Zōdiakos/ Արգավան(դ)ի բարձունքից:

---

[13] Միջնադարյան բնագրերի վկայությունները այնքան խառնաշփոթ են և սխալաշատ, որ այս բուսանվան աղբյուրի հարցում կողմնորոշվելու հնարավորություն գրեթե չեն տալիս: Կարող ենք հայտնել միայն մեկ-երկու նկատառում: Նախ՝ կարևոր է սրա համանիշների առկայությունը՝ գաբ/ծիլ/ գաբին տակն, լերդաթոտ, լերդաճաղիկ, գետնակաղին, գետնի փիճի, կենարար, այլև օտար անուններից՝ ռևանդ /պրսկ. revand/, քամեպիտիս /հուն. Χαμαίπιτος/, բոնիան, սահրկապուրա /արա՞բ./: Երկրորդ՝ անհայտ է մնում գաբծիլ և խործիլ զույգի երկրորդ բաղադրիչների հարաբերակցությունը (համաբանությո՞ւն). համենայն դեպս, խործիլ-ի տարբերակները հատոգում են, որ դա ամենևին էլ հայ. ծիլ-ը չէ /հմմտ.- ծուիլ.- ձուիլ.- ձուիլ/: Իսկ առաջին բաղադրիչի համար պիտի դիտարկել հետևյալը. մի՞թե պատահական է խործիլ-ի և խորփրրստ-ի առնչությունը միևնույն բույսը նշանակելու առումով: Եթե դա իրոք պատահական չէ, ապա սրանց իրանական աղբյուրը շոշափելի է դառնում: Մյուս կողմից պրոբլեմային է մնում վրաց. γwɨli «մոլախոտ. չարություն» զուգադիպումը (Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 598):

ՎԱՉԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐ ՕՁՆԵՑԻ

Հայոց Եկեղեցու բեմի ասացող և բանի սպասավոր է եղել Հովհաննես Իմաստասեր Օձնեցին:

Խոսկելի Հայրապետի միայն մահվան թիվն է հայտնի՝ 728 թ., այսինքն՝ ևս մեկ տարի, և կլրանա մի նոր տարելից՝ Իմաստասեր Կաթողիկոսի 1270-ամյա տարելիցը: Հայտնի է նաև, որ Հովհաննես Օձնեցին եղել է մեր Եկեղեցու Հայրապետը 717-728 թթ., այսինքն՝ այս տարի իր լրմանն է հասնում մեկ այլ տարեդարձ. Հայոց Եկեղեցին, իրավամբ, կհիշի սուրբ Կաթողիկոսի 1280-ամյա այդ տարեդարձը:

Հովհաննես Օձնեցին Հայ Եկեղեցու այն Հայրապետներից է, ովքեր մեզ են ավանդել իմաստասիրական, եկեղեցական հարուստ ժառանգություն: Այդ ժառանգությունը հայ աստվածաբանական, դավանաբանական գրականության մի անկապտելի մասն է:

Օձնեցու հայացքների շատ գծեր ու նրբություններ ծրարված են նրա լեզվական անհատական ոճի մեջ: Առանց պարզաբանելու այդ ոճի գաղտնիքները, շատ բաներ կարող են անիմանալի մնալ, անհասու դառնալ: Սա այն լավագույն դեպքերից մեկն է, երբ լեզուն իր մեջ է առնում այն կրողի մտավոր ինքնատիպությունը, իմացական ողջ կարողությունը, ընդգրկում է այդ լեզվով գրողի այն ընկալումները, որոնցով գնահատվել է իր ժամանակը, կանխագծվել գալիք ժամանակը՝ կապված Հայ Եկեղեցու ապագայի, նրա հավատավոր ժողովրդի հետ:

Հովհաննես Օձնեցին, ապրելով և գործելով 8-րդ դարում, իր երկերը գրել է ժամանակի գրական հայերենով: Այն մեր ոսկեղենիկ լեզուն է, սակայն հետզհետե գրաբար (գրոց լեզու) դարձած: Այդուհանդերձ Օձնեցու երկերում, այսինքն՝ մեծ ճառասացի գրավոր խոսքում այդ գրաբարը դեռևս պահում է իր ողջ կանոնականությունը, դասական լեզու կոչվելու փայլն ու հզորությունը: Անցյալ դարի հայ բանասերներից կուզենայինք շեշտել հատկապես մի քանիսի գնահատությունը՝ ուղղված Իմաստասերի ոչ միայն լեզվին, այլև մտածողությանը՝ առհասարակ: Օրինակ՝ «Նոր հայկազյան բառգիրքը» (այսուհետև՝ ՆՀԲ, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837) կազմողները Հովհաննես Օձնեցուն բնորոշում են իբրև «վսեմ և գերապանծ հայկաբանությամբ» գրող հեղինակ, ում խիստ հատկանշական է եղել նաև ժամանակի՝ իր դարի «հելլենական բանահյուսությունը» (իմա՝ հունաբան ոճով բառակերտումը-Վ. Հ.), ում ճառերը փայլում են «հզոր և ազդու ոճով»: Նման բնորոշումների կարելի է հանդիպել շատերի մոտ, երբ առիթ է եղել խոսելու ներհուն աստվածաբանի և բանիբուն իմաստասերի լեզվական մշակույթի, իմացաբանական ընդգրկումի մասին:

Հայտնի է, որ Հովհաննես Օձնեցին հեղինակ է զգալի թվով՝ աշխատությունների, որոնք ըստ թեմայի, հեղինակի հետապնդած նպատակի, հասցեագրման բաժանվում են մի քանի խմբի: Ըստ այդմ մի կողմից առանձնանում է «Ատենաբանութիւն»-ը, մյուս կողմից՝ «Մաս ընդդէմ պաւղիկեանց» և «Մաս ընդդէմ երևութականաց» գործերը, մեկ այլ կողմից՝ Եկեղեցու կանոնակարգին վերաբերող երկերը, բոլորովին այլ կողմից՝ ծիսական բնույթի գրվածքները, նաև

շարականները և այլն: Այդ երկերը մեզ են հասել ձեռագիր, հետագայում տպագրվել են ընդհանուր խորագրով՝ «Մատենագրութիւնք» (Վենետիկ, 1833, այլև՝ 1953): Դրանցից մեկ-երկուսը տպագրվել են առանձին՝ «Ընդդէմ երևութականաց» (Վենետիկ, 1807), «Խոստովանութիւն անշարժ յուսոյ» (Վաղարշապատ, 1896) և այլն: Օձնեցին կազմել է «Կանոնագիրք Հայոց»-ը (Թիֆլիս, 1914):

Առ այսօր, բացի «Մաս ընդդէմ պաւղիկեանց»-ից, չունենք Օձնեցու երկերի աշխարհաբար թարգմանությունը: Իսկ այլ լեզվով, օրինակ, ունենք: Օձնեցու կարևորագույն երկերն անցյալ դարի կեսերին թարգմանվել են լատիներեն, տպագրվել ոչ միայն մեկ ամբողջության մեջ (Վենետիկ, 1834), այլև դրանցից մեկը՝ «Ընդդէմ երևութականաց»-ը, առանձին (Վենետիկ, 1816): Ընդ որում լատիներեն թարգմանությունները զուգադիր տպագրված են հայերեն (գրաբար) բնօրինակների հետ: Այս գործում անուրանալի ավանդ ունի Մկրտիչ Ավգերյանը: Նա թարգմանությունները, հատկապես «Ընդդէմ երևութականաց»-ը տպագրելիս բնագրերը պատրաստել է առաջաբաններով, բանասիրական մեկնաբանություններով և ծանոթագրություններով:

Հովհաննես Օձնեցու երկերի նոր գրական հայերեն թարգմանությունը խիստ անհրաժեշտ է մեր օրերում: Նկատի ունենք այդ երկերի թե՛ իմաստասիրական, աստվածաբանական ճշմարտացիությունը և թե՛ հայոց մեջ բուն առաքելական հավատքից կատարվող շեղումները, որոնք երևան էին եկել այն ժամանակներում, և այսօր դրանց իմացությունն ու զգուշանալու նպատակով նկատի ունենալը միանգամայն արդիական են:

Իսկ ի՞նչն է պատճառը (եթե այնուամենայնիվ ուզենանք որևէ պատճառ փնտրել), որ դեռևս չունենք մեծ իմաստասերի երկերի աշխարհաբար թարգմանությունը: Կարծում ենք, որ ամենահիմնական պատճառը նրա երկերի իմացությունն, մանավանդ լեզվի և հեղինակային ոճի մեջ պետք է փնտրել: Օձնեցին իր աշխատությունները գրել է ժամանակի գրական հայերենով, իսկ վերջինս գործառական ոճի տեսակետից սերտորեն առնչվում է 5-րդ դ. երկրորդ կեսին մեզանում երևան եկած հունաբան դպրոցի ներկայացուցիչների մշակած լեզվին: Այդ առնչությունը նկատելի է նրա լեզվական մտածողության, հատկապես տերմինաբանության մեջ:

5-րդ դարում, ի թիվս մշակութային նշանակալից այլ ձեռնարկումների, մեզանում բուռն վերելք է ապրում թարգմանական գրականությունը: Դարի 2-րդ կեսին, կապված հունարենից կատարվող թարգմանությունների լեզվական և ոճական առանձնահատկությունների հետ, ձևավորվում և առաջ է գնում թարգմանական մի դպրոց, որի ներկայացուցիչները հունական մշակութային կենտրոններում ստացել էին ամենաբարձր կրթությունը: Ահա այդ ներկայացուցիչներն են, որ հունարենից հայերեն թարգմանելիս խստորեն հետևում էին հունարեն լեզվի մտածողությանն ու ոճին՝ կուտակելով որոշակի ավանդույթ և ստեղծելով թարգմանական առանձին ուղղություն: Բանասիրության մեջ դա կոչում ենք հունաբան դպրոց, իսկ այն լեզուն, որ ինչ-ինչ առանձնահատկություններով կաղապար ուներ հունարենն ու նրա գործառական ոճերը, հունաբան հայերեն: Վերջինս գրաբարի մեջ գործածվում է ոչ միայն հիշյալ ժամանակում, այլև շարունակվում է հետագա դարերում: Եվ այդ դպրոցի ներկայացուցիչներն իրենց իսկ ստեղծած հունաբան հայերենը գործածում են նաև ինքնուրույն աշխատություններ գրելիս: Հունաբան հայերենն ամեն ինչից զատ գիտական լեզու էր՝ իր որոշակի բառակազմությամբ, իմաստաբանությամբ, գիտաբյուղային անվանումներով՝ տերմինաբանությամբ:

Հովհաննես Օձնեցին, իբրև ժամանակի բարձր կրթության հասած մտավորական, իբրև իմաստասեր աստվածաբան, հասու էր ողջ հայերեն գրավոր մշակույթին, մեզանում երևան եկած գիտական ձեռքբերումներին: Երբ կարդում ենք նրա աշխատությունները և մանրազնին տեղեկանում նրա լեզվական մտածողությանը, ապա չենք կարող չկարծել, որ հայոց անձանձիր աշխատասեր եկեղեցականը մասնակի տիրապետելիս է եղել կարևորագույն լեզուներին. կարծում ենք, որ նա չէր կարող հմուտ չլինել հունարենի մեջ, որովհետև գրավոր խոսքում գործածում է այնպիսի հունաբան ոճեր ու արտահայտություններ, որոնք ոչ թե նախկին ավանդույթին հետևելու, այլ լեզվին լիովին տիրապետելու ապացույց են:

Օձնեցու երկերը գրված են իմաստասիրական խորությամբ: Նա իր հայացքներով հարում է իմաստասիրական որոշակի ուղղության. Արիստոտելի հայացքների հետևորդ է իմացության և գոյաբանության հարցերում: Գոյի մեկնաբանման հարցերում Օձնեցին, այնուամենայնիվ, ճիշտ է համարում գաղափարից դեպի իրն ընթացող իմացության ճանապարհը: Բառն, իբրև անվանում, պայմանականորեն է կապվում իրի հետ, նրանց միջև կապը պայմանական է, այսինքն՝ պատահական: Ուստի այդ երկերը թարգմանելիս ամենայն ճշգրտությամբ պետք է հետևել իմացաբանական այդ կողմին, անխաթար դարձնել վերջինիս վերարտադրումը:

Եթե մինչև այժմ չունենք Օձնեցու երկերի աշխարհաբար թարգմանությունը, ապա դրանում ինչ-որ չափով կաշկանդիչ է եղել լեզուն: Բավական դժվար է ըստ ամենայնի հասու լինել Օձնեցու գիտական լեզվին: Սա այն դեպքն է, երբ ենթադրվում է ոչ միայն հայոց լեզվի պատմության խորն իմացություն, այլև հայերենում երևան եկած հունաբան դպրոցի լեզվաշինական գործունեության մասին հստակ պատկերացում: Թարգմանել փորձողն անընդհատ բախվելու է լեզվական փաստերի հետ, որոնք նոր գրական հայերենով չեն վերարտադրվի, եթե ի գործ չդրվեն հիշյալ խորն իմացությունը և հստակ պատկերացումը: Ըստ այդմ՝ Օձնեցու երկերի աշխարհաբար թարգմանության նախապայման ենք համարում թե՛ աստվածաբանական, իմաստասիրական ուղղվածությանն իրազեկ լինելը, թե՛ հայերենի, մանավանդ գրաբարի իմացությունը և թե՛ հունարենի ու հայ հունաբան դպրոցի մասին որոշակի գաղափար ունենալը:

Արդեն ասել ենք, որ անցյալ դարում Վենետիկի Մխիթարյան դպրոցը, հանձին Մկրտիչ Ավգերյանի, ձեռնամուխ է եղել Օձնեցու երկերի լատիներեն թարգմանությանը՝ նպատակ ունենալով ավելի լայն ճանաչողության արժանացնել դրանք: Լատիներեն թարգմանությունները մեծապես կարող են օժանդակել այն գործին, որը կատարվելու է նոր հայերեն թարգմանության նպատակով: Ավգերյանն իր գրչակիցներին յուրահատուկ երանությամբ գլուխ է բերել Օձնեցու երկերի այդ թարգմանությունը: Նա բանասեր թարգմանիչ է եղել, բնագրերի շատ տեղիների համար մեկնաբանումներ ու կարծիք հայտնել, խստորեն հետամուտ եղել իմաստասերի լեզվական ոճին ու մտածողությանը, օգտագործել իր ձեռքին եղած ձեռագրերի տարբեր կարգի տվյալներ: Այդ ամենն այսօր պիտի հաշվի առնվի նոր գրական հայերեն թարգմանության մեջ: Ըստ այդմ էլ՝ մի կողմից անհրաժեշտ է կողմնորոշվել մխիթարյանների մեկնաբանությունների մեջ, նրանց կարծիքին բախվելիս, մյուս կողմից՝ լատիներենի այս կամ այն չափով իմացությունը մեծապես կօգնի այդ թարգմանություններն օգտագործելուն:

Առանց վերը հիշված հանգամանքները հաշվի առնելու, կարծում ենք, գրեթե անհնարին է լինելու Հովհաննես Օձնեցու աշխատությունների նոր թարգմանությունը:

Նկատի ունենալով այդ հանգամանքները՝ ստորև անդրադառնում ենք Օձնեցու «Ընդդէմ երևութականաց» աշխատությանը: Փորձելու ենք ավելի շուտ բանասիրական, քան զուտ լեզվագիտական կամ ոճաբանական հայեցակետից վերլուծելու այդ աշխատությունը: Դա անհրաժեշտ է, որովհետև Օձնեցու գաղափարները ու հայացքները ժամանակին զգալի դեր են խաղացել Հայ Եկեղեցու ապագայի համար: Դրանք խիստ համահունչ են մեր օրերին, արդիական՝ նաև մեր օրերում: Այնուհետև, լեզվական և ոճական առանձնահատկությունների վերհանումով կարելի է նպաստել այն գործին, որն ապագայում ձեռնարկվելու է նրա երկերը թարգմանելու նպատակով:

«Ընդդէմ երևութականաց»-ը Օձնեցին գրել է դավանաբանական պայքարում Հայ Եկեղեցու ճշմարիտ ուղղությունը և միասնությունը պաշտպանելու նպատակով: Այն ուղղված է այն մտածողության դեմ, որ Քրիստոս ճշմարիտ մարդեղությունն ընդունում է ոչ թե իրապես, այլ երևութապես, և այդ մտածողությունն ունեցողները կոչվում են երևութականներ: Նման սխալականությունն ապացուցելու և մերժելու համար Օձնեցին օգտագործում է մի շարք փաստեր՝ քաղված ոչ միայն Եկեղեցու սուրբ Հայրերի, այլև հակառակ կողմում գտնվողների երկերից: Այստեղ ծառանում է օգտագործված աղբյուրների հարցը: Ի՞նչ աղբյուրներ են դրանք և ինչքանո՞վ են օգտագործված Օձնեցու երկում: Ասենք, որ Օձնեցին ձեռքի տակ ունեցել է այնպիսի տվյալներ, որոնք այսօր մեզ հայտնի են: Կան նաև այնպիսիները, որոնք բանասիրական ճշգրտում, որոնում և հավաստիություն են պահանջում:

Հետաքրքիր է այն, որ Օձնեցու օգտագործած և մեզ այսօր հայտնի գրավոր աղբյուրները ներկայացնում են ինչ-ինչ տարբերություններ: Վերջիններս բացատրվում են հետագա գրչագրական փոփոխումներով: Կարելի է մտածել, որ Օձնեցին, ժամանակով մոտ կանգնած լինելով այդ աղբյուրներին, ավելի հարազատ ձևով է դրանք օգտագործում: Այսպես, Օձնեցին իր այս երկում մեջբերում է անում Գրիգոր Լուսավորչից մի հատված՝ քաղված Ագաթանգեղոսից, որտեղ կան բառեր և արտահայտություններ, որոնք վերջինիս հետագա հրատարակություններում բացակայում են: Օրինակ՝ «Առաքեցաւ Աստուած յԱստուծոյ, և առ հոգի և մարմին ի կուսէ» (Վեն., 1954, էջ 62–63)-«Առաքեցաւ Աստուած յԱստուծոյ սուրբ Որդին, առ զմարմին ի կուսէ» (Թիֆլիս, 1909, էջ 184) և «Առաքեցաւ Աստուած յԱստուծոյ Որդի, առ մարմին ի կուսէն» (Ն. տ., էջ 479): Նկատելի է ոչ միայն բացթողում, այլև հավելում: Այս փաստին ժամանակին ուշադրություն է դարձրել Մկ. Ավգերյանը: Այնուհետև՝ «Որպէս և ինքն իսկ ասաց. «Ես նոյն եմ՝ և ոչ փոփոխիմ» (Վեն., 1959, էջ 64)-«Որպէս և ինքն ասէ. «Ես նոյն եմ և ոչ փոփոխեցայ» (Թիֆլիս, 1909, էջ 189):

«Ընդդէմ երևութականաց»-ի տարբեր հրատարակություններում երբեմն նկատվում են բնագրի բացթողումներ: Այսպես, հետևյալ հատվածը չենք գտնում Վեն., 1833 և 1953 թթ. տպագրություններում, թեև կա Վեն. 1807, այլև՝ լատիներեն զուգադիր (Վեն. 1816 և 1834 թթ.) տպագրությունների մեջ. «...բարձցէ ընդ նմին և զնա՝ զորմէ ասեսմ. և հարկ է կամ ստութեան և կամ այլոյ ասել գոյացութեան գիրն: Եւ զիա՞րդ մարդ. և որդի մարդոյ, և անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց. և ամենայնիւ նման մեզ՝ բաց ի մեղաց: Կամին ծանօթանալ պտղոյն. «չորիւք այսոքիւք անստերիւրօղ խորհրդով առ հմտութիւն իրին...»: Այնուհետև, ՆՀԲ-ում (հ. 2, Վեն., 1837, էջ 807) *վերածգել* բառահոդվածի տակ հղում կա Օձնեցու

հիշյալ հատվածին, որտեղ բերված է վերջինիս չորիւք այսոքիւք անստերիւրող խորհրդով առ հմտութիւն իրին *վերածգեալ ածցիս»* մասը: Նման դեպքերում կարևոր է նկատի առնել հեղինակի բնագրի բոլոր տպագրությունները, ավելին՝ դրանց համեմատությունը մեզ հասած ձեռագրերի հետ: Այս տեսակետից ևս Հովհաննես Օձնեցու երկերը պահանջում են որոշակի բանասիրական և բնագրագիտական աշխատանք:

Այնուհետև, «Ընդդէմ երևութականաց»-ը աստվածաբանական աշխատություն է, որ ներկայացնում է իմացաբանական որոշակի համակարգ: Նրանում երևան են եկել այնպիսի հասկացություն նշանակող բառեր՝ տերմիններ և գիտական անվանումներ, որոնք այսօր պետք է հաշվի առնվեն պատմականորեն: Այս տեսակետից բավականին հետաքրքիր են Օձնեցու գործածած շատ հասկացությունների անվանումները: Եթե դրանց վերահասու չլինենք ճիշտ թարգմանելիս, ապա շատ դեպքերում կարող է տեղի ունենալ հեղինակի ըմբռնումների խաթարում, հիշյալ ճիշտ համակարգի անճիշտ մեկնաբանում: Օրինակ՝ Օձնեցին օգտագործում է *դէմ* բառը, որը պիտի թարգմանվի *անձ* բառով՝ ի հակադրություն *անձն* բառի, որ նշանակում է *հոգի*՝ ելնելով դրանց իմացաբանական նշանակությունից, իբրև համարժեք հուն. προζωπον, լատ. persona, այլև՝ հուն. ψυχη կամ πνεῦμα, լատ. anima. «Իսկ ի գերազանց և ի սքանչելի միաւորութենէն ոչ ինչ է արգել միութեամբ՝ զամենայնսն խոստովանել ի Քրիստոս, մի *դէմ*, մի *անձն* և մի նոր բնութիւն» (Վեն., 1959, էջ 64): Ըստ այսմ պիտի թարգմանել հեղինակի կիրառած *անձնանալ* «հոգի առնել, գոյավորվել», *անձնաւոր* «հոգի ունեցող», *անձնաւորական* «գոյացական», *միանձնականութիւն* «միասնական հոգի» և այն բառերը, որոնք իմացաբանական նույն հիմքով են պայմանավորված: Այդ և այդ կարգի շատ բառեր ու տերմիններ, երբ համեմատում ենք «Նոր հայկազյան բառարանի» տվյալները, Օձնեցու կերտած այն բառերից են, որոնք կազմված են հունարենի բառակազմության հետևողությամբ, սակայն հայերենի միջոցներով:

Մյուս կարևոր հանգամանքը, որը սերտորեն առնչվում է վերը նշվածին, Օձնեցու երկում տեղ գտած նորակազմություններին է վերաբերում: Մեծ իմաստասերը գործածում է բառեր ու տերմիններ, որոնք ոչ միայն նախկինում հայտնի էին, այլև նորություն են: Եվ դա բնական է, որովհետև ամեն մի իմացություն, երբ հիմնված է լինում ստեղծված ավանդույթի վրա և ճանապարհ է բացում դեպի հետագա, չի կարող աչքի չընկնել իր լեզվական նորությամբ ու թարմությամբ: Վերջին հատկանիշներն են, որ ենթադրում են նոր գաղափարի և հայացքի նույնարժեք ձևակերպում համապատասխան բառերով, գիտական անվանումներով և արտահայտություններով: Վերջիններս Օձնեցու երկում ձևակերպվում են հմտորեն, ընդհանուր համակարգի մեջ: Ըստ այդմ զգալի տեղ են գտնում նորակազմ բառերը: Դրանք բավական շատ են՝ սկսած *երևութականից* մինչև *անեղագոյն, անմարմնաբար, անչարաբարոյական, անպատկառացոյց* («անամոթ»), *անտարակարծ, անստերիւրող* («անխոտոր»), *առանձնաւորիմ, առաւելաշնորհ, ապաբանութիւն, թերաբանել, խանձարրապատեմ, կաթնաբոյծ լինել* («կաթնակեր լինել»), *կուրաշաւիղ, կիսաբաժ, մարմնաձևապէս, չարապաշտութիւն, շարաբարձումն, հոգևորութիւն, որոմնացանու* («չարի սերմ ցանող»), *ուղղասացութիւն, ներլինելութիւն* («լինելություն»), *իրաւացուցանեմ* («ճշմարտել») և այլն: Դատելով ՆՀԲ-ի տվյալներով՝ նման նորակազմությունների թիվը միայն այս երկում հասնում է տասնյակների, որ վկայում է հեղինակի բառակերտման միտումը՝ նոր հասկացություններ նշանակելու նպատակով:

Քիչ չեն նաև այն բառերը, որոնք գրաբարի հիշյալ բառարանում վկայակոչվում են նախ Օձնեցու, այնուհետև՝ հետագա հեղինակների անունով: Օրինակ՝ ՆՀԲ-ում նշվում է, որ *կեղակարծ* բառը նախ գործածել է Օձնեցին, հետագայում՝ ուրիշ հեղինակներ. «Զարմանամ ընդ այսպիսի *կեղակարծ* և գայթ ի գայթ խոստովանութիւն» (էջ 62): Նման բառերը Օձնեցու երկում բավականին շատ են՝ *ամբաստանական, թերարանել, գեղեցկակերտեմ, խեղայեղ, կիսաբաժ* («կիսով չափ»), *ներհականայ* («ներհակ է, հակառակ է»՝ իրրև միադիմի բայ), *ոչնաձևաբար* և այլն: Այստեղ հետաքրքիր է այն, որ Օձնեցին երբեմն օգտագործում է իր ուսուցչի՝ Թեոդորոս Քռթենավորի կազմած բառերը (օրինակ՝ *անպարիմանայի*), ինչպես նաև իրենից առաջ գործածված այս կամ այն բառի փոխարեն ինքն է կազմում նորը (օրինակ՝ *փոխաբուսանիմ* բառը «վերաճել» իմաստով Օձնեցին գործածում է ժամանակին Ստեփանոս Սյունեցու օգտագործած *փոխադրեմ, փոխարկեմ* բառերի դիմաց): Դժվար չէ նկատել, որ բառերի նման գործածությունը, իբրև ուրույն հասկացության, գաղափարի կրող կամ արտացոլում, ունի ոչ միայն իր ավանդույթը, այլև հետագա ընդունելությունը՝ թե՛ իմացաբանական և թե՛ մշակութային-հոգևոր առումով:

Այս վերջին առումով բավական հետաքրքիր է նախկինում գործածված բառի նոր իմաստային կիրառությունը: Այս դեպքում Օձնեցու թե՛ «Ընդդէմ երևութականաց»-ը և թե՛ առհասարակ մյուս գործերն աննման փաստեր են տրամադրել գրաբարի բառարաններին: Բառի, տերմինի նոր իմաստով կիրառվելը վկայություն է թե՛ հեղինակի ընդհանուր լեզվաիմացության և թե՛ այն բանի, թե նա ինչ հայացքների և գաղափարների շարունակող է զարգացման նոր պայմաններում: Հայ Առաքելական Եկեղեցու մեծագույն պաշտպան և նրա հավատքի պայծառ մունետիկ Հովհաննես Օձնեցին իր այս երկում բազմիցս գործածում է ավանդաբար պահպանված բառեր ու տերմիններ՝ դրանց մեջ դնելով իր ժամանակի ըմբռնումները: Այսպես են գործածվում, օրինակ, *երկնել* («խորհել»), *ջախջպխ* («կցկտուր, փուտ, անպիտան»), *անգո* («ունայն, դատարկ»), *շարադրութիւն* («խոսք»), *աղամոդիմ* («խոտորվել, մոլորվել, տատանվել»), *խոհականութիւն* («միտք, իմաստ»), *հոգևորութիւն* («բանական հոգի առնելը, հոգիանալը»), *արտորոշեմ* («զանազանել, որոշել»), *առասպելական* («աղճատված, բանդագուշական»), *ապականութիւն* («անցում գոյությունից չգոյության, հակառակ ծնունդի կամ լինելության»), *բաղկանայ* («կայանալ, հաստատվել»), *տրամադրութիւն* («հակվածություն»), *իրաւացուցանեմ* («ստուգել, ճշմարտել, հավաստի դարձնել») և այլն:

Բառերի, իբրև հասկացության կրողի և լեզվի պատմության գոյացման լավագույն միջոցի, գործածության առումով նկատելի է նաև այն, որ դրանք ոչ միշտ են բառարաններում արձանագրվում՝ իբրև լեզվի որոշակի շրջանի փաստ: Այսպես, Օձնեցին իր այս երկում օգտագործում է *ղօղակատել* («խուսափել, պառակտել») բառը (*ղօղակ* «լողակ, լող տալով ազատվող» և *ատել* «բաժանել, կիսել»), որը չենք գտնում ՆՀԲ-ում (հ. 2, էջ 164): Միշտ է, այդ բառը գործածվել է հայ հին գրականության մեջ, հասել մինչև նոր գրական հայերենի փուլը (նկատի ունենք, օրինակ, Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» լինելը), սակայն սկզբնաղբյուրը մնում է չնշանակված. հնարավոր է, որ բառը գործածվել է մինչև Օձնեցին: Այդուհանդերձ, ղօղակատել բառի գործածության ժամանակը ճշգրտվում է «Ընդդէմ երևութականաց»-ի հիման վրա այնքան ժամանակ, քանի դեռ այլ, ավելի հին աղբյուրներում նրա հնարավոր գործածությունը չի պարզվել: Այսպես նաև լեզվական այլ ձևերի դեպքում: Օրինակ, Օձնեցին «Ընդդէմ երևութականաց»-ում գործածում է *նս*

դերանվան մի ձև՝ *ի մէնջից*, որ արտասովոր է հին գրական հայերենի համար. «Եւ կամ *զորս ի մէնջից*, աստի Հոգին սուրբ զարթոյց՝ լինել զկնի առաջնոյն լուսաւորիչն» (էջ 81)– «Եվ կամ *որ մեզանից* այս Սուրբ Հոգին արթնացրեց՝ լինելու լուսավորիչ առաջինի հետևից»: Այստեղ նման ձևի գործածումը նպատակ ունի արտահայտելու «մեր միջից» կամ «մեզանից» իմաստը՝ իբրև մասնավորեցում, որ առնվում է ընդհանուրից, ամբողջից: ՆՀԲ–ում (հ. 2, էջ 259, 1–ին սյունակ) հատուկ նշում կա դրա մասին՝ այն բերելով իբրև առանձին բառահոդված: Ըստ այդմ՝ *որ ի մէնջից*–ը նշանակում է «որոնք մեր միջից են», ուստի թարգմանել կարելի է *մեզանից* բառով, որ պարունակում է հիշյալ նշանակությունը: Նման ձև կիրառում է միայն Օձնեցին:

Խոսելով Հովհաննես Օձնեցու կերտած նոր բառերի և տերմինների մասին՝ վերը նշեցինք, որ դրանք հաճախ կազմվում են հունարենի հետևողությամբ: Այստեղ հարկ ենք համարում ավելացնելու, որ ըստ այդմ ունենում ենք հայերեն այնպիսի նոր բառեր և տերմիններ, որոնք լեզվագիտական տերմինաբանությամբ ասած՝ պատճեռումներ են: Եվ հեղինակն այդ բնագավառում ներդրել է որոշակի ջանքեր. փոխանակ այս կամ այն բառն ինքնաբերաբար օտար լեզվից վերցնելու և իբրև փոխառյալ բառ գործածելու, ինքն է հմտորեն կերտում նման բառերի հայերեն համարժեքները: «Ընդդէմ երևութականաց»–ում զգալի թիվ են կազմում նման բառերը, և դրանց բառակազմական կաղապարները հիշեցնում են հունարենի մեջ եղած այս կամ այն բառը և տերմինը: Այդ մոտեցումը գալիս է ընդհանուր հասկացության ամբողջական, ավելին՝ նույնական ձևով անվանելու ձգտումից: Այսպես, Օձնեցին գործածում է *ներլինելութիւն* բառը, որն ունի նույն իմաստը, ինչ հայերեն *լինելութիւն* («լինելը, ծնունդ») բառը: Վերջինս Օձնեցու նորակերտ բառերից է՝ հունարենի հետևողությամբ *ներ* նախածանցի հավելումով, որն իհարկե որոշակի հասկացական երանգավորում է տալիս բառիմաստին: Ըստ ՆՀԲ–ի՝ *ներլինելութիւն* բառը գործածում է միայն Օձնեցին՝ իր այս երկում. «Քանզի ապականութիւն ներլինելութեանն ներհականալ, և ներհակքն ոչ կարեն համանգամայն ի միում և ի նոյն ժամանակի բաղկանալ» (էջ 82)– «Որովհետև ապականությունը *լինելությանն* է հակառակ, իսկ նրանք, որ հակառակ են, չեն կարող միանգամից մեկում կամ նույն ժամանակում հաստատվել»:

Այնուհետև «Ընդդէմ երևութականաց»–ում նկատելի է հունարենին հետևելու մեկ այլ իրողություն: Դա տեղի է ունենում մեկ այլ պարագայում, այսինքն՝ խոսքի կամ նախադասության մակարդակում: Նկատի ունենք ոճաբանական այն երևույթները, որոնք դեռևս 5–րդ դարում հունարենից կատարված թարգմանություններում զգալի տեղ ունեին: Այն հունաբան հայերենից եկող ազդեցությունն է, և Օձնեցին հաճախ է դիմում նման երևույթների օգտագործմանը: Այս երկում դրանք բավական ցայտուն ձևով են դրսևորվում, և նոր գրական հայերեն թարգմանության մեջ այն պիտի՝ լիովին հաշվի առնվի:

Դրանցից անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալները:

Հունարենում տարածված երևույթ է նախադասությունը կառուցել ոչ թե ուղղական հոլովով դրված ենթակայով և դիմավոր բայով արտահայտված ստորոգյալով, այլ այնպիսի բառակապակցությամբ, որի մեջ ենթական դրվում է տրական հոլովով, իսկ ստորոգյալը՝ անորոշ դերբայով: Հունաբան դպրոցի կատարած հայերեն թարգմանություններում, ինչպես նաև այդ ոճին հետևող հեղինակների ինքնուրույն երկերում այդ երևույթը նույնպես տարածված էր. գրաբարում դա կոչվում էր տրական հոլովը անորոշ դերբայի հետ (dativus cum infinitivo) կապակցություն: Օձնեցու երկերում ևս, հատկապես «Ընդդէմ երևութականաց»–ի մեջ, զգալի չափով գործածվում են կապակցությունները:

Օրինակ՝ «Ցոյժ տեսչալի էր ինձ և փափագելի *ոչ այլոց* գիս, և *ոչ* զայլս *ինձ լինել* ի թշնամութեան» (էջ 61) – «Ծատ էի ուզում և փափագում, որ *ուրիշներն* ինձ և *ես* ուրիշների հետ թշնամության մեջ *չլինեի*»: «Ահաւասիկ յայտնի բանիւ երևեցոյց սուրբ հայրս՝ *ոչ* մասունս *գոյ մեղաց և ապականութեան*, որ ի մեզ գտանին կիրքս» (էջ 88) – «Ահա սուրբ հայրը հայտնի խոսքով ցույց տվեց, թե *մեղքերը և ապականությունը* մաս *չունեն*»: Այս նախադասությունների ընդգծված անդամները շարահյուսական հատուկ կապակցություն են, որոնք նոր գրական հայերենում պիտի թարգմանվեն դիմավոր բայով արտահայտված ստորոգյալով և ուղղական հոլովով դրված ենթակայով նախադասությամբ:

Այդպես և հանդիպում են նախադասություններ, որոնցում առկա է մեկ այլ տիպի կառուցվածք, այն է՝ ենթական դրված է լինում հայցական հոլովով, իսկ ստորոգյալը՝ անորոշ դերբայով. գրաբարում դա կոչվում էր հայցական հոլովը անորոշ դերբայի հետ (accusativus cum infinitivo) կապակցություն կամ կառուցվածք: Օձնեցու սույն երկում այդ տիպի կառուցվածքները, ի համեմատություն նախորդ տիպի կառուցվածքների, ավելի հաճախակի են գործածվում: Օրինակ՝ «Զոր դու և ոչ զմի զոք յայդցանէ կարես առնուլ յանձն. յաղագս որոյ *զնոյն* ինքն ընդեան *զմարդկային կազմածս մեղս* ասացեր *գոյ*» (էջ 87) – «Որ և դու դրանցից ոչ մեկը չես կարողանում քեզ վրա վերցնել. որի պատճառով ասացիր, թե *նույն մարդկային կազմությունն* ինքնին *մեղք է*»: «*Զբնական լինել* ի մարմնի *զպատահումն* թուղացոյց» (էջ 89) – «Թողեց (թույլ տվեց), որ *բնական կիրքը լինի* մարմնում» և այլն:

Շարահյուսական կառուցվածքի առումով հետաքրքրական է նաև հունաբան ոճի հետևողությամբ Օձնեցու գործածած մեկ այլ երևույթ: Նկատի ունենք այն դեպքը, որ գրաբարում կոչվում էր վերացականը թանձրացականի փոխարեն (abstractum pro concreto), այսինքն՝ նախադասության գոյականական անդամի լրացումը ածականով դրվելու փոխարեն գործածվում է վերացական (–*ություն* ածանցն ունեցող) գոյականով: Գրաբարում դա բավական տարածված երևույթ էր (օրինակ՝ *բաժակ դառնութեան* – դառը բաժակ, *բազմութիւն մետից-բազում, շատ մետեր* և այլն): Այս երևույթի մեջ հատկանշականը այն է, որ առարկայի կոնկրետ հատկանիշը վերացարկվում է իր անվանումային կողմով (հատկանշումը վերածվում է անվանման): Օձնեցու իմաստասիրական երկերում նման երևույթի հանդես գալը պայմանավորված է նրա խոսքի վերացարկման, ընդհանրացման հանգամանքով: Օրինակ՝ «Զի թէպէտ և շատ ջանացար կուրաշաւիղ իմն արահետիւք ծածկել և թագուցանել զհաւաքեալ ի քեզ *զդառնութեան մաղձ*, այժմ յաստուածայնոյն բռնադատեալ յանկարկութենէ տեսչութեանն՝ ի վեր բխեցեր» (էջ 67)– «Որովհետև թեպետ և շատ ջանք թափեցիր ինչ-որ կուրաշավիղ արահետով ծածկել և թաքցնել քո մեջ հավաքած *դառը մաղձը*, այժմ նախախնամության աստվածային հայացքից բռնադատվելով դեպի վեր ես հորդում»: «Զի և սուրբ հարքն՝ *բարեփառութեան հիմնացեալ հաւատով*, աներկեան և անտարակարծ խոհականութեամբ զեն անվթարելի զերկոսին զսուսա ընդ ինքեանս բարձեալ բերէին ըստ պիտոյիցն իրակութեան» (էջ 70) – «Քանի որ նաև սուրբ Հայրերը, *ուղղափառ հավատի* վրա հենվելով, աներկբա և հավատի իմացականությամբ այս երկուսն իրար հետ անվթար զենքի վերածելով դնում էին ըստ գործի պիտանիության» և այլն:

Այս վերջին երևույթի հետ դույզն-ինչ հարաբերակից է (թեև չի նույնանում) այն, որ բաղադրյալ ստորոգյալի ածականական մասը կարող է դրվել իբրև վերացական գոյական: Օրինակ՝ «Եւ եթէ լոկ առանձինն քանիցին, կարիք կոչին. իսկ չափով և ժամանակի՝ *օգնականութիւն* են բնութեանս» (էջ 87) – «Եվ եթե

դրանք սոսկ առանձին քննվեն, կկոչվեն պետքեր, իսկ չափի մեջ և ըստ ժամանակի՝ մեր բնությանը *օգնական* են»: Ուրեմն բառային մակարդակում ևս Օձնեցին որոշակիորեն հետևում է հունաբան հայերենի սկզբունքներին՝ կապված ոչ միայն բառերի ածանցման, այլև պատճենումային բառաբարդման հետ: Այս երևույթը ժամանակին արգասավոր է եղել, ունեցել է հետևորդներ: Եվ այդ ճանապարհով է նաև հարստացել մեր լեզուն, հատկապես նրա բառապաշարը:

Մինչև այժմ խոսում էինք Օձնեցու «Ընդդէմ երևութականաց»-ի մասին՝ շեշտը դնելով նրա իմացաբանական կողմն արտացոլող լեզվական չափանիշների վրա: Դա հիմնականն է, էականը, որին ներտորեն առնչվում է ճարտասանական (այստեղ՝ բեմասացական) կողմը, որն էլ իր արտացոլումն է գտնում մեծ իմաստասերի լեզվական ոճի մեջ: Եվ այդ երկուսը ներտորեն ագուցված են միմյանց, դրանք լրացնում են իրար և ստեղծում մեկ կուռ ամբողջություն:

«Ընդդէմ երևութականաց»-ի ճարտասանական կողմն անպայման պիտի հաշվի առնվի, երբ հարկ լինի նրա նոր գրական հայերեն թարգմանությունը: Այն ունի երկու կարևոր դրսևորում: Առաջինը վերաբերում է հարցերի քննարկման մեջ հակառակորդի կողմնորոշման սխալականության բացահայտման ու բացառման պարագայում ի գործ դրվող լեզվական և ոճական միջոցներին ու հնարներին: Իսկ մյուսը պայմանավորված է հեղինակային խոսքի այլ կարգի յուրահատկություններով:

Դիմելով իր ընդդիմախոսներին՝ Օձնեցին գործածում է բառեր և արտահայտություններ, տալիս ձևակերպումներ, որոնք դիպուկ են, պատկերավոր, և դրանցում առկա է անհակասականությունը, խորությունը: Գործածվում են բնութագրող բառեր ու բառակապակցություններ, որոնք ըստ էության իմաստասերի ոճն են ցույց տալիս. օրինակ՝ *խանձարրապատիմ* («խանձարուրով պատվել», այսինքն՝ «անհաս իմացություն ունենալ»), *կաթնաբոյծ լինել* («կաթնակեր լինել»), *աղամողիմ* («մոլորվել, տատանվել»), *անպատկառացոյց* («անպատկառություն ցուցաբերող»), *չարափառ* («մոլորյալ, աղանդավոր»), *դժոխաբանել* («դժոխային խոսք ասել, հայհոյել»), *որոմնացան* («չարի սերմ ցանող»), *գայթ ի գայթ* («անհաստատ, խախուտ») և այլն:

Հեղինակային խոսքի այլ կարգի յուրահատկությունն են «Ընդդէմ երևութականաց»-ում համեմատությունների, փոխաբերությունների, թևավոր խոսքի օգտագործումը: Օրինակ «Ըստ նմին և դուք երկուցեալք յերկուցն ասել բնութեանց՝ *ի Պանդորոսին փախուցեալ անկանիք յիմարութիւն*» (էջ 63) – «Նույն ձևով և դուք երկու բնությունից ասելուց վախեցածներդ *Պանդորոսի մոտ փախչելով ընկնում եք հիմարության մեջ*»: «Մի զմին ասելով՝ *զբնութեանցն խցանել կամակորեսցուք զաղբերս*, և մի լսելով անտի զերկախումսն՝ *պատառել կամելով զմիաւորութեանն պատմուճան*» (էջ 65) – «Ոչ կամակոր լինենք՝ մեկն ասելով, *խցանելու բնությունների աղբյուրները*, ոչ էլ՝ այն երկուսը միասին ասելիս, *կամենալով պատռել միավորության պատմուճանը*»: «Եւ զայդ այդպէս *դաւղակատեղովդ՝ Արիոսի եղեալ գտանին չարապաշտութեանն զուգաձայն*» (էջ 69)- «Եվ դու դա այդպես *պառակտելով՝ Արիոսի չարապաշտությանը ձայնակից կլինես*»: «Արդ զի՞արդ դու մոլորեցար՝ կամ ոչ իսկ ասել դէմ և առանձնաւորութիւն երեքանձնական զօրութեանն, և կամ ասել՝ *չարաչար ասել ընդ Լիբէացւոյն ելանել սուր*. փոխանակ երից դիմաց և առանձնաւորութեան՝ մի ասել դէմ և առանձնաւորութիւն» (էջ 79)- «Արդ, դու ինչու՞ մոլորության մեջ ընկար՝ թե երեքանձնյա այն զորությունը չճանաչելով անձ և ինքնություն, թե ճանաչելով՝ *շատ վատ ճանաչեցիր, լիբիացու դուրս քաշած սրի հետ*, երեք անձ և ինքնության

փոխարեն մեկ անձ և ինքնություն ճանաչել» և այլն: Նման երևույթները շատ են և պահանջում են մանրակրկիտ մոտեցում և ըստ այդմ թարգմանություն:

Հովհաննես Օձնեցու «Ընդդէմ երևութականաց»-ը և առհասարակ մյուս երկերը մեր ոչ այնքան վաղ անցյալի արտացոլումն են թե՛ իմացականության և թե՛ լեզվի առումով: Այսօր դրանք ըստ ամենայնի հարազատ են, արդիական, ուստի մեր մտավոր զարգացման համար ունեն որոշակի կարևորություն:

Ժամանակը գնում է առաջ, ժամանակն իր հետ բերում է իր գտածն ու ընտրածը: Ժամանակը մեզ ցույց է տալիս իր բերածը և տրամադրում այն իմանալու, որպեսզի մեզանից վերցնի և իր մեջ առանձնացնի ամենակարևորն ու պիտանին: Հովհաննես Օձնեցու հանձնածը ժամանակին եկել և հասել է մեզ, ուրեմն մեր օրերի ընթացքով հարկ կա հասկանալու այդ բերածը, ըստ այդմ նաև հարստացնելու ժամանակին հանձնելիքը: Նոր գրական հայերեն թարգմանել Օձնեցու երկերը, որպեսզի ավելի խորն ընթանանք դրանք, որպեսզի ավելի լավ հասկանանք մեր հոգևոր անելիքը, ժամանակին հանձնելիքը:

Մեր հավատքը՝ մեզ իմացական սյուն, մեր սուրբ Հայրերի արածը՝ սյուն պահող ուժ:

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Ո՞Վ Է «ՁՈՐՍ ԸՍՏ ՊԱՏԿԵՐԻ ՔՈՒՄ» ՇԱՐԱԿԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Հայ միջնադարյան մատենագրության մեջ հայտնի են, այսպես կոչված, շարականագիրների ցուցակները, որոնք սովորաբար կցվել են Շարականոցներին կամ զետեղվել ուսումնական-կրթական նպատակներին ծառայող ժողովածու, Ոսկեփորիկ և «Գիրք հարցմանց» մատյաններում: Այդ ցուցակներն, անշուշտ, չեն վրիպել մեր հին և նոր շարականագետների ուշադրությունից (Ավետիքյան, Տնտեսյան, Ամատունի, Աբեղյան, Կոմիտաս, Աթայան, Թահմիզյան և ուրիշներ): Ցուցաբերելով քննական մոտեցում և ներդրավելով այլ մատենագրական աղբյուրներ, ինչպես նաև երաժշտաոճական վերլուծության մեթոդներ, նրանք կարողացել են ընդհանուր գծերով վերստեղծել շարականի պատմական զարգացման պատկերը, ճշտումներ կատարել շարականների հեղինակների վերաբերյալ: Սակայն առ այսօր էլ այդ ցուցակներում առկա են առանձին կետեր, որոնք կարոտ են լրացուցիչ հետազոտման և լուսաբանման: Այդպիսի կետերից է Գրիգոր Մագիստրոսի անվան հետ կապված հիշատակությունը:

Բագրատունյաց հարստության շրջանի հայ մշակույթի փայլուն ներկայացուցիչն է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, որի գրական ժառանգությունը շարունակում է գրավել ուսումնասիրողներին: Նա եղել է Անիի մշակութային մթնոլորտի վրա ներազդած այն գործիչներից, որոնք հանդիսացել են զարգացած ավատատիրության շրջանը բնորոշող նոր մտավոր հոսանքի արտահայտիչները:

Գրիգոր Մագիստրոսի բազմակողմանի ստեղծագործական գործունեությունն ընդգրկում էր նաև երաժշտական արվեստը: Նա հայտնի է եղել իբրև շարականագիր և տաղասաց: Ցավոք, այդ մասին պատմող ուղղակի տվյալները չափազանց սակավ են: Սակայն Գրիգոր Մագիստրոսի նամակներում և «Մեկնութիւն քերականին» երկասիրության մեջ ցրված երաժշտությանը վերաբերող ասույթները վկայում են նրա քաջատեղյակ և նախանձախնդիր լինելը թե՛ վանքերում ավանդվող և զարգացող հոգևոր երգարվեստի, թե՛ երաժշտության տեսության և թե՛ իր ժամանակվա զուսանական արվեստի կենդանի պրակտիկայի մեջ: Ուստի հետազոտական չափազանց գրավիչ խնդիր էր դառնում Գրիգոր Մագիստրոսի սեփական երաժշտական հեղինակությունների հարցը: Մի շարք ձեռագիր Գանձարաններում պահպանվել է նրա անունով հասած Հովհաննես Մկրտչին նվիրված «Կարապետ սուրբ հաւատոյ» խաղագիր տաղը: Այն օժտված է «Կարապետին տաղ» ակրոստիքոսով: Հավանաբար տաղը հորինվել է Սուրբ Կարապետի ժամատան կառուցման առիթով, ինչպես ենթադրում է

Մ. Ջամչյանը, հենվելով Արիստակես Լաստիվերցու, Ներսես Շնորհալու և Վարդան Արևելցու հազորդած տվյալների վրա[1]: Մեզ ծանոթ գրչագրերից երեքի մեջ հեղինակի մասին կան շատ որոշակի ցուցումներ, այսպես. «Տաղ Յովանու ի Գրիգորէ Մագիստրոսէ»[2], «Տաղ ի Մագիստրոս իշխանէ եւ պարօն Գրիգորէ»[3] և «Տաղ ի Մագիստրոսէ»[4] ձևերով: Ցավոք, տաղի մեղեդին դանձարանային տասնյակ այլ երաժշտաբանաստեղծական միավորների պես չի հասել մեր օրերին:

Արդեն այն փաստը, որ Գրիգոր Մագիստրոսը հիշատակվում է շարականագիրների միջնադարյան ցուցակներում, ինքնին ուշագրավ է: Եկեղեցին բացառիկ դեպքերում է կանոնակարգել աշխարհիկ հեղինակների կողմից ստեղծված հոգևոր երգերը: Ահա այդ հազվագյուտ դեպքերից է, ըստ շարականագիրների ցուցակների, Գրիգոր Մագիստրոսին վերագրվող խաչի նավակատյաց ե օրվա «Զորս ըստ պատկերի քում» ԳՁ ողորմյան: Բոլոր ցուցակների կազմողները (բացառությամբ այն հեղինակների, որոնք հատուկ չեն անդրադարձել այդ շարականին, ինչպես Սարգիս երեցը և Առաքել Սյունեցին) միահամուռ են նրա հեղինակի հարցում, այսպես. Գրիգոր Տաթևացի. «Զորս ըստ պատկերին՝ Գրիգոր Մագիստրոս»[5], Ստեփանոս Զիգ Զուղայեցի. «Գրիգոր Մագիստրն՝ զԸստ պատկերին»[6], Հակոբ Սսեցի. «Խաչ կենարարը՝ Մագիստրոս, Զորս ըստ պատկեր նորա ի Հոս»[7], անանուն խմբագրություն. «Գրիգոր Մագիստրոսն՝ զՁորս ըստ պատկերին, զոր այլք Իսահակայ Ձորափորեցւոյ տան»[8]:

Չնայած դրան, շարականագիտության մեջ վաղուց ի վեր, կարծես, հաստատվել էր այն կարծիքը, որ տվյալ շարականը ոչ թե Գր. Մագիստրոսի, այլ 7-րդ դարի իշխան Աշոտ պատրիկ Բագրատունու գործն է: Այդ տեսակետը հիմնված է Վարդան Արևելցու «Պատմությունից» քաղված միակ հիշատակության վրա, որը լայն տարածում է ստացել Գ. Ավետիքյանի հեղինակության շնորհիվ[9]: Նույն տեսակետը եռանդուն կերպով պաշտպանել է և Կ. Կոստանյանցը՝ այդ հարցին նվիրելով առանձին հոդված, որին կանդրադառնանք քիչ ավելի ուշ[10]: Այնինչ Մ. Աբեղյանը հետևել է շարականագիրների միջնադարյան ցուցակների ընձեռած տվյալներին՝ ըստ երևույթի, արժանահավատ համարելով Գրիգոր

---

[1] Տես Մ. Ջամչյան, Պատմություն Հայոց, հ. Բ, Երևան, 1984, էջ 926:

[2] Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. 8188, 1480 թ., թղ. 240 ա:

[3] Նույն տեղում, ձեռ. 474, 1474 թ., թղ. 213 ա:

[4] Նույն տեղում, ձեռ. 423, 1742 թ., թղ. 171 բ[2]:

[5] Տես Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ LXVII:

[6] Նույն տեղում, էջ LXXI:

[7] Նույն տեղում, էջ LXXIV:

[8] Նույն տեղում, էջ LXVIII:

[9] Տես Գ. Ավետիքյան, Բացատրություն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 521–524:

[10] Կ. Կոստանյանց, Հին հիշատակք, «Արարատ», 1897, օգոստոս, էջ 289–343:

Մագիստրոսին վերաբերող տեղեկությունը[11]: Մեր օրերում երաժշտագետ Ն. Թահմիզյանը գիտական շրջանառության մեջ դրեց այն պնդումը, թե Գրիգոր Մագիստրոսը հեղինակել է ոչ թե Խաչի նավակատյաց Ե օրվա վերոհիշյալ ողորմյան, այլ նույն կանոնակարգի Դ օրվա «Խաչն կենարար» Բկ օրհնությունը[12]: Նույնը կրկնեց նաև շարականների ժանրին նվիրված իր ուսումնասիրության մեջ գրականագետ Գր. Հակոբյանը՝ ավելացնելով, որ այդ փաստը պարզապես գրիչների անփութության հետևանքով սխալ է արձանագրվել[13]: Սակայն այս պնդումները նորություն չեն պարունակում, հեղինակներից ոչ մեկն այս կապակցությամբ որևէ աղբյուր կամ փաստարկ չի բերում՝ կուրորեն հետևելով Ավետիքյանի տեսակետին:

Բնական է, որ տվյալ հարցին անդրադառնալիս, նախ և առաջ դիմեցինք Գր. Մագիստրոսի «Թղթերի» առաջին հրատարակող և գիտակ, նրա կյանքին և գրական ստեղծագործությանը նվիրված բովանդակալից առաջաբանի հեղինակ Կ. Կոստանյանցի հոդվածին: Այս հոդվածում Կոստանյանցը անդրադարձել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գանձարանում պահվող Ամենափրկիչ կոչվող բյուզանդական սրբապատկերին, որն, ըստ ավանդության, Հայաստան է բերվել 7-րդ դարում: Այդ սրբապատկերի պատմությանը և նրա հետ կապված հիշյալ շարականի ստեղծմանն առնչվում են երկու մեծատոհմիկ իշխաններ՝ Աշոտ Պատրիկ Բագրատունու և Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անունները: Կոստանյանցի հոդվածի ողջ պաթոսը, վկայակոչված մատենագրական աղբյուրները հանգում են մի բանի՝ «Զորս ըստ պատկերի քում» շարականի հեղինակն է Աշոտ Պատրիկը:

Ուշադիր հետևենք հոդվածում արծարծված աղբյուրներին՝ դիմելով նաև այլ՝ մեզ ծանոթ բնագրերի տվյալներին:

Պատկերամարտության շրջանին պատկանող Ամենափրկիչ սրբապատկերի Հայաստան բերելու ամենավաղ հիշատակությունն առկա է 8-րդ դարի պատմիչ Ղևոնդ վարդապետի մոտ, որը հայտնում է Աշոտ Պատրիկի մասին. «Եւ չիներ զեկեղեցին Դարիւնից յիւրում ոստանին, և զկենդանագրեալ զպատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտից արևու մեծասքանչ զօրութեամբ՝ հանգուցաներ ի նմա, և նորա անուամբ զեկեղեցին անուանեաց»[14]: Ղևոնդ պատմիչի խոսքերը գրեթե նույնությամբ շարադրել է Ստեփանոս Ասողիկը. «Աշոտ պատրիկ, այր երևելի, ուսումնասէր և լի երկիւղիւն Աստուծոյ, որ չինեաց զեկեղեցին Դարիւնից և զկենդանագրեալ պատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածեր ի մտից արևու, մեծասքանչ զօրութեամբ հանգուցանէր ի նա, յորոյ զեկեղեցին անուանեաց յանուն»[15]: Հաջորդ պատմիչը, որ հիշատակում է այդ

---

[11] Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 50:

[12] Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալի՝ երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 20: Ոսկեփորիկ, Հայ երգի գոհարներ, Երևան, 1982, էջ 24 և 33:

[13] Գր. Հակոբյան, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Ե–ԺԵ դդ., Երևան, 1980, էջ 203:

[14] Տես Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, Բ տպ., Ս. Պետերբուրգ, 1887, էջ 16:

[15] Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Բ տպ., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 122–123:

փաստը, Թովմա Արծրունին է. «... Բարձրաբերձ եկեղեցին, որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարատայ, ի ծախս մեծամեծ գանձուց, իբրեւ երեք հազարաց»[16]: Առայժմ շարականի մասին ոչ մի հիշատակության չենք հանդիպում:

Ժամանակի ընթացքում Դարուինքի (Դարոյնք, Դարիւնք, Դարօնք) եկեղեցին անշքացել, անկում է ապրել, իսկ գլխավորն այն է, որ սրբապատկերը փոխադրվել է Գառնիից ոչ հեռու գտնվող Հավուց Թառի վանք: 11-րդ դարում Գրիգոր Մագիստրոսը նորոգել է այդ վանական համալիրը, մասնավորապես՝ Ամենափրկիչ եկեղեցին, և ընծայել նրան փրկչական պատկերը: Այդ փաստը վավերացված է Հավուց Թառի հայտնի արձանագրության մեջ, որը և մեջբերել է Կոստանյանցը. «Ի թուին ՆԿԲ (1013 թ.), ի թագաւորութեանն Գագկայ և ի հայրապետութեան տէր Սարգսի, ես՝ Գրիգոր Մագիստրոս վերստին շինեցի դեկեղեցին յիշատակ ինձ և ծնողաց իմոց, (...) և ի նաւակատիս տաճարիս, զոր շինեցաք, ընծայեցաք զհայրենիս մեր ս. եկեղեցիս որ է Հայոց Թառ, հանդիսարան եւ օթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի, որ ի փայտին, խնդրեալին Յոհաննու ս. աւետարանչին հրամանաւ Մոր Տեառն մերոյ ս. Աստուածածնին եւ, նորոգեալ հաստատեցաք վերստին ս. ուխտս վերջինս քան զառաջինն. աստ եդաք զվէմն հաւատոյ հիման ս. եկեղեցւոյ: Գրիգոր, Վահրամ պատանին»[17]: Ինչպես արդարացիորեն նկատել է Կոստանյանցը, «Վերջինս քան զառաջինն. աստ եդաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ» հատվածը գրեթե նույնությամբ առնված է «Զորս ըստ պատկերի» շարականից[18]: Հարց է ծագում՝ արդյո՞ք դա մեջբերում է, թե՞ հենց իր՝ Գրիգոր Մագիստրոսի կողմից հորինված երգասացության մի հատված: Կոստանյանցը մանրամասն վերլուծում է շարականի բովանդակությունը, ուստի մեջբերենք նրա գրական տեքստը ամբողջությամբ: Այն չորս տնից բաղկացած ազատ բարդոտնյա խառն տաղաչափությամբ գրված տիպական կցուրդներից է, որ բազմատուն կացուրդների հետ մեկտեղ կազմում էին կանոնի երգաշարքի բաղադրամասերը:

Զորս ըստ պատկերի քում ստեղծեր,
Նորոգելով քեզ տաճարացուցեր,
Զնորոգեալս ի մէնջ ըզտաճարս
Ընկալ քեզ ի բնակութիւն:

Որ շնորհես մեզ կենաց տուղ
Զկենդանագիր քո ծառայական կերպի,
Բերելով ըզբոլոր ըզվերբերողդ,
Ի փառս Սուրբ Երրորդութեանդ:

---

16 Պատմութիւն տաճն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ, Կ. Պոլիս, 1852, էջ 133:

17 Կ. Կոստանյանց, Հին հիշատակք, էջ 341: Տես նաև Սիմեոն Կաթ. Երևանցւոյ, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 276, Դ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 354–355, Գ. Հովսեփյան, Հավուց Թառի Ամենափրկիչը և նմանատիպ հուշարձաններ հայ արվեստի մեջ, Երևան, 1937, էջ 3–6:

18 Կ. Կոստանյանց, նշվ. հոդվածը, էջ 341:

Կեցո զորդի ծառայի քո,
Զոր ի Հռովմայ գահիցն վերապատուեցեր,
Ուր եդին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ:

Որ ըզվերջինս զայս հրաշազարդեցեր,
Քեւ չափ բնակչութեամբ հիմնափայլեցեր,
Ըզպանծալի և ըզփայլեալ փառս տանս
Այս վերջինս քան զառաջինն[19]*:*

Շարականի բովանդակությունը նույնպես տարակարծությունների տեղիք է տվել, հատկապես նրա երրորդ տունը՝ «Կեցո զորդի ծառայի քո» և այլն: Ավետիքյանը, մեկնելով շարականիս բովանդակությունը, փորձել է պարզել, թե ո՞ւմ որդու մասին է խոսքը. Աշոտ Գատրիկի՞, թե՞ Գրիգոր Մագիստրոսի[20]*: Ակներև է, որ Ավետիքյանը, լուծելով հարցը Աշոտ Գատրիկի օգտին, վկայակոչում է Վարդան Արևելցու հաղորդած, մեր կարծիքով, թյուր տեղեկությունը. «Աշոտոյ, որ չինեաց զ Դարօնից եկեղեցին յանուն փրկչական պատկերին, զոր եբեր որդի նորա յարևմտից մասամբ. և ի նաւակատիսն երդեաց Զորս ըստ պատկերին»*[21]*: Այստեղից է սկսվել երկու իշխանների հետ կապված խառնաշփոթը: Ինքը Կոստանյանցը, մեջբերելով Վարդան պատմիչի տվյալ հատվածը, ընդունել է, որ «այս տեղեկությունը չենք գտնում մյուս հիշատակարանների մեջ Վարդանից առաջ և հետո»*[22]*, սակայն սեփական վարկածի հրապուրանքն այնքան մեծ է եղել, որ նա անուշադրության է մատնել այդ հանգամանքը: Հավանական է, որ Վարդան Արևելցու սխալը խորացել է իր ուսուցիչ Հովհաննես Վանականի «Գիրք հարցմանց»-ում տեղ գտած անճշտության ազդեցության տակ՝ այն իբր ուղղելու ցանկությամբ, բայց ստացվել է հակառակը:*
Հայտնի է, որ շարականագիրների մեջ հասած հնագույն համառոտ ցուցակը պատկանում է Հովհաննես Վանականի գրչին՝ զետեղված նրա «Գիրք հարցմանցում»[23]*: Այդ ցուցակում չկա Գրիգոր Մագիստրոսի անունը: Սակայն ցանկանալով, հավանաբար, շարադրել սեփական տեսակետը և գիտեցածը մեզ հետաքրքրող շարականի վերաբերյալ կամ բավարարել դրա հետ կապված հարցումները, Վանական վարդապետը մեկ այլ տեղում անդրադարձել է տվյալ շարականին առանձին հարց ու պատասխանի ձևով. «Հարց. Զորս ըստ պատկերի /ո՞/ ստեղծեր: Պատասխան. Մագիստրոս Գրիգոր Դարուն եկեղեցի է շինել և ծախիւք պատկեր բերել և անդ եդեալ. և զկենդանագիր անարատ ծնողի քո արկանեմ: Եւ Թումա պատմագիրն յիշել է զեկեղեցին: Տէր Վահրամ*

---

19 Տես Ձայնագրեալ շարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 495:

20 Գ. Ավետիքյան, Բացատրութիւն շարականաց, էջ 522:

21 Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 71:

22 Տես նշվ. հոդվածը, էջ 342:

23 Տես Մաւոր ցուցակ հայերեն ձեռագրաց Սրբոց Հակոբայանց վանքի, կազմեց Նորայր եպս. Պողարյան, Երուսաղեմ, հ. Դ, 1969, էջ 485:

կաթողիկոս որդի է նմայ»[24]*: Ամենայն հավանականությամբ, երկու իշխանների շարականի հեղինակ լինելու հարցը շփոթվել է դեռևս միջնադարում: Դրա վառ ապացույցն է Հովհաննես Վանականի հաղորդածը: Մինչև վերջ անաչառ լինելու համար նշենք, որ Վանական վարդապետը թույլ է ավել երկու անճշտություն. ա) մեջբերել է Ս. Աստվածածնի պատկերին (այլ ոչ թե Ամենափրկչին) նվիրված շարականի տողը՝ վերագրելով այն Մագիստրոսին. «Զկենդանագիր անարատ ծնողի Քո արկանեմ առաջի Քո», փոխանակ՝ «Զկենդանագիր Քո ծառայական կերպի», բ) Հովհաննես Վանականի վկայակոչած Թումա պատմագիրն, անկասկած, Թումա Արծրունին է, որը հիշատակել է Աշոտ Պատրիկի կառուցած եկեղեցին: Զամչյանը, ձեռքի տակ ունենալով. Վանական վարդապետի «Գիրք հարցմանց»-ի մի փոքր այլ տարբերակ, տվյալ հատվածը բերել է համալրված տեղեկություններով, որը համաձայնեցվում է մեզ ծանոթ ուրիշ աղբյուրի հետ: Ձեռագիրը, որն իր տեսադաշտում է ունեցել Զամչյանը, Գրիգոր Մագիստրոսին է վերագրում նաև խաչի նավակատյաց ե օրվա կանոնի տէր երկնիցը ևս, այսպես. «...Զկենդանագիր անարատ ծնողի քո. և շարական. Զորս ըստ պատկերի քում. և զտէր երկնիցն. Որ զարդարեաց»*[25]*:*

Աշոտ Պատրիկի և Գրիգոր Մագիստրոսի անունների խառնաշփոթը, մեր կարծիքով, գալիս է նաև որոշ հանգամանքների նմանությունից: Երկուսն էլ պատկանել են նշանավոր իշխանական տոհմերի, եղել են ուսումնասեր, կրթյալ, կրել են բյուզանդական բարձրաստիճան տիտղոսներ, զորավարներ են եղել, կառուցել են եկեղեցիներ: Բացառված չէ, որ միջնադարյան գրիչների կողմից շփոթվել է Դարոն և Դարոյնք տեղանունները՝ կախված նրանց աշխարհագրական գիտելիքներից և անձնական ճամփորդական փորձից:

Վերջապես, չափազանց կարևոր է Հավուց Թառի արձանագրության մեջ հիշատակված տարեթվի ճշտումը: Այդ կապակցությամբ նույնպես եղել են տարբեր կարծիքներ: Որոշ հեղինակներ, օրինակ՝ Սիմեոն Երևանցին[26]*, Ղ.*

---

[24] Տես, օրինակ, ՄՄ, ձեռ. 5611, ԺԳ դ., էջ 111 բ: Հովհաննես Վանականի «Գիրք հարցմանցում» առկա են մի քանի ուշագրավ վկայություններ շարականների հեղինակների մասին, որոնք չկան մյուս ցուցակների մեջ, այսպես. «Ցաղագս շարականին թէ ո՞վ է արարեալ: Որ զծորան հոգւոյն արբին լիմանալի աղբիւրէն երգեցին ի ժամանակս ժամանակս: ԶՍՍՆԴԵԱՆՆ՝ Մովսէս Քերթողն: ԶՊոխմանն, զՎարդավառին, զՄարգարէիցն, եւ զՎարդապետացն, զՄեղաք ամենայնի մինչ յԱռաքելոցն՝ Ցովան Մանդակունւոյ: ԶԱպաշխարութիւն՝ Մեսրոպ Վարդապետն: Զծարութեան Հարցնակարգն զբովանդակն Ամանիա Շիրակացին: Զծարութեան Աւրհնութեանն Է. ձայնն Ստեփաննոս Սիւնեցին, եւ զՎառն՝ Ներսէս Կաթողիկոս: ԶՀանգստեանն, զՄատնիրոսացն՝ Պետրոս Կամրջաձորեցին: Զխաչին եւ զԵկեղեցւոյն տէր Սահակ Կաթողիկոսն: ԶԱռաւօտու Երգն եւ զձայնից բաժանումն՝ Պարթեւն» (Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Սրբոց Հակոբյանց վանքի, հ. Դ, էջ 485): Կան նաև Շարակնոցի պատմությանն առնչվող այլ լրացումներ, օրինակ. «Հց. զմանկունքն ո՞վ է սահմանել: Պատ. Եզր Կաթողիկոս: Հց. Առաւաւտու կանո՞ն: Պատ. Գյուտ կաթողիկոս որ և զԲարձրացուցեալ/ն/ն է յուզել ի Դաւթա» (ՄՄ, ձեռ. 5611, էջ 76 բ):

[25] Մ. Զամչյան, Պատմութիւն հայոց, հ. Բ, էջ 1032:

[26] Սիմէօն կաթ. Երևանցւոյ, Զամբո, էջ 275-276:

Ալիշանը[27], նույն Կոստանյանցը[28], հակվել են այն մտքի, որ արձանագիրը տեղադրվել է ավելի ուշ, սակայն նրանց չփոթեցրել է «Գրիգոր պատանի» արտահայտությունը, որի տակ ենթադրվել է ապագա Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսը: Իմանալով Վկայասերի մահվան ճշգրիտ թվականը և որոշ մոտավոր հաշվումներ կատարելուց հետո, նրանք փակուղու մեջ են ընկել և կանգ առել: Գուցե հենց դա՞ է եղել պատճառը, որ հրաժարվել են կապել շարականի ստեղծումը Գրիգոր Մագիստրոսի հետ և ընծայել են-այն Աշոտ Պատրիկին, իսկ «Կեցո զորդի ծառայի քո» տողերը վերագրել են (նաև Վարդան պատմիչի հաղորդածի հիման վրա) նրա որդուն: Թեև Ալիշանը կարծիք է հայտնել, որ արձանագիրը թերի է պահպանվել, և «Գրիգոր պատանի» խոսքերից հետո շարունակություն է եղել: «Գրիգոր» անունը նա գիտել է որպես արձանագրի գրիչ-վարպետի անուն, որը ոչ մի կապ չունի խնդրո առարկա շարականի հետ: Այդ կծիկը վարպետորեն կարողացավ քանդել Գ. Հովսեփյանը ապացուցելով հենց արձանագրության մեջ եղած տեղեկությունների հիման վրա, որ արձանագրությունը տեղադրվել է շատ ավելի ուշ՝ Ամենափրկիչ եկեղեցու վերանորոգությունից հետո, 1045 թ., չնայած նրանում, իրոք, հիշատակված է վերանորոգության ավարտելու տարին՝ 1013-ը[29]:

Ամփոփելով, մի անգամ ևս ուշադիր քննենք տեսադաշտում եղած տվյալները: Վկայակոչված պատմիչները (Ղևոնդ, Ստ. Ասողիկ, Թովմա Արծրունի, նաև՝ Մխիթար Այրիվանեցի), խոսելով Աշոտ Պատրիկին վերաբերող միջադեպի մասին, հիշատակում են նրա կողմից Ամենափրկիչ սրբապատկերի Հայաստան բերելը և այդ կապակցությամբ եկեղեցու շինարարությունը, բայց ոչ շարականի հորինումը: Փաստորեն, առաջին անգամ «Զորս ըստ պատկերի քում» շարականի մի հատված երևում է հենց Գրիգոր Մագիստրոսի Հավուց Թառի արձանագրության մեջ: Այնուհետև՝ 1193 թ. պահպանված հնագույն Շարակնոցում[30]: Ապա արծարծվում է Վանական վարդապետի «Գիրք հարցմանցում»: Վարդան պատմիչի հաղորդածով խախտվում է այն բնականոն շղթան, որը շուտով վերականգնվում է Գրիգոր Տաթևացու խմբագրած շարականագիրների ցուցակում, և այդպես էլ՝ հարատևում մինչև 1875 թ. տպագրված «Զայնագրեալ շարականը»: Տրամաբանական է եզրակացնել, որ եթե Վարդան Արևելցու «ուղղումը» ճիշտ էր, ապա այն պետք է հաշվի առնվեր հետագայի բոլոր շարականի ցուցակագիրների կողմից: Սակայն այդ բանը տեղի չի ունեցել: Հավանական է, որ Հավուց Թառի արձանագրությունը միակ հավաստի աղբյուրն է, որը կապում է այդ շարականի ստեղծումը Գրիգոր Մագիստրոսի անվան հետ: Անշուշտ, եթե պահպանված լիներին Գրիգոր Մագիստրոսի ժամանակներից շուտ գրված Շարակնոցներ, հարցը կլուծվեր այլ կերպ: Ներկա պայմաններում, սակայն, խնդրի բանալին թերևս պետք է փնտրել դարձյալ շարականի տեքստի մեջ:

---

27 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 355:

28 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, առաջաբան, էջ ԼԲ:

29 Գ. Հովսեփյան, Հավուց Թառի Ամենափրկիչը և նմանատիպ հուշարձաններ հայ արվեստում, էջ 3:

30 ՄՄ, ձեռ. 9838, թղ. 94 ա:

Ուշադրություն ենք հրավիրում շարականի առաջին տան և Հավուց Թառի արժանագրության մի քանի դարձվածքների փոխադարձ աղերսների վրա:

Զորս ըստ պատկերի քում ստեղծեր,
Նորոգելով քեզ տաճարացուցեր,
Զնորոգեալս ի մէնջ տաճարս
Ընկալ քեզ ի բնակութիւն:

«...ես, Գրիգոր Մագիստրոս, վերստին շինեցի զեկեղեցին» կամ «նորոգեալ հաստատեցաք (...) ս. ուխտս»: Ակներևաբար, շարականի առաջին տան իսկ մեջ ասվում է վերստին հաստատված, նորոգված եկեղեցու մասին, այլ ոչ թե նոր շինված, ինչպես Աշոտ Պատրիկի դեպքում էր: Այսինքն, արժանագրության և շարականի հեղինակը նույն անձն է: Հազիվ թե Գրիգոր Մագիստրոսի նման հմուտ քերթողը այս դեպքում մեջբերում աներ ուրիշ հեղինակից, ավելի հավանական է, որ իր ջանքերով վերականգնած տաճարի նավակատիքի և սրբապատկերի ընծայման առիթով, նա, հավուր պատշաճի, հորիներ մի նոր հոգևոր երգ:

Մեր կարծիքով, երրորդ տան մեջ («Կեցո զորդի ծառայի քո»), որն այդքան տարակարծություններ առիթ է տվել, Մագիստրոսն ի նկատի է ունեցել ոչ թե իր որդուն, այլ ինքն իրեն: Ինչո՞վ է դա ապացուցվում: Հնատիպ Շարակնոցների վերջում սովորաբար բերվում է «Ժամանակագրութիւնք սրբոց վարդապետաց հեղինակաց շարականաց» ցուցակը, որտեղ զետեղված են շարականագիրների հեղինակած հոգևոր երգերի ստեղծման մոտավոր կամ ստույգ թվականները, սկսած Սահակ Պարթևից և Մաշտոցից մինչև Շարակնոցն եզրափակող ամենաուշ հեղինակը՝ Կիրակոս Երզնկացին: Ահա այս ցուցակում Գրիգոր Մագիստրոսի անվան դիմաց գրված է 1044 թվականը, որի տակ, անկասկած, ենթադրվում է «Զորս ըստ պատկերի քում» շարականի ստեղծման տարեթիվը[31]: Որտեղի՞ց է վերցված այդ թվականը, մեզ անհայտ է: Սակայն ցուցակի կազմողները, հավանաբար, իրենց ձեռքի տակ ունեցել են ինչ-որ պատմական տվյալներ, որոնք մեզ չեն հասել: Դա այն թվականն է, երբ Գրիգոր Մագիստրոսն, իրոք, արդեն ստացել էր մագիստրոսի, դուքի տիտղոսները, արժանացել պատվի և ճանաչման բյուզանդական արքունիքում, ուստի շարականի երրորդ տունը հենց այդ իրադարձությունների մասին է պատմում:

Շարականագիրների միջնադարյան ցուցակների հանդեպ ունեցած վստահությունը մղեց մեզ նոր պրպտումների, որոնց նպատակն էր Գրիգոր Մագիստրոսի Շարակնոցում տեղ գտած կամ պարականոն հեղինակումների որոնումը: Բացի Վանական վարդապետի բերած խոսուն վկայությունից, որը մինչ այժմ վրիպել է երաժշտագետների ուշադրությունից կամ միտումնավոր չքննվել, մեզ հաջողվեց հավելյալ մատենագրական տվյալներ հայտնաբերել, որոնք թեև նույնպես հրատարակվել են, սակայն աննկատ են մնացել: Օրինակ, Զմմառի վանքի մատենադարանի թիվ 71 Շարակնոցն ուշագրավ է շարականների հեղինակներին վերաբերող իր լուսանցագրերով: Այսպես, Խաչի նավակատյաց 5-րդ օրվա կանոնի դիմաց

---

31 Տես, օրինակ, Շարակնոց, Կ. Պոլիս, 1815, էջ ՊԻԸ, տես նաև՝ Ձայնագրեալ շարական հոգևոր երգոց, էջ 1090:

կարդում ենք. «Խաչի նաւակատեաց Ե. աւուրն Հարց՝ Այսօր պայծառ և սիւն լուսոյ-զՀարցս իւր սարաւքն Մագիստրոս ի պատիւ Դարունից եկեղեցւոյ»[32]: Գարգենք, թե ի՞նչ նկատի ուներ միջնադարյան գրիչը: Խաչի նավակատյաց 5-րդ օրվա կանոնի կազմը հետևյալն է. Օրհ.–Զատիւոր – Մանր. Ուրախ լեր սուրբ եկեղեցի: Սահակ Զորափորեցուն վերագրվող հայտնի շարականն է: Կանոնի հաջորդ մասերը, ըստ վերոհիշյալ ձեռագրի հաղորդածի, ընծայվում են Գրիգոր Մագիստրոսին՝ Հարց-ծանր. Այսօր պայծառ և սիւն լուսոյ (5 տուն), ողորմեա – չափաւոր. Զորս ըստ պատկերի քում (4 տուն), տեր երկնից – միջակ-չափաւոր. Որ զարդարեաց մեծապայծառ փառօք (3 տուն), մանկունք – չափաւոր. Այսօր ուրախացեալ ցընծան երկնից (3 տուն)[33]:

Գակաս ուշագրավ չէ Վիեննայի Մխիթարյան մատենադարանի թիվ 202, 1312 թվականի Շարակնոցը, որը հնագույնն է տվյալ հավաքածոյում և օժտված է «ամեն շարականի հեղինակաց անուններով»[34]: Այստեղ կարդում ենք. «Կանոնն սրբոյ խաչին չորրորդ աւուրն. Խաչին կենարար որ եղեւ մեզ փրկութիւն՝ Գրիգորի Մագիստրոսի ասացեալ»: Մեր կարծիքով «Խաչն կենարար» շարականի հետ կապված պնդումը կարելի է կատարել Գրիգոր Մագիստրոսի «Ներբողեան ի Սուրբ Խաչն Քրիստոսընկալ» և «Ցաղագս խաչանման գաւազանին»[35] քերթվածների բովանդակությունը և ոճական առանձնահատկությունները նկատի ունենալով, ինչը մինչ այժմ անտեսվել է ուսումնասիրողների կողմից[36]: Հետևաբար, շարականագիրների ցուցակներում, որոնք որոշ իմաստով նույնպես կանոնական մի վավերագիր-հիշատակարան էին ներկայացնում, Գրիգոր Մագիստրոսի անվան հիշատակությունը սխալմունք չէ: Նա հանդես է գալիս որպես առնվազն երկու շարականի հեղինակ՝ հարելով Անիի մշակութային միջավայրին կապված շարականագիրների շրջանակին:

Ստորև բերում ենք վերոհիշյալ երկու շարականի բնագրերը եվրոպական նոտագրությամբ:

---

32 Տես Մ. Վրդ. Քեշիշյան, Ցուցակ ձեռագրաց Զմմառու վանուց, Վիեննա, 1964, էջ 113–115:

33 Հիշենք անանուն խմբագրության շարականագիրների ցուցակի «զոր այլք Իսահակայ Զորափորեցւոյ տան» արտահայտությունը, որը միանգամայն հասկանալի է դառնում այս համատեքստում:

34 Տես Հ. Տաշյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց ի մատենադարանին Մխիթարյան, Վիեննա, հ. Ա, 1895, էջ 523–524:

35 Տես Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ, Վենետիկ, 1868, էջ 80–92:

36 Այդ մասին տես նաև մեր հոդվածում Անիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապված շարականագիրները, Վենետիկ, «Բազմավէպ», 1995, էջ 209:

ԶՈՐՍ ԸՍՏ ՊԱՏԿԵՐԻ ՔՈՒՄ

Moderato

Զորս ըստ պատ - կե - րի քում ստեղ - ծեր,
ևո - րո - զե - լով քեզ պա - ճա - ռա - ցու - ցեր,
զմո- ռոզ-եալս ի մէջ ըզ- պա - ճառս
ըն - կալ քեզ ի բնա - կու - թիւն:

ԽԱՉՆ ԿԵՆԱՐԱՐ

Moderato

Խա- չըն կե - նա - ռարդ, որ ե - դեւ մեզ
փոր - կու - թիւն, ստ - կաւ - ա -
մե - նեք - եան ըզ - քեզ բա -
րե - բա - նեմք:

ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ԱԲՈՎՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ*

Աբովյանի և Ներսես Աշտարակեցու առնչությունները հարուստ անցյալ ունեն: Տակավին տասներկու տարեկան մոնթ՝ Ներսես Աշտարակեցին առիթ է ունեցել ծանոթանալու Աբովյանի պապին՝ Ճշանավոր բարեգործ պարոն Ապովին, երբ վերջինս գրեթե ամեն տարի կնոջ և երեխաների հետ ուխտ էր գնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, արժանանում Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի ջերմ ընդունելությանն ու մեծարանքին, վանքին ու ողջ միաբանությանը առատաձեռնորեն նվերներ բաժանում, շքեղ ու ճոխ հացկերույթով հյուրասիրում բոլորին, որի ընթացքում Կաթողիկոսից մինչև վերջին մոնթը ստանում էր հատուկ դրամական պարգև՝ պաշտումից, ինչպես կոչում էին այն օրերին, այնուհետև Կաթողիկոսի օրհնությամբ ու անդրադարձ նվերներով վերադառնալով հայրենի Քանաքեռ՝ երկար ժամանակ պատմում էին իրենց անջնջելի տպավորությունների մասին: Պարոն Ապովի գալստյանն անհամբերությամբ էին սպասում ամեն տարի Էջմիածնի տարեց և կրտսեր բոլոր միաբանները, նրանց մեջ նաև պատանի Թորոսը կամ ապագա Ներսես 5-րդ Կաթողիկոսը, որը միշտ քաղցրությամբ, կարոտով ու երախտագիտությամբ էր մտաբերում իր հանդիպումները Աբովյանի տոհմի հոչակավոր նահապետի հետ:

Տասնամյակներ անց Աբովյանի հետ ունեցած առաջին հանդիպումները Ներսես Աշտարակեցուն վերհիշեցնում են անցյալը, իսկ այլ առիթով պարտադրում արտահայտելու իր վերաբերմունքը հանդեպ «ի բուն կամաց ազգասիրութեան՝ որպէս ազգասիրի, նորոգ շառաւիղեցելոյ ի բարւոք տոհմէ Ապովեանց, զորոյ տոհմականութեան ունեցեալ միշտ վերապատուութեամբ ի 12 ամաց հասակի իմոյ և այսօր...»[13]:

Որքան էլ զարմանալի, Աբովյանն ևս Ներսես Աշտարակեցու հովանավորությանն ու աջակցությանն արժանացել է դարձյալ տասներկու տարեկան հասակից, մինչ խնամակալի՝ Անտոն եպիսկոպոս Մուղնեցու հոգացությամբ Հաղբատի վանքից փոխադրվում է Տփղիս՝ ուսանելու նորաբաց Ներսիսյան դպրոցում: Իր նախանձելի ընդունակությունների և զորավոր հիշողության շնորհիվ՝ Աբովյանը կարճ ժամանակում դառնում է ուսումնարանի առաջին աշակերտը կամ Ներսես Աշտարակեցու բնորոշմամբ՝ աշակերտության պարագլուխը: 1824 թ. դեկտեմբերին մի առիթով անդրադառնալով ուսումնարանի կյանքին, Ներսես Աշտարակեցին հետևյալն էր գրում նրա խնամակալին. «Սուրբ օրհնութեամբ Ձեր և աղօթիւք՝ ուսումնարանն սկսեալ որում ականատես էք, աւարտեալ ի վերջն ամսեանն Նոյեմբերի, մտին աշակերտք ի Ներքնայարկսն նորա ի մուտն այսր ամսոյ՝ յորս պարագլուխ է որդեակ Ձեր և մեր տիրացու Խաչատուրն: Եւ սկիզբն եղեալ կարգաւորութեանն դասասացութեանն երկուց

* Սկիզբը տես հմր. հմր. Բ–Գ, էջ 156:

[13] Ա հմր. 383 (հմմտ. Դ. 256):

լեզուաց՝ հայոց և ռուսաց, ի կարգաւորիլ այնոցիկ, սկսաքի և պարսկականք ո՛չ լետոյ քան զ20 ամսոյս»[14]:

Դպրոցում Աբովյանը ոչ միայն ձեռք է բերում հարուստ գիտելիքներ հայկաբանության, ճարտասանության և ընդհանուր պատմության վերաբերյալ, հմտանում լեզուների մեջ, աչքի ընկնում նախանձելի բարոյականությամբ, այլև ձևավորվում է որպես բանաստեղծ: Քիչ բան է պահպանվել նրա վաղ շրջանի ստեղծագործություններից, հազիվ մեկ տասնյակ ոտանավոր, առավելապես ներբողներ ու ձոներ՝ նվիրված Աստվածածնին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, և դրանց շարքում, որ ուշագրավ է, չորս քերթված՝ նվիրված Ներսես Աշտարակեցուն:

Բանաստեղծությունների այս շարքին բնորոշ են՝ անկեղծ խանդավառությունը, ընտրության բառապաշարը, տաղաչափական բազմազան ձևերի առկայությունը, մակդիրների և համեմատությունների առատությունը, մի խոսքով՝ այն ամենը, ինչով հատկանշվում էր այն օրերի դպրոցական բանաստեղծությունը, և քերթության կանոնների վերաբերյալ հրահանգում էին Էմանուել Թեսավրոսի և Ստեփանոս Ագոնցի աշխատությունները:

Գրության ժամանակով դրանցից ամենավաղը «Ցայնակցեալ եմ Ձեզ, հոգերգու գումարք...» սկսվածքով ներբողն է՝ գրված 1825 թ. մարտին, զատկական տոնի օրերին: Քրիստոսի Հարության տոնը շաղկապելով Ներսես Աշտարակեցու տեսչությամբ բացված դպրոցում հայ մանուկների մտավոր հասունության ու վերածնության գաղափարի հետ, Աբովյանը առատաբուխ սրտով փառաբանում է այդ հաստատության հիմնադրի անձն ու բարերարությունը.

Մահ ճահողական վճիտ դրուատից,
Ցեղուզեալ ակամբ անգին մարգարտից՝
Ջերթ ի հայելտջ նկատեմք յայտնի,
Վասն քո, Հայր սուրբ, հրեշտակ ի մարմնի:

Որով դասեցար երջանկաց կցորդ,
Ով սուրբդ *Ներսէս*, նախնոյն փոխանորդ.
Աստ լի և առատ մարմնական բարեօք,
Ընտրեալ բարունեաց մասին դու հաղորդ:

Բազմազան շնորհաց պատկեր ի յերկրի,
Ընդ քաջն Աքիլլայ հզօր հսկայի.
Նա վեհ զինակիր սաստիկ ի մարտի,
Իսկ դու յաղթանակ գովեալ վիճակի:

Աշտանակ ոսկի կառուցար դու մեզ,
Ցարմատոյն բարւոյ ճշնողին ըզձեզ.
Որջարկեալ զմեօք, իբրև զբեռեզ,
Հզօր դու Ցովսէփ՝ ողջախոհդ և հեզ:

Դու բորբոք սիրոյ, զազգս ի մի մարմին,
Ջուլէր որպէս հուր զոսկին ի բովին,

---

[14] Մատենադարան, ՆԱ հմր. 166/170, թ. 95ա:

Որ և իսկ տեսաւ այլաց օտարին
Ցարգ ազնուութեան Հայկազեան տոհմին:

Իսկ այս զի՞, այս զի՞, քաղաք դու Տփխիս,
Նոր լԱթէն ցուցեալ այսմ մարդենիս.
Առ որ քոյդ հոչակ յամենայն տեղիս
Նորաձոր լսին, զոր քեզ միշտ ունիս[15]:

Այսպիսի ոտանավորները, սովորաբար, ընթերցվում էին դպրոցական հանդեսների ժամանակ և արժանանում ունկնդիրների շերմ համակրանքին:

Ներբողներից երկրորդը գրված է հաջորդ՝ 1826 թ. հունվարին, այս անգամ էլ շարժառիթ ունենալով Քրիստոսի Ծննդյան տոնը և վերջինի ոգով փառաբանելով Ներսեսին: Իբրև բանաստեղծ, Աբովյանը որոշակի առաջընթաց է ապրել անցած ավելի քան կես տարվա ժամանակամիջոցում. նա գիտակցում է խոսքի արժեքը և չի երկարաբանում: Միաժամանակ օգտվելով ակրոստիքոսի ընձեռած հնարավորություններից՝ ոչ միայն ցույց է տալիս իր անկաշկանդ հմտությունը տվյալ մարզում, այլև հուշում, թե ու՞մ անձն ու գործը նկատի ունի իր ներբողում, ըստ այդմ բանաստեղծության կենտ տողերի առաջին տառերի միացումից հյուսելով Ներսես անունը.

Նորազուարճ հանդէս տօնիս փրկչական
Այսօր, ընդ աստեղն զուարթունք տան նշան.
Ել, շնչեաց ահա, որ էնն անվախճան,
Իսկապէս լինել գլուխ և վէմ անկեան:-

Բամբ հոգեղինաց այսօր ընդ մարդկան
Տօնեն հրաշափառ զտօն ծննդեան.
Սուրբ կոյսն Մարիամ կաթամբ կուսական,
Առեալ ի գիրկս իւր՝ պատուէ զնոր արքայն:-

Եւ մեք ընդ նոսա, ձայնիւ միաբան,
Մաղթեմք քեզ զկեանս միշտ և յաւիտեան.
Սովաւ բարձրասցի բազուկ քո ընտրեալ,
Սուր սրտի չարաց յաւերժ պանծացեալ[16]:

Բանաստեղծություններից երրորդն էլ գրված է Ներսիսյան դպրոցի ավարտական քննությունների առիթով և ընթերցվել է առաջին շրջանավարտների հանդեսի ժամանակ: Կրկին Աբովյանը դիմում է ակրոստիքոսի հնարքին, սակայն օգտագործելով ավելի բարդ ձև. Ներսես անունն այս անգամ ստացվում է առաջին տան առաջին և վերջին տառերի՝ ն, է, երկրորդ տան երրորդ տողի նախավերջին բառի առաջին տառի՝ ր (վերջից երկրորդ բառը հատուկ դիտավորությամբ է ընտրված, որովհետև մինչ այդ մատնանշվել են Ներսեսի անվան առաջին երկու տառերը, իսկ որ այդ երրորդ տողում պիտի դրվեր, այն

---

[15] Ա հմր. 98, թ. 1ա-բ (հմմտ. Ե I, 344-345): Սխալմամբ տպագրվել է որպես անագիր և անավարտ երկ, որ արդյունք է թյուրիմացության:

[16] Ա հմր. 87, թ. 1ա (հմմտ. Ե I, 26, տողեր 41-52):

պատճառով, որ հերթական տառը թվով երրորդն է) և երրորդ տաղ առաջին երկու տողերի առաջին՝ ս, ե, և վերջին տողի վերջին տառի՝ ս, միացումից

Նախկին քոց քրտանց տօն այսօր հնչէ,
Ջերամ քոց ծագուց ի զննին կոչէ.
Առ որ բոլորեալ՝ կամք մեք ի սրտէ
Լեալ շնորհակալու քոց բարութենէ:

Ահա մեք՝ գառինքս, մերովք իսկ հովուովք
Առ քեզ, Հովուապետդ, ճեպիմք թախծանօք.
Օրհնեա զմեզ, հայր սուրբ, ըստիմք անձկանօք,
Ի մեզ ակնարկեալ քաղցրագին աչօք:

Սիրելի լիցի խնամել քո զմեզ,
Եւ մեր թիկնաձեղ մաղթանօք ընդ քեզ.
Որով և լիցի անփուտ քոյդ շնորհիւ,
Ի վեր ճեմել մեզ ի բարեաց հանդէս [17]:

Ամեն ինչ այս ներբողում ասված է տեղին, ապագա հոգևորականի մտավոր աշխարհին ու կենցաղին բնորոշ համեմատություններով և փոխաբերություններով, խրթնաբանությունից միանգամայն զերծ:

Գրե՞լ է արդյոք Արովյանն այսօրինակ ակրոստիքոսով ուրիշ բանաստեղծություններ ևս, դժվարանում ենք ասել, որովհետև, ինչպես վերևում նշեցինք, նրա վաղ շրջանի ստեղծագործություններից սակավաթիվ էջեր են պահպանվել:

Ավարտական հանդեսի ժամանակ Արովյանն արտասանել է մի երկրորդ բանաստեղծություն ևս՝ «Անդրիական կենաց արձան կանգնեցար...» սկսվածքով, որը ծավալով ավելի ընդարձակ է, ուղիղ 10 տուն, սակայն հորինման արվեստի այլ սկզբունքների կիրառմամբ: Որքան էլ վեհորեն հնչեր հեղինակի խոսքը, 40 տողը դժվարությամբ կընկալվեր: Հետևաբար, ունկնդրին զգաստ պահելու համար, Արովյանն օգտագործել է բանաստեղծական տողի կառուցման մի այնպիսի չափ /2+2/2+2/3/, որը, կարծես, ամեն անգամ պարտադրում է ուշադրությամբ հետևելու օրհներգի ծավալմանը և հանդիսավոր. ավարտին: Վերջին տողերն ուղղված են տփղիսցիներին, որոնց երեխաներն էին ամենից ավելի օգտվում Ներսես Աշտարակեցու մեծագործությունից. նրանք մաքրագործվելով քիրտ կենցաղից ու փողոցներում անընպատակ թափառելուց, ընթանում էին հոգևոր սխրանքների ճանապարհով:

Ավարտական հանդեսին հրավիրվածների մեջ բարձրաստիճան ու պատվարժան անձինք շատ կային: Արովյանի բանաստեղծությունները խոր տպավորություն են գործում նրանց վրա: Եվ ահա վերջիններից մեկը՝ գնդապետ Գևորգ Սմբատյանը (Հայկական մարզի ապագա կառավարիչը), չկարողանալով թաքցնել իր ոգևորությունն ու հուզմունքը, դիմում է Ներսես Աշտարակեցուն մի անսպասելի հարցումով. շարունակությունը լսենք Արովյանի խոսքերով. «Դեռ յիշին լսելիք ինձ զարժանայիշատակ այն վճիռ ի բերանոյ Ձերդ Սրբազնութեան, ի հանդիսի հարցափորձութեան ի Ձերդ ուսումնարանի, այն ինչ պարոն Սմբատով խնդամտեալ ի վերայ ոտանաւորի իմոյ՝ «Ե՞րբ լիցի Խաչատուրն եպիսկոպոս

[17] Ա հմր. 87 (հմմտ. Ե I, 26, տողեր 53-64):

քաղաքին մերոյ» ասէր. Սրբազնութիւն Ձեր զանիմանալին ետուք պատասխանի. «Այսօր կարէ նա լինել այդ. այլ զոր ուսանի, ի բազում ամս պարտ է աշխատել վասն». զհետևանս վճիռն այս արժանի վսեմական հոգւոյ. ծնունդ իրաւադաս, արդարադատ մտաց»[18]:

«Մեր քաղաքը» Տփղիսն էր. Տփղիսի եպիսկոպոսությունը՝ Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդությունը: Դա անչափ պատասխանատու պաշտոն էր, որը հոգևորականից պահանջում էր ոչ միայն հարուստ գիտելիքներ, այլև փորձառություն, վճռականություն և դիվանագիտական ուրբ զգացողություն: Այդպիսին էր ինքը՝ Ներսես Աշտարակեցին, որին և 1814-ից վստահված էր Տփղիսի թեմական առաջնորդի պաշտոնը: Այլ պարագայում Ներսես Աշտարակեցին, լսելով նման հարցում, թերևս վիրավորվեր. բայց նա ներկա պահին միանգամայն լուրջ պատասխանում է, թե Աբովյանն այժմ էլ կարող է դառնալ Տփղիսի եպիսկոպոս, բայց նպատակը, որին ձգտում է նա, բոլորովին այլ է և պահանջում է բազում տարիների աշխատանք...

Ո՞րն էր Աբովյանի նպատակը, որին տեղյակ էր նաև Ներսես Աշտարակեցին: Իր նվիրական երազանքի մասին Աբովյանը նախ արտահայտվել է Ներսիսյան դպրոցում գրած «Կարօտութիւն նախնի վայելչութեանց Հայրենեաց իմոց» բանաստեղծության մեջ, որն, ամենայն հավանականությամբ, ընթերցել է դպրոցական հանդեսների ժամանակ:

Նույն հարցերի մասին Աբովյանն արտահայտվել է նաև հետագայում, այն էլ ոչ մեկ անգամ և առավել պարզ ու որոշակի. «Ապրել և մեռնել հայրենիքի համար,- ահա տակավին վաղ պատանեկան տարիներից իմ ընտրած նպատակը: Դեռ ճնշված լինելով ինչպես բռնակալության, նույնպես և տգիտության բեռների ներքո, դեռ ոչ մի գաղափար չունենալով եվրոպական կրթության ազդեցության մասին, ոչ մի նեցուկ և, մինչև իսկ, ոչ մի միջոց՝ հասնելու իմ նախագծած նպատակին, ես հոգուս մեջ փայփայում էի միայն այդ մտածությունը, միայն այդ ցանկությամբ այրվում... Մեր սուրբ հայրերի զոհասեղանի առջև իմ տված առաջին երդումը, նրանց գերեզմանների վրա թափած դառն արցունքները, նրանց թանկագին աճյուններին նվիրած ի խորոց սրտի հառաչանքները եղել են այն բանի համար, որ նրանք լինեն իմ թաքուն պահապան հրեշտակները և բաց անեն իմ առջև հոգուտ իրենց որբ թողած մանուկների՝ զոհվելու ճանապարհը»[19]:

Հետագա տասը տարիներին նպատակներն իրագործելու համար Աբովյանն ապրեց բազում տառապանքներ, երբեմն մահվանից հրաշքով փրկվելով, ունեցավ ծանր, անդառնալի կորուստներ, բայց նախախնամությունը պահպանեց նրա կյանքը, որ անկատար չմնային իղձերը: Ի վերջո Աբովյանը կրթվեց ու լուսավորվեց Դորպատի համալսարանում՝ նախապատրաստվելով համազգային ուսուցչի ու դաստիարակի վեհ կոչմանը: Ներսես Աշտարակեցու հետ նա շարունակում էր նամակների միջոցով մտքեր փոխանակել իր ապագա ծրագրերի վերաբերյալ, որոնք ավելի էին ամրապնդում վերջինիս հավատն Աբովյանի նախանձելի եռանդի ու անդավաճան հայրենասիրության նկատմամբ. «Երանի զնա համարեսցեն ամենայն հայրենեաց բարեկամք, - գրել է Ներսես Աշտարակեցին,- եթէ երիտասարդութիւն նորա ծերասցի, զառամեսցի միատարր

---

18 Ա հմր. 188 (հմմտ. Ե X, 154, նաև՝ Դ II, 17-18):
19 Ա հմր. 192 (հմմտ. Ե X, 254, նաև՝ Դ I, 213-214):

20 Ա հմր. 989 (հմմտ. Դ II, 256):

շարունակութեամբ ընդ ամենայն հարստութիւնս աւուրց կենաց՝ Նորին Նոյն օրինակ և մանաւանդ թէ գերակատար ևս հայրենասիրութեամբ»[20]: Այսպես կարող են գրել միայն մեծերը իսկական մեծերի մասին:

Վերադարձից հետո, ինչպես ասացինք, այլ կերպ դասավորվեց Աբովյանի կյանքը, և նա յոթ տարի մնաց Տփղիսում: Այստեղ ևս շատ առիթներով նա մտաբերում էր Ներսես Աշտարակեցուն, խորհրդածում նրան ևս վիճակված դառը ճակատագրի մասին: Ներսիսյան դպրոցի հոյակապ շենքը, որի կողքով նա հաճախ էր անցնում, և որն այժմ դարձել էր ազնվականների ակումբ, գրեթե միշտ պարտադրում էր միմյանց հետ բաղդատել հին ու նոր օրերը և ցավով գրել. «Հայոց հոչակավոր դպրոցի... հիմնադիրը, արժանապատիվ Ներսես արքեպիսկոպոսը, միանգամայն այլ նպատակներ ուներ, որոնց վերաբերմամբ հայոց այժմյան Կարապետ եպիսկոպոսը թվում է, թե բոլորովին անտարբեր է: Այդ հիանալի շենքը իր հիմնադրի գովելի ջանքերի կենդանի հուշարձանն է...»[21]:

Աբովյանը բազում առիթներով ականջալուր էր դառնում տփղիսցիների շրջանում Ներսես Աշտարակեցու մասին եղած խոսք ու զրույցներին, և դրանցից մեկը, գրեթե բառացի, մեջ է բերել իր գերմաներեն ազգագրական ուսումնասիրության մեջ («Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին»). «Մի Ներսես ունենք, նրան էլ Աստված տարավ՝ մեզ պատժելու համար: Մի ժամանակ մեր առաջնորդարանը, կարծես, թագավորական պալատ լիներ... Բոլոր մեծամեծները նրա ոտքն էին գալիս: Երբ մի հայի գլուխ ցավեր, հազար տեղ կմտներ, դուրս կգար: Ունեցածը ուրիշներին էր բաշխում: Հիմա ամեն ինչ ավերակ է դարձել, մեր Վանքն էլ հետը... Երբ մարդ ժամ է մտնում, արցունքները թափվում են աչքերից: Աստված բարկացել է մեր ժողովրդի վրա, ի՞նչ անես: Եթե Աստված մեզ սիրեր, Ներսեսը էստեղ կլիներ: Երբ նա քարոզ էր կարդում, կարծես Քրիստոսը մեր դիմաց կանգնած լիներ: Ավելի լավ կլիներ Աստված մեզ մահ տար, քան թե նրան մեր միջից տաներ»[22]:

1841 թ. ու հետագա տարիներին Աբովյանը ստեղծեց «Վերք Հայաստանի»՝ Արևելյան Հայաստանը վերածնելու դարաշրջանի հերոսական ասքը: Ներսես Աշտարակեցին այս վեպի կենտրոնական կերպարներից է՝ իր հերոսական գործերով ու կանխատեսումներով: Կործանված Երևանի բերդի ավերակների մեջ կանգնած և հայացքը հառած Արարատյան դաշտին՝ Ներսես Աշտարակեցին երևակայության մեջ տեսնում էր արարչության ժամանակների ու գալիք վերածնվող Հայաստանի դյութիչ պատկերը. «...հենց գիտեր, թե երկնքիցն ա Երևանու դաշտին մտիկ տալիս, նոր ըլի դրախտը նրա աչքի առաջին բաց էլել, նոր ըլի ջրհեղեղը դադարել, նոր ըլի Որդին Միածին վեր էկել, որ իր արդար, սիրելի հայոց ազգին փրկություն բերի»[23]:

Հայոց ազգի փրկությունը հուսալի կդառնար, եթե անհապաղ իրականացվեին երկու շատ կարևոր ձեռնարկում. նորանվաճ, ավեր ու ամայի Արարատյան աշխարհը վերաբնակեցվեր տակավին 17-րդ դ. սկզբներին Շահ-Աբբասի հրամանով Պարսկաստան քշված բազմահազար հայերով և երկրի անվտանգությունն ու խաղաղությունն ապահովելու համար ստեղծվեր հայկական բանակ: Նվիրվելով դրանց իրագործմանը՝ Ներսես Աշտարակեցին կարճ

---

21 Ա հմր. 98, էջ 4–5 (հմմտ. Ե VIII, 108):

22 Ն. տ., էջ 131 (հմմտ. Ե VIII, 149 և 187):

23 «Վերք Հայաստանի», Ե., 1981, էջ 290:

ժամանակամիջոցում կարողանում է հաղթահարել պաշտոնական և այլ կարգի արգելքները և Պարսկաստանի բազմաթիվ գավառներից տասնյակ հազարավոր հայեր փոխադրել Արարատյան աշխարհ: Նա աշխատում է նաև դեռ պատերազմի տարիներին ձևավորված հայ աշխարհազորայինների ջոկատներից ստեղծել «հայոց դոնշունը» (բանակը), բայց վերջինս մնում է կիսակատար. դիտելով Ներսես Աշտարակեցու այդ քայլը որպես անջատողական ձգտումների արտահայտություն՝ Ռուս տերությունը 1828 թ. ամռանը նրան կամավոր աքսոր է ուղարկում Բեսարաբիա, իսկ հավաքված ջոկատներն էլ ցրում:

Աբովյանը «Վերք Հայաստանիում» ողջունել է Ներսես Աշտարակեցու այս երկու ձեռնարկումները նույնպես. «Միթե Ներսես եպիսկոպոսը չէ՞ր, որ... հայոց մեծ մասը քարոզելով, հորդորելով, ռսի ձեռի տակը բերեց: Քանի՛, քանի՛ քաղաքներ, գեղեր դարտակվեցան ղզլբաշի և օսմանցվի երկրումը ու քանի՛սն էր Հայաստան, Վրաստան նրանցով լցվել»,- հիացմունքով ավետում է նա[24]:

1843 թ. ամռանը, վեպի այս գաղափարներն ու կերպարները մտքում ու հոգում, Աբովյանը փոխադրվեց Երևան և տփղիսյան ձախողանքներն առժամանակ մոռացած՝ երկրորդ և, թերևս, վերջին անգամ փորձեց արդեն բուն Հայաստանում քննության դնել ազգային վերածնության իր ծրագիրը, ուշադրությունը կենտրոնացնելով առավելապես դպրոցի վրա, որովհետև առանց կրթության և լուսավորության անհնարելի է կյանքի վերափոխումն ու հոգևոր վերածնունդը: Երևանի մթնոլորտը բարենպաստ չէր, սակայն Աբովյանը կարողացավ կարճ ժամանակամիջոցում կենդանացնել տեղական ուսումնարանը, զուգահեռաբար հիմնելով նաև սեփական դպրոցը՝ պատրաստելու համար գաղափարակիցներ և ապագա՝ ժողովրդական դպրոցների ղեկավարներ: Օրավուր ստվարանում էր աշակերտությունը: Աբովյանը համակիրներ և աջակիցներ է գտնում նաև երևանցիների շրջանում, որոնց օգնությամբ ուսումնարանին կից տնկում է բավական ընդարձակ մի այգի՝ աշակերտներին փորձնական գյուղատնտեսության մեջ վարժեցնելու նպատակով: Զուգահեռաբար, Աբովյանը նաև ստեղծագործում էր՝ ընթերցողներ ունենալով գերազանցապես իր աշակերտներին: Այս գործերի ու հոգսերի մեջ էր նա, երբ 1844 թ. փետրվարին Էջմիածնից հաղորդեցին Ներսես Աշտարակեցու կամքն ու խնդրանքը:

(Շարունակելի)

---

[24] Ն. տ., էջ 210-211:

ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՍԵՎԱՆԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԸ ԵՎ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Սևա՞ն: Որքա՞ն հարազատ է այս անունը յուրաքանչյուր հային, և որքա՞ն սեր, հավատ ու երազանք, եմայք է պարունակում իր մեջ: Ամենքիս ճիշտ այս անունը ճգվում է դեպ Հայաստան երկրի հազարամյա պատմության ակունքները, հզոր ուժ ու զորություն ներշնչում, ոգևորում: Դարեր շարունակ դիմակայելով բազմաթիվ փորձություններին, մահառելով, նորոգվելով ու բարեհորոգվելով մեր երջանկահիշատակ նախնիների կողմից, պահպանվել ու հասել է մեզ:

«Սևան» անունը, համաձայն ուրարտագետների, ՍՈՒԻՆԻԱ տեղանվան ձևափոխությունն է, որը հիշատակվում է Սևանա լճի ափին Ռուսա I-ի /730-714 թթ. մ. թ. ա./ «Օձաբերդի» սեպագիր արձանագրության մեջ և նշանակում է ԼԻՃ[1]: Կղզում մարդը բնակություն է հաստատել շատ վաղ ժամանակներից: Ըստ ավանդության և գրավոր աղբյուրների, Բագրատունիների տիրապետության ժամանակ, եեթանոսական ժամանակներում, այստեղ կառուցված է եղել մի տաճար իր մեհյանով, որը և համարվել է Այուցյաց նախարարների սրբավայրը, շրջապատված է եղել խոշոր ամրակառույց պարիսպով ու գմբեթավոր ամրոցով: Վերջինիս հիմնադրման ժամանակը ստույգ հայտնի չէ: Բերդապարիսպների հիմնապատերը պահպանվել են մինչև մեր օրերը:

301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հաստատելուց հետո, Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ արքայի հետ ողջ հայոց աշխարհում և ամենուր տարածելով քրիստոնեությունը, գալիս է Գեղամա ծովի շրջանը, անցնում կղզի, վերացնում տեղի մեհյանները և նրանց փոխարեն կառուցում մի տաճար՝ անվանելով ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ:

Համաձայն ավանդության, արքան, կղզին նմանեցնելով Գողգոթայի բարձունքին, հայտնում է, որ այստեղ պետք է լինի Քրիստոնեության սրբավայր, ասելով ՍԱ Է ՎԱՆ: Դա տեղի է ունենում 305 թվականին: Այս մասին Մանվել Կյումուշխանեցին գրում է. «Բոլոր կղզին արքայի խորհրդով վերակոչեցին ՍԱ Է ՎԱՆ, իբր թէ, որ երբեմն բագնաց էր տեղի, յետ այսորիկ եղիցի անխոյեենիցն Բագնեաց, մեհնամարտիկ զինուորացն Քրիստոսի, հարց անառատականաց բնակութիւն և վանք: Սակայն յետագայ կրճատելով զոմանս տառս՝ ասացին ՍԱՎԱՆ կամ ՍԵՎԱՆ: Քանի որ գերերջանիկ հաւատոյ Հայրն մեր, միշտ որպէս հաստուկ պաշտպան իւր ուներ զսուրբն Յովհաննէս Կարապետ ուստի և աստ՝ մերձ սուրբ Յարութեան սրբացեալ Տաճարին կառոյց և մատուռ մի անուանելով Սուրբ Կարապետ, ի պատիւ Ամլորդուոյն և արքային Տրդատայ»[2]: Մինչ այդ, Բագրևանդի գավառի նորակառույց Երեմ-Խորան կոչվող եկեղեցին սրբացնելով

---

[1] *ԼՌ ՊՊԿԱ, ֆ-1063, գ-340, ց-1 (Սևանա կղզին և նրա պատմական հուշարձանները /ժամանակագրական տախտակ/):*

[2] *Մանվել Կյումուշխանեցի. Պատմութիւն Անցից Անցեալոց Սևանայ վանուց. 1871. էջ 7-10:*

Սուրբ Հովհաննես Կարապետի անունով, «անդ մկրտեալ զարմայն ՏՐԴԱՏ ՅՈՀԱՆՆԷՍ վերակոչեաց»[3]:

Սուրբ Հարության տաճարը հետագայում երկրաշարժից ավերվում է, իսկ Սուրբ Կարապետը՝ խարխլվում: Կղզու բարձրադիր մասում մինչև օրս պահպանվել են տաճարի հիմնապատերը, այն 18-րդ դարի երեսնական թվականներին պեղել, հողից մաքրել է վանքի 40 տարվա եգնավոր Թիֆլիսեցի Մելքոնը: Այդ ժամանակվանից սկսած ինչպես վանքը և կղզին, այնպես էլ լիճն ու շրջակա ավազանը կոչվում են ՍԵՎԱՆ, սակայն շրջապատող լեռները պահպանել են նախկին ԳԵՂԱՄԱ անունը՝ տանելով մեզ դեպի դարերի խորքը: Գրիգոր Լուսավորիչը այստեղ հիմնելով Քրիստոնեության այս օջախը, վանքսրբավայրում է թողնում Կեսարիայից իր հետ բերած կրոնավորներին, որոնց բեղմնավոր աշխատանքի շնորհիվ շենացվում է վանքը, դարձվում հոգևոր մշակութային կենտրոն, կրթական, գրչագրական օջախ և ուխտավայր[4]:

Թեև կղզին ու նրա սրբավայրը շրջապատված էին ծովով և պաշտպանված ամուր շրջապարիսպով, անառիկ բերդ էր համարվում, սակայն միշտ չէ կյանքը այնտեղ խաղաղ ընթացել: Սրբավայրը հանախակի հնթարկվել է այլազգիների հարձակումներին ու սպատակություններին: Երբեմն-երբեմն հրոսակախմբերին հաջողվել է կովով հասնել մինչև Սևան և նույնիսկ մուտք գործել կղզի՝ ավերել ու թալանել սրբավայրը: Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը գրում է, որ առաջին անգամ 706 թ. դա հաջողվել է արաբ ոստիկան Մահմետին[5]:

Որքան էլ օտարները ցանկացել են վերացնել այդ սրբօջախը, նվիրյալ հոգևորականները, ազնիվ իշխանները և ժողովուրդը կրկին վերականգնել ու վերակենդանացրել են այնտեղ հոգևոր կյանքը: Առանձնապես բարգավաճում է սրբավայրը Մաշտոց Եղիվարդեցու օրոք: Այս շրջանում ևս արգելված է եղել կանանց մուտքը Սևանի վանք (արգելքը վերացվում է 1848 թ. Ներսես Աշտարակեցու կոնդակով): Միակ բացառությունը Մաշտոց վանահայրը վերապահել է Սյունյաց Գարուռն իշխանի այրի, Աշոտ Ա-ի դուստր բարեպաշտ Մարիամին: Մարիամը ամուսնու մահից հետո հեռանում է աշխարհիկ կյանքից, գալիս Ցամաքարերդի կուսանոց, որտեղ մենակյաց կյանք է վարում: Հեռվից դիտելով կղզու վանքը, ցանկանում է այնտեղ բարեկարգումներ կատարել և, ի հիշատակ ամուսնու, երկու տաճար կառուցում: Ավանդության վկայությամբ, աստվածապաշտ արքայադուստրը իր միջոցներով 874 թ. Մաշտոց վանահոր աջակցությամբ կղզու գագաթին, Սուրբ Հարության և Սուրբ Կարապետի տաճարների տարածքի կենտրոնում, կառուցում է երկոտասան Առաքելոց եկեղեցին, իսկ կղզու ստորոտի հարթակում՝ Սուրբ Աստվածածնի: Առաքելոց տաճարին կից կառուցում է իր համար մի առանձին խուց, որտեղ և եգնում է մինչև իր կյանքի վերջը: Ինչպես կղզու գագաթին, այնպես էլ ստորոտին Ս. Աստվածածին եկեղեցուն կից կառուցում է միաբանության անդամների և այլ կարիքների համար մի շարք խցեր, կացարաններ[6]:

Աշոտ արքան 883 թվականին Վրաստանից վերադարձի ճանապարհին գալիս է Սևանի վանք՝ տեսնելու այդ ժամանակ իր բազմաթիվ գործերով հանրանանաչ

---

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

5 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, 1812, Թիֆլիս, էջ 93-9:

6 Մ. Կյումուշխանեցի, Նույն տեղում էջ 17-20, Մուրացան, հ. 7, էջ 61-90:

դարձած Մաշտոց վանահորը և իր դստերը: Այստեղ, ականատես լինելով կղզում կատարված բարեփոխումներին, նա վանքին է նվիրում մի շարք գյուղեր, այդ թվում՝ այժմյան Ցամամաքերդն ու Գոմաձորը, այգիներ, հողատարածքներ, միևնույն ժամանակ մի ոսկեզօծ արծաթյա խաչ՝ Կենաց փայտի մասունքով[7]:

Կղզու տափարակի վրա, բացի Ս. Աստվածածին տաճարից, կային միաբանության կացարաններ, սեղանատուն, ամբար, դարբնոց, թանգարան, որտեղ պահվում էին եկեղեցական հանդերձներ, խաչեր, մասունքներ, հայկական դրոշի երկաթյա խաչ՝ Սուրբ Նշան անվամբ, որն ըստ ավանդության պատրաստել է Թադեոս Առաքյալն այն կաթսայի կողից, որում լողացրել են նորածին Քրիստոսին:

Վանքը, բացի կրոնական պարտականություններից, որպես իր ժամանակի անառիկ ամրոց և ապահով վայր, ծառայել է նաև իշխանների արժեքավոր իրերի, ձեռագրերի պահպանման համար: Այնտեղ եղել է հարուստ մատենադարան, որը 1923 թ. փետրվարի 21-ին կառավարության որոշմամբ փակվել է: Առգրավվել են ինչպես թանգարանի, այնպես էլ մատենադարանի ամբողջ արժեքները և պետականացվել[8]: Մինչ այդ Սևանի մենաստանը 1911 թվականին, արձագանքելով էջմիածնի նորաբաց մատենադարանի խնդրանքին, նրան է նվիրում երեք արկղ ձեռագիր մատյաններ, որի համար արժանանում է մատենադարանապետ Մեսրոպ արքեպիսկոպոսի շնորհակալությանը («Արարատ», 1912, թիվ 1):

Այս սրբավայրը նշանավոր է նաև նրանով, որ IX-X դարերում Հայ եկեղեցուն է տվել երեք Կաթողիկոս՝ Մաշտոց Ա Եղիվարդեցի /897 թ./, Ստեփանոս Գ /970 թ./ և Սարգիս Ա /992 թ./, նաև մի քանի արժանավոր գիտնական եպիսկոպոսներ և վարդապետներ, որոնք իրենց ավանդն են բերել մեր ժողովրդի հոգևոր մշակույթի, մտավորական կյանքի զարգացման գործում[9]:

Սևանի վանքը, որը կոչվել է Սուրբ Առաքելոց և Սուրբ Աստվածածին, դարերի ընթացքում իր միաբանների հոգևոր-հայրենանվեր գործերով մեծ հեղինակություն է վայելել ժողովրդի մեջ, այդ պատճառով էլ միշտ ուխտավորների թիվը անպակաս է եղել այնտեղ: Պաշտելով, որպես Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնած սրբավայր, այնտեղ են եկել հեռու և մոտիկ տեղերից, տարբեր բնակավայրերից ու գավառներից, մասնակցել տոներին ու ծիսակատարություններին, խոնարհվել սուրբ մասունքներին, մատաղ ու նվիրատվություններ արել, իսկ ուշևոր և հարուստ մարդիկ, իշխաններ, երբեմն ստանձնել են վանքի տաճարների, կացա-

---

7 «Ազգագրական հանդես», 1908, գիրք 17, էջ 74: «Հովիվ», 1906, թիվ 11:

8 ՀՀ ՊՊԿԱ ֆ-60, ց-1, գ-284: «Ազգագրական հանդես», 1908, գիրք 17, էջ 85: Էջմիածին, 1912, թիվ 1: Մեսրոպ Սմբատյան, Տեղագիր, էջ 111:

Ծանոթություն- Սիմեոն Կաթողիկոսի կոնդակով 1760-ական թվականներին այստեղ վանահայր է նշանակվում Հովհաննես վարդապետը, ի տարբերություն իր նախորդների, վարում է ցոփ ու շվայտ կյանք, չի պահպանում հնավանդ արժեքները /մատյաններ, հիշատակարաններ, գրքեր/, որոնք քայքայվում են: Իմանալով, որ Սիմեոն Կաթողիկոսը ցանկանում է այցելել այս մենաստան, գիր ու գրականություն սիրող Կաթողիկոսի կողմից չնախատվելու համար, ամբողջ վնասված գրքերը գիշերը ծովն է նետել տալիս՝ դարձնելով դրանք ձկների բաժին, ոչնչացնելով արժեքավոր բազմաթիվ մատյաններ:

9 Մեսրոպ Սմբատյան, Տեղեկագիր, էջ 127:

ռանների վերանորոգումների հոգսը, նյութական օժանդակությունը[10]: Այդ հինավուրց սրբավայրը մշտապես գտնվել է ուշադրության կենտրոնում և հետազոտվել, ուսումնասիրվել հայ և օտար գիտնականների, ճարտարագետների, հայագետների, հնագետների կողմից, որոնք, արտահայտելով իրենց հիացմունքը Սևանի, նրա պատմաճարտարապետական կառույցների, հուշարձանների և սրբավայրերի հերոսական անցյալի մասին, գրել են իրենց տպավորությունները (Կոմսուհի Ուվարովա, Ե. Լալայան, Ն. Մ. Տոկարսկի և այլք):

Աղբյուրների վկայությամբ, օտարները մեկ անգամ չէ, որ, ցանկանալով տիրանալ Հայաստանին, ձգտել են դեպի Սևան, սակայն ամեն անգամ ստացել են հակահարված: Որպես օրինակ հիշենք Աշոտ Երկաթի կռիվը Բեշիրի դեմ, երբ Աշոտ Երկրորդը, թեև հակառակորդի կողմից շրջափակված լինելով կղզում, իր փոքրաթիվ բաջարի զինվորներով հարձակվում է գերազանցող թշնամու վրա, հալածում և պարտության մատնում[11]:

Այս սրբավայրի տաճարներին գրվել են և պահպանվել բազմաթիվ վիմագիր արձանագրություններ, սակայն ցավոք, Ս. Աստվածածինը բանդելու հետևանքով, դրանց մասին կարելի է տեղեկանալ միայն գրքերից: Այդ վիմագրությունները արձանագրել են մենաստանում կատարված անցուդարձերը, բարեգործությունները, նվիրատվությունները և այլն: Որպես օրինակ կարելի է հիշատակել Թիֆլիսեցի մեծահարուստ Չիթախյան եղբայրներին վերաբերող արձանագրությունը, որոնց նյութական միջոցներով 1654 թվին նորոգվել է Սուրբ Առաքելոց տաճարը, տասը տարի անց, 1664-ին, կղզու ստորոտում կանգնած Ս. Աստվածածին եկեղեցին: Նրանց միջոցներով վերանորոգվել են նաև Հաղարծինի վանքի եկեղեցիները[12]:

Այստեղ խոշոր բարեգործություններ է արել նաև Նոր Բայազետի իշխան Բարսեղ Արծրունին, որը հայտնի է իր բազմաթիվ բարեգործություններով, և որին Ներսես Կաթողիկոսը 1850 թվին հատուկ կոնդակով նշանակել էր այսպիսի մի ամբողջ գավառի վանքերի հոգևոր վերատեսուչ: Նա այն միակ աշխարհական անձն էր, որը տասը տարի բարեխղճորեն կատարեց այդ պարտակա-նությունները[13]:

Մինչև 1836 թվականի Գոլոժենիի /Կանոնադրություն/ ընդունումը, Գեղարքունիքի 24 գյուղեր կազմում էին Սևանի վանքի թեմը, իսկ նրա վանահայրը համարվում էր այդ թեմի առաջնորդը: Գոլոժենիից ընդունելուց հետո, վանքը միացվում է Երևանի թեմին և ենթարկվում թեմի կոնսիստորի իրավասությանը: Դրանով Սևանի վանահայրերը զրկվում են մինչև այդ գոյություն ունեցող առաջնորդական թեմից ու տիտղոսից: Նրանց իրավունք է վերապահվում միայն միաբանությունից վանահայրեր ընտրել, որը հաստատում էր Ս. Էջմիածինը:

Ցավոք, 1920-1930-ական թվականների հակակրոնական արշավից մեծապես տուժեց նաև Սևանի վանքը: 1921 թ. դեկտեմբերի 17-ի Դեկրետով ընդունված որոշման հիման վրա 1923 թ. փետրվարի 21-ին առգրավվում են վանքի թանգարանի և մատենադարանի ամբողջ արժեքավոր իրերը, ձեռագրերն ու գրքերը, պետականացվում վանքի բոլոր շինությունները: Իսկ 1930 թ. փետրվարի 24-ին, չնայած Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից (նրա անդամ

---

10 «Ազգագրական հանդես», Ե. Լալայան, 1908, Սևան: Մուրացան, հտ.7, էջ 80:

11 Ստեփան Գալստանյան, Հայոց Պատմություն, գլուխ 49, էջ 261, 264:

12 «Ազգագրական հանդես», 1908, գիրք 17, էջ 80:

13 Նույն տեղում, էջ 66: Մ. Սմբատյան, Տեղագիր, էջ էջ 65-66, 73, 116:

Գարեգին արքեպիսկոպոսի ստորագրությամբ) կառավարությանը հղած վանքի պատմական նշանակության մասին բացատրագրին և խնդրանքին՝ վանքը չլուծարելու և «թուլատրելու վանահորը կրկին վերադառնալու իր տեղը», «յանձնելու նորան ներքևի ՆՈՐԱԳՈՅՆ եկեղեցին /ընդգծումը մերն է, հավանական է, խոսքը վերաբերում է Ս. Աստվածածին եկեղեցուն/, ուր ժամերգութիւններ է կատարւում, թողնել վանահայրական բնակարանը էջմիածնի տրամադրութեան տակ...», այն մերժվում է՝ «ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ՈՐ ՍԵՎԱՆԸ ԴԱՐՁՎԱԾ Է ՀԱՆԳՍՏԻ ՎԱՅՐ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՍՇՏԱԲՈՎ» պատճառաբանությամբ: Դրա վկայությունն են ՀՀ ՊՊԿ արխիվում պահվող Լուսժողկոմատի կարգադրությամբ այն լուծարելու արձանագրությունը և այլ փաստաթղթեր[14]:

Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը շուրջ տասը դար դիմակայել էր բազում ասպատակությունների և արհավիրքների, կանգուն էր մնացել ու իր ծառայությունը մատուցել հավատացյալ ժողովրդին, հավանական է, այդ տարիներին էլ ավերվել է: «Հավանական» բառը օգտագործում ենք այն պատճառով, որ մի շարք հեղինակների վկայությամբ և ոմանց կողմից ներկայացված կամ կատարած լուսանկարներ հիմնավորում են դրա գոյության փաստը, սակայն չգիտես ինչու, նույնիսկ մեր ժամանակների որոշ հեղինակավոր հրատարակություններում /Ճանապարհորդի հանրագիտարան, ռուսերեն, 1990, Երևան, էջ 194, 196, 199/ թերակղզու գագաթի երկու կանգուն տաճարներից մեկը համարում են Ս. Աստվածածին եկեղեցին: Իսկ ոմանք էլ համարում են այն ուշ միջնադարի կառույց: Կարծում ենք, որ դա վրիպում է:

Երախտապարտ ենք մեր լուսահոգի նախնիներին, հոգևորականներին և մտավորականներին, որոնք ժամանակին մտահոգվել են այդ պատմական հուշարձանի վերերին տարբեր ժամանակներին արած արժեքավոր արձանագրությունների նկատագրով՝ հետազոտելով գրի են առել և լուսանկարելով գրանցել ու թողել ապագային: Այս առիթով ավելորդ չէ մեկ անգամ ևս անդրադառնալ Մարիամ իշխանուհու միջոցներով կղզու ստորոտի հարթ տարածքի վրա կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցու նկարագրությանը, վանահայրերի ձեռնարկած բարեշորոգումներին և այլ հարցերի: Որոշ հեղինակների այն կարծիքը, թե իբր Ս. Աստվածածինը գտնվել է կղզու գագաթին, լուսանկարը, որը ներկայացված է Երվանդ Լալայանի կողմից 1908 թ. Ազգագրական հանդեսում և Մատթևոս Փափազյանի «Հնությունք հայրենյաց» պատկերազարդ ալբոմում /Վաղարշապատ, 1889 թ./, ժխտում են այդ սխալ կարծիքը: Իսկ գրավոր աղբյուրները նաև վկայում են, որ այն կառուցվել է անգմբեթ ու առանց զանգակատան, սև սրբատաշ քարից: Ունեցել է երկու դուռ, մի քանի փոքր լուսամուտ: Հետագայում վանքի բարեպաշտ վանահայրերի կողմից մեծահարուստ իշխանների տրամադրած միջոցներով վերանորոգվել են վանքի տաճարները, այդ թվում՝ Ս. Աստվածածնի, կատարվել հավելումներ՝ ավելի բարետես դարձնելով սրբավայրը:

Այսպես, օրինակ, 17-րդ դարի հիսունական-վաթսունական թվականներին, իրար հաջորդող երկու Մխիթար վանահայրերի կողմից 1654 և 1664 թվերին թիֆլիսեցի մեծահարուստ եղբայրներ Սուլխան, Ջալ և Ջոհրապ Չիթախյանների վանքին տրամադրած միջոցներով վերանորոգվել են Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները[15]:

---

14 ՀՀ ՊՊԿԱ, ֆ–409, ց–1, մաս 9, գործ 2413, թ–6:

15 «Ազգագրական հանդես», 1908, գիրք 17, էջ 80–81:

1740-ական թվականներին վանահայր Մարտիրոս Չերխեզյանը /Մաղկունիի Շաբիզ գյուղից/, մի շարք բարեկարգումների հետ մեկտեղ, վերանորոգել է Սուրբ Աստվածածնի օրորոցաձև տանիքը սրբատաշ քարով, որի վերաբերյալ նրա արևմտյան պատին թողել է մի վիմագիր արձանագրություն, սակայն 80 տարի անց՝ 1820 թվականին տեղի ունեցած երկրաշարժից քանդվել է նրա տանիքը[16]:

1828-ին այստեղ նոր վանահայր է կարգվել Հովհաննես վարդապետ Տեր-Մարտիրոսյանը՝ Ղազախի Աչաջուր գյուղից: Նա 1832 թվին վերանորոգել է Ս. Աստվածածին եկեղեցու քանդված տանիքը: Նորոգության ծախսերը հոգալու միջոցներ հայթայթելու համար Շաբիի կողմերն է ուղարկում Կարապետ վարդապետին՝ ծառայի հետ, սակայն նրանք գոհվում են ավազակների ձեռքով, իսկ Լմեցի Ստեփանոս վարդապետի միջոցներով նորոգվել է այդ եկեղեցու գավիթը: Նրա խնդրանքով 1830-ին Մանվել Կյումուշխանեցին գրում է «Պատմութիւն անցից անցելոց Սեանայ վանուց» գիրքը /1871 թ., Վաղարշապատ/[17]:

Վանահայր Մարջանյան Շիրակացին 1861 թվին կղզու տափարակ տարածքում տնկել է մի շարք ուռենիներ ու բարդիներ, պարտեզ գցել, բանջարեղեն անեցրել, դրա հետ մեկտեղ միաբանների մեջ թեյ գործածելու սովորություն մտցրել, նույնիսկ այդ նպատակով միաբաններին որպես ժամոց՝ տարեկան 36 ռուբլի բաժանել[18]:

1869 թ. այստեղ կրկին վանահայր է կարգվում վարդապետ Բլբուլյանը /նա 1858-1861 թթ. եղել էր այստեղ վանահայր և հրաժարվել/: Նա Ղազախի Քարվանսարա գյուղից էր: Նա ևս ծավալում է մի շարք շինարարական աշխատանքներ՝ բարեկարգում է կացարանները, միաբանության անդամների և ուխտավորների համար բնակության բարվոք պայմաններ ստեղծում: Վերոհիշյալ Չիթախյանների սերնդակից՝ մեծահարուստ Հովհաննեսի կողմից վանքին նվիրաբերած երկու հարյուր ռուբլի գումարով ծածկում է Ս. Աստվածածին եկեղեցու տանիքը թիթեղով, իսկ արևմտյան դռանը կից շինության՝ գավթի կտուրին չորս հենասյուների վրա պատրաստած հարթակին կանգնեցրել է վեց հենասյուներով փայտյա գմբեթ-զանգակատունը[19]:

1895 թվականին Մկրտիչ Ա Կաթողիկոսի կոնդակով այստեղ վանահայր է կարգվում նոր Բայազետի հայոց դպրոցի ուսուցիչ սարկավագ Սարգիս Փիլոյանը /հետագայում՝ եպիսկոպոս/: Նախորդների հետևողությամբ նա ևս կատարում է մի շարք շինարարական բարեկարգումներ, այդ թվում՝ բաժնեցի Լյուդվիգ Սարգսյանի և վանքի միաբան Սողոմոն սարկավագի ծախսով 1903 թ. կառուցում է Սուրբ Աստվածածին եկեղեցու սրբատաշ սև քարից գեղեցիկ զանգակատունը, որպիսին պատկերված է Ե. Լալայանի լուսանկարում: Այն տպագրվել է «Ազգագրական հանդեսի» 1908 թվականի թիվ 17 գրքում: Ըստ ականատես Երվանդ Լալայանի, Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցված է եղել սրբատաշ սև քարից՝ բաղկացած ժամատնից, նորակառույց չորս քարե սյուներով զանգակատնից և փայտաշեն գավթից: Ժամատունը եղել է օրորոցաձև և անգմբեթ, երկարությունը՝ 10 մ 40 սմ, լայնությունը՝ 10 մ, բարձրությունը՝ 9

---

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում, էջ 64:

18 Նույն տեղում, էջ 66:

19 Մատթեոս Փափազյան, Հնություն հայրենյաց, պատկերազարդ ալբոմ, Վաղարշապատ, 1889:

մետր. դրսից ուշագրավ ոչինչ չի ունեցել: Ներսից՝ երկու հասարակ ամբողջական և վեց որմնասյուների վրա բոլորած ռոմանական կամարներ և նույնիսկ կամարակապ ձեղուն: Ներսից գեղեցիկ սպիտակեցված, ունեցել է մեկ սեղան և երկու ավանդատուն, հինգ փոքրիկ և նեղ պատուհաններ. Սեղանը զարդարված գեղեցիկ խաչկալով և Ս. Աստվածածնի «Ալեքսանդրապոլի Ցոր Վերք» կոչված պատկերի ընդօրինակով, ձեղունից կախված են եղել երկու ջահ, կանթեղներ և այլն[20]: Եկեղեցու վեմին և գավթի փայտե սյան վրա եղել են մի շարք հիշատակություններ, ինչպես, օրինակ, վերջինիս գրի առած արձանագրությունը՝ «Ցամի Տեառն 1836 նորոգեցան ի հիմանէ գաւիթս Սուրբ Աստուածածնի և մեկ մառան, չորս օդայ. մեկ երկար ֆուշայիւ, արեամբ և ծաղկեօք Լմեցի ծերունազարդ ի Քրիստոս հանգուցեալ Ստեփաննոս ճգնեազգեաց վարդապետին, որ նախքան զվախճան իւր կտակաւ աւանդեաց զծախսն այսոցիկ միում միաբանից անապատիս Նիկողայոս վարդապետին, գիտութեամբ առաջնորդի տեղւոյս Յովհաննէս վարդապետին, և բոլոր միաբանիցս, որ և աւանդեցաւ օգնութեամբ Աստուծոյ և ձեռնտուութեամբ բոլոր միաբանիցս»:

Ըստ ավանդության և գրավոր որոշ աղբյուրներից տեղեկանում ենք, որ 1692 թ. Մխիթարյան ուխտի ապագա հիմնադիր Մխիթար Սեբաստացին, տառապելով աչքերի հիվանդությամբ, տասնվեց տարեկան հասակում գալիս է այս սրբավայրը՝ ուխտի, որտեղ Սուրբ Աստվածածին եկեղեցում, Տիրամոր սրբապատկերի առջև, խոնարհվելով տեսիլքում տեսնում է Աստվածամորը և Տիրամայրը հարցնում է, թե «Ի՞նչ կխնդրէ»: «Մխիթարը հիացած, յափշտակուած, կը մոռանայ խնդիրքը, չգիտենալով ինչ պատասխանել, և վարանած կըսէ «Այն կուզիմ, Տիրուհի, ինչ որ Դու կուզիս»– «Եղիցի» կը պատասխանէ Տիրամայրը, և տեսիլքը կը վերանայ»: Այդ հրաշքով բացվում են նրա աչքերը: Ուրախանալով, որ փրկվել է այդ անտանելի տանջանքից, նա երգում է. «Մինչ կոյր էի խնդրեցի զի ի Կուսէդ Լոյս տացի» երգը: (Վարք Մխիթարայ Արրայի Սեբաստացւոյ, Վ. Թորոսյան, Վենետիկ, 1901, Գլուխ Գ, էջ 64–76):

Արփենիկ Ղազարոսյանը «ՍԵՎԱՆԻ ԿՂԶՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ» ուսումնասիրությունում փաստերով հիմնավորում և ներկայացնում է այն հարցը, որ մինչև այսօր Սևանի գագաթին կանգուն տաճարներից մեկը, որը համարվել է Սուրբ Աստվածածինը, իրականում Սուրբ Առաքյալի տաճարն է: Ինչպես ստորոտի Սուրբ Աստվածածին եկեղեցու կառուցման տարեթիվը, այնպես էլ Սուրբ Առաքյալինը ոչ թե 874 թվականն է, ինչպես հիշատակում են մի շարք հեղինակներ՝ հիմք ընդունելով կղզու գագաթի Ս. Կարապետի մի վիմագրությունը՝ 874, այլ հիմնավոր փաստերով և հաշվարկներով նա ապացուցում է, որ դրանք իշխանուհի Մարիամի ձեռքով կառուցված են եղել 871 թվին, և որ կառուցման տարի համարվող 874 թիվը պարզապես վանքին բերած նվիրատվությունների տարեթիվն է, որ գրվել է եկեղեցիներից ամենահնի վրա և այլն[21]:

1892 թվականի կաթողիկոսական ընտրությունների ժամանակ Սևանի մենաստանին իրավունք է վերապահվել ընտրություններին մասնակցելու մեկ ձայնի իրավունքով: 19 տարի անց «Մշակը» իր 1911-ի թիվ 150 համարում գրում է. «Այս մենաստանը նման չէ մյուս վանքերին, իր ներքին գործերում բոլորովին անկախ է, այդ անկախությունը միայն իրավական չէ, այլև տնտեսական: Այս անապատը իր հասույթներից ոչ մի կոպեկ պարտավոր չէ ուղարկել էջմիածին,

---

20 «Ազգագրական հանդես», 1908, գիրք 17, էջ 73–74:

21 Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, թ. 1, էջ 50:

ոչից ոչինչ չի ստանում, իր հասույթը ամբողջ ծախսում է իր պետերի համար: Վանահայրը այս մենաստանում միևնույնն է, ինչ որ Կաթողիկոսը էջմիածնում, ամեն ինչ նրանից է կախված...»[22]:

Ամփոփելով ասենք, որ կղզու գագաթին եղել են Ս. Հարության, Ս. Կարապետ և Ս. Առաքելոց եկեղեցիները, իսկ փոքր ինչ ներքև, ստորոտի հարթակի վրա՝ Ս. Աստվածածին եկեղեցին և Ս. Սարգիս կամ Ս. Մինաս մատուռը: Տարբեր ժամանակներում դրանց մի մասը ավերվել են, իսկ Ս. Աստվածածինը, գրավոր աղբյուրների և մեր ժամանակների ականատեսների վկայությամբ, մինչև 30-ական թվականները կանգուն է եղել: Դրա հիմնավոր փաստերից մեկն է նաև 2999 թանգարանի ֆոտոարխիվում պահվող 1318 թիվ 1617 լուսանկարը, որտեղ կղզում դիտվում է նաև այդ եկեղեցու գմբեթը:

Այժմ իրենց սկզբնական տեսքով մեզ են հասել միայն Սուրբ Կարապետ և Սուրբ Առաքելոց եկեղեցիները:

---

22 *«Մշակ», 1911, թիվ 150:*

ՀԱՅՐԱՊԵՏ ՇԱՏՎՈՐՅԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՆՔԻ ԱՎԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(1900–1920 թթ.)

Թիֆլիսի Վանքի Ավագ (կամ Մայր) եկեղեցում առընթեր Կրոնա-պատմական թանգարանը ստեղծվել է 1900 թվականին Բաքվի առաջին գիլդիայի վաճառական Ավետիս Բալայի Ղուկասյանի նախաձեռնությամբ և նրա կտակած գումարներով: Այդ ընկերության գործունեությունը, որը գոյատևեց մինչև Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատումը, մեր պատմագրության մեջ անբավարար է լուսաբանված, եթե չասենք, որ բոլորովին չի լուսաբանված:

Թիֆլիսի Վանաց Ավագ եկեղեցու վանահայր Գյուտ ավագ քահանա Աղանյանը, լինելով առաջադեմ հայացքների տեր մտավորական և պրպտող մտքի տեր անձնավորություն, իր հոգևոր ծառայությանը զուգահեռ զբաղվում էր հայոց բանասիրությամբ և պատմությամբ, հավաքում հայ ժողովրդի կենցաղին և պատմությանը վերաբերող նյութեր, այդ թվում՝ կրոնա-պատմական բնույթի: Նրա նվիրական երազանքն էր Թիֆլիսի Վանաց Ավագ եկեղեցու բակում մի թանգարանային շենք կառուցել և այնտեղ կենտրոնացնել եկեղեցու ներսում հավաքված հնությունները: Այդ գործի կազմակերպմամբ նա խանդավառում է իր ծխի անդամներից Բաքվի առաջին գիլդիայի վաճառական, շուշեցի Ավետիս Բալայի Ղուկասյանին: Վերջինս նույնպես հայ գրականությամբ և պատմությամբ հետաքրքրվող անձնավորություն էր և պարբերաբար զգալի միջոցներ էր տրամադրում բարեգործության և հայ մշակույթի զարգացման համար:

Ա. Ղուկասյանը սիրով համաձայնվում է Գյուտ քահանայի առաջարկին, առավել ևս, որ նա այդ ժամանակ ձեռնամուխ էր եղել իր կտակի կազմմանը: 1898 թվականի դեկտեմբերին Ա. Ղուկասյանը մի նամակով դիմում է Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցին՝ խնդրելով աջակցել Մայր եկեղեցու բակում իր միջոցներով թանգարանի համար շենք կառուցելու, «...ուր կարելի լիներ հետզհետե ժողովել քաղաքիս մեջ և զանազան տեղեր դրված մեր նախնիներից մնացած բազմահարուստ եկեղեցական և պատմական իրեղենները և կարող լիներ բանասերներին ծառայելու իբրև ուսումնասիրության մի տեղի...»[1], – գրում է նա դիմումում:

Սրբազանը Ա. Ղուկասյանի ցանկության մասին տեղյակ է պահում Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկին: Վերջինս մեծ գոհունակությամբ է ընդունում այդ առաջարկը: 1897 թվականի հունիսին Կաթողիկոսը հատուկ կոնդակով դիմում է Ա. Ղուկասյանին. «Մեծարգո պ. Ավետիս Ղուկասյանց, սիրելի մեր և հարազատ որդի Մայր Աթոռի: Տեղեկանալով ձեր նշանավոր կտակի մասին, որի մեջ չեք մոռացել մի նշանավոր տեղ տալ Մայր Աթոռիս ճեմարանի բազմակարոտ պետքերին, Տփխիսի վանքի Մայր եկեղեցու գավթում քսան հազար ռուբլիանոց մի հոյակապ շինություն կանգնելու կրոնա-պատմական թանգարանի համար և աչքի առաջ ունենալով, որ արդեն Սևանա վանքում ձեռնարկել եք Ձեր արդար վաստակից մի հոյակապ հաստատության կառուցման, մենք առանձին կոնդակով իրավունք տվինք Ձեզ և Ձեր ամուսնուն զկնի Ձեր վախճանի թաղվիլը վանքի Մայր եկեղեցու գավթում կառուցվելիք թանգարանի

---

[1] ՀՀ ՊՊԿԱ ֆ. 392, ց. 1, գ. 58, թ. 1:

շինության առաջ և մեր գոհունակությունն ու օրհնությունն այս ձևով հայտնեցինք Ձեզ, այս մասին գրվեցավ ի Տփխիս թեմական առաջնորդ սրբազան Գևորգ արքեպիսկոպոսին»[2]:

Կաթողիկոսի կոնդակը մեծ ոգևորություն և երախտիքի զգացում է առաջացնում Ավետիս Ղուկասյանի մոտ: Նա 1897 թ. հուլիսի 20-ին նամակ է ուղարկում Կաթողիկոսին, որտեղ նշում է, որ իր համար մեծ պատիվ է նրա կողմից արված իրավունքը՝ ամուսնու հետ միասին մահվանից հետո թաղվել Տփխիսի վանքի Մայր եկեղեցու գավթում, իր միջոցներով կառուցվելիք կրոնա-պատմական թանգարանի առաջ: Միաժամանակ նշում է, որ «Հայրապետական այդ շնորհը թող խրախուսիս լինի ինձ և ուրիշներին առաջադիմելու բարեգործության ասպարեզում հոգուտ մի շինության բազմակարոտ ազգին»[3]: Ավետիս Ղուկասյանի բարեգործությունը չի սահմանափակվում կրոնա-պատմական թանգարանի շենքի կառուցմամբ, ինչպես նշվեց վերևում: Նա ձեռնամուխ էր եղել Սևանա վանքում մի շինության կառուցմանը, որը պետք է ծառայեր որպես դպրոց: Կաթողիկոսին գրած նամակում նա նշում էր, որ մտադիր է այս ամառ ավարտել շինության առաջին մասը: «Մյուս մասի կառուցման մասին,– նշում է նա,– մենք կխոսենք այնտեղ, երբ Աստծո հաջողությամբ բաղդ կունենամ երկրպագել Իջման Սուրբ Սեղանին և Սրբությանդ աջը համբուրել»[4]:

Կաթողիկոսը այդ կոնդակով նաև մի խնդրանք է հայտնում: Նա գրում է, թե չնայած այն բանին, որ հայ պարբերական հրատարակությունը գոյություն ունի ավելի քան հարյուր տարի, սակայն նրա լիակատար ժողովածուն չկա աշխարհիս և ոչ մի հայ կամ օտար մատենադարանում, այդ թվում նաև՝ Մայր Աթոռի մատենադարանում: Այնուհետև ասում է, որ Կոստանդնուպոլսի մի նշանավոր բանասերի մոտ գտնվում է մի ալդպիսի ժողովածու, շատ քիչ բացառությամբ, որը գնահատված է 800 օսմանյան ոսկի կամ մոտ 5000 ռուբլի: Կաթողիկոսը խնդրում է Ավետիս Ղուկասյանին գնել այդ ժողովածուն և նվիրել Ս. Էջմիածնի մայր մատենադարանին: Պատասխան նամակում վերջինս, անդրադառնալով այդ հարցին, նշում է, որ չնայած հանգամանքները ներկայումս թույլ չեն տալիս այդպիսի մի ծախս նս անել, սակայն «Ի նկատի ունենալով, որ Վեհափառությունդ արժան է համարել այս առաջին խնդրով դիմել ինձ, ...ես պարտք համարեցի ձեր ի ցանկությունը կայացած տեսնել և որոշեցի տալ պահանջած հինգ հազար ռուբլի գումարը»[5]: Միաժամանակ նշելով, որ եթե իհարկե հնարավոր չէ ավելի պակաս գնով ձեռք բերել: Մի պայման նս դնելով, որ երբ այդ ժողովածուն բերել տրվի Ռուսաստան:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը 1897 թ. օգոստոսի 5-ի պատասխան նամակով շնորհակալություն է հայտնում իր խնդրանքը կատարելու համար և հայտնում, «որ ինքը կարգադրել է Կ. Պոլսից ապահով եղանակով առաքել ի Տփխիս հավաքածուն լրագրության հանուն հիշյալ Տ. Գյուտին ի նմանե ստանալ զգինս նոցին»[6]:

Այդ նույն ժամանակ Սևանի մենաստանի վանահայր Սարգիս վարդապետ Փիլոյանցը շնորհակալական նամակ է ուղարկում շուշեցի Ավետիս Ղուկասյանին՝ Սևանում դպրոց կառուցելու նպատակով նվիրատվություն կատարելու համար[7]:

---

2 ՀՀ ՊՊԿԱ ֆ. 992, ց. 1, գ. 650, թ. 1:

3 Նույն տեղ, գ. 57, թ. 1:

4 Նույն տեղ, գ. 992, թ. 1:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում, թ. 2:

7 Նույն տեղում, գ. 651, թ. 1:

Կրոնա-պատմական թանգարանի շենքի կառուցումը ավարտվում է 1900 թվականին: Այն սրբատաշ քարով կառուցված մի շենք էր, որի վրա ծախսվել էր ավելի քան երեսուն հազար ռուբլի: Շենքի կառուցման ավարտի մասին Ավետիս Ղուկասյանը 1900 թվականի հունիս 2-ին հայտնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին և խնդրում նրան ներկա լինել և անձամբ կատարել թանգարանի բացումը: Միաժամանակ ցանկություն է հայտնում, որպեսզի Վեհափառի կոնդակով հաստատվի մի մնայուն հանձնաժողով՝ թանգարանի գործունեության ղեկավարման համար: Ընդսմին տալիս է թեկնածուների անունները: Հանձնաժողովի անդամներ էին առաջարկված՝ հասարակական գործիչ Գևորգ Եվանգուլյանը, հրապարակախոս-թարգմանիչ և հասարակական գործիչ Աբգար Հովհաննիսյանը, հնագետ-պատմաբան Ալեքսանդր Երիցյանը և տեր Գյուտ ավագ քահանա Աղանյանը: Վերջինս առաջարկվում էր նաև որպես թանգարանի կառավարչապետ: Ա. Ղուկասյանը ցանկություն է հայտնում, որ հանձնաժողովի անդամները գործեն ցմահ, իսկ նրանցից որևէ մեկի մահվան դեպքում փոխարենը նշանակի Վեհափառը: Հանձնաժողովի հովանավոր է առաջարկվում նշանակել Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Սաթունյանցին: Ա. Ղուկասյանի ցանկությամբ, իր մահից հետո թանգարանի գործունեությունը պետք է իրականացվեր քարերարի կտակում նշված կարգով:

1900 թվականի հունիսի 15-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոնդակով դիմում է Վրաստանի և Իմերեթի թեմական Գևորգ Սրբազանին, Գյուտ ավագ քահանային, «գերազնիվ պարոնայց Գևորգ Եվանգուլյանին, Աբգար Հովհաննիսյանցին և Աղեքսանդր Երիցյանին և հարազատ որդիներին Մայր Աթոռիս ընկիրեմք ողջույն Տիրավանդ հանդերձ Հայրապետական օրհնությամբ»[8]: Այնուհետև հաստատում վերը նշվածներին ցմահ մնայուն հանձնաժողովի անդամ, իսկ հանձնաժողովի անդամ Գյուտ Աղանյանցին՝ նաև որպես թանգարանի կառավարչապետ:

«Օրհնելով զբարերարն, զպատճառն և զնորընտիր Ցանձնաժողովդ նորոգ թանգարանի,- գրում է Վեհափառ Հայրապետը,- մաղթեմք վրան ամենեցուն ցդ կալ մնալ յառողջ և յաջող ի կենցաղս ազգօգուտ գործովք առաքինական վաստակովք և քրիստոնէական բարեգործութեամբ, արժանացեալք գովութեան ազգիս և վարձուց երկնատրին»[9]: Հաջորդ կոնդակը, որը նույնպես գրել է 1900 թ. հունիսի 15-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղղված էր Ավետիս Ղուկասյանին: Նա հայտնում է, որ ինքը սրտի բերկրությամբ իմացավ թանգարանի շինության ավարտի մասին և որ հաստատել է մնայուն Հանձնաժողովի կազմը՝ մաղթելով Ա. Ղուկասյանի ընտանիքին հաջողություն և առողջություն: «Իսկ վասն անչափ բարեացդ և երախտեացդ առ ազգս և եկեղեցիս մեր Ինքն Փրկիչն լիցի Ձեզ վարձայատոյց փոխարինելով ընդ միոյն հարիւրապատիկ և թիւրապատիկ աստ և ի յանդերձելումն»[10], ավարտում է իր խոսքը Վեհափառ Հայրապետը:

Թանգարանի պահպանման և նրա մնայուն հանձնաժողովի միջոցով բարեգործական աշխատանք կատարելու համար Ավետիս Ղուկասյանն իր կազմած կտակում 25 հազար ռուբլի է հատկացնում, որպեսզի իր մահից հետո այդ դրամագլխի տոկոսները ծախսվեն այդտեղ նշված բարեգործական նպատակների համար:

Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Սաթունյանցն 1900 թ. սեպտեմբերի 5-ին դիմում է արժանապատիվ Գյուտ քհն. Աղանյանցին՝ կրկնելով Վեհափառի նույն թվակիր հունիսի 15-ի կոնդակի բովանդակությունը և առաջարկում ներկա լինել հոկտեմբերի 1-ին, ժամը 12.30-ին,

---

[8] Նույն տեղում, գ. 65, թ. 2:

[9] Նույն տեղում:

[10] Նույն տեղում, թ. 1:

թանգարանի բացման հանդեսին և ստանձնել թանգարանի վարիչի պաշտոնը: Նշանակված օրը, սակայն, բացման հանդեսը չի կայանում, որովհետև այդ օրերին Ա. Ղուկասյանը քաղաքից բացակայում էր, իսկ թանգարանի կահավորանքը դեռևս լրիվ չէր, անհրաժեշտ էր ձեռք բերել լրացուցիչ պահարաններ, դարակաշարեր և այլ պարագաներ: Այդ մասին թանգարանի կառավարիչ Գյուտ քահանան հայտնում է թեմի առաջնորդին և խնդրում հետաձգել բացման արարողությունը[11]:

1901 թ. հունիսի 2-ին, դեռևս մինչև թանգարանի բացումը, Ավետիս Ղուկասյանը դիմում է թանգարանի վարչությանը հետևյալ առաջարկությամբ. որ ինքը սիրահար լինելով հայ գրականությանը և նրա բարգավաճումը իր սրտին մոտ համարելով, իր կտակի մեջ նշանակել է տասն հազար ռուբլի իբրև անձեռնմխելի գումար, որի տոկոսները յուրաքանչյուր տարի պետք է հատկացվի հայերեն լավագույն երկասիրությանը իբրև մրցանակ: Սակայն կտակը պետք է կատարվի իր մահից հետո: Ներկայումս ինքը ցանկանալով թանգարանի բացումը նշանավորել որևէ արժանահիշատակ գործով, որոշել է կտակի այդ կետի կատարումը սկսել այժմվանից և ամեն տարի հինգ հարյուր ռուբլի տրամադրել վարչությանը այդ նպատակի համար: Բարերարը խնդրում է վարչությանը կազմել մրցանակաբաշխության կանոնադրություն, ներկայացնել Հայրապետական հաստատության, որից հետո գործի անցնել: 1901 թ. նոյեմբերի 30-ին կանոնադրությունը արդեն պատրաստ էր, և մնայուն հանձնաժողովը այն ներկայացնում է Կաթողիկոսի հաստատմանը: Կաթողիկոսական դիվանից 1902 թ. հունվարի 22-ին հայտնվում է Մնայուն հանձնաժողովի անդամ Գյուտ ավագ քահանա Աղանյանցին, որ Վեհափառը կանոնադրության հոդվածներից մեկում, որը վերաբերում է մնայուն հանձնաժողովի անդամությանը, փոփոխություն է մտցրել. հանձնաժողովի անդամները նշանակվում են ցմահ, իսկ որևէ անդամի մահվանից հետո նրա փոխարեն նշանակվում է մեկ ուրիշը ազգիս Վեհափառ Հայրապետի կոնդակով[12]:

1902 թվականի փետրվարի 21-ին, Վարդանանց տոնի օրը, հանդիսավոր պայմաններում բացվում է կրոնա-պատմական թանգարանը: Բացմանը ներկա է լինում Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը: Ավետիս Ղուկասյանի ցանկությունը՝ նոր հիմնած «գրական մրցանակաբաշխությանը», դժբախտաբար չի կայանում՝ ժամանակի սղության և պատրաստի գործեր չլինելու պատճառով, ուստի որոշվում է այն անցկացնել հաջորդ տարի[13]:

1902 թ. դեկտեմբերի 5-ին Թիֆլիսում վախճանվում է բարերար Ավետիս Ղուկասյանը՝ այդպես էլ գեթ մեկ անգամ չմասնակցելով «Գրական մրցանակաբաշխության» հանդեսին: Նա թաղվում է մեծ շուքով Թիֆլիսի Մայր եկեղեցու գավթում կառուցված թանգարանի առաջ[14]:

Թաղման արարողությանը ներկա էր այդ ժամանակ Թիֆլիսում գտնվող Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետը, որը նախագահեց թաղման հանդեսին Վանքի Ավագ եկեղեցում[15]: Նրա հեռագիր-ցուցումով Ս. Էջմիածնի վանքում դեկտեմբերի 8-ին կատարվում է հոգեհանգիստ, որտեղ պատարագում է Մեսրոպ սրբազանը[16]: Հոգեհանգստի արարողություններ են կատարվում Սանկտ Պետերբուրգի, Մոսկվայի հայկական եկեղեցիներում, հայաշատ այլ վայրերում:

---

11 Նույն տեղում, թ. 5:

12 Նույն տեղը, թ. 6:

13 Ի. Հարությունյանի անձնական արխիվ:

14 ՀՀ ՊՊԿԱ ֆ. 332, ց. 1, գ. 652, թ. 1:

15 «Արարատ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1902, էջ 2016-2017:

16 «Նոր դար», 12 դեկտեմբեր 1902 թ.:

Ղուկասյանի կտակում կտակներին հատուկ ոճով ասվում էր. «Ես, Բաքվի առաջին գիլդիայի վաճառական Ավետիս Բալայի Ղուկասյանս, գտնվելով առողջ բանականության և ամուր հիշողության մեջ, իմ մահվան դեպքում անում եմ հետևյալ կարգադրությունները»[17]: Այնուհետև թվարկվում է կտակատարների և միակ դստեր՝ Թամարի, մինչև նրա չափահաս դառնալը, խնամակալների անունները: Առաջին կտակատար և խնամակալ է նշանակում իր կնոջը՝ Աննա Հովհաննեսի Ղուկասյանին, եղբոր որդուն՝ Պողոս Հովսեփի Ղուկասյանին, և աներորդի՝ Մնացական Հովհաննեսի Խունունցին, որոնց պատվիրում է իր մահվանից հետո մեկ տարվա ընթացքում որոշել իր ունեցած ամբողջ հարստությունը, որը կարգավորելուց հետո առաջնորդվել կտակում նշված կարգադրությունների համաձայն: Ա. Ղուկասյանը մահացավ 1902 թ. դեկտեմբերի 5-ին:

1903 թ. մարտի 19-ին Թիֆլիսի Օկրուգային դատարանը կտակը հաստատում է ի կատար ածման: Նրա Ա. կետով Ս. Էջմիածնի Մայր Աթոռին էր հատկացվում 30 հազար ռուբլի՝ դրամագլուխը անձեռնմխելի մնալու պայմանով, իսկ տոկոսներով պետք է շարունակեին բարձրագույն կրթությունը Ս. Էջմիածնի ճեմարանը ավարտած հայ երիտասարդները, որոնք կցանկանային նվիրվել հոգևոր ասպարեզին: Այդ մասին «Նոր դար» օրաթերթում տպված լրատվության մեջ ասվում էր, որ հանգուցյալ Ա. Ղուկասյանն այդ կտակով Վեհափառ Կաթողիկոսի տրամադրության տակ է դրել հինգ հազար ռուբլի, որը որոշել է այն հատկացնել հայոց եկեղեցիների համար քարոզիչներ պատրաստելու ֆոնդին[18]: Հաջորդ՝ Բ. կետով դարձյալ Մայր Աթոռին էր տրվում 30 հազար ռուբլի, որի տոկոսներով պետք է կատարելագործվեին գիտության զանազան բնագավառներում հայ լուսավորչականների զավակները: Կտակով այդ երկու կետերում նշված դրամագլխի տոկոսների գործածությունը վերապահվում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Ս. Էջմիածնի ճեմարանի վարչությանը: Այնուհետև Թիֆլիսի վանքի Մայր եկեղեցու գավթում կառուցված թանգարանին էր հատկացվում տասը հազար ռուբլի՝ պայմանով, որ նրա տոկոսները գործադրվեն շարունակելու համար «Գրական մրցանակաբաշխությունը»՝ այն կանոններով, որ մշակել էր հիշյալ թանգարանի վարչությունը և հաստատվել Ամենայն Հայոց Կաթողիկոսի առանձին կոնդակով: Մրցանակը պետք է տրվեր ամեն տարի, ապրիլի 7-ին, Թիֆլիսի վանքի Ավագ եկեղեցու գավթում կառուցված թանգարանի շենքում: Եթե թանգարանը որևէ պատճառով դադարեր գործելուց, ապա մրցանակը պետք է շնորհվեր Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական կարգադրությամբ: Կտակի Դ. կետով կրոնա-պատմական թանգարանին էր տրվում 5 հազար ռուբլի՝ պայմանով, որ նրա տոկոսները օգտագործվեն թանգարանի վարչության պահպանությանը: Թանգարանի փակման դեպքում դրամագլուխը անցնում էր Կաթողիկոսին՝ «ի բարի հայեցողության»: Կտակի հաջորդ կետով 10 հազար ռուբլի էր հատկացվում Թավրիզի հայկական դպրոցներին, որի տոկոսներով պետք է ուսանեին իր անվան թոշակառուները: Հինգ հազար ռուբլի էր տրվում Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ի բարի հայեցողություն: Հինգ հազար ռուբլի էր հատկացվում Երուսաղեմի հայոց Ս. Հակոբյանց վանքին: Թիֆլիսի վանքի Ավագ եկեղեցու գավթի թանգարանին հատկացվում էր 6 հազար ռուբլի, որի տոկոսները ամեն տարի որպես օժիտ պետք է տրվեր երեք չքավոր հայ-լուսավորչական օրիորդի՝ ամուսնության դեպքում: Չորս հազար ռուբլի էր հատկացվում նույն թանգարանին՝ պայմանով, որ ամեն տարի, ապրիլի 7-ին, իր հիշատակի համար հոգեհանգիստ կատարելուց հետո, այդ դրամագլխի տոկոսները բաժանվեին աղքատ հայերին: Ինչպես այս գումարը,

---

17 Ի. Հարությունյանի անձնական արխիվ:

18 «Նոր դար», 12 դեկտեմբերի 1902 թ.:

այնպես էլ օժիտի համար հատկացված գումարը թանգարանի փակման դեպքում անցնում էր Վրաստանի Հայոց կոնսիստորիային նույն նպատակով: Կտակով Ա. Ղուկասյանը 6000 ռուբլի էր հատկացրել իր խոստովանահայր Գյուտ ավագ քահանա Աղանյանին, որպեսզի նա, իսկ նրա մահից հետո՝ նրա ժառանգները, տոկոսները գործադրեն Աղանյանի երկասիրությունների հրատարակության համար: Թիֆլիսի վանքի Մայր եկեղեցու միաբանությանն էր հատկացված երկու հազար ռուբլի՝ պայմանով, որ միաբանությունը ստանա նրա տոկոսները և ամեն տարի, ապրիլի 7-ին, հոգեհանգիստ կատարի Ա. Ղուկասյանի գերեզմանի վրա:

Կտակը պարտավորեցնում էր կտակատարներին շարունակել դրամական միջոցներ հատկացնել բարձրագույն կրթություն ստանալու համար այն թոշակառուներին, որ ուներ Ա. Ղուկասյանը կամ կունենար իր մահվան օրը:

Երրորդ և չորրորդ կետերով իր ազգականներին էր կտակում քսան հազար ռուբլի: Այդ բոլոր գումարները հատկացնելուց հետո, Ա. Ղուկասյանի կինը՝ Աննա Ղուկասյանը, իր բոլոր շարժական և անշարժ կալքից պետք է ստանար իր օրինական մասը: Մնացած բոլոր ունեցվածքը Ա. Ղուկասյանը կտակում էր իր դուստր Թամար Ավետիսի Ղուկասյանին՝ ի լիակատար սեփականություն: Եթե վերջինս վախճանվեր առանց ամուսնանալու, նրան հասանելիք ամբողջ դրամագլուխը պետք է գործադրվեր հիմնելու և պահպանելու մի բարձրագույն դպրոց՝ «Ղուկասյան Հայկական Ճեմարան» անունով, Տաճկահայաստանի քաղաքներից մեկում կամ մեկ ուրիշ ավելի հարմար տեղ, որը ավելի նպատակահարմար կգտնեն Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Կ. Պոլսի Հայոց Պատրիարքը: Ճեմարանը պետք է գործեր առանձին կանոններով, որոնք պետք է մշակվեին և հաստատվեին Կաթողիկոսի կողմից[19]:

Այսպիսով, Ավետիս Ղուկասյանի կտակի համաձայն, նրա թողած ունեցվածքը ժառանգների մահվան դեպքում անցնում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի տնօրինությանը:

1907 թվականին վախճանվում է Ավետիս Ղուկասյանի կինը՝ Աննա Հովհաննեսի Ղուկասյանը: Կտակի համաձայն նրա դստեր՝ Թամարի խնամակալներ են մնում մորեղբայր Մնացական Խունունցը և հորեղբորորդի Պողոս Ղուկասյանը: Թամար Ղուկասյանը մանկուց վատառողջ էր: Մոր մահից հետո նրան վիճակված չէր երկար ապրել: Նա մահանում է 1911 թվականին, 15 տարեկան հասակում: Նրա մահը մեծ ցավ է պատճառում ոչ միայն հարազատներին, այլ նաև բոլոր նրանց, ովքեր երբևէ առնչվել կամ ճանաչել են Ավետիս Ղուկասյանին:

Այդ առումով խիստ բնորոշ է պատմաբան Լևոն Բաբայանի վերաբերմունքը: Նա, լսելով Թամար Ղուկասյանի մահվան լուրը, առանց վարանելու իր «Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում» պատմա-ազգագրական ուսումնասիրությունը, որը լույս էր տեսնում այդ օրերին, նվիրում է Թամարի հիշատակին՝ հետևյալ մակագրությամբ. «Հայտնի հայ բարեգործ հանգուցյալ Ավետիս Բալայան Ղուկասյանի դուստր՝ Թամար Ավետիսյան Ղուկասյանի հիշատակին խորին հարգանքով նվիրում է հեղինակը»՝ նրա լուսանկարը զետեղելով գրքի առաջին էջում: Հիմնավորելով իր այդպես վարվելը, Լ. Բաբայանը նշում է. «...Ղուկասյան անունը մտնում է սակավաթիվ հայ խոշոր բարեգործների և մեկենասների ցանկի մեջ, իսկ նրա արած մեծ նվիրաբերությունը ապագայում պետք է նպաստի հայ ժողովրդի դպրոցական գործի վերածնությանը, որովհետև Ղուկասյան Ճեմարանը լույս և գիտություն պետք է տարածի իր խավար շրջապատում: Հանգուցյալ Ավետիս Ղուկասյանի, իր ամուսին Աննա Ղուկասյանի հետ միասին, արած այդ բարեգործությունը մի փայլուն ու պայծառ

---

19 ՀՀ ՊՊԿԱ ֆ. 57, ց. 2, գ. 1562, թթ. 31-32:

շերտ է թողնում հայկական անմխիթար իրականության մեջ: Ցուրաքանչյուր հայ երախտագիտական զգացմունքով ու հարգանքով կհիշի Ղուկասյան անունը»[20]:

Կտակի համաձայն, Թամարի մահից հետո, նրա խնամակալների և կտակատարների պարտականությունները համարվում են ավարտված, և նրանք պարտավոր էին Ա. Ղուկասյանի ամբողջ ունեցվածքը հանձնել նոր տնօրեններին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Կ. Պոլսի Պատրիարքին: Այս հարցում զգալի բարդություններ են առաջանում: Վախճանվել էին Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Կ. Պոլսի Պատրիարքը: Նրանց փոխարինել էին տեղապահները: Ժառանգության վերաձևակերպումը ըստ կտակի որևէ դժվարություն չէր ներկայացնում, եթե չլիներ մի հանգամանք: Այդ օրերին ասպարեզ է գալիս Ա. Ղուկասյանի ժառանգության նոր հավակնորդ, նրա եղբորորդի Միքայել Ղուկասյանը: Նա գտնում էր, որ կտակը ճիշտ չի մեկնաբանվում, և գտնում է, որ միակ օրինական ժառանգորդն ինքն է: Նա գործնական քայլերի էր դիմում դատարանի միջոցով կտակը վերանայելու և հորեղբոր ունեցվածքին տիրանալու համար:

Վտանգը բավականին իրական էր, անհրաժեշտ էր դիմել կտրուկ քայլերի:

Առաջինը տագնապ է բարձրացնում «Հովիտ» ազգային, հասարակական, գրական շաբաթաթերթը: 1911 թվականի փետրվարի 27-ին թերթում լույս է տեսնում «Ի՞նչ պետք է անե Ս. Տեղակալը Ղուկասյանի կտակի վերաբերմամբ» առաջնորդող հոդվածը, որտեղ հեղինակը տագնապով հայտնում է, որ լուրեր են պտտվում, որ կտակը քանդելու համար դատ է սկսվել: Չնայած այն անհիմն է, ասվում է հոդվածում, «Կան սակայն «Ազգասեր» հայ իրավաբաններ, որ այս դատը ընդդեմ հանգուցյալի կամքի և ժողովրդական շահերի կամենում են հաջողեցնել»[21]: Այնուհետև հեղինակը գրում է. «Այժմ ո՛չ Կաթողիկոս կա և ո՛չ էլ Կ. Պոլսի Պատրիարք, ուստի Տ. Տեղակալը պարտական է անմիջապես հանգուցյալի կտակը ուղարկել Սինոդի պ. Պրոկուրորին՝ խնդրելով, որ պահպանողական միջոցներ ձեռք առնեն, որ կտակված գումարը և կալքը նորից ցուցակագրվեն, խնամակալներից հաշիվ պահանջել, որ հետագայում վատնված չլինի կտակված գումարը»[22]: Նույնը պետք է անի Կ. Պոլսի Պատրիարքի սրբազան Տեղակալը դեսպանի միջոցով, ավելացնում է հեղինակը:

1911 թ. մարտի 14-ին Թիֆլիսի Հայոց առաջնորդարանը դիմում է Ս. Էջմիածնի Տ. Տեղապահին, Գերաշնորհ Վահրամ Արքեպիսկոպոսին՝ հայտնելով, որ նա խորհրդակցել է փաստաբանների հետ: Նրանք կարծիք են հայտնում, որ Ղուկասյանի ազգականները կարող են այդ դատը շահել, որով ազգը կարող է զրկվել այդ խոշոր ժառանգությունից: Մայր Աթոռի շահերի պաշտպանությունը հանձնվում է Թիֆլիսի հմուտ փաստաբաններից մեկին՝ Սամսոն Հարությունյանին: Առաջնորդը խնդրում է Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանին՝ ուղարկել հավատարմագիր, վավերացված Ռուսաց կայսերական դեսպանատանը, որքան հնարավոր է՝ շուտ գործին ընթացք տալու համար: Թիֆլիսի թեմի առաջնորդի տեղակալ Գևորգ Արքեպիսկոպոսը դիմում է նաև խնամակալներից Պողոս Ղուկասյանին՝ կոչ անելով նրան պաշտպանելու հանգուցյալի կտակի օրինականությունը, որով բազմաթիվ հայ մանուկներ, որոնք կտակի իրագործմամբ պետք է դաստիարակվեին օրհնելով հանգուցյալի հիշատակը, «երախտագիտությամբ կհիշեն Ձեր պատվական անունը», նշված է նամակում[23]: Ի պատիվ կտակատարների պետք է ասել, որ նրանք ևս իրենց կողմից դիմում են երդվյալ

---

20 Լևոն Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911, էջ 1:

21 «Հովիտ» հանդես, Թ. Ֆ., 1911 թ. փետրվարի 27:

22 Նույն տեղում:

23 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1562, թ. 27:

հավատարմատար Քալանթարյանին՝ դատարանում պաշտպանության տակ առնելու կտակը[24]:

Իրավաբան Սամսոն Հարությունյանը բուռն գործողություններ է ծավալում կտակի շուրջ ծագած վեճը Մայր Աթոռի օգտին վճռելու համար՝ իրեն աջակից վերցնելով փաստաբան Հովհաննես Սպենդիարյանին: Ավետիս Ղուկասյանի կտակը թարգմանվում է հայերեն, վավերացվում նոտարի մոտ և ուղարկվում Մայր Աթոռ Ս. Էջմիածին ու Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանին: Կազմվում է հավատարմագրերի տեքստը և նույնպես ուղարկվում վերը նշված հասցեներով՝ վավերացնելու և ետ ուղարկելու Թիֆլիս, որով իրավունք կտրվեր փաստաբաններին վարելու ամեն կարգի գործողություններ ի շահ կտակի:

Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի Տեղապահ Գաբրիել Միշահիճյանը 1913 թվականի հոկտեմբերի 18-ին տեղյակ է պահում Վեհափառ Հայրապետին, որ Ազգային կենտրոնական վարչության խառը ժողովը որոշել է տալ հրամայված փոխանորդագիրը, միաժամանակ ցանկանում է ասել, որ համաձայնության պայմանները որոշվեն Միքայել Ղուկասյանի և մյուս եղբորորդիների հետ միաժամանակ, որպեսզի հետագայում մյուս ժառանգորդներն իրավունք չունենան նոր պահանջներ հարուցելու[25]: Այդ նամակից հայտնի է դառնում նաև, որ վաճառքի էր հանված Ավետիս Ղուկասյանի Բաքվում ունեցած շոգենավը, որը ցանկություն էր հայտնել գնել խոշոր արդյունաբերող Նոբելը: Որոշվում է շոգենավը վաճառել 135 հազար ռուբլով:

Կտակի շուրջ վարած երկար բանակցություններից հետո, փաստաբաններին հաջողվում է խնդիրը լուծել փոխադարձ զիջումների միջոցով: Երդվյալ հավատարմատար Սամսոն Հարությունյանին հաջողվում է համոզել Միքայել Ղուկասյանին՝ կնքել հաշտության պայմանագիր: Այն կազմվում է 1913 թվականի մայիսի 20-ին և հաստատվում նոտարի կողմից: Պայմանագրի համաձայն Միքայել Ղուկասյանին տրվում էր վաթսուն հազար ռուբլի, իսկ մյուս ժառանգորդներին՝ Պողոս, Արշակ, Ցանկովը և Աբրահամ Ղուկասյաններին միասին, հինգ հազար ռուբլի: Պայմանագրով պարտավորեցվում էր կտակատարներին մեկ ամսվա ընթացքում վեհափառին հանձնել բոլոր կանխիկ գումարները, արժեթղթերը և կալքը, այդ թվում՝ Թիֆլիսի տունը իր հողաբաժնով: Ամբողջ ժառանգությունը կազմում էր շուրջ չորս հարյուր հազար ռուբլի[26]: Կաթողիկոս Գևորգ 5-րդը իր կողմից և Կ. Պոլսի Պատրիարքի անունից լիազորում է Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին և երդվյալ հավատարմատար Սամսոն Հարությունյանին՝ ընդունելու Ավետիս Ղուկասյանի կտակատարներ Մնացական Խունունցից և Պողոս Ղուկասյանից, ինչպես նաև նրանց խնամակալության տակ անցած վաղամեռիկ Թամար Ղուկասյանի ամբողջ շարժական և անշարժ գույքը և դրամական կապիտալները, որոնք մնացել էին վերոհիշյալների մահից հետո՝ իրեն հանձնելու համար:

Հանձնում-ընդունումը որոշ ժամանակով ձգձգվում է կտակատարներից Մնացական Խունունցի արտասահմանում գտնվելու կապակցությամբ[27]:

1914 թվականի մարտին Մնացական Խունունցը վերադառնում է արտասահմանից և զբաղվում գույքի և դրամական միջոցների հանձնմամբ: 1914 թվականի մարտի 14-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 5-րդը վկայում է, որ

---

24 Նույն տեղում, թ. 21:

25 Նույն տեղում, թ. 64–65:

26 Նույն տեղում, թ. 55:

27 Նույն տեղում, թ. 10–11:

Ավետիս Ղուկասյանի կտակով սահմանված և Թամար Ղուկասյանի կողմից թողնված գույքը և կապիտալները լրիվ կերպով ստացվել են[28]:

Սրանով չեն ավարտվում Ավետիս Ղուկասյանի կտակի հետ կապված գործողությունները: Ինչպես վերը նշվել էր կտակով, զգալի արժեքներ էին անցնում Ս. Էջմիածնի Կաթողիկոսությանը, այդ թվում՝ տնային կահկարասի, խոհանոցային արծաթեղեն և այլն: 1916 թվականի նոյեմբերի 19-ին Թիֆլիսի թեմի առաջնորդարանում գերապատիվ Տ. Մխիթար եպիսկոպոսի նախագահությամբ ժողով է գումարվում՝ որոշելու համար նշված իրերի տնօրինման կարգը: Ժողովին ներկա են լինում Նորին Վեհափառության ներկայացուցիչները՝ գրապահ Տ. Մաթևոս եպիսկոպոսը և բարձրապատիվ Տ. Գևորգ վարդապետը: Ժողովին ներկա էին նաև պ. պ. Համբարձում Առաքելյանը, Հովսեփ Խունունցը և Զիլինկարյանը: Հրավիրվածներից բացակայում էին պ. պ. բժիշկ Բագրատ Նավասարդյանը, Մնացական Խունունցը և Մինաս Բերբերյանը: Ժողովում զեկուցվում է Նորին Վեհափառության գրավոր կարգադրությունը՝ վերը նշված արժեքների վաճառման և գոյացած գումարը դրամագլխին ավելացնելու մասին: Ժողովը որոշում է կայացնում ներկա ժողովին հրավիրված բոլոր անձանց ճանաչել որպես հանձնաժողով: Նախագահ է ընտրվում գերապատիվ Տ. Մխիթար եպիսկոպոսը: Հանձնաժողովը պետք է ի կատար ածեր Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրությունը: Ժողովը որոշում է վաճառվելիք իրերի ներկա արժեքները գնահատելու համար հրավիրել մասնագետներ պ. պ. Զիլինկարյանին, Թադևոս Տեր-Միքայելյանին, Հովհաննես Մուրադյանին և Եղիշե Տեր-Գասպարյանին: Որոշման Գ. կետով ժողովը պարտավորեցնում է հանձնաժողովին՝ իր ներկայությամբ և պատասխանատվությամբ իրերը հանձնել քաղաքային լոմբարդին՝ վաճառման համար իրերի գնահատությունը ընդունելով որպես աճուրդի նախնական արժեք: Այնուհետև նշվում է, որ արծաթեղենները դրամատնից պետք է նոյեմբերի 22-ին բերել առաջնորդարան, հանձնաժողովի ներկայությամբ գնահատելու, և նորից վերադարձնել դրամատուն մինչև աճուրդի օրը և կատարման մասին կազմել արձանագրություն: Մնացած իրերի գնահատությունը որոշվում է թողնել հետո, երբ Էջմիածնի կալվածքների կառավարիչը, որի մոտ էին գտնվում Ա. Ղուկասյանի տան բանալիները, կվերադառնա Թիֆլիս: Որոշման վերջում պարտավորեցվում է հանձնաժողովին իրերի վաճառքը կատարելուց հետո արդյունքների մասին զեկուցել Նորին Վեհափառությանը:

Այսպիսով Ավետիս Ղուկասյանի ամբողջ ժառանգությունը անցնում է Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Կ. Պոլսի Պատրիարքարանի տնօրինության ներքո և օգտագործվում բարեգործության, գիտության և մշակույթի զարգացման, կրթության և այլ բնագավառներում:

(շարունակելի)

---

28 Նույն տեղում, թ. 9:

ՍՈՒՐԵՆ Դ. ԴԱՆԻԵԼԵԱՆ
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ՀՈԳԵԼԻՑ ԽՕՍՔԻ ՈՅԺՆ ՈՒ ՀՄԱՅՔԸ

Հոգեւոր խօսքը ժողովրդի սրտին հասցնում է Քրիստոնէական բարձր ճշմարտութիւնները: Հին արմատներից սնուցուած, գրչի սրբացած մշակների ակօսների մէջ իմացական հասակ նետած Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գիրը եւ խօսքը մեզ առիթ են ընծայում իր հոգեմտաւոր բարձր աւազանից, կեանքի փորձառութիւնից քաղելու Աստծուն, մարդկութեանը, Հայրենիքին մեր ամենօրեայ ծառայութեան պատգամները:

Վեհափառ Հայրապետը բազում գրքերի հեղինակ է: Այս ժողովածուի նիւթերի ընտրութիւնը կատարուած է գիտնականի գրական-փիլիսոփայական մտածողութեան որոշակի նախապատուութեան թելադրութեամբ: Բոլորին քաջ յայտնի են Կաթողիկոսի ծովածաւալ Աստուածաբանական գիտելիքները, հմայիչ խօսքի կուռ տրամաբանութիւնը, հովուապետական ընթացք ստացած խիզախ ձեռնարկումները: Այս ամէնի կողքին, հաւանաբար, ընտրեալներն են տեսնում միայն մտքի ու գրչի, գրականութեան ուխտաւորի հանապազ ներանձնացումը, ազգային, բարոյաբանական արժէքների մեկնական վերհանումը: Նա միշտ Աստծուց բխող իմացական լոյսի հետ է, որ ձգտում է մեզ հասցնել Միջնորդի իր առաքելութեան գիտակցութեամբ՝ աչակից ունենալով հայոց դպրութեան, հայոց պատմութեան դասերի անանց ներկայութիւնը:

Շատերս յաճախակի շփումների ընթացքին ուշադրութիւն ենք դարձրել նրա բնատրութեան՝ յատկանիշ դարձած մի վերաբերումին. Մայր Տաճարի խորանի վրայ, Վեհարանի ընդարձակ ընդունարանում, տարաբնոյթ այցելութիւնների ժամանակ թէ առօրեայ խօսակցութեան մէջ Վեհափառ Հայրապետը միշտ գրոյ յիշատակների հետ է, իր շուրթերին տուեալ պահի համար ճշդօրէն գտնուած բառ-պատկերն է, իմաստուն արտայայտութիւնը, իսկ թիկունքին՝ Աստծոյ որդու բարեհամբոյր ժպիտը, գրականութեան եւ փիլիսոփայութեան նուիրեալների քաջալեր հայեացքը: Դրանից նրա խօսքը նոր կշիռ է ստանում եւ առաւել վստահ ընթացք:

Գրականութիւնը Գարեգին Ա-ի մտածողութեան շերտերում անշրջեստուած չէ համընդհանուր հետաքրքրութիւնների եւ ճանաչողութեան ծիրից: Գրականութեան աւազանը շատ աւելի լայն է՝ Աստուածաշունչը, ազգային պատմութիւնը, բարոյագէտ հին ու նոր աշխարհը, հաւատը մարդկային հոգու զօրութեան փայլի հանդէպ եւ, ի հա՛րկէ, դասական ու նորագոյն հայ գեղարուեստական աշխարհը: Աւելի լայն առումով՝ գիրը Վեհափառ Հայրապետը դիտում է որպէս «հոգիի մարմնառութիւն», այսինքն՝ հենց այն, ինչ ստեղծում է «այդ ամենահրաշ թելմշակոյթը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հոգու տեղաշարժը նիւթի մէջ»:

Իւրատեսակ այս ընտրանիի մէջ տեղ են գտել Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ տարբեր տարիների գրած եւ հրատարակած գրա-մշակութային եւ հոգեբանական խորհրդածութիւնները: Այս ամէնը միաւորող առանցքը, բնականաբար, մնում է հայ քրիստոնեայի անդուլ ձգտումը իմացական-զգացական խորասուզման Աստծոյ էութեան հետ հոգեւոր դաշտի վրայ, որի շնորհիւ բացայայտւում են նաեւ մարդու երկրային երկու առարկայական չափումները՝ հողն ու գիրը: Տարբեր ժամանակ են ծնունդ առել նրանք՝ թելադրուած տարբեր իրադարձութիւնների եւ հոգեմոլիչ ազդակների բարեբար շնչի տակ:

Առաջին նիւթը գրուել է քառասուն եւ աւելի տարիներ առաջ. այն հատուած է «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ» աշխատասիրու-

թիւնից, որի հիմնադրոյթները, դեռեւս երիտասարդ վարդապետ, նա շարադրել է Անթիլիասի Կաթողիկոսարանում Կիրակնօրեայ դպրոցների ուսուցիչների առջեւ: Մենք մասնաւորել ենք Հայց. Եկեղեցու հոգեւոր մշակութային նշանակութեան այն գնահատութիւնը, որ տալիս է երիտասարդ աստուածաբանը. կրօնը սրբագոյն աւազան է, այստեղից են սկիզբ առնում իմացական կեանքի աղբիւրները: Տեղին վերյիշելով Վահան Թէքէեանի անզուգական բանաստեղծութեան յայտնի տողերը՝

Եկեղեցին Հայկական մէն մի քարի տակ գետնի
Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբա մը ունի...

նա եզրայանգում է, որ Հայց. Եկեղեցու դերը «... գաղտնի այդ ճամբի մէջ Հայ ժողովրդի մէն մի անդամը պահելն» է, ուժի ներշնչումը: Դա նոյն իսկ դերը չէ, այլ ծրագիր, որ իրեն սահմանուած է ի վերուստ. «Առողջ պահել հայ հոգին աստուածային վեհագոյն ապրումների, բարոյական ազնուագոյն սկզբունքների ներգործութեամբ», – ահա՛ իր առաքելութիւնը, իր կոչումի առաջնահերթ ուղղութիւնը եւ բովանդակութիւնը: Ասուած է զուսպ, բայց դարակուտակ փորձառութեան իրաւունքով, անցած հոգեւոր բարձր ճանապարհի առթած հպարտութեամբ: Դարերի մէջ այս պատգամը, բնականաբար, դուրս պիտի գար կրօնական եւ գրա-ճանաչողական նախնական շրջանակներից, ողողելով իմաստասիրական, մատենագրական եւ առ հասարակ գիտական կալուածները: Լայն խորքով դա նշանակում է, որ բանաստեղծութիւնը ծննդաբանական իր յատկանիշով, Շարականի երգասաց արտաքին հմայիչ կառուցուածքով արդէն հոգեւոր լինելութեան զօրութիւնն ստանում է Աստուածայինի ակունքներում: Ուշագրաւ է, որ մի փոքր աւելի ուշ, հենց 1960-ին, Հայոց եկեղեցական գրականութեան ներածութեան մէջ, որ լոյս է տեսել Լոնդոնի հեղինակազդու հրատարակչատան միջոցով, գիտնականը հայկական Շարականը համարում է ստեղծագործական այնպիսի անէացում, տարերք դէպի Աստուած, որ ոմանք նրանցից, խոշորագոյն մասնագէտների նաեւ արդար վկայութեամբ, առ այսօր իրաւունքով դասւում են «...տիեզերական միսթիք գրականութեան ամէնէն գեղեցիկ կտորներու շարքը»: Գիտական մեկնաբանումով արուեստը, ըստ Գարեգին Վեհափառի, «...իրականութիւնների իրա՛ւ անդրակերպումն է նոյն աշխարհում, բայց տարբեր, աւելի խոր մակարդակների վրայ»:

Իր բազմաբնոյթ գրութիւններում, ահա՛, Վեհափառ Հայրապետը բացայայտում է ազգային մշակոյթի հոգեւոր նախանիւթի արմատը, որ ներքին չափ է, կանոնաւորուած կշռոյթ, եւ այստեղ պետք է տեսնել նրա գիտական կանխատեսման ուժը, իսկ աւելի ճիշդ, ծառայութիւնը, որն արդիւնաւէտութեան գործակիցը ձեռք է բերում զուգակցուած դիտարկումների շնորհիւ:

Գեղարուեստական սեւեռուն մտքի բարձր արտայայտութիւններ են «Հող, մարդ, գիր» ընդհանուր խորագրի տակ ամփոփուած գրութիւնները: Դրանք, ըստ էութեան, նորավէպեր են՝ անակնկալ իրադրութիւններից ազգային եւ խորապէս մարդկային գնահատութիւնների հանգրուանող իր մշտական հերոս-հեղինակով, անցեալի զգայացունց, բայց ուսանելի դասերով: *Հողը* միջավայրն է, լինելութեան պայման ենթահողը: ***Մարդը*** ժողովրդի հաւաք ոգեարգի լիութիւնն է՝ վեր ժամանակի ու տարածութեան՝ յոլովոյթից: *Հողի եւ մարդու* միութեան մէջ է ազգային բարոյաբանութեան առեղծուածը, ինչի մեկնութիւնը հնարաւոր է միայն *գիրի* շնորհիւ: ***Գիրը*** ձեռք է բերում փիլիսոփայական խորք, այն այլեւս ֆիզիքական նշան չէ: ***Գիրը*** լինելութեան չափումն է, դէպի Աստուծոյ Լոյսը ժողովրդին առաջնորդող հաղորդութիւն:

Շարքն առանձնանում է գեղարուեստական կայուն մտակառոյցով. տպաւորիչ, գրեթէ դասական նախադրութիւն՝ յետագայ գործողութիւնների ծաւալման խոստումով, կերպարի ուժգնութեամբ կերտուած վաւերական անձնաւորութիւններ, որոնց տիրական, բնութագրական խառնուածքը տրուած է մէկ-երկու վարպետ վրձնահարուածով. պատմական փաստից քաղուած անհրաժեշտ դասեր, եզրա-

յանգումներ, որոնցում պատմական փորձառությունը գեղարուեստական-յուզական ներգործությամբ է յատկանշուում: Այս բաժինը բացուում է «Բանալինե՛ր, բանալինե՛ր Մայր Արաքսի» խոհագրությամբ՝ գրուած 1972-ին, երբ մայր գետի պարսկական ափով բարձրաստիճան հոգեւորականը գնում էր Ս. Ստեփանոս Նախավկայի հնադարեան վանք՝ ուխտագնացությեան: Նա վերյիշում է 17-րդ դարի սահմռկեցուցիչ սկիզբը, երբ Շահ Աբբասի վայրագ հրամանի համաձայն՝ հայը լքում է շէն Ջուղան՝ հայրենի տան բանալիները ձեռքերով գետի հունի խորխորատները: Մէկից աւելին են արարքի խորհրդանշանային ծալքերը: Եւ հեղինակը մէկին-մէկին, անձնանձիր բացում է պատմությեան կեղեւը՝ փնտրելով այնտեղ ե՛ւ վերադարձի չմեռնող յոյսը, ե՛ւ հողի սէրը, ե՛ւ դրանով պայմանաւորուած գոյությեան խորհուրդը: Խորագիրը բանաստեղծական շնչաւորությունն ստանում է իմաստալից կրկնություններով, իսկ իմաստը երկու ժամանակների ազդեցումն է, աւելի ճիշդ, նոր ժամանակի մէջ «հին» պատասխանատուությեան, իրաւունքի ճանաչումը: «Երկա՛ր տեւեց ձեր քունը: Մի՛ երկնչիք: Ձեր տէ՛րն է արթուն: Արաքսի ջուրերը բանալիներու հետ միասին իրենց մէջ պահած են ձայները ձեր տէրերուն, որոնք ձեզ յանձնեցին Մայր Արաքսի եւ Մայր Աստուածածնի մայրական պաշտպանությեան»:

Իւրատեսակ այս շափածոյ նորավէպը դասագրքային արժէք ունի: Այն սիրով յանձնարարում ենք հայրենի եւ սփիւռքահայ դպրոցների ուսուցիչների ուշադրությեանը, քանի որ սա այժմ հազուադէպ հանդիպող ստեղծագործություններից է, որոնք ներառում են ազգային բարոյաբանությեան անդրանցիկ խտացումները: Մասնաւորապէս տպաւորում է Արաքսի պղտոր վիճակի գեղարուեստական գիւտը, որ առնչւում է հեղինակի հետապնդած բացորոշ իմաստին. «Եւ պէ՛տք է որ պղտոր ըլլայ, որպէսզի ոչ ոք կարենայ տեսնել ու գտնել հայոց հողին ու տունին, հայրենիքին ու Եկեղեցիին սէրը իրենց մէջ կողպած Հայաստանի բանալինե՛ր: Անո՛նք աղօթքով, արցունքով, խորհուրդով են ներուած այնտեղ: Անոնք ալ սիրտ ունին ու կը ճանչնան իրենց հարազատ տէրը: Արաքսը գորշ ու թանձր սաւան է փռած անոնց վրայ»:

Թախծալի զգացումներ է արթնացնում Արեւմտեան Հայաստանի Վարագայ, Ս. Բարթողիմէոսի եւ Ս. Էջմիածնի վանքերի ընդհանուր անմխիթար պատկերը, որը ոգեկոչուած է լոնդոնեան պատկերազարդ հանդէսում: Այսքանն արդէն բաւական է, որպէսզի հիւսուի գեղարուեստական լիշողությեան քարտէսը. անհետացող եկեղեցիները երկրի, ժողովրդի պատմությունն են, այն էջը, որ դեռ «արիւնով վէրք մըն է մարդկությեան համար»: Գրաւիչ, թեթեւ ու սահուն է նիւթի մատուցումը, որը չունի նման դիպաշարերին բնորոշ ճառական յանախանքը: Անընկատ տրուում է եկեղեցիների պատմությունը՝ շաղախուած ժողովրդի պատմությանը, ինչն արդէն կազմում է Վեհափառ Հայրապետի խօսքի յայտնի իւրայատկությունը՝ սովորեցնել սէր ներարկելով: Օրինակ, երբ պանծացնում է Ս. Թադէի վանքը, զօրակից ունի Ղ. Ալիշանի բանաստեղծական լուսատոր տողը՝

«Թադէի վանուց ձէնի՛կդ ինձ դիպաւ»...

որը կրկնություններով բերում է հոգեկան մթնոլորտ: Մի կողմից՝ քրիստոնէական լոյսի ճառագում Ս. Թադէոս Առաքեալի շնորհիւ, միւս կողմից՝ այդ լոյսի պաշտպանությունը՝ Վարդանանց հերոսամարտի իմաստաւորումը՝ վասն հայրենեաց եւ վասն Աստուծոյ ճշմարտությեան: «Քարեր, աղօթաձայն քարեր» խորագիրը լաւագոյնս ստեղծում է այդ ոգեկոչությունը: Կարծես Ե. Չարենցի «Գանգրահեր տղա»ի անանուն, անգիր քարերի համանուագը նոր, այս անգամ ազգային ներկապնակ է ստանում. «Գիտեմ, կը զգամ, որ այդ հողերուն մէջ, տեղ մը կան անքար, անշիրիմ, անխաչքար մասունքները Վարդանանց դիւցազուններուն: Երեւցող քարերը չերեւցող արմատներ ունին, որոնց ձայնը այսօր իր ընդերկրեայ թաւ ու տարածուն, ծանր, յամրագնաց կշռոյթով կը միաձուլուի աղօթաձայն քարերու այս համանուագին»: Գեղարուեստական մտքի շնորհիւ առաւել դիւրին է դառնում կրօնական փիլիսոփայությեան իւրացումը, ինչ

Վեհափառ Հայրապետի հեռահար առաջադրութիւնն է: Խօսքը տրամաբանական իր հանգոյցներն ունի, որին ընթերցողը հասնում է իր համար «անկատ» թեթեւութեամբ, մինչդեռ Գարեգին Կաթողիկոսը գործադրում է գեղարուեստական գինանոցի իրեն ներյատուկ տեսականին: Այս իմաստով գեղարուեստական պատկերը խաղում է փիլիսոփայական խօսքի հիմնաւորման հրաշալի եւ անփոխարինելի նախադրեալի իր դերը, ինչին հայ մտածողը տիրապետում է կատարելապէս:

Նոյն ստեղծագործութեան մէջ նա ե՛ւ գիտնական է, ե՛ւ արուեստագէտ: Եւ արուեստագէտն օգնում է գիտական փաստարկումների, փիլիսոփայական եզրայանգումների բնական դրսեւորումներին:

Իսկ իմացական իր խորքում Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը չերկրորդուած դէմք է. աշխարհահռչակ խոշորագոյն աստուածաբաններից, եւ դա յաւուր պատշաճի ասուած արտայայտութիւն չկարծէք: Բերենք միայն մէկ օրինակ, ուր իմաստասիրական հիմնադրոյթը տրամաբանական հանդերձանք ունի, բայց եւ նոյն ժամանակ հասանելի է պարզ ընթերցողին: Նախապատրաստելով զոհաբերումի եւ սիրոյ գաղափարների քրիստոնէական հարցադրումները, հէնց Ս. Թադէոս Առաքեալի հայանուէր օրինակը նախահիմք ընդունելով՝ նա իր ելակէտերը շարադրում է յստակ ու աներկբայ. «Մի՛ մոռնաք, – գրում է նա իր եզրայանգումներում, – զոհը պակաս է սիրոյն, պտղումը խաչին: Առանց ինքզինք գերազանց քաջութեամբ կարենալ ընծայ ընելու, սէրը սոսկ զգացական վիճակ է եւ ոչ կեանքի սկզբունք, լոկ խօսք է շրթունքներու վրայ եւ ոչ ճշմարտութիւն, կեանքի փորձով խտացած ապրում... *Առաքեալի* գաղափարը ուրիշ բան չէ, եթէ ոչ գաղափարը այն անձին, որ գիտէ իր հաւատացած ճշմարտութեան յաղթանակին համար ինքզի՛նքը տալ որպէս գին: Ի՞նչ է *առաքելութեան* ոգին. ա՛յն ոյժը մարդուն մէջ, որ մարդէն աւելի վեր կը ճանչնայ այն հաւատքը, գաղափարը, արժէքը, որոնց համար մարդը կը մղէ տալու իր կեանքը. իր գերագոյն հարստութիւնը... Սէրը յաղթանակն է անձին՝ անհատին վրայ: Սէրը նուաճումն է մահուան»:

Գեղարուեստական խօսքի բոլոր շերտերում ակնբախ է լուսաւոր, յորդաբուխ, ըստ էութեան, ռոմանտիկ հայեացքը. մտքի ձեւաւորման, ոճային պատումի կառոյցը համեմատութիւնների, մակդիրների, պատկերաւորման համակարգի մի հրաշալի ամբողջութիւն է կազմում: Արդէն վեհ նիւթերը պարտադրում են վեհ խօսք: Գարեգին Կաթողիկոսը նախընտրում է ոճերի կտրուկ անցումները՝ երբեմն նաեւ կերպարտելով խօսքի ընթացքը: Այսպէս, օրինակ, Տաթեւի վանքի մասին իր գրութիւնը երկու ոճային մակարդակ ունի՝ հեղինակային եւ «միջնորդական»: Տաթեւից վերադարձին, Անթիլիասի իր առանձնասենեակում, նա մտովի զրուցում է ամբոխի մէջ խռնուած անծանօթ սիւնեցի աղջնակի հետ, որն իրեն առաւել տպաւորել է: Հեռակայ այդ «երկխօսութիւնը» առարկայական դարձնելու համար նա շրջում է լեզուական մտածողութիւնն ու անցնում արեւելահայերէնի: Հարց է ծագում՝ ինչո՞ւ: Պատասխանը միանշանակ է՝ նման ոճաւորումը կարեւորում է երկու անհատականութիւնները՝ երեխային եւ իմաստնացած հոգեւոր գործչին: Վաղը կեանք մտնող սերնդի, իրեն հոգեբանութեամբ, կրօնական դեռ «հում» դաստիարակութեամբ անծանօթ, Վեհափառ Տիրոջ ծաւի աչքերի առաջ իւրովի տողանցքն է սա: Իսկ հաղորդականութիւնը ապահովելու կարճ ճանապարհը լեզուական «պատնեշի» յաղթահարումն է: Վեհափառ Հայրապետը սիրով է ընդառաջ գնում գեղարուեստական «խաղի» պայմանին, որի նպատակը երկու սերունդների ժառանգական կապի յայտնատեսութիւնն է ժամանակից դուրս, կամ, ինչպէս ինքն է սիրում ընդգծել, «ան-ժամանակ»ի լուսանցոյցում: Կարելի է իմաստալից զուգահեռի գնալ այս առումով. ինչպէս Թափօր լեռը Քրիստոսի համար, այնպէս էլ Տաթեւը՝ Գարեգին Առաջինի համար:

Իսկ որ փոխճանաչումն արդէն սկսուած է, եւ ժողովրդի՝ Եկեղեցու հանդէպ հետաքրքրութիւնը պարագայականից անցել է խոր շահագրգռութեան, նկատում

է, արդեն 1989–ին, «օտար» աչքը՝ «Ժողովրդի մէջ էական բան մը կը փոխուի», ինչը եւ իսկոյն դիտում է որպէս դրական տեղաշարժ:

Գեղարուեստական–քրիստոնէական խոկումների մէջ առանձնանում է 90–ական թթ. շրջանում զգացական, գրեթէ բանաստեղծական շնչով գրուած «Խոր Վիրապ՝ «Խորհուրդ խորին» հոգեխօսութիւնը՝ սրտաբուխ նուիրուած այժմ արդէն երջանկայիշատակ Վազգէն Առաջինին: Խոր Վիրապը աստուածաբանի համար դառնում է իւրատեսակ խնամուած ճանապարհ՝ «... Դէպի աղբիւրը լոյսի», որտեղ Լոյսը՝ գիտնականի մտածումների բարձրագոյն հանգրուանը, ներառում է ինչպէս երկնաճաղ կենտրոնական ճշմարտութիւնը, այնպէս էլ ազգային–իմացական, ազգային խորհուրդները: Խաւարի խորխորատում բացուած Լոյսը տիեզերքի եւ մայր հողի նորոգուած միասնութիւնն են խորհրդանշում. պիտի տեսած լինես խաւարի անդունդը, որ Լոյսի խայտանքը գնահատես: Դիպուկ է Գարեգին Առաջինի եզրայանգումը՝ միայն այստեղ կարելի է զգալ, ըմբռնել, «... թէ ինչպէ՞ս անյուսութեան այս գուբը, մահուան այս նախադուռը, մարմնամահացումի այս նախաճաշակումը, ահա՛, յարութեան, վերակենդանութեան ու նորոգութեան ոյժի են վերածուեր»: Թերեւս առաջին անգամ Խոր Վիրապի գնահատութիւնը զուգակցւում է ազգային մշակութային նշանակութեան, նրա ձեւաւորման խորհրդի հետ, որի նախաստեղծ շարժիչ ուժը Աստուածային Լոյսով ողողուած Մարդու ինքնամաքրման շրջանն է, որ այլ աստիճանի վրայ արդէն կոչւում է տառապանքի սրբագործում: Միանգամայն իրաւացի է նա, երբ այսպիսի անակնկալ լուսարձակի տակ է չափում հայոց մտքի եւ ուժի դարձակէտերը՝ լոյսի փրկարար ճանապարհը բացուել է տառապանքի ու ճգնութեան միջով, այն նոյն մեծութեամբ, որ ցմրուր ապրել է Ս. Գրիգորը, ժառանգել են Սահակ Կաթողիկոսը, Մեսրոպ Մաշտոցը, Վարդան Մամիկոնեանը, Գրիգոր Նարեկացին, եւ այսպէս շարունակ:

Իրատունքն արդար է, քանի որ վեհ է նպատակը՝ «Վառ պահել կրակը ջահին, որպէսզի արծարծ մնայ բոցը ... Լարուած ունենալ հոգիին մէջ քնարը Լուսաւորչին, որպէսզի երբեք չլռէ երգը հայ հաւատքին»: Ուշադրութիւն դարձնենք բառերի հեռագնայ ենթախորքին, որ հրամցնում է Վեհափառ Հայրապետը. ի վերջոյ, ի՞նչ է հայ մշակոյթը, եթէ ոչ՝ «երգը հայ հաւատքին»: Հրաշալի՜ է ասուած:

Պատահակա՞ն համարել, որ Լիբանանի քաղաքական պատերազմական գգվոտոցի շրջանում, որպէս Կիլիկիոյ Մեծի Տանն Կաթողիկոս, Գարեգին Բ–ն ազնիւ, առարկայօրէն անընդունելի յամառութեամբ հայոց համայնքը, հայ մարդուն առ հասարակ համախմբում էր ոգելից զգացումների բարձրագոյն սափորի՝ գրքի շուրջ, երբ թւում էր, թէ դրա խնկարկումի ամէնից անճպաստ շրջանն է: Ամենեի՛ն: Տասնվեց տարիներ շարունակ, սկսած 1977–ից, երբ հազիւ ստացել էր Կաթողիկոսական օծման շնորհն ու պատիւը, խորաթափանց աստուածաբանը նախաձեռնեց հայ գրքի ցուցահանդէսների շարքը՝ «Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց...» նշանաբանով, իւրաքանչիւր տարի ճշդուած ազգային–իմացական իր հետապնդած յանձնառութեամբ: Ականատեսները վկայում են, թէ ինչպիսի եռանդով էր լծուած երիտասարդ Կաթողիկոսը նախապատրաստական հոգեբուքին. ամէն տարի միաբան իր եղբայրների հետ սեղաններ էր տեղափոխում, ցուցափեղկեր ամրացնում, անձամբ բերում համապատասխան գրքերը մատենադարանից, վեհարանից, եպիսկոպոսարանից՝ տենդագին պատրաստուելով յաջորդող օրը բացուելիք ցուցահանդէսներին: Այդ եռանդը երբեք չնուազեց, ընդհակառակը, տարիների մէջ դարձաւ խառնուածքի ցայտուն արտայայտութիւն: Միայն մէկ անգամ անկարելի եղաւ ցուցահանդէսի կազմակերպումը. դա 1978–ի «Կամուրջի ճակատամարտ» անունով յայտնի կատաղի կռիւների հետեւանքով էր, երբ մահուան պարն էր մոլեգնում թէ՛ Բուրջ Համուդի եւ թէ՛ Նոր Հաճըն – Ռումէյլի շրջաններում: Հայ գրքի ցուցահանդէսների անխափան շարունակականութիւնը յետագայիս ծնունդ տուեց մի ուրիշ հրաշալի ձեռնարկի. արդէն 1990–

ին, ժողովելով հանդիսութիւնների ժամանակ արտասանած իր սրտառուչ խօսքերը մէկ հատորի տակ, Վեհափառ Հայրապետը հրատարակեց իր լաւագոյն գրքերից մէկը, ըստ էութեան, ծրագրային «Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց...» վերտառութեամբ, որը զարմանալի կանխատեսութեամբ դիտեց հայ գրքի փիլիսոփայութեան «փորձ մը»:

Ամբողջութեան մէջ այստեղ բացայայտուած են հայ գրաշխարհի այն ըմբռնումները, որոնք ժողովրդի կենսագրութեան հոգեւոր շաղախն են կազմում, նրա գեղարուեստական մտքի փիլիսոփայական խտացումները: Հեռաւորութեան վրայ նրանք մեզ բացւում են որպէս կեանքի ճանաչման լիարժէք սկզբնաղբիւրներ: Դրանց մէկտեղման փաստով հեղինակը սատար է կանգնում, ինչպէս ինքն է նշում արդարամտօրէն, հայ գրքի կարեւորման գիտակցութեան զօրացմանը: Ընդ որում տասնվեց ենթագլուխները, ինչպէս հայաշունչ առաքեալներ, ազգային պատմութեան խորքային բնոյթ են մատնանշում՝ կամրջելով ժամանակները եւ գրչի մշակներին: Գարեգին Առաջինը ելնում է այն բարձրագոյն նախապայմանից, թէ «գիրքը մարդու շարունակական ինքնակերտումի ամէնէն կարեւոր ազդակն» է:

Անտարակոյս, գրքի խաղացած դերը հայ մարդու, վստահաբար աւելացնենք, հայ ժողովրդի ճակատագրերում աւելին է, քան պայմանականօրէն նախասահմանուած ստորաբաժանումները, սակայն սոյն աշխատանքի իրայատկութիւնը, մեր կարծիքով, պիտի տեսնել անընդգրկելին ընդգրկելու փիլիսոփայական ձգտման մէջ, երբ սկզբունքների գիտա-զգացական կանոնակարգումը նպաստում է ժամանակի ու տարածութեան մէջ, մարդկային քաղաքակրթութեան հանգոյցներում հայ մարդու իմացական դաշտի ընդլայնմանը, յարաճուն գնացքին: Թւում է, դժուար է ցոյց տալ հայի ճակատագրի ոգեղէն կոչնակների նման հետեւողական քննութիւն, ուր գիրքը այդպէս ընդելուզուած լինի ժողովրդի ողբերգական, բայց միաժամանակ հերոսական պատմութեանը: Թւում է, խորհրդանշական այս զրոյցների մէջ գրքի եւ ժողովրդի ընդհանրացած ինքնութիւնը համակողմանի, բոլորագիծ, գրեթէ սպառիչ արժեւորումների է ենթարկւում: Ցիրաւի, եկէք մենք էլ ընդունենք, որ կրօնի, պատմութեան, գեղարուեստի փիլիսոփայութիւն հասկացութիւնների կողքին, որոնք «...ներդիր եւ էայարիր մաս կը կազմեն հայ ժողովրդի կեանքի ընդհանուր փիլիսոփայութեան», կա՛յ եւ պէ՛տք է ճանաչել «Գիրքի փիլիսոփայութիւն մը», որի փնտռտուքը, վերաբերումի եւ մեկնաբանումի ճիգը կազմել են, ահա՛, նրա յատկանիշների իրացման ընթացքը: Վեհափառ Տիրոջ գեղագիտական համակարգում այդ յատկանիշներն են՝ հայ գրքի տարբեր երեսակները անձնաւորութեան ճակատագրում եւ ներաշխարհում. ***պատիւը***, այսինքն՝ փառքը, այսինքն՝ պատմութեան աւանդութիւնը, «***պարտքը*** հայուն», այսինքն՝ հոգեշարժ ինքնակրթութիւնը, ընթերցման տուած երջանկութիւնը, ***տագնապը***, որի տակ պէտք է հասկանալ գրքից, ասել է թէ՝ ազգային մտածողութեան աւազանից ահագնօրէն ծաւալուող նահանջի ահազանգը Սփիւռքի նոր օրերի մէջ, տագնապ, որ, սակայն, պիտի զօրացնի պատասխանատուութեան կշիռը ազգային լինելութեան բաւիղներում, շտկի հոգու անկման կորը նիւթի դիմաց: Իւրաքանչիւր ենթախորագիր, այսպիսով, ակնարկում է ազգայինի եւ համամարդկայինի զուգակցումը. գիրքը իմացութեան բանալին է, զգացումի շիկացումը, «***ճանապարհը, ընկերը, բալասանը, զրահանդերձը*** հայուն», հայութեան «***օճանասփիւռը***», Գր. Նարեկացու տպաւորիչ արտայայտութեամբ՝ «***Սպեղանիք զօրաւորք***», վերջիվերջոյ, «***այգեստանը հայուն***», որը պարգեւում է բանաստեղծական մրգաստանի այն լիութիւնը, որ միշտ թեւաւորել է արեւմտահայ քնարերգակներ Վ. Թէքէեանին եւ Մ. Իշխանին:

Ընկերային կեանքի առթած խորհրդածութիւնները փիլիսոփայական ակնյայտ հակուածութիւն ունեն, ծնունդ են առօրեայի տպաւորութիւնների եւ կենսափորձի: Մարդը միշտ ենթակայ է նիւթի գայթակղութեան, երջանկութեան ճանապարհին նա բախւում է տառապանքի սահմանին: «Ծանի՛ր զքեզ...» խոհագրութիւնների

շարքից ընտրուած մի փունջ մենք ներառել ենք այս բաժնում՝ ելնելով այն ուղղուածութիւնից, որ տանում է հեղինակը մարդու մէջ մարդկայինի հունի ճանաչման առումով: Այստեղ հիմնականում զետեղուած են 70-ական թթ. երկրորդ կէսին եւ 80-ականների սկզբին «Ազդակի» էջերում տեղ գտած յօդուածները՝ ինքնաճանաչման, Թաղէս-Սոկրատեան բարոյաբանութեան, սիրոյ եւ ինքնաբաւութեան, դրամի եւ հոգեւոր հարստութեան յարաբերակցութեան խնդիրների շուրջ: Հակառակ այն բանի, որ Հայց. Եկեղեցու բոլորագիր նուիրումը, անվերապահ պատկառանքը վերստին օր առ օր նուաճում է խոնարհ մարդկանց սրտերը, նոր ժամանակի գլխաւոր, բարձր մասնայատկութիւնն են, Վեհափառ Հայրապետի սրատես աչքը նկատում է նաեւ համընդհանուր դարձած երեւոյթը՝ նիւթի անդիմադրելի արշաւը հոգիների վրայ, դրամի փորձութեան, «քաշողական» ոյժը, որ պարզապէս անհատին դարձնում է շահամէտ, հաշուեմեքենայի չոր պտուտակ, տապալում է խիղճը: Քանիցս իր քարոզներում նա յիշեցնում է, թէ տաժանագին ժամանակների մէջ ազգային բարոյաբանութեան քայքայման պատճառը ոչ թէ մաքառումն է, դիմակայումը, այլ լոփացումը, շփացումի դէմ «... գլուխ ելնելու անկարողութիւնը», ամենօրեայ վտանգ, որի հետ գրեթէ անխուսափ շփւում ենք, որից շատ յաճախ նաեւ ընկերկում ենք: Ոնչտ եւ արդարամտօրէն ահազդու է Վեհափառի խօսքը՝ «Մախումը, վատնումը, շռայլումը, ցուցականութիւնը հակաստուածային, հակամարդկային եւ հակահայկական են: Մի՛ թոյլատրէք ձեզի այդ անհաւատարմութիւնը հանդէպ Աստուծոյ, մարդուն եւ հայուն»:

Այստեղ արդէն փիլիսոփան իր տեղը զիջում է ջղուտ հրապարակախօսին, որի նպատակը խիստ որոշ է՝ մարդու վերակերտումը: Մի դրուագ կուզենայի վերյիշել. 1995-ի Յունիսն էր, ընդամէնը երկու ամիս առաջ ստանձնել էր ժողովրդի հովուապետական ամենայն բարձրագոյն ծառայութիւնը, կազմակերպական դժուարին շրջանն էր: Խնդրեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր Հայրապետական օրհնութիւնը բերել Երեւանի Խ. Աբովեանի անուան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողութեանը եւ դասախօսական կազմին: Այսօր, երբ ուսուցչութիւնը անշնորհակալ եւ անշահ աշխատանքային բնագաւառ է, երբ կտրուկ նուազել է դէպի դպրոց երիտասարդութեան հոսքը նիւթական անբաւարար յատկացումների պատճառով, Վեհափառ Հայրապետը անմիջապէս կարեւորեց մանկավարժներին իր այցով զօրավիգ կանգնելու անհրաժեշտութիւնը, թէեւ դեռեւս չէր եղել ո՛չ Ակադեմիայում, ո՛չ Պետական համալսարանում, ո՛չ էլ բարձրագոյն կրթական այլ հաստատութիւնում: Այս հարցում նա իրեն դրսեւորեց քաղաքացու, գործչի անանահանջ հետեւողական ակտիւ խառնուածքով. եկաւ, տեսաւ անմխիթար այն վիճակները, որոնց մէջ ընկած են դասախօսն ու ուսանողը, եւ ղեկավարութեան հետ մշակեց միասնական աշխատանքային հեռանկարային ծրագիր, որի էութիւնը, իր բառերով, ուսուցչի կոչումի վերադարձն է, ասել է թէ՝ ընկերութեան մէջ բարոյական արժէքների, աւազանի վերականգնումը:

Պատահական չէր այս վերյուշը. այն մատնանշում է Գարեգին Առաջին Կաթողիկոսի գործունէութեան թերեւս ամենից խանդաղատալի, փայփայած աշխարհը: Արդէն քանիցս, տարբեր առիթներով, ինքը նկատել է իր դերը որպէս ուսուցիչ: Եւ բանն այստեղ միայն երեւոյթի ուղղակի նշանակութեան ընդգծումը չէ. բոլորը քաջ գիտեն նրա մանկավարժական անզուգական դերակատարութիւնը Անթիլիասի եւ Ս. Էջմիածնի հոգեւոր կրթական կենտրոններում:

Հնուց ի վեր եկող փորձառութիւնից ծնւում է գլխաւոր եզրայանգումը՝ ժամանակի պատասխանատուութեան ծիրանին հագած 131-րդ Վեհափառ Հայրապետը լծուած է ժողովրդի բարոյական նորոգութեան գերխնդրին: Պատմութեան խորհուրդն ու շնորհն ենք տեսնում մենք այն կենսալից փաստի մէջ, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Կաթողիկոսը ստանձնել է հաւատացեալ ժողովրդի

առաջնորդի, իսկ աւելի պարզ ու բոլորուն՝ Ուսուցչի, իր սիրած ազնուագոյն բառով՝ Վարդապետի պաշտօնը:

Մենք վստահ ենք, որ այս գրա–փիլիսոփայական ժողովածուին վիճակուած է մեր ժողովրդի մէջ խորագնայ ճանապարհ: Այն առաւել ամբողջական է ներկայացնում Հովուապետի աշխարհայեացքը, հաւատքի զօրութիւնը, այստեղ աւելի խորն է արտայայտուած հայ գրականութեան, մշակոյթի ընդհանրական միասնական ըմբռնումը, փիլիսոփայութիւնը, ժողովրդական տարրերի, իմաստնութեան իւրացումը: Մենք մեզ թոյլ ենք տալիս այս գնահատութեան մէջ ներառնելու նաեւ հայեացքի գեղարուեստական ճանաչողութեան սահմանը, որպէս նրա կենսական մէկ առանձնայատկութիւնը: Մասնաւորապէս «Հրաշք Տաթևի (Թափօր լերան լանջերում)», «Խոր Վիրապ»՝ «խորհուրդ խորին» զգացապաշտ խորհրդածութիւններում մենք որսում ենք ստեղծագործական շունչ եւ տարերք, ինչն այնքան բնախօսական է նրա աշխատութիւններին առ հասարակ:

Անհնար է չգերուել գրողի գեղարուեստական պատկերների հմայիչ խաղով: Միայն մէկ–երկու օրինակ նշենք՝ վստահ լինելով ընթերցողի ճաշակին եւ ինքնուրոյն վերբերումներին: Ահա՛ նա՝ Գր. Տաթեւացու գերեզմանին մօտենալիս. «Լացը գետ դարձաւ հոգիիս մէջ, եւ գետը ոռոգեց խոպանացեալ անդաստանները... սրտիս»:

Խոր Վիրապից Արարատեան բարձունքը տեսնել չի կարողանում: Պատճառը «հոգեւոր» է՝ «Ամպերը շատ են սիրահարուած անոր, թոյլ չեն տար, ... որ երկնքին հետ անոր համբոյրին խորհուրդը խանգարուի»:

Եւ վերջինը. «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ» աշխատանքում երկնքի եւ երկրի հինաւուրց յարաբերակցութիւնը նոր գեղարուեստական իմաստի դաշտ է գտնում: Խօսելով եկեղեցական արուեստի նշանակութեան մասին՝ բանաստեղծ–աստուածաբանը գրում է, թէ այն «...օրերի մէջ լինելով հանդերձ, օրերից վեր է մնում, այնպէս, ինչպէս գագաթը լերան, որ երկրի վրայ կանգնելով հանդերձ, երկնքի պաստառից է կախուում»: Եւ այսպէս շարունակ:

Սիրելի՛ ընթերցող, այս գիրքը Վեհափառ Հայրապետի տարիների յարաճուն շահագրգիռ խօսքն է Քեզ ուղղուած, իւրատեսակ մի երկխօսութիւն, որ դեռ շարունակական ընթացք պիտի ունենայ, որի կենտրոնական մտահոգութիւնը եւ խորհրդի կիզակէտը Գո՛ւ ես, Քո ներկան ու ապագան: Այս գիրքը միջնորդ է քո եւ Աստուծոյ, քո եւ դարձեալ քո միջեւ: Մեր Վեհափառի գերագոյն նպատակը արդէն անցեալի հոգեւոր եւ անանց արժէքների խոր գնահատութեան ճանապարհով ներկան իմաստաւորելն է, այն նոր աշխոյժով կենսաւորելը: Եւ ընթերցանութեան բարձրագոյն պահերին մի՛ մոռացիր, որ նրա մտքի, ներաշխարհի դաշտը միշտ ողողուած է քեզնով, այն միշտ գրաւուած է ի՛ր ժողովրդով: Ինչքա՜ն դիպուկ է իր մէկ նկատառումը՝ «Խօսքս պատարա՜գի նշխարին պէս բաժներ եմ իմ ժողովրդին հետ», — գրում է նա՝ առանց ինքնագնահատութեան ակնարկի, պարզ ու անմիջական:

Մաշակենք, ուրեմն, մեր հոգեմտաւոր սեղանին ընծայուած այս մի բաժակ ջուրն ու մի պատառ հացը՝ աղօթելով Աստծուն, որ մեր սեղանից երբեք չպակասեն դրանք, այսինքն՝ երբեք չընդհատուի Աստծոյ եւ ժողովրդի միջեւ խորին խորհուրդ լուսաճոս ալիքը:

Մաշակենք եւ սպասենք Վեհափառ Տիրոջ նոր աշխատութիւններին:

Վասն Աստուծոյ եւ վասն Հայրենեաց:

04 Ապրիլի, 1997
Ի նշանաւորումն
Գարեգին Առաջինի՝
Ամենայն Հայոց Կաթողիկոս
ընտրութեան երկրորդ տարեդարձի:

ԿԵՍԴԱՐՅԱ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

50 տարի առաջ ձեռնադրվելով կուսակրոն քահանա, Հայոց Եկեղեցու ծոցում ծնվեց, հասունացավ ապագա Ծահե արքեպիսկոպոս Անձեմյան մարդ-հոգևորականը, եկեղեցական, հասարակական գործիչը՝ բեղուն գրչով և խորաթափանց մտքով, որ եղավ՝ «Հովիվ քաջ եւ հովիվ բարի» տարագիր իր հոտին: Փիլիսոփայական և աստվածաբանական գիտությունների դոկտոր Ծահե սրբազանը մեր այն հոգևորականներից է, որոնք ծնվել և հասակ են առել արտերկրում, հայրենի եզերքներից հեռու: Նա աչքերը բացել է Սիրիայի երնքի տակ, կրթվել ու դաստիարակվել Անթիլասի կրոնաբույր և հայաշունչ մթնոլորտում, բոլորանվեր կերպով ծառայել Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանում:

Սրբազան հոր գրչին են պատկանում բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված հոգևոր գրականության, աստվածաբանության, կրոնա-պատմական և միջնադարյան մատենագրության տարբեր հարցերին, որոնց լուսաբանման ընթացքում քանիցս դիմել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանում և. Մաշտոցի անվան մատենադարանում պահվող ձեռագրերին: Ծահե սրբազանի խմբագրությամբ և անմիջական գիտական ղեկավարությամբ հրատարակվեց «Ցուցակ Աստուածաշունչ մատեանի հայերէն ձեռագիրներուն» մեծադիր հատորը, որում ներկայացված են աշխարհի տարբեր ձեռագրային պահոցներում և անհատական հավաքածուներում պահվող Աստվածաշնչի հայերեն թարգմանության ձեռագրային ընդօրինակությունների նկարագրությունները:

Այս գրքի 160 էջից բաղկացած ընդարձակ ներածական-բացատրականում ասվում է. «Ցուցակս կը պարունակէ 294 գրչագիրներու նկարագրութիւնը... կը դնէ ընթերցողին և գիտնականին տրամադրութեան տակ նկարագրութիւնը մեզի ծանօթ բոլոր ձեռագիրներուն, որոնք կը պարունակեն Աստուածաշունչի ամբողջութիւնը կամ անոր գիրքերէն մաս մը»:

Մանրամասնաբար ներկայացված են Աստվածաշնչի հիմնական աղբյուրները և նրա հայացման երկհազարամյա մանրակրկիտ պատմությունը:

Ծահե սրբազանը նաև նման բովանդակալից ներածականով արևմտահայերեն հրատարակել է «Գիրք սաղմոսաց Դաւթի» շքեղ հատորը, որի առաջաբանում խոստովանաբար ասում է. «Ծրթունքներուս հետ, մատներս արտագրեցին աղօթքներուն և օրհնութիւններուն Աստուածաշունչ բառերը, ընծայելու համար զանոնք իրրեւ պատարագ, խունկ եւ մոմ՝ Տիրոջ Սուրբ Անունին»:

Ծահե սրբազանը տակավին երիտասարդ, Անթիլասի դպրեվանքում, Հովակիմյան-Մանուկյան վարժարանում, Փալանջյան ճեմարանում աշխատած տարիներին, պատրաստում և հրատարակում է «Քրիստոնեական դասագիրք»-ը: Այնուհետև հայ սաների սեղանին է դնում «Արաբերեն լեզվի դասընթաց հայ վարժարանների համար» հատորը, որը բավականին դյուրացրեց արաբերեն լեզվին տիրապետելը հայ մանուկների համար: Ծահե սրբազանը հովանավորելով գիրն ու գրականությունը, միաժամանակ ինքն էլ ստեղծագործող,

թարգմանիչ, Աստվածաշնչյան քննագրագետ, աղբյուրագետ, հմուտ աստվածաբան-փիլիսոփա է: Նաև օտար լեզուներով գրել է գրականագիտական, բանասիրական, մանկավարժական բազմաբնույթ հոդվածներ, որոնց մեկտեղումով մի գրադարան կարելի է կազմել:

Աստվածաշնչի գրաբար թարգմանության քննական բնագիր կազմելու համար Սրբազանը Երուսաղեմում հիմնեց «Զիթենյաց լեռան հայ Աստվածաշնչի կենտրոնը», որտեղ տասը տարի շարունակ աշխատեց տքնալից ու ջանադիր՝ համագործակցելով Երևանի Մատենադարանի գիտնականների և Երուսաղեմի Եբրայական համալսարանի հայագետ դոկտոր-պրոֆեսոր Մայքլ Սթոնի հետ: Սրբազանի ջանքերով կազմվել է Նոր Կտակարանի քննական բնագիրը՝ բաղդատմամբ հարյուրավոր ձեռագրերի պարունակած տարընթերցվածների, որտեղ հայերեն բնագրին զուգահեռ ներկայացվում է հունարեն տեքստը-և արևմտահայերեն նոր թարգմանությունը: Հեղինակի հավաստմամբ՝ մինչև տարվա վերջ Ավետարանները պատրաստ կլինեն հրատարակության: Պետք է ենթադրել, որ աշխատանքները կշարունակվեն, և մենք կունենանք Նոր Կտակարանի ճշգրտված համահավաք բնագիրը արդի գիտական չափանիշներով: Երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ը հանձնարարել էր մատենադարանի լուսահոգի գիտաշխատող Հակոբ Անասյանին՝ պատրաստել հրատարակության Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ»-ի քննական բնագիրը: Այսօր Շահե սրբազանը իր հոգու պարտքը համարելով՝ ավարտին է հասցնում կիսատ մնացած այդ աշխատանքը՝ ստանձնելով «Արմատ հաւատոյ»-ի հրատարակության աստվածահաճո գործը, որը ավարտին է հասցրել Մատենադարանի գիտաշխատող Տ. Շահե քհն. Հայրապետյանը:

Այս ամենին վերջերս ավելացավ ևս մի ծանրակշիռ վաստակ, մանկավարժական բնատուր ձիրքը ԵՊՀ-ի իր իսկ կողմից հիմնադրված Աստվածաբանական բաժանմունքում, որի համար ժամանակի օժտված բազմաշնորհ գիտնական հոգևորականը անցյալի մեր մեծ ուսուցչապետների կողքին է կանգնում, քանզի Տաթևի և Գլաձորի համալսարանների ավանդները այսօր շարունակվում են Երևանի համալսարանի կամարների ներքո: Այս կրթօջախի մտահղացումն ու իրականացումը միայն բավական կլիներ Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի անունը գալիք սերունդներին փոխանցելու համար:

ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՑՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՏՈՆԻՆ, ԻՐ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

«Հաւատսն պահեցի» (Բ. Տիմ. Դ. 7):

Այսպէս կ'եզրակացնէ Պողոս Առաքեալ, բանտի կապանքներուն մէջ գրուած իր երկրորդ նամակը ուղղուած իր սիրելի աշակերտին՝ Տիմոթէոսի: Պողոս Առաքեալ բանտարկուած էր Հռոմի մէջ և ան գիտէր թէ իրեն կը սպասէ նահատակութեան պսակը: Անիկա մերժած էր իր հաւատարիներուն առաջարկը, որ զինք փախստական դուրս հանեն բանտէն և ըսած էր թէ ինչ որ տնօրինուած է իրեն համար, ա՛յդ պիտի լինի Աստուծոյ կամքը: Իր հուսկ խօսքին մէջ, անիկա ոչ մէկ բան չյիշեց իր բոլոր ըրածներէն, իբրև հպարտութեան պատճառ, բայց միայն մէկ իրականութիւն, այն է որ հաւատքը ամուր պահած էր մինչև վերջ: Սքանչելի առաքեալը կը պարծենար միայն որ հաւատարիմ մնացած էր իր հաւատքին:

Այդ երկու բառերը կը յիշեմ այն մեծ առիթով որ տրուած է ինձի այսօր՝ ընծայելու Պենտեկոստէի Ս. Պատարագը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ: Ուզեցի այսօր հագնիլ դարձեալ կուսակրօն քահանայի զգեստը և պատարգել, յիշելու և յիշեցնելու համար թէ՝ յիսուն տարիներ առաջ, Պենտեկոստէի նոյն օրը, երբ ես, տակաւին սարկաւագ, ծնրադիր բարձրացայ Ս. Գրիգոր Լուսաւորիչ կաթողիկոսանիստ Տաճարին մէջ յԱնթիլիաս և օծուեցայ ճակատով և աջով՝ իբրև Շահէ կուսակրօն քահանայ: Օտար առիթներ ունիմ հպարտանալու կամ ամչնալու, սակայն մէկ բան կ'ուզեմ ըսել Առաքեալին նման. զհաւատսն պահեցի: Պահեցի այն հաւատքը, զոր ես մաքուր և վճիտ ժառանգած էի իմ մօրմէս:

Տարիներու ընթացքին, այդ հաւատքը, փոխանակ տկարանալու կամ փորձութեան մատնուելու, աւելի և աւելի զօրացաւ, աւելի և աւելի գեղեցկացաւ, պիտի ըսեմ, առանց վարանելու, այն օրէն ի վեր երբ ոտք կոխեցի մայրենի հողին վրայ: Առաջին անգամ որ նայեցայ Արարատի բարձունքին, իմ հաւատքի աչքերով, ես տեսայ այնտեղ Նոյեան Տապանը, տեսայ այնտեղ այն նշանը, որ կ'ըսէր թէ միակ արդարը, Աստուծոյ միակ ընտրեալը, որ կոչուած էր ջրհեղեղէն և մարդկութեան փճացումէն ետք, ապահովելու մարդկային ցեղի կեանքը և անոր շարունակութիւնը այս երկրի վրայ, անիկա կանգ առաւ Արարատի բարձունքին, ան իջաւ իր զաւակներուն և թոռներուն հետ Այրարատեան դաշտ, այնտեղ, բարձունքի մը վրայ, որ կ'ենթադրեմ թէ Արտաշատի բարձունքն պիտի ըլլայ, ուր կանգնած է այժմ Խոր Վիրապի վանքը, ան կանգնեց առաջին սեղանը և այնտեղ մատոյց առաջին պատարագը և այնտեղ ստացաւ Աստուծմէ առաջին ուխտը, որ այլեւս Արարիչը պիտի չպատուհասէ մարդկային ցեղը, այլ պիտի ըլլայ անոր փրկիչը: Այդ ուխտը կատարեցաւ ծիածանի նշանին տակ, այն ծիածանը, զոր կը շարունակենք տեսնել մեր երկինքի կամարին վրայ, Հայոց երկինքի բարձունքներուն: Այդ եղաւ իմ առաջին հաւատքը՝ թէ Աստուած իրապէս՝ յատուկ սիրով, յատուկ գուգուրանքով, յատուկ ողորմածութեամբ, յատուկ

համակրութեամբ և յատուկ խնամքով նայած է միշտ այս սուրբ աշխարհին և դրած է այնտեղ՝ մեր սուրբ գագաթին՝ յաւիտենական կեանքի նշանը, այն նշանը, որ շարունակ, դարերով ըսաւ մեզի թէ ինչպիսի ջրհեղեղներ, ինչպիսի երկրաշարժներ, ինչպիսի ցաւի և պարտութեան օրեր ալ անցնին այս աշխարհէն, որքան ատեն որ մեր աչքերը նային Արարատին և տեսնեն այնտեղ Նոյի նշանը, Նոյի տապանին նշանը, պէտք է հաւատան թէ այս մեր սուրբ երկիրը պիտի շարունակէ յաղթահարել ամէն դժուարութիւն, պիտի հաւատայ ինքզինքին և, այդ հաւատքին ընդմէջէն պիտի տեսնէ Աստուծոյ զօրութիւնը և Աստուծոյ ամենաուատ սէրը:

Իմ հաւատքը խորացաւ, տարածուեցաւ և ընդգրկեց միւս բարձունքը՝ Լուսոյ սեղանը: Այդ պատահեցաւ երբ առաջին անգամ մտայ Էջմիածնի Մայր Տաճարը և իմ աչքերով տեսայ, իմ աչքերով՝ Լուսաւորչի մշտավառ կանթեղը: Այո՛, սիրելի հաւատացեալներ, ամէն հայու սրտին մէջ երկու սրբութիւններ կան միշտ՝ մին Արարատն է և միւսը՝ Իջման Սեղանն է:

Ես զգացի թէ իրական հայ եկեղեցեկանը ան է որուն համար, ամէն անգամ երբ կը մտնէ այս Ս. Տաճարի դուռէն, Աստուածորդին անգամ մը ևս կ'իջնէ և կը խօսի անոր հետ: Մերն է այս Տաճարը, մերն է Ս. Էջմիածինը իր ամբողջ խորհուրդով, մեր ժողովուրդինն է հաւատքի այն ամուր ժայռը, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջին վրայ կը հաստատէ մեր ամբողջ Ազգը: Այս է հոգևոր մեր զօրութիւնը, որ կը յաղթէ ամէն տեսակի դժուարութիւններուն: Շատեր փորձեցին և տակաւին նոր տկարացան այն աջերը, որոնք ուզեցին մարել կանթեղը և տալ եկեղեցիին մահացու հարուածներ: Նոր է որ այդպիսիները դուրս նետուեցան մեր պատմութեան բէմէն: Այսօր, երբ կանգուն կեցած է Լուսոյ Խորանը Ս. Տաճարին մէջ, բոլորիս հաւատքն է որ աստուածային ձեռք մը կոտրեց և պիտի կոտրէ բոլոր այն ձեռքերը, որոնք կուրացած, կը մերժեն նայիլ մեր պատմութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչի տեսիլքին ընդմէջէն և անոր կանթեղին լոյսով:

Սիրելի հաւատացեալներ, այդ է մեր հաւատքը. մեզի համար սուրբ է այս երկիրը և ան որ կը նայի մայրենի հողին սուրբի աչքերով, պիտի զգայ թէ անոր հողէն արձակուած ջերմութիւնը պիտի թափանցէ իր երակներուն մէջ և իր ինքնութիւնը պիտի լեցնէ մաքուր հայրենասիրութեամբ որ խօսք ու լոզունգ չէ՛, այլ ապրում է, կեանք է, նուիրում է այս երկրին բարօրութեան: Իսկ անոնք որոնք ձնկաչոք կուգան և կը համբուրեն Իջման Սեղանին Սուրբ Խաչը, անոնք եթէ լի են հաւատքով անսասան և յոյսերով լուսաւոր, անոնք իրապէս պիտի զգան թէ որքան ատեն ուժեղ է մեր հաւատքը, որքան պիտի տոկանք մենք, պիտի ապրինք այս հողին վրայ, նոր երազներ պիտի տեսնենք, պիտի երազենք նոր ապագաներ և պիտի զգանք մեր մէջ մարգարէական շունչ մը, որ կ'ըսէ մեզի. եթէ ամուր էք ձեր հաւատքին մէջ, այս երկիրը պիտի բարգաւաճի, եթէ կը հաւատաք այս երկրի սրբութեան մեզի համար, այս հայրենիքը պիտի զօրանայ, այս հայրենիքը պիտի ոչ միայն Հայաստանը իր բնակիչներուն, այլ պիտի ըլլայ աշխարհի ոնէ մասին մէջ ապրող ամէն հայու Հայաստանը, հայրենիքը՝ ամենայն Հայոց հայրենիքը, ինչպէս Կաթողիկոսութիւնը այստեղ՝ Կաթողիկոսութիւնն է Ամենայն Հայոց:

Այս հանդիսաւոր առիթով, կ'ուզեմ աղօթել առ Աստուած, և բոլորդ ինձ հետ, որ տեսնենք գոնէ տեսիլքի մեր աչքերով և մարգարէական նայուածքով դէպի

ապագան. տեսնենք այն օրը, երազենք այն օրը, և մեր աչքերուն մէջ և մեր տեսողութեան դաշտին մէջ բնաւ չմթագնի այն օրը, երբ այս հողը, սրբազան այս հողը իրեն պիտի կանչէ իր բոլոր որդիները, իրեն պիտի կանչէ աշխարհի տարածքին ցրուած ամբողջ հայութիւնը, ըլլալու համար մօր մը պէս որ կը գրկէ պանդուխտ իր բոլոր զաւակները: Պիտի տեսնենք այն օրը նաև, երբ Կաթողիկոսներ, Պատրիարքներ, Առաջնորդներ, Եպիսկոպոսներ և եկեղեցականներ պիտի գան հաւաքուելու այս Սուրբ Տաճարին մէջ, Մայր Աթոռը ընելու համար մայրը բոլորին, առանց խտրութեան, առանց բաժանումի, առանց ջփոթութեան, առանց տխուր ոևէ զգացումի: Պիտի հաւատանք այս իրողութեան, պիտի հաւատանք մեր Հայրենիքին, պիտի հաւատանք մեր Եկեղեցիին և, այդ հաւատքով պիտի փառաւորենք մեր հայրերու Աստուածը, որ, ինչպէս իջեցուց Ս. Հոգին հաւաքուած աշակերտներուն գլուխն ի վեր, նոյնպէս պիտի գայ այն օրը, երբ այս Տաճարը ըլլայ վերնատունը մեր Եկեղեցիին, ուր հաւաքուած ամբողջ եկեղեցականութիւնը պիտի զգայ նոր Ս. Հոգիի մը էջքը, ինչպէս Միածինի էջքը Ս. Գրիգոր Լուսաւորիչի ժամանակ: Նոր հոգի մը պիտի ըլլայ ան, հոգի միութեան, հոգի իմաստութեան, հոգի հանճարոյ և հոգի հայրենասիրութեան:

Ի սրտէ պիտի միշտ փառաւորենք զԱստուած և խնդրենք որ ինչպէս իրականացաւ Լուսաւորիչի երազը, նոյնպէս իրականայ մեր բոլորին երազը, որովհետև պահեցինք հաւատքը և եղանք արժանի Անոր խնամքին: Մեծ են մեր յոյսերը, որովհետև գիտենք թէ Աստուծոյ վրայ դրուած յոյսը կրնայ հրաշքներ գործել: Ի Քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան: Քեզ փառք յաւիտեանս: Ամէն:

ՄԱՅՐ ՀԱՅՈՑ
ԵՎ ԹԵՍԱՍԵՐՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻՑ

Երեքշաբթի, 8 Ապրիլի երեկոյեան, Գահիրէի Ազգ. Առաջնորդարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ ի պատիւ Հայաստանի Հանրապետութեան գիւղատնտեսութեան նախարար Տիար Վլատիմիր Մովսէսեանի և իրեն ընկերացող անդամներուն: Ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Գահիրէի մօտ Լիազօր Դեսպան Տօքթ. Էտուար Նալպանտեան և դեսպանատան աշխատակիցներ: Ճառեր փոխանակուեցան և, մաղթանքներ արտասանուելէ ետք, հիւրերը առաջնորդուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի:

***

Շաբաթ, 12 Ապրիլ 1997-ի գիշերը, ի պատիւ Աղեքսանդրիոյ և Համայն Ափրիկէի Ցոյն Ուղղափառ Նորընտիր Պապ և Պատրիարք Նորին Ամեն. Բեթրոս 7-րդի, Նեղոս գետին վրայ, «Էլ Փաշա» զբօսանաւին մէջ, Ցոյն Ուղղափառ Համայնքի կողմէ սարքուած ընթրիքին ներկայ եղաւ Եգիպտահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. Չինչինեան:

Ներկայ էին Մերձ. Արևելքի զանազան երկիրներու դեսպաններ, համայնքներու ներկայացուցիչներ և բարձրաստիճան հոգևորականներ:

Բազմաթիւ ճառեր արտասանուեցան, առողջութեան, երկար կեանքի և Եկեղեցւոյ պայծառութեան մասին մաղթանքներ եղան: Եգիպտահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. ևս, յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հայց. Եկեղեցւոյ, հրապարակաւ շնորհաւորութիւններ և մաղթանքներ ներկայացուց Ն. Ամեն. Պատրիարք Սրբազանին:

***

Երկուշաբթի, 14 Ապրիլի առաւօտեան ժամը 11-ին, նախօրօք առնուած ժամադրութեան համաձայն, Աղեքսանդրիոյ և Համայն Ափրիկէի Պապ ու Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Բեթրոս 7-րդ Սինոդի Եպիսկոպոսներուն հետ ժամանեց Գահիրէի Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի՝ իր ընտրութեան և գահակալութեան հանդիսութիւններուն առթիւ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Հայրապետի շնորհաւորութիւններուն և եղբայրական բարեմաղթութիւններուն համար անձամբ շնորհակալութիւն յայտնելու:

Եկեղեցիին դուռն առջև հիւրերը ընդունուեցան եկեղեցական դասուն կողմէ: Ներկայ էին Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. Չինչինեան, Աղեքսանդրիոյ Առաջնորդական Փոխանորդ Հոգեշ. Տ. Թադէոս Վարդապետ Ջիրեկեանց, Հոգեշ. Տ. Գալուստ Աբեղայ Դարբինեան և հիւրաբար քաղաքս գտնուող Արժ. Տ. Մխիթար Քհն. Սարիբեկեան:

Պատրիարքը «Հրաշափառ»-ով առաջնորդուեցաւ դէպի Խորան: Առաջնորդ Գերաշ. Տ. Ջաւէն Արքեպս. ողջոյնի և բարիգալստեան խօսք արտասանեց և գեղեցիկ ու ընդարձակ տաճարին մասին տեղեկութիւններ տուաւ:

Պատրիարք Սրբազանը իրեն համար հաստատուած գահին վրայէն իր պատգամը տուաւ հաւատացեալ ժողովուրդին:

Ապա Պատրիարք Սրբազանը, շքախումբի իր անդամներն ու ժողովուրդը առաջնորդուեցան Ազգ. Առաջնորդարանի դահլիճ, ուր Առաջնորդ Սրբազանը բարեմաղթութեանց, համագործակցութեան ճառ արտասանեց ի դիմաց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, ապա ներկայացուց Թեմական ժողովի անդամները:

Հիւրասիրութենէ ետք Ամեն. Պատրիարք Սրբազանը խօսք առաւ և ըսաւ, թէ անձնապէս կը ճանչնայ ու խորապէս կը յարգէ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, որուն կը փափաքի, որ իր շնորհակալութիւնները փոխանցուին: Բարեմաղթութիւններէ ետք, հիւրերը մեկնեցան:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում մայիսի 16-ին, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի ունեցավ Եղիշե Չարենցի ծննդյան 100-ամյակին նվիրված գրական երեկույթ, որը նախագահում էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Բացման խոսքում Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն Ծ. վարդապետ Նաջարյանը նշեց, որ երկար ժամանակ էր, ինչ Հոգևոր Ճեմարանի հարկի ներքո տեղի չէր ունեցել հանդես՝ նվիրված հայ դասական գրողներին:

Խորհրդանշական է, որ այս երեկույթը նվիրված էր մի այնպիսի մեծ գրողի, ինչպիսին է Եղիշե Չարենցը, որը լուսաստղի նման պայծառ հետք թողեց մեր ժողովրդի պատմության և գրականության էջերում,- ասաց Հոգևոր Ճեմարանի տեսուչը:

Հանդիսությունը կազմակերպվել էր Հոգևոր Ճեմարանի գրականության դասախոս պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի նախաձեռնությամբ և ջանքերով: Նա էր նաև օրվա գլխավոր բանախոսը:

Նրա խոսքից հետո Ճեմարանի սաները կարդացին Եղիշե Չարենցի բանաստեղծություններից մի քանիսը:

Ճեմարանի ուսանողության անունից եղույթ ունեցավ Դ լսարանի սան Արսեն Պատուրյանը:

Հանդեսի վերջում իր օրհնության խոսքը ներկաներին բաշխեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց տեսչությանը, հանդեսի կազմակերպիչ պրոֆ. Սուրեն Դանիելյանին և Հոգևոր Ճեմարանի ուսանողությանը: Ապա Վեհափառ Հայրապետն ավելացրեց. «*Ինքնահարստացումով ենք լցվում այսպիսի հոգևոր վայելքների պահերին, որը մարդուս մեջ ապրումներ է ծնում, մեզ մտածումներով լցնում: Մարդը կոչվում է ասուն, որը վկայում է նաև լսուն լինելու մասին: Նա լսում է, իմանում և իր անձնական վկայությունն է բերում ասածին՝ գործով դրոշմ բերելով: Միայն մտքի աշխարհով ապրողների համար է, որ այսպիսի պահերը հոգևոր հարստացման պահեր են*»:

Նորին Սուրբ Օծությունը շեշտեց, որ ինչպես Եղիշե Չարենցն էր նվիրված իր հայրենիքին, նույնպես էլ ճեմարանցիները պիտի դաստիարակվեն և նվիրվեն հայրենիքին, որը մեր բոլորի կարիքն ունի այժմ, որպեսզի իրապես ծողկուն և ազատ հայրենիք դառնա: Ճեմարանականներն այժմ կոչված են լրացնելու Հայ Եկեղեցու հոգևորականության շարքերը, հզորացնելու Հայոց Եկեղեցին, որ ազգի սիրտն է. «*Պիտի դառնանք Աստուծո թարգմանը մեր ժողովրդի համար, պիտի գործենք՝ իբրև խոփ Աստուծո ձեռքին*»:

Վերջում Վեհափառ Տերը, ավարտելով իր հայրական խոսքը, նորից դիմեց ճեմարանականներին. «*Ահա Չարենցը ասում է, որ դարերեն են ձեզ հետևում, իսկ ես ավելացնում եմ. դարերեն են ձեզ սպասում, մի՛ հուսախաբ արեք*»:

ԱՐՏԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԼՈՌԵՑՅԱՆ

ԿՐՈՆԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ-ՀԱՎԱՔ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

Արարատյան Հայրապետական Թեմի Արաբկիրի Հայորդյաց Տանը մայիսի 17-ին, Թեմի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի նախաձեռնությամբ, իր աշխատանքն սկսեց Կրոնակրթական ուսուցիչների մեկօրյա համագումար-հավաքը:

Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի շուրջ քառասուն ուսուցիչների, երկու հարյուր աշակերտների, արժանապատիվ Տեր Հայրերի և բազմաթիվ հրավիրյալների մասնակցությամբ գումարված այս հավաքը պատահական չէ, որ կրում էր «Անհատ, ընտանիք, ընկերություն» վերտառությունը և տեղի էր ունենում Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից Ընտանիքի օրվան նվիրված տօնակատարության օրերին:

Ընդհանրական Տերունական աղոթքից հետո, ողջույնի բացման խոսքով ներկաներին դիմեց ՔԴԿ-ի տնօրեն Ա. Գաբուճյանը: Իր շնորհակալությունը Հայորդաց Տների գրասենյակի տնօրեն պրն. Ս. Սիմոնյանին և Արաբկիրի Հայորդաց Տան տնօրենուհի տիկ. Բ. Ավետիսյանին հայտնելուց հետո, Ա. Գաբուճյանը երախտիքի խոսքեր ուղղեց միջոցառմանը ներկա Տեր Տաթև և Տեր Շահե քահանաներին՝ հատկապես կարևորելով նրանց ոչ միայն ներկայությունը, այլև լիարժեք մասնակցությունն Աստվածահաճո այս գործին: Այնուհետև, իր դասախոսությունը Մատթեոսի Ավետարանի 14-րդ գլխի թեմաներով կառուցելով, նա խոսեց անհատի և ընտանիքի կյանքում Եկեղեցու ունեցած դերի մասին: Ավետարանում Հիսուսի հացի բազմացման օրինակով, հետևյալ զուգահեռն անցկացրեց. ինչպես Հիսուս հացը բազմացրեց ու, ժողովրդին գթալով, հոգաց նրանց քաղցը, այնպես էլ եկեղեցին, լինելով Հիսուս Քրիստոսի ներկայությունն իր մեջ ունեցող հաստատությունն ու նրա խորհրդանշական մարմինը երկրի վրա, իր առջև անհատին ու հասարակությանը «գթալու», «տալու» առաքելությունն ու պարտականությունն ունի:

Այնուհետև «Անհատը և Եկեղեցին», «Ընտանիքը և Եկեղեցին» դասախոսություններով հանդես եկան Տ. Տաթև քահանա Աբրահամյանը և Տ. Շահե քահանա Հայրապետյանը: Նրանք, իրենց խոսքերում Եկեղեցու աստվածաբանական բացատրությունը տալուց հետո, կարևորեցին անհատի դերը ինչպես ընտանիքում, այնպես էլ Եկեղեցում՝ նշելով, որ անհատը ինչքանով որ անբաժան մասն է իր ընտանիքի, նույնքանով էլ անքակտելի մասն է Մայր Եկեղեցու:

Համագումարի ընդմիջմանը գեղարվեստական համարներով հանդես եկան Արաբկիրի Հայորդյաց Տան սաները, որոնք իրենց կատարումներով գեղագիտական հաճույք պատճառեցին ներկաներին, Կոմիտասյան երգով հոգևոր նոր լիցք հաղորդեցին միջոցառման մասնակիցներին:

Այնուհետև ՔԴԿ-ի ուսուցիչների անունից երախտիքի խոսք հայտնեց Ա. Սեդրակյանը: Նմանատիպ հավաքները նա կարևորեց հոգևոր շինության և

վերանորոգության առումով՝ նշելով, որ ինչպես եկեղեցի հաճախելն ու արարողություններին և ծիսակատարություններին մասնակցելը պարտադիր է կրոնակրթական համակարգում գործող ուսուցչի հոգևոր աճի համար, այնպես էլ նման հավաքների մասնակցությունն անհրաժեշտ է գիտելիքների վերագտման, ուսուցչական փորձառության փոխանակման և հոգևոր հաղորդակցության առումով:

Հավաքի վերջում Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Գարեգին արքեպ. Ներսիսյանի հայրական օրհնության խոսքը ներկաներին փոխանցեց Տ. Տաթև քահանան՝ հույս հայտնելով, որ նմանատիպ ձեռնարկները կդառնան ամենամյա ու ավանդական և կնպաստեն մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակությանը՝ ի փառս Աստուծո և ի պայծառություն Հայաստանյայց Մայր Եկեղեցվո:

ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ
Արարատյան Հայրապետական Թեմ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՀԷՐՎԵ ԴԸ ՇԱՐԵԹՆ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻՆ

Ապրիլի 2-ին, Երևան ժամանելուց անմիջապես հետո, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության պատվիրակությունը՝ արտաքին գործոց նախարար Հէրվե Դը Շարեթի գլխավորությամբ: Վեհարանի իր աշխատասենյակում հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ջերմ զրույցի ընթացքում պրն. Շարեթը Նորին Սրբությանը ծանոթացրեց իր այցելության նպատակներին՝ հավաստիացնելով, որ Ֆրանսիան և Մինսկի խմբի անդամ մյուս երկրները կանեն իրենց գերագույն կարելին՝ դարաբաղյան հակամարտությանը գործնական և դրական լուծում տալու համար:

Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունն ու գնահատանքն արտահայտեց այդ կապակցությամբ և հույս հայտնեց, որ խնդրի հարթման պարագայում անպայմանորեն կհարգվեն Արցախի ժողովրդի արդար իրավունքները ու պահանջները:

Նորին Սրբությունն ու արտաքին գործոց նախարարը վերհիշեցին նաև հունվարին Փարիզում կայացած իրենց վերջին հանդիպումը և վստահաբար հաստատեցին, որ ֆրանսիացի և հայ ժողովուրդների բարեկամությունը առավել ամրապնդվելու միտում ունի:

Մեկնելուց առաջ պրն. Շարեթը գրառում կատարեց պատվավոր հյուրերի հուշամատյանում:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապրիլի 12-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց օրերս Հայաստանի Հանրապետության նախագահին իր հավատարմագիրը հանձնած Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Միթչիներին:

Ողջունելով դեսպանի այցելությունը Մայր Աթոռ, Վեհափառ Հայրապետը հանգամանորեն ներկայացրեց Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիրքն ու դերը հայ ժողովրդի և ընդհանուր քրիստոնյա եկեղեցիների կյանքում: Նորին Սրբությունը խոսեց նաև երկու եկեղեցիների պատմական սերտ հարաբերությունների մասին և հույս հայտնեց, որ այս վճռական ժամանակներում Մեծ Բրիտանիայի պետությունն ու եկեղեցին, ինչպես և բարեսիրական կազմակերպությունները զորավիգ կկանգնեն Հայաստանին ու Մայր Աթոռին:

Պրն. Միքյիները, համամիտ լինելով Նորին Սրբության խոսքերին, ներկայացրեց իր ծրագրերը՝ շեշտելով, որ Հայաստանում իր դիվանագիտական ծառայության ընթացքում կգործադրի ամեն ջանք՝ Մեծ Բրիտանիայի և Հայաստանի միջև բազմակողմ հարաբերությունների խորացման և առավել սերտացման համար:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 19-ին Նորին Սրբություն Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի երիտասարդության հարցերի պետդեպարտամենտի նախագահ Նիկոլոզ Նիկոլոզիշվիլուն:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը և պրն. Նիկոլոզիշվիլին խոսեցին հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության մասին ու կարևորեցին հարևան պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունները՝ բոլոր բնագավառներում: Հատկապես շեշտվեց երիտասարդական կազմակերպությունների սերտ գործակցության, երիտասարդությանը՝ մեր նկեղեցիների ավանդույթներով դաստիարակելու, հոգևոր արժեքներին նրանց ավելի մոտեցնելու և հաղորդ դարձնելու անհրաժեշտությունը:

Հանդիպմանը ներկա էին Կրոնի գործոց խորհրդի նախագահ Լազար Սուքյանը, Վրաստանի երիտասարդության հարցերի պետդեպարտամենտի և Հայաստանի մշակույթի նախարարության աշխատակիցներ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, երեքշաբթի.- Գ օր Ջատկի:

Այսօր Մայր Աթոռ ժամանեցին Կ. Պոլսո Պատրիարք Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը, Կ. Պոլսո Պատկառելի կրոնական ժողովի ատենապետ Տ. Մեսրոպ արքեպս. Մուրատֆյանը, Ռուսահայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը, ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիս. Տերտերյանը՝ իրենց թեմերից ընտրված մեկական աշխարհական ներկայացուցիչների հետ՝ մասնակցելու համար Վեհափառ Հայրապետի կողմից հրավիրված Ազգային-եկեղեցական պատգամավորական ժողովին (տես էջ 34):

⁂

Ապրիլի 6-ին, կիրակի. - Ը օր Ջատկի: Կրկնազատիկ (Նոր կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հունաստանի թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ սրբազանը՝ «Նորոգեցարուք նորոգութեան կեանս այսօր Յարութեամբն Քրիստոսի, նոր ժողովուրդ» (շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը

Ս. Պատարագից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ. Տ. Գարեգին Ա-ի ընտրության և գահակալության երկրորդ տարեդարձի կապակցությամբ:

Հավարտ սրբազան արարողության Վեհարանի հյուրասիրության դահլիճում Գարեգին Վեհափառի գահակալության երկրորդ տարեդարձի առիթով տրվեց ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռ ժամանած բոլոր թեմական առաջնորդները, պատգամավորներն ու Մայր Աթոռի միաբանները:

***

Ապրիլի 7-ին, երկուշաբթի.- Աւետումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

Նույն օրը Երևանում կատարվեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հիմնօրհնեքը՝ Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ (տես՝ էջ 38):

***

Ապրիլի 13-ին, կիրակի.- Աշխարհամատրան (Կանաչ կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր՝ յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգեւորն պատարագս՝ հաճոյս Աստուծոյ՝ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի: Քանզի կայ իսկ ի գրի, եթէ Ահաւասիկ դնեմ ի Սիովն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, եւ որ ի նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ» բնաբանով /Ա Պետրոս, Բ 5, 6/:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***

Ապրիլի 20-ին, կիրակի.- Կարմիր կիրակէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաթև աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Եւ եղեալ ծառայն այն՝ եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան. եւ կալեալ զնա՝ խեղդէր եւ ասէր. հատո ինձ զոր պարտիսդ» բնաբանով /Մատթ. ԺԸ 28/:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Ապրիլի 23-ին, չորեքշաբթի.- Իե օր Ցինանց:

Այսօր, երեկոյան ժամերգությունից հետո, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Մեմարանի ուսանողության և հավատացյալների, կատարվեց *Հանդիսի* արարողություն՝ ի հիշատակ ցեղասպանության զոհերի: Մայր տաճարում քարոզ խոսեց Տ. Օահե արքեպս. Աճեմյանը՝ ցեղասպանության անմեղ զոհերին համեմատելով Եզեկիել մարգարեի՝ անապատում հարություն առնող աճյունների տեսիլքի հետ: Այնուհետև թափորը, գլուխ ունենալով Վեհափառ Հայրապետին, ուղղվեց դեպի Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան, ուր Գերաշնորհ Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանի նախաձեռնությամբ՝ Հոգևոր Մեմարանի ուսանողությունը ներկայացրեց մի սքանչելի հայտագիր, որում ոգեկոչվեցին Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը: Այստեղ իր սրտի խոսքը ներկաներին փոխանցեց Հոգևոր Մեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաքաշյանը և վերջում Վեհափառ Հայրապետին հրավիրեց իր օրհնության խոսքն ասելու: Վեհափառ Հայրապետը մասնավորապես ասաց.

«...այժմ ինչպե՞ս մենք պետք է մեր հարգանքի տուրքը մատուցենք: Պատասխանը մեկն է. միայն ու միայն զոհողությամբ կարելի է իմաստավորել նահատակների թափած սուրբ արյունը: Զոհողությունը լինում է երկու տեսակ՝ առաջինը արյամբ նահատակությունն է, իսկ երկրորդը՝ կյանքով վկայությունն է»:

⁂

Ապրիլի 24-ին, հինգշաբթի.- ԻԶ օր Ցինանց: Ցիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի յԱրևմտեան Հայաստան: Կատարի հոգեհանգիստ յեկեղեցիս Հայաստանեայց:

Առավոտյան ժամը 9.00-ին Մայր Աթոռիս միաբանությունը, Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ, ուղևորվեց Երևան՝ հարգանքի տուրք մատուցելու Ցեղասպանության զոհերի հիշատակին Ծիծեռնակաբերդի բարձունքի Նահատակաց հուշակոթողի առջև: Այստեղ էին ՀՀ նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, պետական ամբողջ ավագանին: Նահատակաց հուշարձանի անմար կրակի առջև կատարվեց հոգեհանգստյան կարգ, հավարտ որի ներկաներին և ողջ հայ ժողովրդին իր խոսքը ուղղեց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև թափորը վերադարձավ Մայր Աթոռ, որտեղ Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա Ս. Պատարագ էր մատուցում Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսելով պատարագիչ սրբազանը՝ վեր հանեց Մեծ Եղեռնի զոհերի մարտիրոսությունից դաս քաղելու խորհուրդը: Հավարտ Ս. Պատարագի Մայր Աթոռիս միաբանությունը, ուսանողությունն ու ժողովուրդը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ, թափորով շարժվեցին դեպի Մայր Տաճարի բակում գտնվող ապրիլյան նահատակների խաչքարհուշակոթողը, որտեղ կատարվեց հոգեհանգստյան արարողություն ի հիշատակ Մեծ Եղեռնի անմեղ զոհերի: Վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը (տե՛ս էջ 42-44):

⁂

Ապրիլի 27-ին, կիրակի.- Տօն երևման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ սրբազանը՝ «Ի յերկնից երևեալ նշանն յաղթութեան, այսօր հերանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան» (շարական) բնաբանով:

⁂

Մայիսի 4-ին, կիրակի. - Զ կիրակի զկնի Ցարութեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր սուրբը քարոզ խոսեց՝ «Ի բաց թոթափեալ այսուհետև զամենայն չարութիւն և... զամենայն չարախօսութիւն» /Ա Պետրոս Բ 1/: Քարոզի վերջում հատկանշական մեջբերում կատարեց Ա դարի մեծ մտածող Հիլելից՝ «Դատի՛ր մերձավորիդ միայն այն ժամանակ, երբ դու ինքդ նրա վիճակի մեջ ես»:

⁂

Մայիսի 8-ին, հինգշաբթի.- Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: Հավարտ Պատարագի, Իշման Ս. Սեղանի վրա քարոզ խոսեց հայր Հայկազունը՝ «Արք Գալիլիացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս: Այս Յիսուս որ վերացաւն ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ՝ զոր օրինակ տեսէք զնա երթալ յերկինս» /Գործք. Ա 11/ բնաբանով:

Քարոզից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք՝ *հիշատակ փոխադրութեան Արոռոյն Հայոց ի Սսոյ ի Ս. Էջմիածին, յամի Տեառն 1441:*

⁂

Մայիսի 11-ին, կիրակի.- Երկրորդ Մաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բագրատ աբեղա Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Զի նա է ճշմարիտ Աստուած եւ կեանք յաւիտենական» /Հովհ., Ա Ընդհ. թուղթ, Ա 20/ բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

⁂

Մայիսի 18-ին, կիրակի.- Հոգեգալուստ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Սրբազան հայրը իր քահանայագործության 50-ամյակի առթիվ մատուցեց *քահանայական* Պատարագ և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց «Զհաւատսն պահեցի» /Բ Տիմոթ. Դ 7/ բնաբանով՝ անդրադառնալով իր քահանայագործության 50 տարիներին (տե՛ս էջ 150):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

⁂

Մայիսի 25-ին կիրակի.- Ա կիրակի զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կարապետ աբեղա Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը. ընթերցեց Ղուկասի Ավետարանի Ժ 25-37 հատվածը («Մեծ պատուիրանը» և «Բարի սամարացին») և մեկնեց այդ հատվածները: Պատարագի վերջում քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ անդրադառնալով Սարդարապատի հերոսամարտին և նրա նշանակությանը հայ ժողովրդի գոյատևման համար:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

⁂

Մայիսի -26-ին, երկուշաբթի.- Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց: Եկեղեցական հանդէս ի վանս Սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ:

Այսօր Ս. Հռիփսիմե վանքի տաճարում Ս. Պատարագ մատուցեց Մեծի Տանն

Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ սրբազանը՝ «Աննինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» (շարական Հռիփսիմեանց) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Մեխարանի ուսանողները, քահանա հայրեր Էջմիածնից և մերձակա շրջաններից, ինչպես և բազմաթիվ ուխտավորներ Հայաստանի տարբեր շրջաններից:

Ս. Պատարագից հետո վանքի սեղանատանը տրվեց սիրո ճաշ:

⁂

Մայիսի 27, երեքշաբթի.- Սրբոց կուսանացն Գայիանեանց: Եկեղեցական հանդէս ի վանս Սրբուհւոյ կուսին Գայանեայ:

Այսօր Ս. Գայանե վանքի տաճարում Ս. Պատարագ մատուցեց վանքի վանահայր Տ. Գուրգեն ա. քհն. Աշուրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ տեր հայրը:

Ս. Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, քահանա հայրեր Էջմիածնից և մոտակա շրջաններից, ինչպես և բազմաթիվ ուխտավորներ Հայաստանի տարբեր շրջաններից:

⁂

Մայիսի 29-ին, հինգշաբթի.- Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին: Եկեղեցական հանդէս ի վանս Ս. Յողակաթի:

Այսօր Ս. Յողակաթ վանքի տաճարում Ս. Պատարագ մատուցեց վանքի վանահայր Տ. Գրիգոր ավ. քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ տեր հայրը:

Ս. Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, քահանա հայրեր Էջմիածնից և մոտակա շրջաններից, ինչպես և բազմաթիվ ուխտավորներ Հայաստանի տարբեր շրջաններից:

⁂

Մայիսի 31-ին, շաբաթ.- Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եկն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ հայր սուրբը՝ «Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա» (Եբր. ԺԳ 17) բնաբանով:

"ЭЧМИАДЗИН"

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

(АПРЕЛЬ-МАЙ 1997)

РЕДАКЦИОННАЯ

1. Даруй крепость Твою рабу Твоему (стр. 3-6)
2. Совещание в Первопрестольном Эчмиадзине 3 апреля 1997 г. (стр. 7-8)
3. Справка о деятельности Католикоса Всех Армян Гарегина I и Верховного Духовного Совета за два года, 1995-1997 гг. (стр. 9-33)
4. Список участников собрания епархиальных предстоятелей и светских делегатов от епархий состоявшегося в Первопрестольном Эчмиадзине с 3 по 5 апреля 1997 г. (стр. 34-37)
5. МАРИАМ ВАРДАНЯН. Чин освящения закладки фундамента Кафедрального Собора Св. Григора Лусаворича, 7 апреля 1997 г. (стр. 38-41)
6. День памяти жертв геноцида 24 апреля в Первопрестольном Эчмиадзине. (стр. 42)
7. Католикос Всех Армян Гарегина I. Кровь жертв обязывает нас. - (стр. 43-44)
8. Энциклика благословения Католикоса Всех Армян протоиерею Арамаису Мирзояну, 8 апреля 1997 г. - (стр. 46)
9. Энциклика благословения Католикоса Всех Армян Левону Калустяну, 17 апреля 1997 г. (стр. 47)
10. Энциклика благословения Католикоса Всех Армян о награждении Габриеля Пасмачяна орденом "Св. Саак-Св. Месроп", 21 апреля 1997 г. (стр. 48)
11. Энциклика благословения Католикоса Всех Армян о награждении Ваге Кетли орденом "Св. Саак-Св. Месроп", 21 апреля 1997 г. (стр. 49)
12. Энциклика благословения Католикоса Всех Армян о награждении Грача Гюсисяна орденом "Св. Нерсес Шнорали", 21 апреля 1997 г. (стр. 50)
13. Энциклика благословения Католикоса Всех Армян о награждении Мкртича Мкртчяна орденом "Св. Нерсес Шнорали", 21 апреля 1997 г. (стр. 51)
14. Энциклика благословения Католикоса Всех Армян о награждении Айка Мисакяна орденом "Св. Нерсес Шнорали", 21 апреля 1997 г. (стр. 52)
15. Энциклика благословения Католикоса Всех Армян о награждении Чарльза Тагесяна орденом "Св. Нерсес Шнорали", 27 мая 1997 г. (стр. 53)
16. Энциклика благословения Католикоса Всех Армян о награждении Джана Пароняна орденом "Св. Саак-Св. Месроп", 1997 г. (стр. 54)
17. МАРИАМ ВАРДАНЯН. Визит Его Святейшества Католикоса Всех Грузии Илии II в Первопрестольный св. Эчмиадзин, 27-30 мая 1997 г. (стр. 55-90)

БОГОСЛОВСКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ОТДЕЛ

18. А. Г. МУШЕГЯН. Загадка "Томилась Сатеник" (исследование) - (стр. 92-95)
19. ВАЗГЕН АМБАРЦУМЯН. Ованес Имастасер Одзнеци (исследование) - (стр. 96-105)
20. А. С. АРЕВШАТЯН. Кто является сочинителем песнопения "Зорс эст паткери кум" (исследование) - (стр. 106-115)
21. ПИОН АКОПЯН. Абовян и Нерсес Аштаракеци (исследование, продолжение) - (стр. 116-122)
22. ГЕНРИХ ХАРАТЯН. Церковь Св. Богородицы в Севанском монастыре Св. Апостолов (исследование) - (стр. 123-130)
23. АЙРАПЕТ ШАТВОРЯН. История религиозно-исторического музея главной церкви Тифлисского монастыря (исследование) - (стр. 131-139)
24. СУРЕН ДАНИЕЛЯН. Сила и обояние вдохновенного слова. (Рецензия на книгу Католикоса Гарегина I "Излучения духа и мысли") - (стр. 140-147)
25. СИЛЬВА СУКИАСЯН. Полувековой путь (к 50-летию священства архиепископа Шаге Ачемяна) - (148-149)
26. Проповедь архиепископа Шаге Ачемяна в Кафедральном Соборе Св. Эчмиадзина в праздник Пятидесятницы, по случаю 50-летия своего иерейского рукоположения, 18 мая 1997 г. (стр. 150-152)

ЦЕРКОВНАЯ ЖИЗНЬ

27. Вести из армянской епархии Египта. (стр. 159-155)
28. ДИАКОН АРТАК ЛОРЕЦЯН. Литературный вечер в Духовной Академии св. Эчмиадзина, посвященнуй 100-летию Егише Чаренца, 16 мая 1997 г. (стр. 156)
29. АНАИТ СЕДРАКЯН. Съезд по вопросам религиозного образования в Араратской епархии, 17 мая 1997 г. (стр. 157-158)
30. Министр иностранных дел Франции Эрве д'Шарет, посетил Католикоса Гарегина I, 2 апреля (стр. 159)
31. Посол Великобритании посетил Католикоса Гарегина I, 12 апреля 1997 г. (стр. 159)
32. Католикос Всех Армян Гарегин I принял председателя госдепартамента Грузии по вопросам молодежи, 19 апреля 1997 г. (стр. 160)
33. Церковная хроника за апрель-май 1997 г. (стр. 161-165)

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(APRIL-MAY 1997)

EDITORIAL

1. Give Your strength to Your servant... - (pp. 3-6)
2. Consultative convocation in the Holy See of Etchmiadzin, on the 3rd of April 1997 - (pp. 7-8)
3. Biennial report of the activity of His Holiness Karekin I-Supreme Patriarch and Catholicos of All Armenians and Supreme Spiritual Council, 1995-1997 - (pp. 9-33)
4. The list of the diocesan prelates and the secular delegates of dioceses who took part in the consultative convocation held in the Holy See of Etchmiadzin during 3 to 5 April 1997 - (pp. 34-37)
5. MARIAM VARDANIAN - The foundation blessing of the Church St. Gregory the Illuminator, on the 7th of April 1997 - (pp. 38-41)
6.Ceremonies of remembrance and incantation in the Holy See of Etchmiadzin, on the 24th of April 1997 - (p. 42)
7. KAREKIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS - The blood of martyrs is drawing the way of our obligation - (pp. 43-44)

OFFICIAL

8. The papal blessing bull of Supreme Patriarch of All Armenians to the senior priest Aramais Mirzaian, on the 8th of April 1997 - (p. 46)
9. The papal bull of Supreme Patriarch of All Armenians, to Mr. Levon Galoustian, on the 17th of April 1997 - (p. 47)
10. The papal bull of Supreme Patriarch of All Armenians, on the 21st of April 1997, about granting Mr. Gabriel Basmadjian with "Surb Sahak - Surb Mesrop - St. Sahak - St. Mesrop" insignia - (p. 48)
11. The papal bull of Supreme Patriarch of All Armenians, on the 21st of April 1997, about granting Mr. Vahé Ketly with "Surb Sahak-Surb Mesrop - St. Sahak - St. Mesrop" insignia - (p. 49)
12. The papal bull of Supreme Patriarch of All Armenians, on the 21st of April 1997, about granting Mr.Hrach Hussian with "Surb Nerses Shnorhali - St. Nerses Graceful" insignia - (p. 50)
13. The papal bull of Supreme Patriarch of All Armenians, on the 21st of April 1997, about granting Mr. Mkrtich Mkrtchian with "Surb Nerses Shnorhali - St. Nerses Graceful" insignia - (p. 51)
14. The papal bull of Supreme Patriarch of All Armenians, on the 21st of April 1997, about granting Mr.Haik Missakian with "Surb Nerses Shnorhali - St. Nerses Graceful" insignia - (p. 52)
15. The papal bull of Supreme Patriarch of All Armenians, on the 27th of May 1997, about granting Mr.Charles Dakessian with "Surb Nerses Shnorhali-St. Nerses Gracerful" insignia - (p. 53)
16. The papal bull of Supreme Patriarch of All Armenians, on the 27th of May 1997, about granting Mr. Jan Baronian with "Surb Sahak- Surb Mesrop - St. Sahak-St. Mesrop" onsignia - (p. 54)

17. MARIAM VARDANIAN - The Visit of His Holiness Ilia II Catholicos Patriarch of All Georgia to Holy See of Etchmiadzin, from 27 to 30 of May 1997 - (pp. 55-90)

RELIGIO - PHILOLOGICAL

18. A. H. MOOSHECHIAN - The enigma of "Envy Satemk..." /study/ - (pp. 92-95)
19. VAZGUEN HAMBARTZOOMIAN - Philosopher Hovhannes Odznetzi /study/ - (pp. 96-105)
20. A. S. ARAVSHATIAN - Who is the auothor of "Zors est patkeri kum - Whom you made according to your picture" hymnology /study/ - (pp. 106-115)
21. PION HAKOBIAN - Abovian and Nerses Ashtaraketzi /the continuation of study/ - (pp. 116-122)
22. HENRIK KHARATIAN - The St. Mary Church of Holy Apostles Monastery of Sevan /study/ - (pp. 123-130)
23. HAIRAPET SHATVORIAN - The religio-historical history of the museum of Mother Church of Tiflis' Monastery, 1900-1920 years /study/ - (pp. 131-139)
24. SOOREN D. DANIELIAN - The force and the charm of spiritual saying of the "Psycho-mental splendors" book of the Supreme Patriarch /review/ - (pp. 140-147)
25. SILVA SOOKIASSIAN - He has been on the road the half of century /on the occasion of the 50th anniversary of Shahe Ajemian's ordination/ - (pp. 148-149)
26. The sermon of Archbishop Shahe Ajemian, preached in the Mother Cathedrial of Holy Etchmiadzin on the occation of the 50th anniversary of his sacerdotal ordination, on the 18th of May 1997 - (pp. 150-152)

IN HOLY SEE AND DIOCESES

27. News from the diocese of "Armenians living in Egypt - (pp. 154-155)
28. DIACON ARTAK LORETZIAN - Literary evening party in the Spiritual Seminary of Holy Etchmiadzin, on the occasion of the Yaghishe Charentz birtday's 100th anniversary, on the 16th of May 1997 - (p. 156)
29. ANAHIT SEDRAKIAN - Religio-educational assambly-reunion in the Patriachal Diocese, on the 17th of May 1997 - (pp. 157-158)

RECEPTIONS IN THE HOLY SEE

30. His excellency, Mr. Erve De Charet, the Foreign Minister of France paid a visit to His Holiness Karekin I Catholicos of All Armenians, on the 2nd of April 1997 - (p. 159)
31. The British Ambassador paid a visit to His Holiness Karekin I Catholicos of All Armenians, on the 12th of April 1997 (p. 159)
32. Karekin I Catholicos of All Armenians accepted the president of the Youth questions department of Georgia, on the 19th of April 1997 (p. 160).

ECCLESIASTIC STAGE

31. News about the Holy Liturgies, of preached sermons in the Holy Etchmiadzin Cathedral during the April-May months anddescriptions of the other festivities which have taken place in the Holy See - (pp. 161-165)

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(AVRIL-MAI 1997)

EDITORIAL

1. "Donnes la puissance à ton serviteur" (pp. 3-6).
2. Réunion de réflexion au St-Siège d'Etcluniadzine. 3 avril 1997. (pp. 7-8)
3. Bulletin bimensuel du Catholicos Karékine 1er et les activités du conseil suprême religieux. (pp. 9-33)
4. Avril 3/5. Réunion des prélats au St-Siège d'Etchmiadzine ainsi que la liste des représentants laïcs des prélatures qui ont participé à la réunion de réflexion. (pp. 34-37)
5. MARIAM VARTANIAN. L'hymne de St Grégoire l'Illuminateur de la Mère Eglise. 7 avril 1997. (pp. 38-41)
6. Cérémonies de souvenir et de commémoration du 24 avril 1915 au St-Siège d'Etchmiadzine. 24 avril 1997. (p. 42)
7. Le Catholicos de tous les arméniens SS Karékine 1er. "Le sang des martyrs trace le chemin de notre obligation". (pp. 43-44)

JOURNAL OFFICIEL

8. La bénédiction encyclique de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à l'archiprêtre Aramaïs Mirzanian, le 8 avril 1997. (p. 46)
9. La bénédiction encyclique de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à Mr Lévon Kaloustian, le 17 avril 1997. (p. 47)
10. L'encyclique de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à Mr Gabriel Basmadjian ainsi que la remise de la médaille "St Sahag-St Mesrob", le 21 avril 1997. (p. 48)
11. L'encyclique de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à Mr Vahé Ketli et la remise de la médaille "St Sahag-St Mesrob", le 21 avril 1997. (p. 49)
12. L'encyclique de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à Mr Hratch Hussian ainsi que la remise de la médaille "St Nercès Chnorhali, le 21 avril 1997. (p. 50)
13. L'encyclique de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à Mr Meguerditch Meguerditchian ainsi que la remise de la médaille "St Nercès Chnorhali", le 21 avril 1997. (p. 51)
14. L'encyclique de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à Mr Haïg Missakian ainsi que la remise de la médaille "St Nercès Chnorhali", le 21 avril 1997. (p. 52)
15. L'encyclique de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à Mr Charles Dakéssian ainsi que la remise de la médaille "St Nercès Chnorhali", le 27 mai 1997. (p. 53)

16. L'encyclique de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à Mr Jean Baronian ainsi que la remise de la médaille "St Sahag-St Mesrob", le 27 mai 1997. (p. 54)
17. La visite de SS Ilia 2, Catholicos -Patriarche de Géorgie au St Siège d'Etchmiadzine, du 27 au 30 mai 1997. (pp. 55-90)

RELIGIEUX ET PHILOLOGIQUE

18. A.H MOUCHEGHIAN. L'énigme "dentcha Saténig".Etude. (pp. 92-95)
19. VAZKEN HAMPARTSOUMIAN. Hovhannès Otsnetsi le juste.Etude. (pp. 96-105)
20. A.S AREVCHADIAN. Qui est le compositeur de la cantique "Zors esd badgueri koum"?.Etude. (pp. 106-115)
21. BION HAGOPIAN. Apovian et Nercès Achdaraguetsi.Suite de l'étude. (pp. 116-122)
22. HENRIK KHARADIAN. L'église St Asdvadzadzine du monastère de Sévan. (pp. 123-130)
23. HAYRABED CHADVORIAN. L'histoire du musée historico-religieux de l'église principale du monastère de Tiflis. (pp. 131-139)
24. SOURENE D. DANIELIAN. La force et le charme de la parole spirituelle. Présentation du livre "rayonnements spirituels" (Hokémedavor djarakaytoumner) de SS Karékine 1er. (pp. 140-147)
25. SILVA SOUKIASSIAN. Un demi siècle de chemin. A l'occasion du 50e anniversaire du sacerdotat de l'archevêque Mgr Chahé Adjémian. (pp. 148-149)
26. L'homélie de Mgr Chahé Adjémian en la cathédrale du St-Siège , le jour de la Pentecôte, à l'occasion du 50e anniversaire de sa consécration sacerdotale. (pp. 150-152)

AU ST-SIEGE ET DANS LES DIOCESES

27. Informations du diocèse d'Egypte. (pp. 154-155)
28. Diacre Ardak Loretsian. Soirée littéraire au collège de théologie de St-Etchmiadzine, à l'occasion du 100e anniversaire de la naissance de Yéghiché Tcharents. 16 mai 1997. (p. 156)
29. Anahid Sétrakian. Rencontre-réunion éduco-religieuse au diocèse patriacal d'Ararad. 17 mai 1997. (pp. 157-158)

RECEPTIONS AU ST SIEGE

30. La visite du ministre français des affaires extérieures, Mr Hervé de Charette à SS Karékine 1er. 2 avril 1997. (p. 159)
31. L'ambassadeur de Grande Bretaque a rendu visite à SS. Karekin 1er 12 Avril 1997 (p. 159).
32. SS. Karekin 1er a reçu le chargé d'affaires de la jeunesse de Géorgie 19 Avril 1997 (p. 160).
31. Informations écclésiastiques. Les sermons prononcés au St-Siège durant les messes des mois d'avril et mai, ainsi que la présentation des différentes cérémonies. (pp. 161-165)

Խմբագիր՝ ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ